«ՆՈՐԱՎԱՆՔ»
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հայկարամ Նահապետյան

ԹՈՒՐՔ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԱԿԱՀԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Երևան
2010

ՀՏԴ 327 : 941 (479.25) : 32.001
ԳՄԴ 66.4 + 63.3 (2Հ) + 66
Ն 251

Նահապետյան Հայկարամ

Ն 251 Թուրք-ադրբեջանական կառույցների հակահայ գործունեությունը - Եր.: «Նորավանք» ԳԿՀ, 2010. - 262 էջ + ներդիր 6 էջ:

Գրքում ներկայացվում է Թուրքիայի և Ադրբեջանի արտասահմանյան կառույցների հակահայ ձեռնարկների ակտիվացման գործընթացը: Զուգահեռ արծարծվում է հայկական սփյուռքի կողմից իրականացվող հակազդման աշխատանքների թեման:

Գիրքը նախատեսված է փորձագիտական հանրության և ընթերցողների լայն շրջանակների համար:

ՀՏԴ 327 : 941 (479.25) : 32.001
ԳՄԴ 66.4 + 63.3 (2Հ) + 66

ISBN 978-9939-825-02-1

© «Նորավանք» ԳԿՀ, 2010

Նվիրվում է մեր ազատամարտիկներին

Գրքի նախապատրաստման ընթացքում հեղինակին աջակցել են ՀՀ ԱԳՆ մամուլի և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Տիգրան Բալայանը, Նիդեռլանդների հայկական կազմակերպությունների միության համանախագահներ Ինգա Դրոստը և Մաթո Հախվերդյանը, Եվրոպայի Հայ դատի գրասենյակի ատենապետուհի Հիլդա Չոբոյանը, ԱՄՆ Հայ դատի գրասենյակի պատասխանատու Եղիսաբեթ Չուլջյանը, Ստրասբուրգ քաղաքում ուսանող Էդգար Հակոբյանը, Չեխիայի «Օրեր» հանդեսի գլխավոր խմբագիր Հակոբ Ասատրյանը, Բելգիայի Սենատի անդամ Ֆրանսուա Ռոլան դյու Վիվիեն, Բրյուսելի Սկաերբեկ թաղամասի ոստիկան, իրավապաշտպան Պիեռ-Իվ Լամբերը: Հեղինակը հայտնում է իր խորին երախտագիտությունը:

ՄՈՒՏՔ

Վերջին տասնամյակում նկատելի է մի գործընթաց (արտասահմանում բնակվող թուրքական և ադրբեջանական համայնքների, համայնքային հաստատությունների աստիճանական ակտիվացում, լոբբիստական գործունեության ծավալում և ընդլայնում, հակահայ լոբբինգ նախաձեռնելու հավակնություններ), որը նշված մենագրության առանցքում է: Թեման նոր է և, ըստ այդմ, քիչ ուսումնասիրված, հատկապես ադրբեջանական լոբբինգի կայացման առումով, քանի որ ադրբեջանական համայնքների ինքնակազմակերպումը նորագույն շրջանի իրողություն է: Միայն մասամբ ուսումնասիրված կարող են համարվել ՌԴ և Վրաստանի ադրբեջանական համայնքները, որոնց թեմայով մի քանի հրապարակումներ են լույս տեսել ՌԴ-ում հրատարակվող *«Диаспоры»* գիտական հանդեսում[1]: 2008թ. հոկտեմբերին Մոսկվայում լույս տեսավ Իբրահիմ Հալադդինի «Վրաստանի ադրբեջանցիները» աշխատությունը, որը ներկայում միակ մենագրությունն է արտասահմանում բնակվող ադրբեջանական համայնքի մասին[2]:

Ադրբեջանական, ինչպես նաև ռուսական, ուկրաինական, վրացական, թուրքական լրատվամիջոցներում ևս տեղ են գտնում լրատվական հրապարակումներ ադրբեջանական համայնքների թեմաներով, որոնք ևս աղբյուր են ծառայել ուսումնասիրությունը պատրաստելու համար:

Միանշանակ է, որ Անկարան և Բաքուն վերջին տարիներին արտասահմանում բնակվող համայնքային կառույցների կազմակերպման ուղղությամբ զգալի աշխատանք են կատարել: Այս

[1] Տե՛ս «Азербайджанцы в Грузии: этнические границы в «постмногонациональную» эпоху, Сергей Румянцев, «Диаспоры», Москва, 2007 N 1 – 2, ինչպես նաև «Азербайджанцы в России: смена имиджа и социальных ролей», Ариф Юнусов, «Диаспоры», 2005, N 3.

[2] www.litres.ru

հարցն օբյեկտիվորեն կարող է հետաքրքրություն առաջացնել միջազգային թուրքագետների և ադրբեջանագետների, լոբբինգի թեմայով մասնագիտացող փորձագետների շրջանում: Սակայն հայկական կողմի համար այն ունի արդիականության լրացուցիչ շարժառիթ, որն, ըստ էության, առանցքային է. ակնհայտ է, որ թուրք-ադրբեջանական համայնքային կազմակերպման և լոբբինգի ծավալման առանցքում հայկական գործոնն է: Թուրքիան ու Ադրբեջանը հստակ փորձում են հակակշռել հայկական սփյուռքի աշխատանքը: Մենագրության մեջ այս փաստը ներկայացված է տասնյակ մասնավոր օրինակներով, ադրբեջանա-թուրքական պաշտոնյաների հայտարարություններով, փորձագիտական գնահատականներով և ԶԼՄ հրապարակումներով: Արտասահմանում բնակվող ադրբեջանցիների միավորման և Բաքու-համայնքներ կապի համակարգման համար 2002թ. ձևավորվել է Արտասահմանում բնակվող ադրբեջանցիների հետ աշխատանքի պետական կոմիտեն: Վերջինիս նախագահ Նազիմ Իբրահիմովը հարցազրույցներից մեկում նշել է, որ «իրենց կառույցի ձևավորման նպատակներից մեկը հենց հայկական սփյուռքին դիմակայելն է»[1]:

Փաստացի սկիզբ առնելով հայկական գործոնից՝ ադրբեջանա-թուրքական լոբբինգն աստիճանաբար զարգանում է նաև այլ ուղղություններով՝ իրականացվում են երկրի վարկանիշի բարձրացմանն ուղղված տարբեր *PR* ակցիաներ, Թուրքիայի պարագայում «թուրքական սփյուռքը» ձգտում է առաջ մղել Անկարայի հետաքրքրությունները Քրդական կամ Իրաքյան հիմնահարցերում, Կիպրոսյան կարգավորման հարցում, Բաքվի դեպքում՝ Իրանի ադրբեջանցիների ազգային շարժումները խրախուսելու, Վրաստանում՝ ադրբեջանական գործոնն ակտիվացնելու գործընթացներում:

Հայերենում «սփյուռք» եզրն ավանդաբար գործածվել է որպես օտար երկրների հայկական համայնքների անվանում: Առկա է նաև «աշխարհասփյուռ հայություն» մասնավոր կապակցությունը: Ժամանակի ընթացքում առաջացել էր նաև «ցրոնք» եզրաբառը,

[1] «Назим Ибрагимов: создание азербайджанского лобби стоит дорого», Э. Фахрединоглу, «Эхо».

որը սակավ կիրառություն ունեցավ: Այսպիսով, ադրբեջանա-թուրքական համայնքներին անդրադառնալիս՝ միտումնավոր խուսափել ենք դրանք ուղղակիորեն սփյուռք անվանելուց, իսկ բացառիկ դեպքերում կիրառել ենք չակերտներ, հատկապես երբ համատեքստում ակնհայտ էր հայկական կողմին նմանակելու, սփյուռքահայության հետ մրցելու ենթատեքստը:

Հասարակական-քաղաքական ակտիվ համայնքն ավանդաբար համարվել է հայկական կողմի հաղթաթուղթն ընդդեմ Բաքվի և Անկարայի: Հայկական սփյուռքն ընդդեմ ապշերոնյան նավթի կամ Թուրքիայի ռեսուրսների. այսպիսի մտածելակերպը որոշակիորեն հաստատվել է հայկական ոչ միայն հասարակական, այլև քաղաքական գիտակցության մեջ: Տեղին է նշել՝ ոչ միայն հայկական: Ամերիկացի քաղաքագետ, նախագահ Ջիմի Քարթերի անվտանգության հարցերով խորհրդական Զբիգնև Բժեզինսկին ԱՄՆ ամենաակտիվ լոբբին է համարում հրեականը, հունականը և հայկականը[1]: Լրատվամիջոցների կովկասյան ինստիտուտի *(CMI)*[2] ՝ հարավկովկասյան 3 հանրապետությունների թեմայով հետազոտություններից մեկը վերնագրված էր «Սփյուռք, նավթ և վարդեր»[3]:

Ադրբեջանա-թուրքական լոբբինգի կազմակերպմանը զուգընթաց, կողմերի միջև ուժերի հաշվեկշռի փոփոխությունը կարող է տեղաշարժել ստատուս քվոն և հայկական կողմին կոնկրետ քայլերի դիմելու հեռանկար է պարտադրում: Գործնականում վիճարկման ենթակա չէ, որ աշխարհասփյուռ հայության ներուժի միայն փոքրիկ մասն է աշխատում հանուն Հայաստանի զորեղացման, նաև բուն Սփյուռքի ինքնապահպանության: Դրա օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներն այլ ուսումնասիրության առարկա են: ՀՀ-ում Սփյուռքի նախարարության հիմնադրումն այս առումով միանգամայն այժմեական և կարևոր քայլ է: Հայրենիքի և սփյուռքի կարողությունների մեկտեղման, «համահայկական մոբիլիզացիայի»,

[1] «Великая шахматная доска (Господство Америки и его геостратегические императивы), Збигнев Бжезински, Москва, 1988, с. 41:

[2] Այս և մնացած հապավումները՝ Հապավումների ցանկում (էջ 257):

[3] «Диаспора, нефть и розы: чем живут страны Южного Кавказа», Ивлиан Хайндрава, Александр Искандарян, Ереван, 2005.

հակազդման ռազմավարության մշակման և գործադրման արդյունքում միանգամայն հնարավոր է ազդու հարվածներ հասցնել թուրք-ադրբեջանական հակահայ լոբբիստական նկրտումներին: Բացարձակ չեզոքացնել հարևան պետությունների ձեռնարկները, թերևս, իրատեսական չէ. 21-րդ դարում զարգացած քաղաքական տեխնոլոգիաները, լոբբիստներ վարձելու հնարավորությունը, ապատեղեկատվության տարատեսակ եղանակները, քիչ վերահսկելի ինտերնետը գործելու լայն հնարավորություններ են ապահովում: Սակայն դա միայն էլ ավելի է ընդգծում փաստը, որ նոր պայմաններում հայկական կողմին հարկավոր են նորացված և ակտիվ մոտեցումներ:

Իրատեսական է նաև կոնկրետ քայլերով հակառակ կողմի ծրագրերը էապես խաթարելը, հակահայ ձեռնարկները շրջելն ու վերջնահաշվում նույնիսկ նաև հենց թուրք-ադրբեջանական «զույգի» դեմ ուղղելը: Ի դեպ, նման օրինակներ արդեն գրանցվել են, երբ ԵՄ պետություններում թուրքական կողմի հակահայ ժխտողական հավաքներ անցկացնելու փորձերը հանգեցրել են հայկական կողմի և տեղի եվրոպական իշխանությունների դիրքորոշումների առավել մերձեցման: Լիոնում 2006թ. ապրիլի 18-ին տեղի թուրքերի հակահայ մերժողական հավաքին ընդդեմ կազմակերպվել էր ֆրանսահայերի և ֆրանսիացիների համատեղ հանրահավաքը: Տեղի ունեցած բախմանը մի քանի հարյուր ֆրանսահայերի կողքին ֆրանսաբնակ թուրքերին հակահարված են տվել հարյուրավոր ֆրանսիացիներ: Պահպանված տեսագրության մեջ երևում է անգամ Ֆրանսիայի սևամորթ մի քաղաքացի, որն ընդհարվում է թուրք ցուցարարի հետ: Ավելի ուշ Լիոնի քաղաքապետ Ժան-Պոլ Բրեն հայտարարեց, որ թուրքական մերժողական հանրահավաքներին պետական արտոնություն այլևս չի տրվելու: Լիոնի հանրահավաքը նաև լրացուցիչ ազդակ դարձավ մերժողականությունը քրեականացնելուն ուղղված հայկական կողմի աշխատանքների համար: Շվեյցարիայում, Գերմանիայում, Բելգիայում Հայոց ցեղասպանության մերժողականության համար դատական կամ վարչական բնույթի հետապնդումներ են իրականացվել թուրք ժխտողա-

կանների դեմ: Այսպիսով, թուրքական կողմի նախաձեռնությունը վերջնարդյունքում աշխատել է ընդդեմ թուրքական կողմի, համապատասխան արձագանք գտել եվրոպական մամուլում և հասարակության մեջ:

Առկա մարտահրավերների պայմաններում Հայաստանի և Սփյուռքի կարողությունների համադրումն ու ակտիվ և համակարգված աշխատանքը խիստ այժմեական ռազմավարական գերխնդիր են դառնում: Եղիշե Չարենցի հայտնի տողերը հայ ժողովրդի հավաքական ուժի վերաբերյալ 21-րդ դարում չափազանց արդիական են հնչում:

ԹՈՒՐՔԱԿԱՆ «ՍՓՅՈՒՌՔԻ» ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ընդհանուր տվյալներ

Թուրքիայից դուրս բնակվող էթնիկ թուրքերի թիվը մոտ 4 միլիոն է, որոնցից 3,6 միլիոնը ԵՄ բնակիչներ են: Թուրքիայից հետո խոշոր թուրքական բնակչությամբ պետությունը Գերմանիան է՝ 2,7 մլն, Բուլղարիայում՝ մոտ 950 հազար: Ֆրանսիայում բնակվում է 350 հազար, Նիդեռլանդներում՝ 330 հազար, Միացյալ Նահանգներում՝ 300 հազար, Բելգիայում՝ 140 հազար, Ավստրիայում՝ 119 հազար, Շվեյցարիայում՝ 100 հազար, Մեծ Բրիտանիայում՝ 80 հազար, Դանիայում՝ 55 հազար, Շվեդիայում՝ 36 հազար, Նորվեգիայում և Իտալիայում՝ 11-ական հազար, Ֆինլանդիայում՝ 4 հազար, Իսպանիայում՝ 2 հազար, Լյուքսեմբուրգում և Պորտուգալիայում՝ մոտ 300-ական էթնիկ թուրք[1]: Տարբեր պետություններում էթնիկ թուրքերի թիվը, տեղի մահմեդական բնակչության թվի համամասնությամբ, տարբեր է: Եթե, մասնավորապես, Գերմանիայում թուրքերը կազմում են երկրի 3,5 միլիոն մահմեդական բնակչության մոտ 80 տոկոսը, ապա Իտալիայում 700 հազար մահմեդական բնակչության պարագայում նրանց մասնաբաժինը 1,5 տոկոսից քիչ ավելի է, Իսպանիայում՝ 1 տոկոսից էլ պակաս: Այս պետություններում մահմեդական բնակչության մեջ գերակշռում են համապատասխանաբար ալբանացիները և արաբները[2]: Այլ ուսումնասիրող-

[1] Տվյալներն ըստ Թուրքիայի ԱԳ նախարարության *(www.mfa.gov.tr),* ինչպես նաև *www.lobicilik.com* կայքի և արտասահմանի Թուրքիայի համայնքների վերաբերյալ եվրոպական, ամերիկյան և այլ աղբյուրների:

[2] «Мусульмане Европы – прогрессирующий фактор страха», Анастасия Пономарева, «Индекс безопасности», Москва-Женева-Монтерей, 2007, N 3 (83).

ներ Թուրքիայից դուրս բնակվող էթնիկ թուրքերի թիվը հասցնում են մինչև 6 և անգամ 6,5 միլիոնի, որոնցից ԵՄ քաղաքացի թուրքերի թիվը նշում են 5,2 միլիոնի սահմաններում[1]: Համեմատության համար. դա գերազանցում է ԵՄ անդամ 8 պետությունների բնակչության թվաքանակը (Կիպրոս, Մալթա, Լյուքսեմբուրգ, Էստոնիա, Լիտվա, Լատվիա, Սլովենիա, Իռլանդիա), ընդ որում, Մալթայի և Լյուքսեմբուրգի բնակչությունը Եվրոպայի թուրքերի թվին զիջում է երկնիշ ցուցանիշով (համապատասխանաբար Մալթայում՝ 407 հազար, Լյուսքսեմբուրգում՝ 470 հազար): Եվրոպայի թուրքերի թիվը գրեթե հավասար է Բալթյան 3 երկրների բնակչության հանրագումարին, մոտենում է Ֆինլանդիայի և Սլովակիայի բնակչությունների թվին (մոտ 5,4 միլիոն)[2]: Նրանց գրեթե 2/3-ը իրավաբանորեն Թուրքիայի քաղաքացիներ են: Միաժամանակ, ԵՄ պետություններում բնակվող և եվրոպական քաղաքացիություն ունեցող էթնիկ թուրքերի թիվը կազմում է 1 միլիոն 770 հազար:

Այլ խոսուն թվեր. ըստ Գերմանիայի Թուրքական հետազոտությունների կենտրոնի տվյալների՝ ԵՄ պետություններում թուրք գործարարների թիվը 124 հազ. 500 է, որոնց տարեկան եկամուտը գնահատվում է 30 միլիարդ դոլար[3]: Կենտրոնի նախկին ղեկավար Ֆարուք Շենը ԵՄ պետություններում ստվար թուրքական համայնքի պատճառով Թուրքիան համարում է «ԵՄ 28-րդ անդամ պետությունը»[4]:

Ինչպես նշվեց, արտասահմանի թուրքերի մեծ մասը չունի ԵՄ քաղաքացիություն և նվազ չափով է ինտեգրված: Մասնավորապես, Ֆրանսիայի 350 հազար էթնիկ թուրքերից քաղաքացի է շուրջ 60 հազարը, Միացյալ Նահանգներում՝ մոտ 300 հազար թուրքերից՝ 70 հազարը[5]: Դա թուրք հետազոտողները հիմնակա-

[1] *"Euro-Türkler", Faruk Şen, Istanbul* 2007, էջ 12:

[2] ԵՄ պետությունների բնակչության թվական տվյալներն ըստ *www.europa.eu* ԵՄ պաշտոնական կայքի և «Վիկիպեդիա» էլեկտրոնային շտեմարանի:

[3] "Avrupa ve Amerika'daki Türk nüfusu nasıl bir güç oluşturabilir?", Göknur Akçadağ, *www.turkish ny.com,* 04.07.2009

[4] "Euro-Türkler", Faruk Şen, Istanbul 2007, էջ 37 և էջ 13:

[5] *www.lobicilik.com*, "The Turkish lobby dilemma in the United States as a case study", Chapter 4, Background material.

նում կապում են թուրքական համայնքների համեմատաբար երիտասարդ լինելու հետ, սակայն այստեղ կարևոր է նաև թուրքական դիասպորաների կենսակերպը: Հատկապես Թուրքիայի արևելյան շրջաններից արտագաղթող քաղաքացիները չեն ձգտում ինտեգրվել, որոշ դեպքերում, հատկապես Գերմանիայի պարագայում, ապրում են առանձին թուրքական թաղամասերով՝ ձևավորելով «գետտո» հիշեցնող բնակավայրեր: Արդյունքում՝ նրանք ոչ միայն չեն ձգտում քաղաքացիություն ձեռք բերել, այլև չեն յուրացնում գերմաներեն լեզուն, շարժվում են ներքին օրենքներով: «Թուրքական համայնքները գերմանական քաղաքներում իսկական «զուգահեռ հանրույթներ» են ստեղծում, որոնցում չեն գործում Գերմանիայի օրենքները, որոնցում կնոջը կարող են սպանել գլխաշոր չկապելու համար, իսկ երեխաները հաճախ մեծանում են՝ գերմաներեն ոչ մի բառ չիմանալով»,- նշում է վերլուծաբան Սերգեյ Սումլյոննին: Իսկ գերմանաբնակ թուրք ֆեմինիստ, սոցիոլոգ Նեջլա Քելեքի խոսքով՝ իրավիճակը տարեցտարի նույնիսկ վատթարանում է, քանի որ գերմանաբնակ թուրքերի համար հազարավոր հարսնացուներ են բերվում Թուրքիայից, որոնք արգելափակվում են նույն «գետտոներում»՝ հարկադրելով երեխաներին դաստիարակել միևնույն «հակագերմանական» պայմաններում[1]: Թրքուհիներին եվրոպական կենսակերպով ապրելու, լողավազանում լողալու կամ սովորական սպորտային կոշիկ կրելու համար սպանելու դեպքեր են գրանցվել եվրոպական աշխարհամասում:

Զուգահեռաբար վերջին տարիներին նկատելի է ԵՄ պետություններում թուրք քաղաքացիների թվի աճի միտումը, որին կանդրադառնանք գրքի «Հեռանկարներ» բաժնում:

Բացառությամբ Բալկանյան երկրների և Հունաստանի արևելյան հատվածի, ուր թուրքերը բնակվում են օսմանյան դարաշրջանից, ԵՄ մյուս պետություններում տեղի թուրքերը հաստատվել են գերազանցապես վերջին 50 տարիներին: Եվրոպայում 2-րդ համաշխարհայինից հետո, աշխատուժի պակասի պայմաններում,

[1] "Necla Kelek, 49, best selling author", "Internetional Herald Tribune", 01.12.2005. *http://www.iht.com /articles/2005/12/01/news/profile3.php*

թուրք-եվրոպական միջպետական համաձայնագրերի հիման վրա թուրք աշխատուժը Եվրոպա ուղևորվեց: Առաջին նման համաձայնագիրը Թուրքիան կնքեց 1961թ. Գերմանիայի, ապա 3 տարի անց՝ Հոլանդիայի, Բելգիայի և Ավստրիայի, իսկ 1965թ.՝ նաև Ֆրանսիայի հետ: Հաջորդած շուրջ 50 տարիների ընթացքում Թուրքիայից Եվրոպա տեղափոխվեցին շուրջ 4 միլիոն թուրքեր[1]: Կարևոր է նշել, որ ԵՄ պետություններում և թուրքական աղբյուրներում որպես «թուրք» են արձանագրվել Թուրքիայից փոխադրվածները, որոնց թվում էին նաև քրդեր, զազաներ, լազեր և Թուրքիայում բնակվող այլ ազգությունների ներկայացուցիչներ, այդ թվում նաև հայեր: Ավելի տարբերակված վիճակագրությունը տվյալ էթնիկ խմբերի վերաբերյալ սակավ է: Օրինակ, Վիեննայի համալսարանի պրոֆեսոր Թոմաս Բաուերի տվյալներով՝ 2007թ. երկրում պաշտոնապես ապրում էր 107 հազար թուրք, սակայն նրանց շուրջ 60 հազարն է իրեն համարում «թուրք»[2]: Իսկ մասնավորապես Բալկաններում բնակվող էթնիկ թուրքերն օսմանյան տիրապետության ժամանակաշրջանից այստեղ ապրող թյուրքախոս ժողովուրդների սերունդներն են: Միաժամանակ, առկա են պատմագիտական հարուստ տվյալներ, որ բալկանյան թուրքերն օսմանյան տիրապետության շրջանում իսլամացած տեղացի սլավոնների սերունդներն են կամ շառավիղները միջնադարում ներկայիս Թուրքիայի տարածքից Բալկաններ փոխադրված մահմեդականների:

1878թ. Օսմանյան կայսրության սադրազամ կամ մեծ վեզիր Միդհաթ փաշան գրել էր. «Բուլղարացիների շրջանում ապրում է մեկ միլիոն մահմեդական: Նրանք նվաճման ժամանակաշրջանում և հետագա տարիներին մահմեդականություն ընդունած բուլղարացիներ են: Նրանք միևնույն երկրի զավակներն են, պատկանում են նույն ռասային և նույն արմատներն ունեն»[3]:

Անկարայում հրատարակված «Թուրքերը» հանրագիտարանի 6-րդ հատորի հոդվածներից մեկում կարդում ենք. «Քանի որ Բուլ-

[1] "Euro-Türkler", Faruk Şen, Istanbul 2007, էջ 34 և էջ 18:

[2] "Türken: Lange hier und trotzdem fremd", "Kurier" օրաթերթ, *www.kurier.at,* 26.01.2009.

[3] Turks of Bulgaria: Assimilation Policy and Linguistic Oppression, Tuncer Can & Martin Stilyanov Todorov, Syracuse University, December 2004.

ղարիան հանդիսանում էր Օսմանյան կայսրության մայրաքաղաքների, նախ՝ Էդիրնեի (Ադրիանապոլիս- Հ.Ն.), ապա 1453 թվականից նաև Ստամբուլի պաշտպանական «միջնաբերդը», այն շոշափելի ուշադրության էր արժանանում: Կենտրոնական Ասիայի և Անատոլիայի թուրքերի կողմից ռազմավարական շրջանների գաղութացման պայմաններում ընթանում էր նաև տեղաբնակ ուղղափառ քրիստոնյա բնակչության կրոնափոխություն, ինչը հատկապես քաղաքային շրջաններում հանգեցրեց ժողովրդագրական կառուցվածքի փոփոխության հօգուտ թուրքերի և մահմեդականների»[1]:

Արտասահմանի թուրքական համայնքների և թուրքական լոբբինգի թեմայով հրապարակումներ, մենագրություններ կան բուն Թուրքիայում, որոշակի աշխատանք կատարել են արտասահմանում բնակվող թուրք հետազոտողները: Պատրաստվել են աշխատություններ ԱՄՆ-ի, Բուլղարիայի, Գերմանիայի, Նիդեռլանդների, Շվեյցարիայի թուրքական համայնքների վերաբերյալ: Նոր կազմավորվող ադրբեջանական համայնքների կողքին արտասահմանի թուրքական կառույցներն ու ինքնակազմակերպման փորձերը շուրջ մեկդարյա վաղեմություն ունեն: Դեռևս 1908-ից, երբ բուլղարական թագավորությունը Օսմանյան կայսրությունից անկախություն հռչակեց, տեղի թուրքական բնակչության ներկայացուցիչները հիմնադրեցին առաջին հասարակական կառույցները՝ «Մեդենիեթ», «Թուրան», «Դելիօրման» և այլն: Ադրբեջանականի համեմատ թուրքական համայնքների առավել հետազոտված լինելը կապված է նաև այն իրողության հետ, որ թուրքական միությունները միջազգային ուսումնասիրողների, մասնավորապես՝ եվրոպական շրջանակների համար առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում: Պատճառը զանգվածային ներգաղթի արդյունքում մասնավորապես ԵՄ-ում ժողովրդագրության փոփոխության, Եվրոպայում թուրքական էժան աշխատուժի հետ կապված մտահոգություններն են: Թուրքական «սփյուռքը» միաժամանակ թուրքական քաղաքականության «միջնորդն» է տվյալ պետությունում,

[1] Prof. Dr. Ali Eminov, “The Turks of Bulgaria”; “The Turks”, Ankara 2002, Yeni Türkiye publications, p. 584:

գտնվում է Թուրքիայի պետական և կրոնական շրջանակների, անվտանգության ծառայությունների հորիզոնում, և այս գործոնները լրացուցիչ ազդակ են, որ միջազգային պետությունները հետաքրքրվեն թուրքական համայնքներով:

Աստիճանաբար առավել հստակ է ուրվագծվում նաև հակադարձող գործընթացը. թուրքական համայնքների ակտիվացմանը զուգընթաց, օտար պետություններում սկիզբ է առնում «դիմադրության շարժումը»: Գերմանիայում, Ավստրիայում, Ֆրանսիայում, Բելգիայում, Նիդեռլանդներում, Բուլղարիայում քայլ առ քայլ ծավալվում է ներքին շարժում՝ ուղղված քաղաքական իշխանության շրջանակներում թուրք լիդերների առաջխաղացման սահմանափակմանը: Մենագրությունում այս մասին վկայող բազմաթիվ օրինակներ են ներառված:

«Եվրոպական դիմադրության շարժման» գործընթացում որոշակի դերակատարում ունի նաև հայկական գործոնը: ԵՄ մի շարք պետություններում տեղի թուրք քաղաքական գործիչներին կուսակցական ղեկավարությունը կանգնեցնում է Հայոց ցեղասպանության փաստը հրապարակայնորեն ընդունելու կամ քաղաքական կարիերայից հրաժարվելու երկընտրանքի առջև: Արդյունքում՝ Հոլանդիայում, Բելգիայում, Ավստրիայում և Ֆրանսիայում կասեցվեցին թուրք պատգամավորների առաջադրումները, Գերմանիայում նույն պատճառով տարատեսակ խոչընդոտներ ծագեցին պատգամավոր Հաքը Քեսքինի համար: Դրան զուգահեռ, Ֆրանսիայում և Բելգիայում ընդունվել են Մեծ եղեռնի հերքումը քրեականացնող օրինագծեր խորհրդարանի ստորին պալատի մակարդակներով: Նույնանման օրինագծեր են շրջանառվում Նիդեռլանդներում և Սլովակիայում:

Այս ձեռնարկները թուրքական կողմը համարում է յուրատեսակ «խաչակրաց արշավանքներ» և դրանց հակադարձում խոսքի սահմանափակման մասին հայտարարություններով և հրապարակումներով: «Իրենց ժողովրդավարության անվախ պաշտպաններ համարող եվրոպական պետությունները ցուցադրում են մտքի ազատության հարցում իրենց երկակի կողմնորոշումը»,- գրում է

Ավստրիայի թուրքական կայքը[1]: Թուրքիայի ԱԳ նախարարությունը նույն զարգացումները որակում է «խոսքի ազատությունը սահմանափակող քաղաքականություն»[2], իսկ Թուրքիայի արդյունաբերողների և գործարարների միության նախագահ Օմեր Սաբանջըն Ֆրանսիայում Հայոց եղեռնի մերժողականության քրեականացումն անվանեց «ԵՄ ոգուն հակասող քայլ»[3]:

Միաժամանակ, Նիդեռլանդների խորհրդարանի պատգամավոր Տինեկե Հոյզինգան այս առիթով հոլանդական մամուլում հայտարարել է. «Օրինագծերը չեն ձգտում սահմանափակել խոսքի ազատությունը: Պատմական փաստերը մշտապես պետք է բաց լինեն քննարկումների համար: Այդքանով հանդերձ ոճիրների մերժողականությունը, հավանություն տալու կամ արդարացման փորձերը պետք է պատժվեն, որովհետև պարունակում են վիրավորանքի և խտրականության կանխամտածված ձևակերպումներ»[4]: Բելգիայի իրավաբանների միության նախկին նախագահ, մեր հայրենակից Էդուարդ Ջաքյանը հեղինակի հետ զրույցում նշել է, որ մերժողականությունը եվրոպական արժեքային համակարգում դիտվում է որպես «վիրավորանք այն ժողովրդի հանդեպ, որը ենթարկվել է ոճրագործության, ինչպես նաև մարդկության հանդեպ՝ հաշվի առնելով, որ Ցեղասպանությունը ոճիր է՝ ուղղված մարդկության դեմ»: Ավելին, Ցեղասպանագիտություն առարկան մերժողականությունը դիտարկում է որպես «ցեղասպանության վերջին փուլ»: «Ցեղասպանության մերժողականությունը ցեղասպանության վերջին փուլն է, որը ոտնահարում է վերապրողների արժանապատվությունը»,- նշում է ցեղասպանագետ Փոլ Բարթրոփը[5]: Ցեղասպանագետ Դեբորա Լիփսդատի խոսքով՝ «Ցեղասպանության մերժողականությունը, անկախ հանգամանքից՝ այն վերաբերում է թուրքերի կողմից հայե-

[1] "Ermeni lobisi istifa ettirdi", "Turk Medya - Avusturya", *www.turkmedya.com,* 22.10.2006.
[2] "Ankara tepki gösterdi", *www.ntvmsnbc.com,* 01.10.2006.
[3] "Ermeni tasarısı AB ruhuna aykırı", 08.10.2006.
[4] "ANP - Dutch Press Agency" "Christian Union wants to make the denial of Genocide punishable" 01.06.2006.
[5] Countering deniers a problem in Armenian and Jewish genocides, The Jewish News Weekly of Northern California, 23.12.2005.

րի դեմ ցեղասպանությանը, թե նացիստների կողմից հրեաների բնաջնջմանը, պատմական վերագնահատումների ենթակա չէ»: «Խոսքի ազատությունը մերժողականներին իրավունք չի տալիս հանդես գալ որպես քննարկման կողմ, քանի որ իրավական առումով «կողմեր» գոյություն չունեն: Այն նաև մերժողականներին թույլ չի տալիս հանդես գալ դասարաններում, ուսումնական ձեռնարկների կամ այլ ֆորումների ժամանակ»,- նշում է նա[1]:

Նշենք նաև, որ եվրոպական իրավունքը դեռևս 20 տարի առաջ է հաստատել մերժողականությունը քրեականացնելու սկզբունքը: 1990թ. հուլիսի 13-ին Ֆրանսիայի խորհրդարանը հաստատեց Լուի Գայսոյի պատրաստած օրենքը, որով քրեականացվեց հրեաների ցեղասպանության մերժողականությունը[2]: Խոսքի ազատության վերաբերյալ թուրքական կողմի շահարկումներն առավել զավեշտական են դառնում Թուրքիայում ՔՕ 301-րդ հոդվածի առկայության ֆոնին:

Արտերկրի թուրքական համայնքների բնույթին անդրադառնալիս կարևոր է նշել որոշակի պառակտվածության գործոնի մասին: Շաղկապված լինելով Թուրքիայի քաղաքական ուժերի հետ՝ թուրքական «սփյուռքի» միությունները շատ զգայուն են այդ նույն քաղաքական կազմակերպությունների միջև հակասությունների նկատմամբ, և բուն Թուրքիայում քաղաքական անհամաձայնությունները հայելային կերպով անդրադառնում են թուրքական «սփյուռքի» միությունների հարաբերությունների վրա: Սա նաև վկայում է թուրքական սփյուռքի՝ Անկարայից հեռակառավարվելու մասին: «Որպես հասարակական-քաղաքական միություններ հիմնված հազարավոր կառույցների մեծ մասն օգտագործվում է քաղաքական նպատակներով: Դժվար թե գտնվի մեկ ուրիշ ժողովուրդ, որը ստեղծելով ինչ-որ միություն՝ նույն հաջողությամբ ստեղծում է նաև դրան հակազդող մեկ ուրիշ կազմակերպություն»,- գրում է թուրք հետազոտողը[3]:

[1] "Denying the Holocaust", Deborah Lipsatdt, հղումն ըստ "The key elements in the Turkish denial of the Armenian Genocide: A case study of distortion and falsification", Zoryan institute, Canada, 1999, էջ 81:

[2] http://www.legifrance.gouv.fr/affichTexte.do?cidTexte=JORFTEXT000000532990&dateTexte=

[3] "Avrupa ve Amerika'daki Türk nüfusu nasıl bir güç oluşturabilir?", Göknur Akçadağ, www.turkishny.com, 04 July 2009.

ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ. ԹՈՒՐՔԵՐՆ ԱՅՍՏԵՂ ԵԿԱՆ ՀԱՅԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ

«Միացյալ Նահանգներ. առաջին թուրքերը» խորագրով հետազոտության մեջ Իզմիր քաղաքի Էգեյան համալսարանի աշխատակից Սեդաթ Իշչին նշում է, որ թուրքերի առաջին միգրացիոն հոսքը դեպի ԱՄՆ սկսվել է 19-րդ դարի երկրորդ կեսից, մասնավորապես 1870 թվականից: Օսմանյան կայսրության թուլացման և սոցիալ-տնտեսական ճգնաժամի պատճառով սկիզբ առավ բնակչության զանգվածային արտահոսքի երևույթը: Այս ընթացքում կայսրության 1 միլիոն 200 հազար բնակիչներ փոխադրվեցին ԱՄՆ, որոնցից, ի դեպ, ըստ թուրք հետազոտողի, էթնիկ թուրք էր միայն 20 տոկոսը: «ԱՄՆ-ում նախ հաստատվեցին հայերը, թուրքերը ԱՄՆ սկսեցին գալ՝ հայերից տեղեկանալով»,- նշում է Իշչին[1]: Այդ ժամանակաշրջանում արտագաղթում էին կայսրության ամենատարբեր անկյուններից՝ Բալկաններ, Սիրիա, Եգիպտոս, Մալաթիա, Իզմիր, Խարբերդ և այլն: 1899թ. մարտին Վաշինգտոնում Օսմանյան կայսրության դեսպան Ալի Ֆերուհը սուլթան Աբդուլ Համիդին հղած հեռագրում նշում է, որ «ԱՄՆ-ում բնակվում են Խարբերդից փոխադրված 50 թուրքեր»[2]: Թուրքիայի վարչապետի աշխատակազմի արխիվային ծառայության տվյալներով՝ 1892թ. ԱՄՆ-ում բնակվում էր կայսրությունից փոխադրված 200 մահմեդական[3]:

Թուրքական «սփյուռքի» մասնագետ, գերմանաբնակ Ֆարուք

[1] "ABD'ye giden ilk Türklerin izleri bulundu", *www.ahaber.com,* 21.10.2004.

[2] Fuad Ezgü, "Osmanlı imparatorluğu ile ABD arasında iktisadi ve kültürel münasebetlerin kuruluşu ve gelişimi", չհրատարակված դոկտորական թեզ, Ստամբուլի համալսարան, 1949, էջ 124:

[3] "Ermeni lobisi", Şenol Kantarcı, Istanbul, "Aktüel", 2004, էջ 93:

Շենի տվյալներով՝ Օսմանյան կայսրությունից սահմանափակ թվով մահմեդականներ ԱՄՆ են փոխադրվել նաև 1820-ականներին, սակայն ավելի ակտիվ շարժը սկսվել է մոտ 50 տարի անց[1]:

Ըստ առկա հաշվարկների, ներկայում ԱՄՆ-ում բնակվող մոտ 300 հազար թուրքերից 50-80 հազարն է, որ ԱՄՆ քաղաքացի է կամ ԱՄՆ և Թուրքիայի երկքաղաքացի[2]: Դա որոշակիորեն նվազեցնում է համայնքի դերը, քանի որ ընտրաքվեների առումով փաստացի նրանք լուրջ կշիռ չունեն: «Եթե ավելի շատերը կարողանային քվեարկել, մենք կունենայինք առավել ծանրակշիռ քաղաքական ազդեցություն, առավել ուժեղ լոբբինգ: Լիահույս ենք, որ մի օր մեր ազդեցությունը կմեծանա, քանի որ քաղաքացիների թիվը շատանում է»,- նշում է թուրք հետազոտողը[3]:

1949թ. հունիսի 29-ին Նյու Յորքում 8 քաղաքացի գրանցեց «ԱՄՆ թուրքական համայնք»՝ *ATS (American Turkish Society)* կազմակերպությունը: Ի դեպ, ըստ նշված կազմակերպության կայքի *(www.americanturkishsociety.org),* 8-ից միայն 4-ն էին ազգությամբ թուրք, մյուսների անուններն էին՝ Էռնեստ Ջեքս, Լյուիս Կոհեն, Էյսա Ջենինգզ և Չառլզ Ուեյլի: Նույն աղբյուրը նշում է, որ *ATS*-ը ԱՄՆ-ում հնագույն թուրքական հասարակական կառույցն է, ինչը, սակայն, չի համապատասխանում իրականությանը: *ATS*-ը շարունակում է գործել մեր օրերում: Ներկայում կառույցի ղեկավարն է գործարար Մուրադ Քյոփրյուլյուն: Նա Նյու Յորքում ֆինանսական քոնսալթինգի և անշարժ գույքի առքուվաճառքով զբաղվող *MFI* ընկերության նախագահն է, 1980-1986թթ. աշխատել է Համաշխարհային բանկում[4]: 2007թ. սեպտեմբերին, երբ Միացյալ Նահանգներում օրակարգային էր Հայոց ցեղասպանության օրինագիծը, Քյոփրյուլյուն կառույցի մեջ ներգրավեց ԱՄՆ թուրքական համայնքի առաջադեմ անդամների. *ATS*-ին միացան և կառույցի վարչական խորհրդի անդամներ դարձան հռչակավոր «Կոկա-կոլա» ըն-

[1] "Euro-Türkler", Faruk Şen, Istanbul 2007, էջ 90:

[2] *www.lobicilik.com,* "The Turkish lobby dilemma in the United States as a case study", chapter 4, "Background material".

[3] "The birth and growth of Turkish American community", "Turkish Daily News", 21-22.04. 2004.

[4] http://www.americanturkishsociety.org/aboutus.aspx

կերության գործող նախագահ և գլխավոր տնօրեն Մուհթար Քենթը, *«JP Morgan Turkey»* ընկերության նախագահ Մուրաթ Մեգալին և գործարար, Ամերիկաթուրքական գործարար խորհուրդ կազմակերպության նախագահ Հալուք Դինջերը[1]:

Ինչպես նշեցինք, *ATS*-ն ինքն իրեն հռչակել է ԱՄՆ-ում թուրքական հնագույն կազմակերպություն, սակայն առավել մանրակրկիտ ուսումնասիրությունները վկայում են, որ թուրքական առաջին *NGO*-ները հիմնադրվել են դեռ 30-ականներին: 20-րդ դարի սկզբին Թուրքիայից ԱՄՆ փոխադրված էմիգրանտ, ծնունդով Էլյազիգ քաղաքից Մեհմեթ Աղան 30-ականներին հիմնեց Թուրքական մշակութային ասոցիացիա կազմակերպությունը: Նույնպես 30-ականներին Կիպրոսից ԱՄՆ գաղթած մի խումբ թուրքեր հիմնեցին Թուրքական օգնության միությունը: Նույն շրջանում ԱՄՆ-ում հիմնվեց նաև Թուրքական կարմիր մահիկը[2]:

Ըստ առկա տվյալների՝ 2008թ. փետրվարի դրությամբ ԱՄՆ-ում առկա է մոտ 180 թուրքական հասարակական կազմակերպություն առնվազն 27 նահանգում: Առավելագույն թվով թուրքական կառույցներ գործում են Նյու Յորքում՝ 27, Վաշինգտոնում՝ 18, Նյու Ջերսիում՝ 17 և Կալիֆոռնիայում՝ 15: Փաստացի թուրքական միություններ կան նաև ԱՄՆ հայաշատ նահանգներում: Մասնավորապես՝

- Լոս Անջելեսի թուրք-ամերիկյան ասոցիացիա
- Կալիֆոռնիայի թուրք-ամերիկյան ասոցիացիա
- Հարավային Կալիֆոռնիայի ամերիկաբնակ թուրքերի ասոցիացիա
- Աթաթուրքի դուստրեր, Կալիֆոռնիա
- Անատոլիայի բարեկամներ, Կալիֆոռնիա
- «Թյուրքօջաղը» միություն, Նյու Ջերսի
- Ստամբուլի տեխնիկական համալսարանի շրջանավարտների միություն, Նյու Ջերսի
- Երիտասարդ թուրքերի մշակութային օգնության միություն, Նյու Յորք

[1] "Turkish lobbies in US Stepping up Efforts", "Turkish Daily News", 18.09.2007, նաև «Турецкое лобби активизируется», «Эхо», 20.09.2007.

[2] "The birth and growth of Turkish American community", "Turkish Daily News", 21-22.04. 2004.

- Ճարտարապետների, ինժեներների և գիտնականների թուրք-ամերիկյան ասոցիացիա, Նյու Յորք
- Միացյալ Նահանգների թուրք-ամերիկյան բարեկամության միություն, Փենսիլվանիա[1]:

Միացյալ Նահանգներում առկա է թուրքական 2 միություն, որոնցում մեկտեղված են տասնյակ թուրքական հասարակական, մշակութային, գիտակրթական կազմակերպություններ: Այս 2 միությունները յուրօրինակ «հովանու» դեր են կատարում, հանդիսանում որոշակի «համադաշնություն», որոնք միավորում են տասնյակ «ցիրուցան» կառույցները: Ներհամայնքային կազմակերպման այս մեթոդը բավական տարածում ունի, և ներկայում համայնքների ինքնակազմակերպման այս մարտավարությամբ է առաջնորդվում նաև Բաքուն: ԱՄՆ-ում թուրքական 2 միավորող «հովանի» կառույցներն են *ATAA*-ը և *FTAA*-ը:

ATAA (Assembly of Turkish-American Associations) Թուրք-ամերիկյան միությունների համագումար կազմակերպությունն առավել ծավալված և կայացած է: *ATAA* կենտրոնական գրասենյակը Վաշինգտոնում է: Կառույցը հիմնադրվել է 1967թ. Վաշինգտոնում գործող ամերիկա-թուրքական ասոցիացիայի և Մերիլենդի ամերիկա-թուրքական միության կողմից:

Ներկայում *ATAA*-ն միավորում է 65 հասարակական, մշակութային, գիտակրթական թուրքական կառույց, որոնցից 60-ը գտնվում է Միացյալ Նահանգներում, 2-ը՝ Կանադայում, իսկ 3-ը՝ բուն Թուրքիայում (Ստամբուլ, Անկարա և Իզմիր քաղաքներում գործող Թուրք-ամերիկյան միություններն են)[2]: Հատկանշական է, որ գրքի հրատարակման պահին *ATAA* «կոմպոնենտ» կառույցների շուրջ կեսի անդամությունը բուն *ATAA*-ին սառեցվել է՝ մայր կազմակերպությանը տարեկան անդամավճարները չմուծելու պատճառով[3]:

ATAA գործող ղեկավարն է Գյունայ Էվինչը: Վերջինս ծնունդով Չիկագոյից է, ծնողները ԱՄՆ են փոխադրվել Մակեդոնիայից:

[1] turkishcoalitionofamerica.org
[2] http://www.ataa.org/about/
[3] http://ataa.org/component/

Էվինչը իրավաբան է, Վաշինգտոնի կենտրոնական հատվածում գտնվող «Զալցման և Էվինչ» իրավաբանական գրասենյակի ղեկավարներից է: Գրասենյակի էլեկտրոնային հասցեն է *www.turk law.net:* Կայքում զետեղված են հակահայ ուղղվածության «լինքեր»՝ *http://www.ermenisorunu.gen.tr, www.ethnicterror.org:* Գյունայ Էվինչը *ATTA* 14-րդ նախագահն է և առաջին նախագահն է, որ ծնվել է ԱՄՆ-ում, այլ ոչ Թուրքիայում: 1991-1993թթ. Էվինչը ատենախոսություն է պաշտպանել Անկարայի համալսարանում «Հայկական հարցը և միջազգային իրավունքը» թեմայով[1]:

ATAA ղեկավարներն ընտրվում են 2 տարով: Ընդ որում, գալիք նախագահն ընտրվում է դեռևս գործող նախագահի պաշտոնավարման շրջանում և աշխատում է «ընտրված նախագահ» կարգավիճակով *(president elect)*՝ որպես նախապատրաստական շրջան: 2010թ. ընթացքում Էվինչին փոխարինելու է Էրգյուն Քըրլըքովալին: Վերջինս ծնունդով Իզմիր քաղաքից է, ներկայում բնակվում է Հարավային Կալիֆոռնիայում, հրատարակում է *historyoftruth.com* կայքը, որում մեծ թիվ են կազմում մերժողական բնույթի հոդվածները, հայ-թուրքական ընթացող բանակցությունները և Ղարաբաղյան հիմնախնդիրը լուսաբանվում են միակողմանի: Ըստ *ATAA* կայքի, Քըրլըքովալին «հարկադրված էր պաշտպանել թուրքական մշակութային ժառանգությունը ԱՄՆ հայկական, հունական և այլ լոբբիների հակաթուրքական անարդարացի հարձակումներից»: Քըրլըքովալին նաև հազարավոր նամակներ է ուղարկել ԱՄՆ լրատվամիջոցներին, վերլուծաբաններին, գիտական շրջանակներին՝ կապված «հակաթուրք լոբբիների կողմից պատմությունը ներկայացնելու անազնիվ փորձերի հետ»[2]:

2006-2008թթ. *ATAA*-ն ղեկավարում էր Նուրթեն Ուրալը: Գործարար, *«Ural Interiors»* դիզայներական ընկերության ղեկավարն է, բնակվում է Դեթրոյտում (Միչիգան): Ն.Ուրալը Դեթրոյտի Արվեստի ինստիտուտի տնօրենների խորհրդի անդամ է և զուգահեռ Դեթրոյտում Թուրքիայի պատվո հյուպատոսն է: Նա փոխարի-

[1] http://www.ataa.org/about/index.html#staff

[2] Նույն տեղում:

նել է Վուրալ Ջենգիզին, որը պաշտոնավարել էր 2004-2006թթ., վերջինիս նախորդել էր Էրջյումենթ Քըլըչը (2002-2004թթ.):

ATAA-ն 1989-2003թթ. հրատարակում էր «Թըրքիշ Թայմս» անգլիալեզու թերթը, որը լույս էր տեսնում ամիսը 2 անգամ, էլեկտրոնային կայքն է՝ *www.turkishtimes.com:* 1996-ից տպագրվում է «Թըրքիշ պանորամա» պարբերականը՝ հիմնականում ԱՄՆ Կոնգրեսում, ԱՄՆ քաղաքական գործիչների շրջանակում բաժանելու նպատակով: Տարին 4 անգամ լույս է տեսնում «Թըրքիշ ամերիքըն» հանդեսը: Ըստ թուրքական աղբյուրների, կազմակերպության տարեկան բյուջեն 300 հազար ԱՄՆ դոլար է[1]:

2007թ. *ATAA*-ն պառակտվեց, և կառույցից անջատված մի խումբ գործիչներ հիմնեցին *"Turkish Coalition of America"* նոր լոբբիստական կազմակերպությունը *(www.turkishcoalitionofamerica.org):* Թուրքական կոալիցիան ղեկավարում է ամերիկացի Լինքըլն Մըքքարդին: Կառույցը կազմակերպում է թուրք երիտասարդների պրակտիկան ԱՄՆ Կոնգրեսում, դրամաշնորհներ տրամադրում թուրք ուսանողներին, իրականացնում քարոզչական աշխատանքներ, կայքէջում վերահրատարակում է ԱՄՆ մամուլում լույս տեսնող թուրքանպաստ հոդվածները, նախաձեռնում է *PR* բնույթի աշխատանքներ ԱՄՆ թուրքական համայնքի շրջանակում: Մասնավորապես, նշված կառույցի պատվերով *Google* որոնման ցանցում տեղադրվել էին վճարովի լինքեր, և Հայաստանի, Հայոց պատմության և, մասնավորապես, Հայոց ցեղասպանության վերաբերյալ որոնում կատարելիս, որպես առաջին հասցե, ներկայանում էին թուրքական մերժողական կայքերը: ԱՄՆ Հայ դատի գրասենյակի նախաձեռնությամբ սկսված արշավի արդյունքում *Google*-ը վերացրեց թուրքական մերժողական կայքերը, իսկ *Google*-ի մամուլի ծառայության խոսնակը հայտարարեց. «Կայքէջը չի կարող թույլատրել կայքեր, որոնք առաջարկում են վերանայել պատմությունը»: Իսկ *Fox News* հեռուստաալիքին *Google*-ի աշխատակիցներից մեկը հայտարարել էր. «Կարո՞ղ եք պատկերացնել, որ տե-

[1] "Amerika'da siyasal yapı: Lobiler ve dış politika: Türk, Yunan, Ermeni, Israil ve Arap Lobilerin ABD'nin dış politikasına etkileri", Tayar Arı, Istanbul 2000, էջ 229:

ղադրվեր նացիստական խմբի հայտարարություն, որում Հոլոքոստը բնութագրվեր որպես միֆ»[1]:

Թուրքական կոալիցիան ապարդյուն բողոքի արշավ կազմակերպեց *Google*-ի դեմ՝ պահանջելով վերականգնել թուրքական վճարովի կայքերը: Կոալիցիայի կայքում տեղադրվել էին *Google*-ի տնօրեն Էրիկ Շմիթին ուղղված նամակի ձև և նրա անձնական էլեկտրոնային հասցեն՝ *eschmidt@google.com*, որում շարադրված էր թուրքական մերժողական սայթերը վերականգնելու պահանջը[2]: Կայքը նաև էլեկտրոնային արշավ է ծավալել 2010թ. Կոնգրեսում Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ՝ ամերիկաբնակ թուրքերին կոչելով նամակներ գրել կոնգրեսականներին[3]:

Միաժամանակ, կոալիցիան արշավ էր սկսել Հայոց ցեղասպանության թեման Կալիֆոռնիայի ուսումնակրթական ծրագրերում ներառելու դեմ[4]: 2009թ. դրությամբ կոալիցիան կազմակերպեց 18 թուրք երիտասարդների աշխատանքային պրակտիկան ԱՄՆ Կոնգրեսում[5]: Թուրքական կոալիցիան նաև հիմնել է *Armenians-1915 blogspot* բլոգը, որտեղ հրատարակվում են մեծ թվով թուրքական մերժողական հոդվածներ, սակայն հանդիպում են նաև հայ հեղինակների օբյեկտիվ հրապարակումներ[6]:

Թուրքական կոալիցիային կից գործում է Թուրքական կոալիցիա-ԱՄՆ-Քաղաքական գործողությունների կոմիտեն *(TC-USA-PAC*, կայքը՝ *http://www.tc-usa-pac.org):* Ըստ ամերիկյան օրենսդրության, Քաղաքական գործողությունների կոմիտե՝ *PAC* կազմակերպություններն իրավունք ունեն տարեկան 5 հազար ԱՄՆ դոլար վճարել իրենց նախընտրած թեկնածուին և 15 հազար ԱՄՆ դոլար՝ նախընտրած կուսակցությանը: *TC-USA-PAC*-ը հիմնվել է 2007թ. փետրվարին: Գրքի հրատարակման պահին թուրքական

[1] "Turkish Group accuses Google of limiting free speech", Foxnews, 11.08.2009 http://www.foxnews.com/politics/2009/08/11/turkish-group-charges-google-limiting-free-speech-suspending-ads/

[2] http://www.turkishcoalitionofamerica.org/action_speech.html

[3] http://www.turkishcoalition.org/action.html

[4] http://www.turkishcoalitionofamerica.org/action_ca.html

[5] "TCA-TUSIAD-US Capitol Hill Summer Internship program orientation ends" http://www.turkishcoalitionofamerica.org/tcatusiad_sch.html

[6] http://armenians-1915.blogspot.com/

կառույցի կայքն իր գործունեությանը վերաբերող բաժնում նշում էր միայն Հայոց ցեղասպանության ճանաչումը կասեցնելու նախաձեռնության մասին[1]: Կառույցը ղեկավարում է նույն Լինքըլն ՄըքԲարդին, որը նաև կոալիցիայի նախագահն է[2]:

Նույն կոալիցիային կից և նույն շենքում է գործում նաև Թուրք-ամերիկյան իրավական պաշտպանության հիմնադրամ *(Turkish American legal defense fund - TALDF)* կազմակերպությունը, որն զբաղվում է թուրքական համայնքի և Թուրքիայի համար հետաքրքրություն ներկայացնող իրավական, ԱՄՆ թուրքերի կամ թուրքական լոբբիին մոտ կանգնած ամերիկացիների իրավական պաշտպանության հարցերով: Կառույցի ղեկավարներն են ԱՄՆ նախկին գլխավոր դատախազի տեղակալ Բրյուս Ֆեյնը և վերոնշյալ «Զալցման և Էվինչ» իրավաբանական գրասենյակի համադեկավար Դեյվիդ Զալցմանը[3]: Ըստ էության, նկատելի է դառնում *ATAA – TCA – TC-USA-PAC – TALDF* առանցքը:

Համաամերիկյան ձևաչափով հանդես եկող մյուս թուրքական կառույցն է *FTAA*-ն *(Federation of Turkish American Associations)*՝ Թուրք-ամերիկյան կազմակերպությունների համադաշնությունը: *FTAA* կենտրոնակայանը Նյու Յորքում է: *FTAA*-ն առավել վաղ է հիմնադրվել, քան «զուգահեռ» գործող *ATAA*-ն. այն հիմնվել է 1956թ. ԱՄՆ-ում գործող 4 թուրքական միությունների կողմից: Հիմնադիր 4 կառույցներից 3-ը 30-ականներին ստեղծված վերոնշյալ Թուրքական մշակութային ասոցիացիան, Թուրքական օգնության միությունը և Թուրքական կարմիր մահիկն էին, 4-րդը՝ Թուրք-ամերիկյան բարեկամության միությունը[4]:

FTAA-ն ներառում է 37 կազմակերպություն, որոնց մեծ մասը մտնում է նաև *ATAA*-ի մեջ[5]: Կառույցի նախագահն է Քայա Բոզթեփեն: Ծնունդով Թուրքիայի սևծովյան տարածաշրջանից է: Տնտեսագիտություն է դասավանդում Նյու Յորքի քաղաքային համալսարա-

[1] http://www.tc-usa-pac.org/what.html
[2] http://www.tc-usa-pac.org/contact.html
[3] http://www.taldf.org/contact.html
[4] "The birth and growth of Turkish American community", "Turkish Daily News", 21-22.04. 2004.
[5] Տե՛ս www.tadf.org

նում *(CUNY)*, որը Միացյալ Նահանգների հնագույն համալսարաններից է: Բոզթեփեն փորձառու լոբբիստ է, դեռևս 1984-ին հիմնել է թուրք-ամերիկյան սպորտային միությունը, մեկ տասնամյակ աշխատել է Միացյալ Նահանգների «Թուրքի ձայն» ռադիոկայանում, Նյու Ջերսիի «Օզջան փրոդաքշընզ» ընկերության հետ համատեղ հիմնել է ԱՄՆ թուրքական առաջին հեռուստաալիքը՝ *TRTV*[1]:

Բոզթեփեն փոխարինեց Աթիլա Փաքին, որի ղեկավարման օրոք *FTAA* ներքին պառակտումը ծայրակետին էր հասել: Փաքը հակասությունների մեջ էր փոխղեկավար Ֆարուք Աջարի, ղեկավար այլ անդամների հետ, առկա էր դատական վեճ, որը ծավալվեց 2006թ-2007թթ.: *FTAA* երկփեղկման իրողությունը թուրքական մամուլում քանիցս բացասական արձագանք է գտել: 2007թ. մարտին Թուրքիայի ԶԼՄ-ում նշվում էր, թե այն պայմաններում, երբ ԱՄՆ օրակարգում է Հայկական հարցը, թուրքական միություններն իրենց ժամանակը և ռեսուրսները վատնում են ներքին «խժդժությունների» վրա: «Ինչո՞վ են զբաղվում հայկական օրինագծի դեմ պայքարելու կոչված ԱՄՆ թուրքական կառույցները». հարցնում է թուրք վերլուծաբաններից մեկը և պատասխանում. «…ներքին պայքարով: *FTAA* ղեկավարներն իրար են դատում»[2]: Ա.Փաքը ևս ծնվել է Թուրքիայում, ԱՄՆ է փոխադրվել 1995թ., բնակվում է Նյու Ջերսիում, ավտոճանապարհների ինժեներ է:

Աթիլա Փաքն իր հերթին 2006թ. հունվարին փոխարինել էր Աթա Էրիմին, որը *FTAA*-ն ղեկավարել էր մի քանի տասնամյակ: Աթա Էրիմը ծնունդով Թուրքիայից է, ԱՄՆ-ում է հաստատվել 1958թ.:

1981-ից սկսած՝ *FTAA*-ն յուրաքանչյուր տարվա մայիսի 3-րդ շաբաթ օրը, Թուրքիայի անկախության պատերազմի մեկնարկի տարեդարձի առիթով Նյու Յորքում կազմակերպում է քայլերթ, որը համարվում է ԱՄՆ-ում խոշորագույն թուրքական հասարակական նախաձեռնությունը: Մասնակիցների թիվը հասնում է մի քանի

[1] Kaya Boztepe, “Kan kayıbı durdurmalıyız”, http://www.hurriyetusa.com, 12.10.2007թ.:
[2] Türkler birbirini yerken Ermeniler mali götürüyör” Savas Sözal, “Yeni çağ”, www.yenicag.com.tr , 06.03.07.

հազարի, ներգրավված են նաև ադրբեջանցիներ[1]:

FTAA վերոնշյալ փոխղեկավար Ֆարուք Աջարի ջանքերով Նյու Ջերսի նահանգի Փաթերսոն քաղաքի խորհուրդը հավանություն տվեց քաղաքի զբոսայգիներից մեկը Աթաթուրքի անվամբ կոչելու և Աթաթուրքի հուշարձան կանգնեցնելու նախաձեռնությանը: Փաթերսոնում մոտ 20 հազար թուրք է ապրում: Լրագրող և գովազդային բիզնեսի մեջ մասնագիտացող Աջարն, ըստ թուրքական աղբյուրների, հաջող հարաբերություններ էր զարգացրել քաղաքային իշխանությունների հետ, կամավոր սկզբունքով աշխատել էր քաղաքապետարանի համար և իշխանությունների հետ համաձայնեցրել Աթաթուրքի զբոսայգու կառուցումը: Իր ծրագրի իրականացման ուղղությամբ Աջարն աշխատել էր 2 տարի, այս ընթացքում խուսափել հրապարակայնացումից հայկական և հունական լոբբիների հակազեցությանը չհանդիպելու համար՝ հաջողությունների մասին հայտարարելով միայն 2010թ. հունվարին: Նյու Ջերսիի Աթաթուրքի արձանն ապահովում են Ստամբուլի մերձակա Յալովա քաղաքի իշխանությունները[2]: Այգու և հուշարձանի կառուցումը թուրքական լոբբիի առաջին նմանօրինակ հաջողությունն է Միացյալ Նահանգներում:

Միացյալ Նահանգներում գործում են նաև *ATAA*-ի և *FTAA*-ի մաս չկազմող թուրքական կազմակերպություններ: Դրանք են, մասնավորապես՝ Թուրքական հետազոտությունների ինստիտուտը *(ITS)*, Թուրք-ամերիկյան գիտաշխատողների միությունը *(ATAS)*, Թուրք-ամերիկյան իսլամական դաշինքը *(TAIF)*, Ամերիկա-թուրքական խորհուրդը *(ATC)*, Թուրքիայի ամերիկացի բարեկամները *(AFOT)*, Թուրք-ամերիկյան բարեկամության միությունը *(ATFA)*, Ամերիկա-թուրքական գործարար միությունը, «Ռեյին դրոփը» և այլն[3]:

Թուրքական հետազոտությունների ինստիտուտը *(Institute*

[1] www.ftaa.org

[2] "ABD'de Acar bir girişim", www.farkyalovada.com, 06.01.2010.

[3] Amerika'da siyasal yapı: Lobiler ve dış politika: Türk, Yunan, Ermeni, Israil ve Arap Lobilerin ABD'nin dış politikasına etkileri", Tayar Arı, Istanbul 2000, էջ 221, "Gönüllüler ABDli vekilileri şaşırttı: Türkler kapımızı hiç çalmamıstı ", "Zaman", 26.02.2007.

for Turkish Studies - ITS) հիմնադրվել է 1982թ. Վաշինգտոնում: Ներկայիս ղեկավարն է պրոֆեսոր Ռոբերտ Փիրսոնը: Վերջինս պաշտոնաթող դիվանագետ է, Թուրքիայում ԱՄՆ դեսպան է աշխատել 2000-2003թթ.: *ITS* կառույցը զբաղվում է գերազանցապես ԱՄՆ գիտակրթական հաստատություններում թուրքագիտական ամբիոնների հիմնադրման աշխատանքով, ինչն, ըստ թուրք վերլուծաբանի և կառույցի կայքի, իրականացվում է Թուրքիայի կառավարության հովանավորությամբ: ԱՄՆ-ում գործող լոբբիների ոլորտում մասնագիտացող թուրք փորձագետ Թայար Արընն նշում է. «*ITS*-ը Միացյալ Նահանգների տարբեր համալսարաններում ամբիոնների հիմնադրման համար գործակցում է Թուրքիայի կառավարության հետ: Թուրքիայի կառավարության ջանքերի արդյունքում ամբիոններ են հիմնադրվել Ջորջթաունի, Փրինսթոնի, Հարվարդի, Չիկագոյի, Ինդիանայի, Փորթլանդի համալսարաններում: Այս ամբիոնները հնարավոր եղավ հիմնադրել Թուրքիայի իշխանությունների, ԱՄՆ-ում բնակվող թուրքական համայնքի և նշված համալսարանների համատեղ ջանքերով: Բացի այդ, Կալիֆոռնիա, Կոլումբիա, Միչիգան, Նյու Յորք, Օհայո, Փենսիլվանիա, Տեխաս, Յութա նահանգների և Վաշինգտոնի համալսարաններում բացվել են թուրքագիտական կենտրոններ և բաժիններ»[1]:

Այս մեջբերումը վկայում է, որ Անկարան անմիջականորեն աշխատում է սեփական լոբբիստական կազմակերպությունների հետ, հարկ եղած դեպքում, նաև՝ ուղղորդում: Հավելենք, որ *ITS*-ի բյուջեն մինչև վերջերս կազմում էր տարեկան 2 միլիոն դոլար, ինչը դժվար թե գոյանար համայնքային նվիրատվությունների հաշվին և վկայում է Թուրքիայի պետական գանձարանից ուղղակի հատկացումների հավանականության մասին: *ITS*-ի աշխատանքի արդյունքում ԱՄՆ-ում թուրքագիտական թեմայով տասնյակ աշխատություններ են հրատարակվել, որոնք առնչվում են Թուրքիայի արտաքին քաղաքականությանը, տնտեսությանը, պատմությանը[2]:

[1] "Amerika'da siyasal yapı: Lobiler ve dış politika: Türk, Yunan, Ermeni, Israil ve Arap lobilerin ABD'nin dış politikasına etkileri", Tayar Arı, Istanbul 2000, էջ 230:
[2] Նույն տեղում, էջ 230-231:

ITS-ի հետ կապված ևս մեկ միջադեպ, որը վկայում է Անկարայի կողմից դրա հեռակառավարման մասին: 2001-2006թթ. *ITS* կազմակերպության նախագահն էր Դոնալդ Քուեյթերթը, որն այդ տարիներին Հյուսթոնի համալսարանի պրոֆեսոր էր: 2006-ին ամերիկացի պատմաբան Դոնըլդ Բլոքսեմի «Ցեղասպանության մեծ խաղը» գրքի գրախոսականում նա «համարձակություն» ունեցավ հայտարարել, որ «1915-ին կատարվածը համապատասխանում էր ՄԱԿ ցեղասպանության վերաբերյալ բնորոշմանը»: Նույն թվականի դեկտեմբերի 13-ին, դեպքից մի քանի շաբաթ անց, Քուեյթերթը հանկարծակի հրաժարական տվեց *ITS*-ի ղեկավարի պաշտոնից[1]: Ամերիկացի պրոֆեսորը հայտարարեց, որ իրեն ստիպել է հրաժարական տալ Վաշինգտոնում Թուրքիայի դեսպան Նաբի Շենսոյը: Սկանդալային պատմությանը «Վաշինգտոն փոստի» անդրադարձում կարդում ենք. «ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպանն ասաց, որ ինքը (Քուեյթերթը- Հ.Ն.) զայրացրել է Թուրքիայի որոշ քաղաքական ղեկավարների, և նրանք սպառնում են դադարեցնել ինստիտուտի ֆինանսավորումը»[2]: Թուրքիայի դեսպանը, բնականաբար, ժխտեց «Վաշինգտոն փոստի» այս հայտարարությունները, միայն թե այս դեպքում անհասկանալի է մնում երկու իրողություն. ա) ինչո՞ւ *ITS* ղեկավար ամերիկացի պրոֆեսորը հրաժարական ներկայացրեց իր գրախոսականը հրապարակելուց կարճ ժամանակ անց, բ) ինչո՞ւ *ITS* անդամ մի քանի պրոֆեսոր ավելի ուշ նամակով դիմեցին Թուրքիայի վարչապետի աշխատակազմին (!)՝ պահանջելով վերականգնել պրոֆեսոր Քուեյթերթին: Մինչդեռ Քուեյթերթի հայտարարության ֆոնին՝ այս զարգացումները միանգամայն տրամաբանական են դառնում: Ավելին, *ITS*-ի հետ աշխատող ամերիկացի պրոֆեսորներն ուսումնասիրություններ կատարելով՝ պարզել են, որ Թուրքիայի կառավարությունը ցանկացած պահի կարող է դադարեցնել *ITS* ֆինանսավորումը: Նրանք նույն նամակով կոչ են արել Անկարային ֆինանսավորումը

[1] http://en.wikipedia.org/wiki/Institute_of_Turkish_Studies.

[2] "Board members resign to protest chair's ousting", www.washongtonpost.com 05.07.2008, էջ B05:http://www.washingtonpost.com/wp-dyn/content/article/2008/07/04/AR2008070402408.html

չկապել քաղաքական խնդիրների հետ: Հավելենք, որ 2008-ի մայիսին, ի նշան բողոքի, *ITS* կազմից դուրս եկան նաև Մերսի Փեյթոնը, Ռեշաթ Քասաբան և Քեմակ Սիլայը[1]:

Տեղին է մեջբերել թուրք ուսումնասիրող Ֆարուք Շենի դիտարկումը. «Ամբողջությամբ Թուրքիայի կողմից հովանավորվող և կառավարվող միությունների առաջնային նպատակն է, որպեսզի ամերիկացիները խորհրդարաններում չհաստատեն Հայկական օրինագծերը»[2]:

2009թ. սեպտեմբերին *ITS* կառույցի հետ առնչվող աշխատակիցներից մեկն անձնական զրույցում ասաց. «Եթե *ITS* ղեկավարությունը հայտարարի, որ 1915թ. ցեղասպանություն է եղել՝ մեզ վրա Անկարայից կբղավեն ուղղակի: Բայց մենք նրանց աշխատողը չենք: *ITS*-ը պայքարում է, որ Թուրքիայի կառավարությունից անկախ գործի և բավական հաջողության է հասել»:

ATC կամ ԱՄՆ թուրքական խորհուրդ *(American Turkish Counsil,* կայքը՝ *www.the-atc.org)* կազմակերպությունը ևս գործում է Վաշինգտոնում: Կառույցի ղեկավարն է Ջեյմս Հոլմսը, գործադիր տնօրենը՝ Ջանդան Բյուլուքունսալը: Կոմերցիոն բնույթի նախագծերը կառավարում է Այշե Սյումերը, ռազմարդյունաբերական, էներգետիկ և շինարարական նախագծերը՝ Ջենք Սիդերը[3]:

ATC-ին կից գործում է *AFOT*-ը՝ Թուրքիայի ամերիկյան բարեկամներ *(American Friends of Turkey*, կայքը՝ *www.afot.us)* կազմակերպությունը, որին անդամակցել են ամերիկացիներ, ովքեր Թուրքիայի բարեկամներն են: Կառույցի նախագահն է նույն *ITS* նախագահ Ռոբերտ Փիրսոնը, անդամների թվում են նույն Ջեյմս Հոլմսը, պաշտոնաթող գնդապետ Փրիսթլն Հյուզը, նախկին դեսպան Մարք Փերիսը, պատմաբան Դեյվիդ Քութելը և ուրիշներ[4]:

Բուն *ATC*-ն զբաղվում է թուրք-ամերիկյան տնտեսական և պաշտպանական ոլորտներում համագործակցության խորացման հարցերով: *ATC*-ն յուրաքանչյուր տարի կազմակերպում է 4-օրյա

[1] Նույն տեղում:
[2] "Euro-Türkler", Faruk Şen, Istanbul 2007, էջ 87:
[3] http://the-atc.org/data/aboutus/
[4] http://www.afot.us/board.htm

համաժողով, որին մասնակցում են առևտրի, հեռահաղորդակցության, էներգետիկայի, բեռնափոխադրումների, գիտության, ռազմական արդյունաբերության, արտաքին քաղաքականության ոլորտների տարբեր «տրամաչափերի» ամերիկյան և թուրքական ընկերություններ, փորձագետներ: Առավել փոքր ծավալի խորհրդաժողովներ կազմակերպվում են յուրաքանչյուր ամիս, հաճախ՝ ամիսը մի քանի անգամ: 2009-ի մայիսի 31-ից հունիսի 3-ը Վաշինգտոնում 28-րդ անգամ *ATC* տարեկան խորհրդաժողով անցկացվեց:

ATC կազմակերպության տարեկան բյուջեն կազմում է մոտ 1 միլիոն ԱՄՆ դոլար: *ATC*-ն նաև սահմանել է մրցանակ, որը տրվում է թուրք-ամերիկյան հարաբերությունների զարգացմանը նպաստած ամերիկյան պաշտոնյաներին՝ Զբիգնև Բժեզինսկի, Դիք Չեյնի, Ալեքսանդր Հեյգ (նախկին պետքարտուղար), Ջորջ Շուլց (նախկին պետքարտուղար), Ռիչարդ Փերլ (ԱՄՆ պաշտպանության նախկին փոխնախարար), Էլիոթ Ռիչարդսըն (ԱՄՆ պաշտպանության նախկին փոխնախարար): *ATC* կառույցի մրցանակներն են ստացել նաև ԱՄՆ Կոնգրեսի անդամներ Ռոբերտ Բըրդը, Ջոն Թաուերը, Ռիչարդ Լյուգարը, Սթիվըն Սոլարզը, Թոմ Լանթոսը և ուրիշներ: Հատկանշական է, որ Թոմ Լանթոսը 110-րդ գումարման Կոնգրեսի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահն էր, որտեղ 2007թ. հոկտեմբերի 10-ին հաստատվեց Հայոց ցեղասպանության վերաբերյալ օրինագիծը: Լանթոսը կողմ էր քվեարկել, ինչը, հասկանալի պատճառով, «ցնցել» էր թուրքական կողմին[1]: Առավել ևս, որ Լանթոսը նաև Կոնգրեսի թուրքական հարցերով հանձնախմբի անդամ էր:

2002 թվականից Նյու Յորքում լույս է տեսնում *"Turk of America"* անգլիալեզու ամսագիրը: Այն հասանելի է նաև ինտերնետում՝ *www.turkofamerica.com:* Գործում են նաև *www.turkishny.com* տեղեկատվական կայքէջը, *"Turkish Journal"*-ը *(www.turkishjournal.com)*, Նյու Ջերսիում բացվել է *Ebru TV* մասնավոր հեռուստաալիքը:

[1] "Amerika'da siyasal yapı: Lobiler ve dış politika: Türk, Yunan, Ermeni, Israil ve Arap Lobilerin ABD'nin dış politikasına etkileri", Tayar Arı, Istanbul 2000, էջ 232:

Անվանի թուրքերն ԱՄՆ-ում

Որպես ԱՄՆ թուրքական համայնքի անվանի գործիչ է հանդես գալիս «Կոկա-կոլա» ընկերության նախագահ Մուհթար Քենթը, որն, ինչպես նշվեց, 2007թ. աշնանը միացել է *ATS* համայնքային կառույցին: «Առաջին անգամ թուրքը նստեց համաշխարհային հսկայի ղեկավարի աթոռին»,- այս առիթով գրեց «Սաբահը»[1]: Քենթը 1979-ից աշխատում է «Կոկա-կոլա» ընկերությունում, Ջորջիա նահանգի մայրաքաղաք Ատլանտայում աշխատել է ընկերության վաճառքի բաժնում, այնուհետև Նիդեռլանդներում և Իտալիայում վարել տարբեր պաշտոններ: 1985թ. դարձել է ձեռնարկության Թուրքիայի և Կենտրոնական Ասիայի բաժնի գլխավոր տնօրենը, 1999-2005թթ. Թուրքիայի գարեջուր արտադրող «Էֆես» ընկերության նախագահն էր, 2005-ի մայիսից վերադարձել է «Կոկա-կոլա», 2006թ. նոյեմբերին դարձել «Կոկա-կոլայի» գործադիր տնօրեն: 2008թ. հուլիսի 1-ին «Կոկա-կոլայի» վարչական խորհրդի տնօրեն Նևին Իզդելը պաշտոնը փոխանցեց 55-ամյա ամերիկաբնակ թուրք Մուհթար Քենթին: 200 պետություններում տարբեր ծավալի արտադրություն ունեցող «Կոկա-կոլայի» աշխատակիցների թիվը 300 հազար է:

ԱՄՆ հաջողակ թուրք գործարարների թվում նշվում է Ահմեթ Էրթեգյունի անունը: Ծնվել է Թուրքիայում 1923թ.: 1934թ. Էրթեգյունի հայրը նշանակվել է Վաշինգտոնում Թուրքիայի դեսպան, և Էրթեգյունները հաստատվել են ԱՄՆ-ում: Հոր մահից հետո Ահմեթը և եղբայրը՝ Նեսուհը, չեն վերադարձել Թուրքիա, հաստատվել են ԱՄՆ-ում: 1947-ին Նյու Յորքում Էրթեգյունը Հերբ Աբրամսոնի հետ հիմնադրեց «Աթլանտիկ ռեքըրդս» ընկերությունը: Նախնական ֆինանսական կապիտալի հարցում օգնել էր մի թուրք ատամնաբույժ: Ժամանակի ընթացքում ձայնագրման ընկերությունը ընդլայնվեց, ձեռք բերեց Կալիֆոռնիայի ձայնագրման ընկերություններից մեկը: Ահմեթ Էրթեգյունը ԱՄՆ թուրքական համայնքի օգտին ամենախոշոր նվիրատվություն կատարող գործիչներից է և

[1] "İlk kez bir Türk, dünya devinin bir kaptan köşküne oturdu", "Sabah", 07.12.2007.

ATS կառույցի հիմնական դոնորներից էր: Ահմեթ Էրթեգյունը վախճանվել է 2006թ.: Նրանից հետո *ATS* ղեկավար Քյոփրյուլյուն փորձում էր լրացնել «բացը» և այդ նպատակով 2007թ. աշնանը ներգրավեց Մուհթար Քենթին ու մի քանի այլ խոշոր գործարարներ: ԱՄՆ Հանրային հեռուստատեսությունը նկարահանել է ֆիլմ Ահմեթ Էրթեգյունի մասին՝ «Աթլանտիկ ռեքըրդս. տուն, որ կառուցեց Ահմեթը» վերնագրով[1]:

Միացյալ Նահանգների Կին ճարտարագետների միության *(The Society of Woman Engineers of America)* նախագահ է ընտրվել թրքուհի Սիդիքա Դեմիր-Վելիփաշաօղլուն, որը պաշտոնավարում է 2009թ. հուլիսի 1-ից: Նա միաժամանակ ամերիկյան «Գենենթեք» կենսատեխնիկական ընկերության ղեկավար կազմում է: Վաշինգտոնում բնակվող թուրք ճարտարագետը ծնունդով Ստամբուլից է, ավարտել է ԱՄՆ Ջոնս Հոփքինզի և Ռայսի համալսարանները: Նույն կառույցի ղեկավար կազմում է նաև Սիդիքա Դեմիր-Վելիփաշաօղլուի քույրը՝ Սեմահաթ Դեմիրը: Վերջինս Սպիտակ տանը կից Գիտատեխնիկական քաղաքականության գրասենյակի աշխատակցուհի է:

ԱՄՆ թուրքական համայնքի ամենաանվանի քաղաքական գործիչն է համարվում Օզ (Օսման) Բենգուրը: Բնակվում է Մերիլենդ նահանգի Թոուսըն քաղաքում, արմատներով Սամսունից է: Հայրը Միացյալ Նահանգներում է հաստատվել 1919թ.[2]: Բենգուրը Կոնգրեսի անդամության թեկնածու էր 2002թ. Մերիլենդի 2-րդ շրջանից, բայց անհաջողություն կրեց՝ ստանալով 23 հազար 436 ձայն կամ քվեների 36,4 տոկոսը: 2002թ. սեպտեմբերի 11-ին Օզ Բենգուրը երախտագիտության ուղերձ հղեց ԱՄՆ Մերիլենդի և մյուս նահանգների թուրքական համայնքների այն անձանց, ովքեր օժանդակել էին իրեն ընտրարշավում: «Արքադաշլար (բարեկամներ – Հ.Ն.), ուզում եմ շնորհակալություն հայտնել բոլորին աջակցության և բարեկամության համար, որ ցուցաբերեցիք ինձ ԱՄՆ Կոնգրեսում տեղ զբաղեցնելու իմ արշավի ժամանակ: Ձեզանից

[1] http://www.tc-america.org/faxblast5na.html

[2] "Abdullah Gul or Oz Bengur", www.turkofamerica.com, 15.04.2005. http://www.turko fa me ri ca. com/index.php?option=com_content&task=view&id=256

հարյուրները շռայլորեն աջակցեցին ինձ: Ամեն «ուիք էնդ» և ընտրությունների օրը հարյուրավոր կամավորներ էին ժամանում Նյու Յորքից, Նյու Ջերսիից, Դելավերից, Կոլումբիայի տարածաշրջանից և Վիրջինիայից ամառվա շոգին անդուլ ինձ համար աշխատելու նպատակով»[1]: Ամերիկաբնակ թուրքերը նաև դրամահավաք էին կազմակերպում Օզ Բենգուրի օգտին Նյու Յորքում, Վաշինգտոնում, Նյու Ջերսիում և Չիկագոյում:

Օզ Բենգուրը շարունակում է աշխատել քաղաքականության ոլորտում: Երբ անհաջողության մատնվեց 2002թ., վերաձևակերպելով Չերչիլի խոսքերը՝ հայտարարեց, թե «դա ոչ թե իր կարիերայի ավարտն է, այլ միայն սկզբի ավարտը»: 2007թ. ապրիլի 17-ին, *ATAA* և ԱՄՆ թուրքական կոալիցիայի նախաձեռնությամբ, Բենգուրը և ԱՄՆ Կոնգրեսի թուրքական հարցերով հանձնախմբի համանախագահներ Ռոբերտ Ուեքսլերի և Էդ Ուիթֆիլդի աշխատանքային գրասենյակների օրենսդրական տնօրեններ Ջոնաթան Կացը և Լեսլի Սթաուտը համատեղ դասախոսություն կարդացին «ԱՄՆ քաղաքական կյանքը» թեմայով[2]:

2007թ. հունվարի 9-ին ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը Միսիսիպի նահանգի հարավային բնակավայրերից մեկում շրջանային դատավորի պաշտոնի թեկնածու առաջադրեց Հալիլ Սուլեյման Օզերդենին: Վերջինիս թեկնածության հաստատումը Սենատի կողմից, ի դեպ, տեղի է ունեցել նույն թվականի ապրիլի 24-ին, և մայիսից Օզերդենը ստանձնել է պաշտոնը[3]: Տեխաս նահանգի Հյուսթոն քաղաքում է պաշտոնավարում մեկ այլ թուրք դատավոր՝ Ջեյ (Ջեյհուն) Քարահանը[4]:

Վիրջինիա նահանգի Նորֆոլք բնակավայրում է ապրում հանրապետական կուսակցությունից քաղաքական գործիչ, թուրքական արմատներով Ջոն Ամիրալը: Ըստ ամերիկաթուրքական կայքի, «Ջոնը նվիրված է թուրք-ամերիկյան և թուրք-ադրբեջանական հարաբերություններին և ուրախ է որևէ առիթով հպարտորեն ներկայացնել իր ծագումը»[5]:

[1] "Oz Bengur to Turkish Americans – Thank you", "Turkish Times", 15.09.2992
[2] www.ataa.org
[3] http://www.fjc.gov/servlet/tGetInfo?jid=3145
[4] http://www.ccl.co.harris.tx.us/criminal/8/bio.htm
[5] http://www.tc-usa-pac.org/images/john_amiral.pdf

Թեև իր անձնական կայքի կենսագրական բաժնում Ջոն Ամիրալը որևէ կերպ չի հպարտանում թուրքական ծագմամբ և անգամ չի նշում այս մասին[1]…

Միացյալ Նահանգներում Թուրքիայի կողմից վարձվող լոբբիստական միությունները

Բացի ներհամայնքային կազմակերպումից, ինչպես նաև Անկարա-Վաշինգտոն ուղղակի շփումների մարտավարությունից, Թուրքիան Միացյալ Նահանգներում իր շահերն առաջ մղելու համար լայնորեն օգտվում է նաև ԱՄՆ-ում գործող լոբբիստական մասնավոր ընկերությունների ծառայություններից, ինչն ամերիկյան օրենսդրության շրջանակում է:

«Քանի որ ԱՄՆ-ում բավարար չափով թուրքեր չկան, եղածներն էլ ինքնակազմակերպված չեն, Թուրքիան ձգտում էր իր գործունեությունն իրականացնել ամերիկյան լոբբիստական կառույցների հետ»,- գրում է թուրք վերլուծաբան Արընն[2]:

Ըստ առկա փաստերի, Թուրքիան լոբբիստական գրասենյակների ծառայություններից օգտվում է 1981 թվականից: Հնարավոր է՝ թուրքական կողմին այս քայլին մղել է այդ տարվա ապրիլի 22-ին Հոլոքոստի հիշատակի օրվա առիթով նախագահ Ռոնալդ Ռեյգանի ելույթում «Հայոց ցեղասպանություն» կապակցության կիրառումը: Անկարայի առաջին «կլիենտը» Ռոնալդ Ռեյգանին մոտ կանգնած հանրապետական Ռոբերտ Գրեյի կողմից ղեկավարվող *"Gray and Company" (G&C)* ընկերությունն էր: Ուշագրավ է, որ հետագա տարիներին նախագահ Ռեյգանն այլևս չկիրառեց «Հայոց ցեղասպանություն» բառերը: Թեմայի հետ կարող է կապված լինել փաստը, որ ընտրարշավի ընթացքում Ռեյգանի «սփիչռայթերը» հայազգի Քենեթ Խաչիկյանն էր, որը 1981թ. մայիսին անցավ այլ աշխատանքի[3]: Թեև հարցը միանշանակ շարունակում էր մնալ ԱՄՆ քաղաքական օրակարգում, և մասնավորապես 1987թ. օգոս-

[1] http://www.amiralforpeople.com/panel/home

[2] "Amerika'da siyasal yapı: Lobiler ve dış politika: Türk, Yunan, Ermeni, Israil, ve Arap Lobilerin ABD'nin Dış Politikasına Etkileri", Tayar Arı, Istanbul 2000, էջ 220:

[3] "Amerika Birleşik Devletleri'nde Ermeniler ve Ermeni lobisi", Şenol Kantarcı, Istanbul 2004, էջ 102:

տոսի 7-ին Ռոնալդ Ռեյգանն իր անձնական օրագրում գրել է. «Մեր թուրք բարեկամները նյարդայնանում են: Կոնգրեսը կրկին քննարկում է օրինագիծ, որը Թուրքիայից պահանջում է ստանձնել պատասխանատվությունը Օսմանյան կայսրության գոյության ընթացքում հայերի հետապնդումների համար»[1]:

1983թ. *"Gray and Company"* լոբբիստական կառույցը միավորվեց "*Hill and Knowlton"* լոբբիստական կազմակերպության հետ: 1983-ի հունիսի 1-ից *"Hill and Knowlton"*-ը և Վաշինգտոնում Թուրքիայի դեսպանատունը տարեկան 300 հազար ԱՄՆ դոլարի պայմանագիր ստորագրեցին: Լոբբիստական ընկերության փոխնախագահ Գերի Հայմելը և Թուրքիայի դեսպան Ջանդեմիր Օնհոնը համաձայնեցին, որ կառույցը օժանդակելու է Թուրքիային «տնտեսական բնույթի և անվտանգությանը վերաբերող հարցերում, օգնելու է օրենսդիրների հետ ծանոթություններ հաստատելու, կոնգրեսականներին ուղղված փաստաթղթերի պատրաստման և տարածման գործերում, Կոնգրեսում շփումների, հանդիպումների ժամանակ»: Կետերից մեկում առավել որոշակի է նկատվում Մեծ եղեռնի ճանաչման դեմ աշխատանք տանելու վերաբերյալ պայմանավորվածությունը: «*G&C*-ն օժանդակելու է դեսպանին և իր աշխատակազմին դիմակայելու ցանկացած արշավի կամ գործունեության, որը կարևոր է ԱՄՆ-ում Թուրքիայի հետաքրքրությունների և վարկանիշի համար»[2], նշված էր կողմերի միջև ստորագրված փաստաթղթում:

Մեր օրերում Ջանդեմիր Օնհոնը արդեն պաշտոնաթող է, սակայն շարունակում է մերժողական գործունեությունը: Երբ Թուրքիայի մի խումբ մտավորականների նախաձեռնությամբ հիմնվեց կայքէջ, որով հայ ժողովրդից ներողություն էին հայցում Մեծ եղեռնի համար, Օնհոնը միացավ այն 145 պաշտոնաթող դիվանագետներին, որոնք դատապարտեցին թուրք մտավորականների նախաձեռնությունը[3]:

[1] "The Reagan diaries", The Ronald Reagan Presidential library foundation, էջ 524:
[2] http://www.fara.gov/docs/3301-Exhibit-AB-19830801-D0GSET01.pdf »õ
http://www.fara.gov/docs/3301-Exhibit-AB-19830601-D0I07601.pdf
[3] Տե՛ u www.eraren.org/index.php?Page=Sayfa&No=44

“Hill and Knowlton”-ը 5 տարի միայնակ իրականացրեց ԱՄՆ-ում Թուրքիայի լոբբինգը: Ի դեպ, *“Hill and Knowlton”*-ի ղեկավար կազմում աշխատում էր էթնիկ թրքուհի Արզու Թունջաթը:

1989թ. Թուրքիան տարեկան 875 հազար դոլարի պայմանագիր ստորագրեց *“International advisers”* կառույցի հետ, որը ձևավորվեց հատուկ Թուրքիայի շահերի լոբբինգով զբաղվելու նպատակով: Թուրքիայի կողմից փաստաթուղթը ստորագրեց դեսպան Շյուքրյու Էլեքդաղը (ներկայում՝ խորհրդարանի պատգամավոր ընդդիմադիր Ժողովրդա-հանրապետական կուսակցությունից)[1]: Էլեքդաղը բավական ակտիվ է և հետաքրքրված է Մեծ եղեռնի միջազգային ճանաչմանը հակազդելու և Հայաստան-Թուրքիա փոխհարաբերությունների խնդիրներով:

Մեկ տարի անց Թուրքիան պայմանագիր ստորագրեց նաև *“McAulifee, Kelly, Rafaelli & Seimans”* կազմակերպության, ապա *“Fleishman Hillard-ի”* հետ, ուր փոխադրվել էր վերոնշյալ Արզու Թունջաթը[2]: Ենթադրվում է, որ վերջինս այդ ժամանակահատվածում համակարգում էր Թուրքիայի և ԱՄՆ լոբբիստական կառույցների հարաբերությունները:

2000թ., երբ Հայկական հարցը ԱՄՆ Կոնգրեսի օրակարգում էր, Անկարայի շահերի հիմնական լոբբիստը *“Livingston group”* ընկերությունն էր, որի ղեկավարն էր Կոնգրեսի նախկին անդամ, հանրապետական Ռոբերտ Լիվինգսթոնը: Վերջինս և Թուրքիայի այդ ժամանակվա դեսպան Բաքի Իլքինը գործակցության մասին 1 միլիոն 800 հազար տարեկան վարձավճարով համաձայնագիրը ստորագրեցին 2000 թվականի հունվարի 31-ին: Լիվինգսթոնը Բուշի հանրապետական վարչակարգից հատկապես սերտ հարաբերություններ ուներ փոխնախագահ Դիք Չեյնիի և Բուշի նախկին խորհրդական Կառլ Ռոուվի հետ: Ռ.Լիվինգսթոնն էր միջնորդում, որ Վաշինգտոն մեկնող թուրք խորհրդարանականները հանդիպումներ ունենան Կոնգրեսում: Ըստ առկա տվյալների՝ նա անձամբ ուղեկցում է թուրք պատգամավորներին Կոնգրես այցերի ժամա-

[1] http://www.fara.gov/docs/4203-Exhibit-AB-19890101-D1MNNO02.pdf
[2] Նույն տեղում, էջ 221-225:

նակ: *“Livingston group”* ընկերությունն աշխատել է կոնգրեսականներ Բոբի Ջինդալի և Ջոն Մուրթայի հետ, որպեսզի վերջիններս Հայկական օրինագծի հարցում որդեգրեն ընդդիմադիր կեցվածք:

2006թ. նոյեմբերի 7-ին Կոնգրեսի ընտրություններից հետո հանրապետականները կորցրին մեծամասնությունը Կոնգրեսի զույգ պալատներում: Քանի որ Թուրքիայի «պրոտեժե» *“Livingston group”*-ը սերտ էր հանրապետականների հետ, անհրաժեշտություն առաջացավ, բացի *“Livingston group”*-ից, աշխատել նաև դեմոկրատներին մոտ կանգնած կառույցի հետ: Այս նպատակով դեռևս 2006թ. մարտին Թուրքիան համաձայնագիր էր կնքել ամերիկյան *“DLA Piper”* վարձու կառույցի հետ, որը ավելի մոտ էր դեմոկրատական շրջանակների հետ: Մեկ տարի անց Անկարան երկարացրեց *“DLA Piper”*-ի հետ համաձայնագիրը, իսկ 2007-ի մայիսին 1,8 մլն դոլարով արդեն վերջին անգամ 1 տարով երկարաձգեց *“Livingston group”*-ի համաձայնագիրը: Միայն 2000-2007թթ. ընթացքում Թուրքիան միայն *“Livingston group”*-ին վճարել է 13 մլն ԱՄՆ դոլար:

2009թ. դրությամբ *“Fleishman Hillard” (FH)* ընկերությունը շարունակում է աշխատել թուրքական կազմակերպությունների հետ: 2008թ. օգոստոսին Վաշինգտոնում Թուրքիայի գործող դեսպան Նաբի Շենսոյը և *FH* ընկերության փոխնախագահ Մարթա Բոդրոն ստորագրեցին նոր համաձայնագիր, որով Անկարան պարտավորվեց ամսական 113 հազար 683 դոլար փոխանցել *“Fleishman Hillard”*-ի Չիկագո քաղաքի *“La Salle”* բանկի հաշվեհամարին՝ վերջինիս լոբբիստական ծառայությունների դիմաց: *“Fleishman Hillard”* ընկերությունը հասարակության հետ կապերի ծառայություններ է մատուցելու Թուրքիայի կառավարությանը՝ օգնելով դեսպանատանը, որպեսզի Միացյալ Նահանգներում ձևավորվի Թուրքիայի առավել դրական վարկանիշ, նշված էր պայմանագրի տեքստում[1]:

2007-ից մինչև գրքի հրատարակման պահը *“Fleishman Hillard”*-ում է աշխատում թրքուհի Զեյնեփ Աքդողանը: Ուսանել է

[1] ԱՄՆ արդարադատության նախարարության արխիվ, http://www.fara.gov/docs/5801-Exhibit-AB-20081229-5.pdf

Սան Ֆրանցիսկոյի համալսարանում, ներկայում զուգահեռ գիտաշխատող է Վաշինգտոնի Ջորջթաունի համալսարանում և գործակցում է ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպանատան հետ: Ըստ առկա տեղեկությունների, համակարգում է Թուրքիայի դեսպանատան կապը *FH*-ի հետ, Թուրքիայից իշխանությունների ներկայացուցիչների այցերի ժամանակ պատասխանատու է մամուլի ասուլիսների կազմակերպման համար[1]: Երբ 2008-ի նոյեմբերի 13-ին աշխատանքային այցով ԱՄՆ-ում գտնվող Թուրքիայի վարչապետ Էրդողանը Վաշինգտոնի մամուլի ակումբում հանդիպեց լրագրողների հետ, ամերիկացի մոդերատորը, որը նախապես ներկա լրագրողներից ստացել էր այն բոլոր հարցերը, որոնք ուղղված էին վարչապետ Էրդողանին, սեփական հայեցողությամբ ընտրեց դյուրին տարբերակները՝ խուսափելով վարչապետի համար ընթերցել Հայոց ցեղասպանության, Կիպրոսյան կարգավորման կամ քրդական խնդրի վերաբերյալ առավել բարդ հարցերը: Ավելի ուշ մոդերատորը հայտարարեց, թե չկարդաց նշված հարցերը, քանի որ «վարչապետը շտապում էր»: Թեև դա չխոչընդոտեց, որ վարչապետը հանդիպման ավարտից հետո զրուցեր կամ լուսանկարվեր: Տրամաբանական է ենթադրել, որ մոդերատորը կարող էր նաև այլ շարժառիթներ ունենալ նման վարվելակերպի համար: Համենայնդեպս, նշենք, որ սրահում էր գտնվում և հարցերը մոդերատորին էր փոխանցում *"Fleishman Hillard"*-ի աշխատակցուհին՝ Ջեյնեփ Աքդողանը:

Նախագահ Բարաք Օբամայի հաղթանակից հետո Անկարան նոր մարտահրավերների և գլխացավանքների առջև կանգնեց: Նախագահ Օբամայի խոստումը՝ ճանաչել Հայոց ցեղասպանությունը, առավել հիմնավոր էր. դեռևս Սենատում պաշտոնավարելիս Հայոց ցեղասպանության վերաբերյալ իր հայտարարությունն առայսօր հասանելի է *Youtube* համակարգում[2]:

2009-ի ապրիլի 24-ը ամերիկահայ կառույցները համարում էին կարևոր հնարավորություն, որպեսզի նախագահը կատարվա-

[1] ԱՄՆ արդարադատության նախարարության արխիվ, http://www.linkedin.com/in/zeynepakdogan

[2] www.youtube.com "Sen. Barack Obama Discusses Armenian Genocide…". (http://www.youtube. com/watch?v=JwR83GZjwdo&feature=related)

ծը բնութագրի «ցեղասպանություն» բառեզրով: Կարևոր է նաև հանգամանքը, որ նախագահը դեռ նոր էր մուտք գործել Սպիտակ տուն, և Թուրքիայի համար դժվար էր ձևավորել հակալոբբինգ՝ համոզելու Բարաք Օբամային՝ չկատարել սեփական խոստումը: Միաժամանակ, նախընտրական խոստումներից դեռ քիչ ժամանակ էր անցել: Անկարան, «միլիոններ բաժանելով», տագնապահար վարձում էր նոր լոբբիստական ընկերություններ. 2009թ. փետրվարի 1-ից մեկ տարի ժամկետով համաձայնագիր ստորագրվեց *"Gephard Group"* ընկերության հետ, 2009թ. մարտի 7-ին՝ նաև *"Caspian Group"* ընկերության հետ, որը հանդես էր գալիս *"Gephard Group"*-ի հետ համատեղ, ապրիլի 1-ին՝ նաև *«Dickstein Shapiro»* լոբբիստական կազմակերպության հետ[1]: Ի դեպ, վերջինիս ղեկավարն է Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի նախկին խոսնակ Դենիս Հասթերթը, որը 2000թ. աշնանը հրաժարվեց օրակարգ բերել Մեծ եղեռնի վերաբերյալ օրինագիծը: «Խնդիրներից մեկը, որի հետ Հասթերթը և մյուսները պետք է գործ ունենան Թուրքիայի համար լոբբինգ իրականացնելիս, Կոնգրեսի օրինագիծն է, որով ցեղասպանություն է որակվում 20-րդ դարասկզբին շուրջ 1,5 միլիոն հայերի սպանությունը: Թուրքիայի կառավարությունը դիմադրում է և կազմակերպում լոբբինգ ամեն անգամ, երբ հայկական օրինագիծը ներկայացվում է Կոնգրես»,- նշում է Կոնգրեսի աշխատանքները լուսաբանող ամերիկյան լրատվամիջոցը[2]:

Անկարան նաև պատվերներ իջեցրեց ռազմարդյունաբերական և էներգետիկ ասպարեզներում Թուրքիային մոտ կանգնած ընկերություններին: 2009թ. հունիսի 13-ին «Ասոշիեյթիդ փրես» գործակալության աշխատակից Սթեֆըն Սինգերի և Հայ դատի Վաշինգտոնի կենտրոնակայանի համագործակցության արդյունքում *AP*-ն լույս ընծայեց «Ընկերությունները լռելյայն լոբբինգ են իրականացնում Հայոց ցեղասպանության օրինագծի դեմ» լրագրողական հետաքննություն-հոդվածը: «Հինգ ռազմական կոնտրակտոր-

[1] http://www.fara.gov/docs/5874-Exhibit-AB-20090729-3.pdf.
http://www.fara.gov/docs/5915-Exhibit-AB-20090309-1.pdf,
http://www.fara.gov/docs/3028-Exhibit-AB-20090401-2.pdf
[2] "Hastert Contracted to lobby for Turkey", "The Hill" 10.04.2009.

ներ և էներգետիկ ընկերությունը պայքարում են, որպեսզի Միացյալ Նահանգները մոտ մեկ դար առաջ Թուրքիայի կողմից ավելի քան մեկ միլիոն հայերի սպանդը չբնորոշի որպես ցեղասպանություն»,- նշված էր հրապարակման մեջ: Հետաքննությունը պարզել էր, որ ռազմարդյունաբերական ոլորտի *"BAE Systems", "Goodrich Corp", "Northrop Grumman", "Raytheon", "United Technologies Corp"* ձեռնարկությունները և նավթարդյունաբերական *«Chevron»* ձեռնարկությունը միայն 2009-ի առաջին եռամսյակում 14 միլիոն ամերիկյան դոլար են ծախսել Կոնգրեսում Մեծ եղեռնի օրինագծի հաստատումը խափանելու նպատակով[1]: Արիզոնայի պետական համալսարանի Բիզնես սքուլի դեկան Գերի Քեյմը կատարվածը կապել է բացառապես ԱՄՆ ռազմարդյունաբերական ընկերությունների կողմից թուրքական պատվերներ շահելու տրամաբանության հետ: Մասնավորապես, *"United Technologies corp"*-ը նախատեսում է «Սիկորսկի» մակնիշի ռազմական ուղղաթիռներ վաճառել Թուրքիային, *"Northrop"*-ը ռազմական ինքնաթիռներ է վաճառելու Անկարային, *"Raython"*-ը 2009-ի մայիսի 31-ից հունիսի 3-ը Վաշինգտոնում Ամերիկա-թուրքական խորհրդի կազմակերպած 28-րդ խորհրդաժողովի հովանավորներից էր: *"Raython"*-ի գովազդային վահանակը միջոցառման ընթացքում տեղադրված էր Վաշինգտոնի «Գեյլորդ» հյուրանոցի միջանցքում, ուր տեղի ունեցավ խորհրդաժողովը, իսկ ընկերության Վաշինգտոնի ներկայացուցիչ Կառլոս Քրիստին ներկա էր թուրքական խորհրդաժողովին: *"Raython"*-ը համագործակցում է թուրքական ռազմարդյունաբերական ոլորտի ընկերություններ «Ռոքեթսանի», «Ասէլսանի», «Հավէլսանի» և *FNSS*-ի հետ[2]: Թուրքական *ATC* կառույցի կայքում տեղադրված են *"Raython"*-ից գործընկեր Կառլոս Քրիստիի տվյալները՝ ընդհուպ մինչև աշխատանքային և բջջային հեռախոսահամարները[3]: Սա նշում ենք՝ ներկայացնելու, համար, թե որքան խորքային բնույթ են կրում թուրքական

[1] "Companies lobby quietly on Armenia Genocide bill", www.ap.org 13.06.2009, տե՛ս նաև http://seattletimes.nwsource.com/html/nationworld/2009335458_apusbusiness lobbyingarmeniagenocide.html, http://www.mirrorspectator.com/2009/06/18/companies-lobby-quietly-on-armenia-genocide-bill/

[2] Տե՛ս նաև http://www.americanturkishcouncil.org/

[3] http://the-atc.org/events/c09/content/presentations/C1-Cristi-Carlos-Raytheon.pdf

լոբբիի աշխատանքները ԱՄՆ ռազմարդյունաբերական ասպարեզի հետ և ինչ զորեղ ուժերի են պարտավորված դիմագրավել ԱՄՆ հայկական համայնքային միությունները:

Անկասկած, առաջիկա տարիներին Անկարայի լոբբիստական ծախսերն աճելու են: Ենթադրաբար այս միությունների հետ համագործակցելու է նաև Ադրբեջանը: Հատկապես, եթե հաշվի առնենք, որ ռազմարդյունաբերական ասպարեզում Թուրքիայի և Ադրբեջանի միջև գործընկերություն է զարգանում:

ԱՄՆ-ում Անկարայի քաղաքական շահերի պաշտպանության համար 2001-ից Կոնգրեսում գործում է Թուրքական հարցերով հանձնախումբը: Գրքի հրատարակության պահին վերջինիս անդամ է Հանրապետական և Դեմոկրատական կուսակցությունները ներկայացնող 103 կոնգրեսական: Անդամներից 59-ը դեմոկրատներ են, 44-ը՝ հանրապետականներ: Թուրքական հանձնախմբի համանախագահներն են Էդ Ուիթֆիլդը (հանրապետական՝ Քենթաքիից), Սթիվը Քոհենը (դեմոկրատական՝ Թենեսիից) և Քեյ Գրենջերը (հանրապետական՝ Տեխասից): Պետք է ենթադրել, որ Թուրքիան իր բարեկամ կոնգրեսականներին ձեռք է բերում ոչ միայն թուրքական համայնքային միությունների աշխատանքի շնորհիվ, այլև ճիշտ վերոնշյալ վարձու ընկերությունների և ռազմարդյունաբերական ասպարեզի գործընկերների աջակցությամբ: «Շատ անդամներ միացել են հանձնախմբին ԱՄՆ թուրք ընտրողների և *Թուրքիայի բարեկամների ջանքերով*»[1],- գրում է թուրքական կայքը:

Հայկական հանձնախմբի անդամների թիվը միևնույն ժամանակ կազմում է 150 կոնգրեսական:

2004-ից նաև ձևավորվել է Կոնգրեսի ադրբեջանական հանձնախումբը, որը կրում է Ադրբեջանի բարեկամների խումբ հնչեղ անվանումը: Քանի որ Թուրքիայի հանձնախմբի անդամների մի մասը նաև Ադրբեջանի բարեկամներ են, այս թեմային կանդրադառնանք նաև «Թուրք-ադրբեջանական լոբբինգի սերտաճումը» բաժնում:

[1] "Turkish Caucus in US Congress Reaches a New Record", http://www.turkishcoalitionofamerica.org/index.html

Հետաքննությունների դաշնային բյուրոյի (FBI) թրքուհի աշխատակցի ցուցմունքները

ԱՄՆ-ում Թուրքիայի հետնաբեմային գործունեության թեմայի շրջանակում նպատակահարմար է առանձին անդրադառնալ թրքուհի Սիբել Էդմոնդսի ոդիսականին: Սիբել Դենիզը ծագումով Իրանից է: Հաստատվելով ԱՄՆ-ում՝ ամուսնացել է Մեթյու Էդմոնդսի հետ՝ փոխելով թուրքական ազգանունը: 2001-ի 9/11-ից հետո Սիբել Էդմոնդսը ծառայության է անցնում ԱՄՆ *FBI*-ում՝ Հետաքննությունների դաշնային բյուրոյում, որպես թուրքերենի, աղրբեջաներենի և պարսկերենի թարգմանչուհի: Հիմնականում հակահետախուզական գործառույթներ իրականացնող *FBI*-ը զբաղվում է նաև համայնքային միությունների ուսումնասիրությամբ, այս նպատակով նաև կատարվում են հեռախոսային գաղտնալսումներ, վերահսկվում է ինտերնետային նամակագրությունը և այլն:

Չիկագոյում Թուրքիայի հյուպատոսության և ԱՄՆ թուրքական կառույցների, մասնավորապես՝ Ամերիկաթուրքական խորհրդի հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման արդյունքում Սիբել Էդմոնդսը ձեռք բերեց տեղեկություններ, որ Անկարան որդեգրել է ԱՄՆ Կոնգրեսի անդամներին, ինչպես նաև գործադիր իշխանության, մասնավորապես՝ Պետքարտուղարության և Պենտագոնի աշխատակիցներին կաշառելու և սեփական շահերին համահունչ քաղաքականություն թելադրելու մարտավարությունը: Սիբել Էդմոնդսի այս ահազանգերը *FBI*-ի անմիջական վերադաս ղեկավարը հիմնականում ուշադրության չի արժանացնում: Նույն *FBI*-ի մեկ այլ թուրք թարգմանչուհի՝ Մելեք Ջանը, որն ամուսնանալով ԱՄՆ Ռազմաօդային ուժերի (ՌՕՈւ) մայոր Դուգլաս Դիքերսընի հետ՝ դարձել էր Մելեք Ջան-Դիքերսըն, ամուսնու հետ այցելում է Սիբել Էդմոնդսին իր վաշինգտոնյան բնակարանում և նրան թուրքական պետության օգտին հավաքագրելու առաջարկ կատարում՝ ակնարկելով, որ մասնավորապես Ամերիկաթուրքական խորհուրդ կամ *ATC* կազմակերպության հետ աշխատանքը կարող է եկամտաբեր լինել: «Նա (Դուգլասը) ասաց, որ *ATC*-ը հաջող կազմակերպություն է, եթե մենք շուտ թոշակի

անցնենք, ապա այն կարող է երաշխավորել, որ լավ կապրենք, և դա ճիշտ այն է, ինչ ինքն ու իր կինը՝ Մելեքը, նախատեսում են»,- պատմում է Մեթյու Էդմոնդսը: Էդմոնդսները պատասխանում են, որ տեղյակ են *ATC* կազմակերպության մասին, սակայն կարծում են, որ պետք է համապատասխան որևէ գործով զբաղված լինես, որ կարողանաս միանալ նրանց: «Այնուհետև նա (Դուգլասը) թեքվեց դեպի Սիբելը և ասաց. «Քեզանից միայն պահանջվում է *ATC*-ին ասել, թե դու ում համար ես աշխատում, ինչ գործ ես անում, և նրանք քեզ կներառեն շատ արագ»:

Ամերիկյան բանակի մայորը, չհանգստանալով, շարունակում է պատմել իրենց բարձրաստիճան թուրք բարեկամների մասին, որոնց մի մասն աշխատում է ԱՄՆ-ում թուրքական դեսպանատանը: «Նրանք մեզ համար ամեն շաբաթ գնումներ են կատարում և նույնիսկ հատուկ թուրքական հաց են բերում»,- պատմել է ամերիկյան բանակի սպան[1]:

Սիբել Էդմոնդսը մերժեց առաջարկը և ահազանգեց *FBI*-ի ղեկավարությանը՝ տեղեկացնելով Մելեք Ջան - Դուգլաս Դիքերսըն զույգի տարօրինակ կեցվածքի, այլ բառերով ասած՝ թուրքական պետության օգտին հավաքագրման փորձի մասին: *FBI*-ի թարգմանիչների բաժանմունքի իր անմիջական ղեկավար Մայք Ֆեգալին անուշադրության է մատնել Ս.Էդմոնդսի ցուցմունքները, սակայն դրանցով հետաքրքրվել է մեկ այլ սպա՝ Դենիս Սաչերը: Վերջինս *FBI*-ի համակարգում իրականացնում էր Թուրքիայի հետախուզությանը դիմակայելու գործառույթները: Դենիս Սաչերը նաև փաստեր ուներ, որ Մելեք Ջանը, որը նույնպես ի պաշտոնե պարտավոր էր թարգմանել թուրքերեն հեռախոսազրույցները, ճշգրիտ թարգմանություններ չէր կատարում, որոշ կարևոր հեռախոսազրույցներ ներկայացնում էր որպես «ոչ կարևոր, գործի համար նշանակություն չունեցող»: Սաչերը, լսելով Սիբել Էդմոնդսի պատմությունը, բառացիորեն հայտարարում է. «Սա արդեն լրտեսության դեպքի է նմանվում»[2]: Սաչերի ցուցումով, Սիբել Էդմոնդսը լսում է Մելեք

[1] "An inconvenient patriot", David Rose, "Vanity fair", սեպտեմբեր 2005:
[2] Նույն տեղում:

Ջանի կողմից նախկինում «խոտանված» հեռախոսային ձայնագրություններից մի քանիսը՝ հայտնաբերելով, որ դրանցում առկա են աշխատանքային կարևորություն ունեցող տեղեկություններ: Մասնավորապես, հեռախոսազրույցներից մեկում թուրք պաշտոնյան, խոսելով պետքարտուղարության աշխատակիցներից մեկի հետ, առաջարկում է, որ «պետքարտուղարության աշխատակիցը որոշակի ժամի իր ներկայացուցչին ուղարկի Վաշինգտոնի 14-րդ փողոցի Ամերիկաթուրքական խորհրդի գրասենյակի մոտ, որտեղ նրան կանխիկ կփոխանցվի 7 հազար ԱՄՆ դոլար»: Իսկ դա նշանակում է փող գաղտնիքների դիմաց, գրում է ամերիկյան «Վենիթի ֆեյըր» հանդեսը:

2002թ. մարտին *FBI*-ը ծառայությունից ազատում է թե՛ Սիբել Էդմոնդսին և թե՛ Մելեք Ջանին: Ս.Էդմոնդսը բողոքարկել է որոշումը և գրքի հրատարակության պահին շարունակում էր պայքարը կորցրած աշխատատեղում վերականգնվելու համար: Թեմային ժամանակ առ ժամանակ անդրադառնում են ամերիկյան լրատվամիջոցները, ֆրանսիական հեռուստատեսությունը նկարահանել է 16 րոպե տևողությամբ տեսաֆիլմ՝ «Սպանիր տեղեկատուին» *("Kill the messanger")*[1]*:* Սիբել Էմդոնդսի տեղեկությունները լույս են սփռում նաև 2000թ. հոկտեմբերի 19-ին Հայոց ցեղասպանության օրինագիծը Ներկայացուցիչների պալատի լիագումար նիստի օրակարգից վերջին պահին հետ առնելու դեպքի վրա: Պաշտոնապես խոսնակ Հասթերթի բացատրությունը հետևյալն էր. նախագահ Քլինթոնի նամակը ստիպեց հետ կանչել հայկական օրինագիծը: Սիբել Էդմոնդսի խոսքով՝ «Թուրքիայի հյուպատոսության բարձրաստիճան աշխատակիցը ձայնագրություններից մեկում ասել էր, որ օրինագիծն օրակարգից հանելու համար Հասթերթին վճարված գինը կազմել էր առնվազն կես միլիոն դոլար»[2]:

«Կոնգրեսում եղած ժամանակ այս մարդը ոչ միայն ներկայացնում էր օտար կառավարություններ, այլ նաև օտար քրեական տարրեր»,- նշում է Սիբել Էդմոնդսը[3]: Հատկանշական է, որ Հաս-

[1] http://www.justacitizen.com/KillTheMessenger.html
[2] http://www.informationclearinghouse.info/article9774.htm
[3] Exclusive interview with FBI whistleblower Sibel Edmonds, The Armenian Weekly, 21.08.2008.

թերթը ոչ մի անգամ չարձագանքեց Սիբել Էդմոնդսի հայտարարություններին…

Սիբել Էդմոնդսի ոդիսականի հետ է շաղկապված նաև Օհայո նահանգում ամերիկահայ քաղաքական գործիչ Դեյվիդ Գրիգորյանի և Ջին Շմիդտի դատական դիմակայության պատմությունը: 2008թ. նոյեմբերի 4-ի Կոնգրեսի ընտրությունների ընթացքում հանրապետական Ջին Շմիդտը հաղթեց Օհայո նահանգի Ցինցինատի քաղաքի թիվ 87 ընտրատարածքում: Դեյվիդ Գրիգորյանը հայտարարեց, որ Շմիդտը «արյունոտ փողեր է ստանում Թուրքիայից»: Վերջինս ԱՄՆ եզակի քաղաքական գործիչներից է, որը մերժում է Հայոց ցեղասպանության փաստը: Շմիդտը դատական հայց հարուցեց Դեյվիդ Գրիգորյանի դեմ: Ի դեպ, դատարանում Ջին Շմիդտի շահերը ներկայացնում էր նույն ինքը՝ Բրյուս Ֆեյնը, որը մեզ հայտնի *“TALDF”* Թուրք-ամերիկյան իրավական պաշտպանության հիմնադրամի աշխատակիցներից է[1]: Սիբել Էդմոնդսը 2009թ. օգոստոսին Վաշինգտոնում տեղի ունեցած դատական նիստերից մեկին ներկայանալով որպես վկա՝ ցուցմունքներ տվեց Դեյվիդ Գրիգորյանի օգտին՝ ներկայացնելով փաստեր, որ Անկարան, իրոք, միջամտում է ԱՄՆ քաղաքական կյանքին՝ շանտաժի և փողեր բաժանելու մարտավարությամբ փորձելով առաջ մղել սեփական շահը: «Էդմոնդսը ցուցմունքներ տվեց Թուրքիայի շահերի օգտին ԱՄՆ կառավարական շրջանակներ ներթափանցման, կաշառակերության, կոռուպցիայի և շանտաժի մասին»,- նշում է թեմային հետամուտ ամերիկյան *Bradblog*-ը[2]: Սակայն դատարանը որոշում կայացրեց Ջին Շմիդտի օգտին:

Դեյվիդ Գրիգորյանը մտադիր է շարունակել պայքարը Կոնգրես անցնելու համար և արդեն իսկ հայտարարել է, որ 2010թ. Կոնգրեսի ընտրություններին կրկին առաջադրվելու է՝ այս անգամ որպես թեկնածու Դեմոկրատական կուսակցությունից:

[1] FBI insider links Turkish lobby to Bribery and blackmail, The Armenian Weekly, 10.08.2009.

[2] Turkish lobby group “declares war” on Sibel Edmondsunder oath testimony, 08.14.2009, www.broad blog.com

Կանադա. ամենամեծ քաղաքում՝ թուրք քաղաքապետ ու

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Կանադայի թուրքական համայնքի թիվը չէր գերազանցում հազարը: 2006-ին Կանադայի ազգային վիճակագրության ծառայության տվյալներով՝ երկրում ապրում է 43 հազար քաղաքացի, որոնք ամբողջովին կամ մասնակի թուրքական ծագում ունեն[1]: Օնտարիոյում գործում է Կանադայի թուրքական միությունների համադաշնությունը, որում միավորված են երկրի 17 թուրքական կառույցները: Այն հիմնադրվել է 1985-ին, նախագահն է Նեդիմ Դյուզենլին, փոխնախագահները՝ Մեհմեթ Բորը և Իսմայիլ Վաթաները: Օնտարիոյում է գործում նաև Կանադայի ադրբեջանա-թուրքական մշակութային ասոցիացիան[2]: Նույն քաղաքում է Կանադացի թուրքերի խորհուրդը[3]: Առավել ակտիվ կառույցներից է Կանադայի թուրքական համայնք կազմակերպությունը, որի նախագահն է Այնուր Իլքայը, փոխնախագահը՝ Ռյուշհան Աքքյոքը[4]: Տորոնտո քաղաքում 2000-ից գործում է «Անկարա» թուրքական գրադարանը, որում շուրջ 4 հազար կտոր գիրք կա[5]: Կանադայում հրատարակվում են «Կանադա-թուրք» ամսագիրը, «Ռեֆերանս» գործարար տեղեկատուն, որը ներկայացնում է երկրի թուրքական համայնքի վերաբերյալ գործարար բնույթի տեղեկատվություն, «Սամարկանդ» ամսագիրը, գործում է «Թյուրքուազ» հեռուստաալիքը[6]: Կանադայում 2005-ից սկսած ամառային ամիսներին մի շարք քաղաքներում (Քվեբեկ, Տորոնտո, Քիչեներ-Վաթերլո և այլն) կազմակերպվում են Թուրքական փառատոներ, որոնց մասնակցելու նպատակով պատվիրակություններ և երաժշտական խմբեր են ժամանում Թուրքիայից: Մասնակցում են նաև Կանադայի ադրբեջանական համայնքի, թյուրքախոս այլ ժողովուրդների ներկայացուցիչները: 2009թ. հու-

[1] http://www.statcan.gc.ca/ այնուհետև “2006 Census data products> topic based tabulations”.
[2] www.canturkfed.net
[3] http://www.turkishcanadians.com/
[4] http://www.turkishcanada.org
[5] http://www.ankarakitapligi.org/tarihce.htm
[6] www.referans.ca , press/media

լիսի 31-ից օգոստոսի 2-ը Քվեբեկում տեղի ունեցած փառատոնին մասնակցելու նպատակով Օնտարիոյից ժամանել էր նահանգային խորհրդարանի անդամ, ծագումով ադրբեջանցի Ռեզա Մորիդին[1]:

Կանադայի թուրքական միությունների համադաշնության վարչական խորհրդի պահեստային անդամ է քաղաքագետ Մեհմեթ Ալի Յաղիզը: Վերջինս 2006թ. «համարձակություն» ունեցավ առաջադրվել Կանադայի ամենախոշոր քաղաքի՝ Տորոնտոյի քաղաքապետի պաշտոնին: Յաղիզը ծնունդով Անկարայից է: Թուրքիայում կրթությունը ստանալուց հետո փոխադրվել է Կանադա և 11 տարի բնակվում է Տորոնտոյում: Աշխատում է քաղաքի ֆինանսական ընկերություններից մեկում[2]: Ընտրություններում Յաղիզը հաջողության չհասավ:

2008թ. հունվարին Կանադայի թուրքական կառույցները բողոքի արշավ ծավալեցին Տորոնտո քաղաքի բարձրագույն դպրոցի կրթական ծրագրերում Հայոց ցեղասպանության թեմայի դասավանդում սկսելու կապակցությամբ: Ըստ թուրքական աղբյուրների, կանադացի թուրքերը հավաքել էին 10 հազարի չափ ստորագրություն: Օտտավայում Թուրքիայի դեսպան Այդեմիր Էրմանը հայտարարել էր, որ իր դժգոհությունն էր հայտնել վարչապետ Սթիվըն Հարփերին, դաշնային ու պետական այլ պաշտոնյաների[3]:

[1] "Mehter ile costuk" "Canadaturk", 07.08.2009, www.canadarurk.ca
[2] "Toronto'ya Türk belediye başkan adayı", "Hürriyet", www.hurriyet.com.tr, 16.10.2006.
[3] Turkish NGO's, envoy protest over Armenian claims in schools, Anatolia news agency, 27.01.2008.

ԵՎՐՈՊԱ.
ԹՈՒՐՔԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Բելգիա. մերժողականությունը քրեականացնելու առաջին փորձը

Առաջին պետությունն, ուր շրջանառվեց և հաստատվեց Հայոց մեծ եղեռնի հերքումը քրեականացնող օրինագիծը, Բելգիայի թագավարությունն է: 2005թ. ապրիլի 26-ին Բելգիայի խորհրդարանի ստորին պալատը 108 կողմ, 21 ձեռնպահ հարաբերակցությամբ ընդունեց Մեծ եղեռնի հերքումը քրեականացնող օրինագիծը, որով մերժողականության համար նախատեսում էր 8 օրվանից մինչև մեկ տարվա ազատազրկում և 26-ից մինչև 5 հազար եվրո տուգանք[1]: Նախաձեռնությանը սատարում էին *MR (Mouvement Reformateur)*՝ Բարեփոխումների շարժում և Վալոնի կանաչների կուսակցությունները: Փաստաթղթի ընդունման հաջորդ օրը «Սաբահն» ազդարարեց. «Օղակը սեղմվում է»[2]: Ընթացակարգից ելնելով՝ օրինագիծն ուղարկվեց Սենատ՝ հաստատման: Նշենք, որ Բելգիայի Սենատը Մեծ եղեռնը ճանաչող, բայց մերժողականությունը չպատժող օրինագիծ է հաստատել 1997թ. հոկտեմբերի 8-ին[3]: Արդեն մայիսից թուրքական լոբբին սկսեց ակտիվ և կազմակերպված դիմադրությունը: Օրինագծի վերջնական հաստատման հարցը մինչև գրքի հրատարակման պահն առկախված էր, և այստեղ կարևոր էր Բելգիայի թուրքերի շարժումը:

---

[1] «В Бельгии будут сажать в тюрьму за отрицание Геноцида армян», *www.rus.nl,* 27.04.2005, նաև «Հայլուր» լրատվական ծառայություն, Հայաստանի Հանրային հեռուստատեսություն, 26 ապրիլի, 2005թ.:

[2] "Cember Daralıyor", Yavuz Donat, "Sabah", 28.04.2005, *www.sabah.com.tr*

[3] *Հայկ Ղազարյան*, Հայ ժողովրդի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, Երևան, 2004թ., էջ 573:

Բելգիայում գործող թուրքական *TOSDG (Türk Ozel Sektor Dostluk Grubu,* թարգմանաբար՝ Թուրքական մասնավոր սեկտորի բարեկամության խումբ) կառույցը նամակով դիմեց Սենատի անդամներին և նախագահին՝ ներկայացնելով տեղաբնակ թուրքերի անհանգստությունը: «Ցանկանում ենք հիշեցնել, թե որքան կարևոր է այս երկրի թուրքական համայնքի բարօրությունը»,- նշված էր նամակում[1]:

Որպեսզի մերժողականության օրինագիծը մուտք գործեր Սենատի օրակարգ, պահանջվում էր առնվազն 15 սենատորի համատեղ դիմումը Սենատի ղեկավարությանը: 2005թ. մայիսի 9-ին 19 սենատոր դիմեց Սենատ, և օրինագիծը ներկայացվեց Արդարադատության հանձնաժողովի ուսումնասիրությանը: Հանձնաժողովն ունի 17 անդամ, և հաստատման համար հարկավոր էր 9 կողմ քվե: Այստեղ հիմնավոր դերակատարում ունեցավ փաստը, որ հանձնաժողովում այդ ժամանակահատվածում ներկայացված էր ազգությամբ թրքուհի Ֆաթմա Փեհլիվանը[2]: Մայիսին, երբ հարցը բերվեց օրակարգ, ներկա էին թրքուհին, Բրյուսելի տեսարժան վայրերի և հուշարձանների հարցերով նախարար, ազգությամբ թուրք Էմիր Քըրը, Բելգիայի արդարադատության նախարար Լորան Օնկելինքսը, սենատորներ: Ծավալված սուր բանավեճի ժամանակ սենատոր Ալան Դեստեքսն արդարադատության նախարարից պահանջել էր տեղում ձերբակալել Քըրին մերժողական հայտարարությունների համար[3]: Քվեարկությունը հետաձգվեց, բայց արդեն նկատելի էր, որ կողմնակիցների դիրքերը նահանջում են: Հունիսի 8-ին փաստաթուղթը մերժվեց 3 կողմ, 12 դեմ հարաբերակցությամբ[4]:

Ծայր առան սուր բանավեճեր: «Վալոնի լիբերալներն, առճակատվելով թուրքական լոբբիի և Բելգիայում մեծ ներուժ ունեցող թուրքական համայնքի հետ, աջակցեցին հայերին, սպառնալով, թե Կարգապահական խորհուրդ կփոխանցեն կուսակցության անդամ թուրքերի գործերը»,- հաղորդում է Բելգիայի թուրքական հանդեսը[5]:

[1] «Belçika'da Turk toplumu siyasileri uyarıyor», *www.tnn.net,* 11.05.2005.
[2] "Ermeniler Belçika Senatosu'na başvurdu", "Zaman" 10.05.2005.
[3] "Belçika'da Ermeni tasarısı ertelendi, Kır yine hedefte", "Zaman", 30.05.2005.
[4] Belçika Ermeni tasarısını 'şimdilik' reddetti, "Zaman", *www.zaman.com.tr,* 08.06.2005.
[5] "Belçika senatosu'nda akıl ve mantık kazanıyor", http://www.anadolu.be/2005-06/4.html

Այդ ժամանակահատվածում Բելգիայի թագավորությունում ՀՀ դեսպանատանն աշխատած դիվանագետ Տիգրան Բալայանը ներկա է եղել քննարկումներին: «Ես նման բան չէի տեսել: Ֆաթմա Փեհլիվանը գոռաց ներկաներից մի քանիսի վրա»,- նշում է հայ դիվանագետը: Փեհլիվանն ավելի ուշ հայտարարեց, որ եթե 1997թ. պաշտոնավարելիս լիներ Սենատում, ապա կկարողանար նաև կանխել Մեծ եղեռնի ճանաչման վերաբերյալ օրինագծի հաստատումը: Նա հիշատակեց, թե «ամերիկացիներն էլ հնդկացիների ցեղասպանություն են իրականացրել, թող դա էլ դատապարտող բանաձև ընդունեն»[1]: 2005 թվականից ի վեր Բելգիայում Հայոց ցեղասպանության մերժումը քրեականացնող օրինագծի հաստատման թեմայով նոր զարգացումներ այլևս չեն արձանագրվել:

Բրյուսելի Սկաերբեկ թաղամասի խորհրդի պատգամավոր, էթնիկ թուրք Մուրադ Դենիզլին վայր դրեց լիազորությունները 2006թ. հոկտեմբերի 26-ին: Սկաերբեկը Բրյուսելի թուրքաշատ թաղամասերից է, և դժվար չէ կռահել, թե Դենիզլիին ինչպես էր հաջողվել 2006թ. հոկտեմբերի 8-ի ՏԻՄ ընտրություններում 815 քվե ստանալով ներթափանցել շրջանային խորհրդարան: Բելգիայի մամուլը վրդովված գրում էր, որ *PS* ֆրանկոֆոն սոցիալիստական կուսակցության անդամ Դենիզլին ծայրահեղական է, առնչվում է Թուրքիայի ազգայնական կուսակցությանը՝ *MHP*-ին և «Գորշ գայլ է»: Մեջբերում «Բրասելս ջըռնըլ» հանդեսի հրապարակումից. «Զավեշտալի է, բայց տեղական Ֆլամանդական բլոկի (ազգայնական ուղղվածության կուսակցություն Ֆլանդրիայում– Հ.Ն.) «ռասիստներին» և «ֆաշիստներին» դիմակայելու իրենց ձգտումներին զուգահեռ սոցիալիստները և քրիստոնեա-դեմոկրատները չեն խորշում իրենց ընտրացանկերում առաջադրել ծայրահեղ աջակողմյան մահմեդականների: Նրանցից ոմանք, ինչպես, օրինակ, Մուրադ Դենիզլին, թուրքական ֆաշիստական «Գորշ գայլեր» կազմակերպության անդամ է: Կազմակերպությունը ժամանակին Թուրքիայի ներսում սպանում էր սոցիալիստների, իսկ հիմա սոցիալիստ պատգամավորներ է առաջադրում բուն Բելգիայում»[2]:

[1] "Belçika'dan ret, Ermeniler'den tepki", "CNN Türk" 09.06.2005 տե՛ս նաև hyetert.com 09.06.2005.
[2] "Turning red: immigrants tip the balance in Belgian local elections", "The Brussels journal" 09.10.2006. http://www.brusselsjournal.com/node/1480

Հատկանշական է, որ մինչև հոկտեմբերի 8-ը տեղի ունեցած ընտրությունը Բելգիայի մամուլում մի քանի անգամ հրապարակվել էր, որ Դենիզլին ծայրահեղ աջակողմյան և ազգայնական հայացքներ ունի: Այսքանով հանդերձ Սկաերբեկի թուրք դրացիները կարողացան ապահովել նրա մուտքը շրջանային խորհրդարան: Ընտրություններից հետո ճնշումները շարունակվեցին, և ի վերջո Դենիզլին ցած դրեց լիազորությունները՝ հայտարարելով, թե ձանձրացել է հետապնդումներից: «Ընտրություններից առաջ հուսով էի, թե իմ մասին հրապարակումները և պնդումները հետընտրական շրջանում կմարեն, բայց սխալվեցի: Ամեն օր նորություն եմ լսում: Ասում են, թե ծայրահեղական եմ, ազգայնական ու «Գորշ գայլ»,- նշել էր Դենիզլին[1]:

Հոկտեմբերի 8-ի ՏԻՄ ընտրություններից մեկ օր առաջ ինքնաբացարկ էր հայտարարել ֆրանկոֆոն *MR* ՝ Բարեփոխումների շարժում կուսակցությունից պատգամավորության թեկնածու Դերյա Բուլդուքը: Վերջինս հայտարարել էր, թե կուսակցական ղեկավարությունն իրեն ստիպում էր հանդես գալ Հայոց ցեղասպանությունն ընդունող հայտարարությամբ, սակայն վերջինս նախընտրեց հեռանալ: Բուլդուքը Սկաերբեկի թուրքերին կոչ ուղղեց չքվեարկել *MR*-ի օգտին, քանի որ այս կուսակցությունը «սկզբունքային մոտեցում ունի Մեծ եղեռնի հիմնախնդրում», իսկ ընտրացանկերում մնացած թուրք թեկնածուներին անվանարկեց, իր ձևակերպմամբ, «հայերի ցեղասպանությունը ճանաչելու համար»[2]: Փաստացի Բուլդուքի հայտարարությունը մեծ կարևորություն չստացավ, քանի որ հոկտեմբերի 8-ի ընտրություններին *MR*-ից Սկաերբեկի խորհրդարան անցան Սայիթ Քյոսեն, Սաղրկ Քյոքսալը և Ֆիլիզ Գյուլեսը՝ ստանալով համապատասխանաբար 1566, 1008 և 697 ձայն: Սայիթ Քյոսեն ստանձնեց Սկաերբեկի երիտասարդության, մաքրության և սպորտի հարցերով նախարարի օգնականի պաշտոնը: Ընտրություններից հետո նա Բելգիայի թուրքական

[1] "Murat Denizli Schaerbeek belediye meclisi uyeliğinden istifa etti", www.binfikir.be, 27.10.2006.
[2] "Ermeni Soykırımı yasa tasarısına karşı içeriden mücadele ediyoruz", www.binfikir.be, 27.10.2006.

«Բինֆիքիր» հանդեսում «Մենք Հայոց ցեղասպանության օրինագծի դեմ պայքարը տանում ենք ներսից» հրապարակման մեջ հայտարարեց. «Բելգիայում չի մնացել քաղաքական կուսակցություն, որը չի ընդունում Հայերի ցեղասպանությունը: Մենք, մնալով կուսակցության կազմում, շարունակում ենք պայքարել»[1]: Թուրք վերլուծաբաններից մեկն էլ գրեց, թե «թուրք պատգամավորները մնան կամ գնան, միևնույն է, կրակի մեջ են», և կարծիք էր հայտնում, որ «պետք է մնալ կուսակցությունում և պայքարել մինչև վերջ»: «Դա ավելի դժվար, բայց ավելի ազդեցիկ և օգտակար մոտեցում է, քան թե հրաժարական գրելը»,- նշված էր թուրքական կայքում[2]:

Ներկայում, բացի վերը նշված երեք գործիչներից, Բրյուսելի Սկաերբեկ թաղամասի խորհրդարանի անդամներ են նաև Էմին Օզքարան, Մուսթաֆա Օզթուրքը, Հալիս Քյոքթենը, Իբրահիմ Դյոնմեզը, Դերյա Ալիջը, Մահինուր Օզդեմիրը և Նալբանթ Թուլայը[3]: Ընդհանուր առմամբ, 47 օրենսդիրներից 10-ը թուրք են: Թուրքական «Ջիհան» գործակալությունը Սկաերբեկն անվանում է «թուրքական թաղամաս»[4]: Ուշագրավ է, որ մինչև 90-ականների վերջը Սկաերբեկի խորհրդարանում ոչ մի թուրք օրենսդիր չկար: Թաղամասի թուրքերի սրընթաց հաջողությունները նորագույն իրողություն են:

Մեծ եղեռնի ճանաչման հիմնախնդրով խոչընդոտների բախվեց նաև քաղաքական գործիչ Շնքեթ Թեմիզը: Նույն՝ *MR* կուսակցությունից պատգամավոր Թեմիզը ժամանակին պաշտոնավարել էր որպես Սկաերբեկի խորհրդարանի անդամ՝ դառնալով նշված թաղապետարանի առաջին թուրք պատգամավորը: Հետագայում փոխադրվեց Սոցիալիստական կուսակցություն: «Կուսակցությունս փոխելու համար կարևոր էր նաև *MR*-ի մոտեցումը Հայկական պնդումների հարցում»,- հայտարարեց նա[5]: 2006թ. հոկտեմբերի 7-

[1] Նույն տեղում:
[2] "Istifa çözum değil", www.binfikir.be, 12.08.2007.
[3] http://www.schaerbeek.irisnet.be/site/en/democratic_life/2_local_council/2local_council
[4] "Belçikalı Türkler Ermeni tasarısına karşı yürüdü", www.cihan.com.tr, 08.05.2005.
[5] Şevket Temiz: "Ayrılmamda sözde Ermeni soykırım iddiaları etken oldu", 06.09.2006, www.belturk.be

ին Շևքեթ Թեմիզն ընտրվեց Բրյուսելի Կենտրոնական քաղաքային խորհրդի պատգամավոր, որտեղ և շարունակում է պաշտոնավարել[1]: Չի բացառվում, որ կուսակցափոխ լինելու որոշման համար դեր ուներ նաև հանգամանքը, որ Սոցիալիստական կուսակցությունում հաջող դիրքեր ուներ վերը նշված թուրք քաղաքական գործիչ, Բրյուսելի տարածաշրջանի տեսարժան վայրերի և հուշարձանների հարցերով նախարար Էմիր Քըրը:

Ի դեպ, հայկական գործոնը խոչընդոտեց նաև նույն Քըրի քաղաքական կարիերային: 2004թ. նոյեմբերին Քըրը դատական հայց հարուցեց լրագրողներ Մեհմեթ Քյոքսալի և Բրյուսելի Սկաերբեկ թուրքաշատ թաղամասի ոստիկան և իրավապաշտպան Պիեռ-Իվ Լամբերի դեմ: Վերջիններս ընտրական գործընթացները լուսաբանող *suffrage-universel.be* էլեկտրոնային թերթում զետեղել էին հոդվածների շարք, որում դատապարտել էին թուրք նախարարին Հայոց ցեղասպանությունն ուրանալու, թուրք ազգայնականների հետ առնչվելու համար:

Քըրը դատ էր հարուցել, որը տանուլ էր տվել 2005թ. սեպտեմբերի 13-ին: Դատարանում Քըրը փոխել էր իր ձևակերպումները՝ հայտարարելով, թե «ինքն, ի տարբերություն հրեական Հոլոքոստի մերժողականների, երբեք չի մերժել հայերի սպանդը և իրենց կամքին հակառակ տարագրությունը, այլ հարցականի տակ է դնում բնորոշումները, որոնք, առանց պատմական հիմնավորման, տրվում են իրադարձություններին»[2]: Դատարանը մերժողական գործչի վերաբերյալ լրագրողական հրապարակումները տեղին էր համարել՝ ելնելով Բելգիայում, Ֆրանսիայում, Եվրախորհրդի և Եվրախորհրդարանի կողմից Մեծ եղեռնի պաշտոնապես ճանաչված լինելու և մամուլի ազատ արտահայտվելու իրավունքի հիմնադրույթներից: Պիեռ-Իվ Լամբերը և Մեհմեթ Քյոքսալը դատարան էին ներկայացրել Քըրի մի շարք մերժողական հայտարարությունների ապացույցներ, ինչպես նաև 2004թ. մայիսի 29-ին Բելգիայի

[1] http://www.brussels.be/artdet.cfm/4156

[2] "Tribunal de Premiere instance de Bruxelles", 279/14/05, http://suffrage-universel.be/be/kirjugement.htm

Աթաթուրքի մտածողության կազմակերպության *(BADD)* հետ համատեղ հակահայ հանրահավաքի մասնակցության փաստը: Էմիր Քըրը դատարանի կողմից ճանաչվեց որպես Հայոց ցեղասպանությունը ժխտող անձ և պարտավորեցվեց վճարել շուրջ 10 հազար եվրո[1]: Հեղինակի հետ զրույցում Պիեռ Իվ-Լամբերը նշել է. «Իմ նպատակը մերժողականության դեմ պայքարելն էր: Այն չափանիշ է դարձել թուրքական համայնքի ներսում, թուրքական արմատներով բելգիացի քաղաքական գործիչների ելույթներում: Նրանց ավելի ճիշտ կլինի անվանել թուրք քաղաքական գործիչներ, որոնք գործի բերումով ապրում են Բելգիայում, ստացել են բելգիական քաղաքացիություն, բայց ամբողջովին ասոցիացված են Թուրքիայի դեսպանատան հետ»:

Էմիր Քըրը բողոքարկել է որոշումը վճռաբեկ դատարանում: Ավելի ուշ, Պիեռ Իվ-Լամբերի խոսքով, հասկանալով, որ վճռաբեկում ևս պարտվելու է, Քըրը փորձ արեց կասեցնել երկրորդ դատական գործը, սակայն Լամբերը և Քյոքսալը պնդել են, որ դատարանն արձակի վճիռը: Ներկայում դատական գործն ընթացքի մեջ է, սակայն Բելգիայի դատական ընթացակարգն այնպիսին է, որ հնարավոր չէ կանխատեսել, թե երբ կհրապարակվի որոշումը, դա կարող է տարիների տևողություն ունենալ: «Չնայած ժամկետը հայտնի չէ, սակայն արդյունքը հայտնի է, Էմիր Քըրը պարտվելու է»,- նշում է Պիեռ Իվ-Լամբերը:

Նրա շահերը դատարանում պաշտպանում էր Բելգիայի գործող արդարադատության նախարար, թրքամետ դիրքորոշումներով հայտնի ֆրանսախոս սոցիալիստական կուսակցության ղեկավար անդամ Լորան Օնկելիքսի ամուսինը՝ Մարկ Ուիթինդլեն: Ավելի վաղ՝ 2005-ի փետրվարին, Քըրը «Հյուրիեթին» տված հարցազրույցում բողոքել էր, թե չի կարողանում ազատվել հայկական լոբբիի և հայերի բելգիացի աջակիցների հետապնդումներից: Քըրին հատկապես «նեղում» էին ֆլամանդական ազգային կուսակցությունները և *MR*-ի ներկայացուցիչները: Մասնավորապես, *MR*-

[1] «Բելգիան դատապարտում է Բրյուսելի պետքարտուղարի ժխտողականությունը», «Ազգ» օրաթերթ, 17.11.2005:

ից պատգամավոր Ֆրանսուա Ռոելանս դե Վիվյեն խորհրդարանում լրագրողների ներկայությամբ հարցրել էր, թե արդյոք Քըրը ընդունում է Հայոց ցեղասպանության փաստը, ինչին վերջինս խուսափողական պատասխան էր տվել՝ ասելով, թե «Հարցին պետք է պատասխանի Օսմանյան կայսրության իրավահաջորդ Թուրքիան, որի ներկայացուցիչը ինքը չի հանդիսանում»[1]:

Մինչդեռ 2004-ի մայիսի 29-ին, երբ Քըրը դեռ պաշտոնյա չէր մայրաքաղաքի տարածքային կառավարությունում, այլ Բրյուսելի Սան Խոսե թաղամասի փոխթաղապետն էր, *BADD* թուրքական կազմակերպության հավաքին, առանց ավելորդ սեթևեթանքի արտահայտվել էր մայրաքաղաքի Իքսել թաղամասի Անրի Միշո հրապարակում տեղադրված Հայոց ցեղասպանության հուշարձանն ապամոնտաժելու օգտին: Ի դեպ, հավաքին ներկա էր գտնվել նաև արդեն ծանոթ Սկաերբեկի երիտասարդության, մաքրության և սպորտի նախարար Սայիթ Քյոսեն: *BADD*-ի թուրք գործիչները նամակով դիմեցին Իքսելի թաղապետ, սոցիալիստ Վիլի Դեկուրին և սոցիալիստական կուսակցության ղեկավարությանը Հայոց ցեղասպանության հուշահամալիրը քանդելու պահանջով՝ հակառակ դեպքում սպառնալով, որ ընտրություններին չեն քվեարկի սոցիալիստների օգտին[2]: Ավելի ուշ՝ հուշարձանների և տեսարժան վայրերի նախարարի բազկաթոռին նստելուց հետո, Քըրը փորձեց իրականացնել իր «նախընտրական ծրագիրը»: Նրա գրասենյակը կապ էր հաստատել Իքսելի թաղապետարանի հետ՝ հարցում անելով, թե արդյոք հուշարձանը կանգնեցվել է շինարարական օրենսդրությանը և նորմերին համահունչ: Բրյուսելում վերափոխումներ կատարելու «թուրքական սցենարին» անմիջապես հակազդեց 1997-2004թթ. Իքսելի թաղապետ Իվ դե Յոնգ դ'Արդուան. «Քըրը պետք է տեղյակ լիներ, որ նման հուշարձան տեղադրելու համար շինարարական բնույթի թույլտվության կարիքը չկա: Պետք է միայն քաղաքային խորհրդի թույլտվությունը: Ավելին, քաղաքա-

[1] "Türk asıllı bakana soykır ımı tacizi", "Hürriyet" 05.03.2005.

[2] «Բելգիայի թուրքերը պահանջում են քանդել ցեղասպանության հիշատակի արձանը», «Ազգ» օրաթերթ, 04.05.2003թ.:

յին խորհրդի թույլտվությունն այդ տարիներին եղել է միաձայն: Բոլորը գիտեն, որ տեղի է ունեցել Հայերի ցեղասպանություն, և այս հուշարձանը հարգանքի տուրք է ցեղասպանությանը: Ես երաշխավորում եմ՝ հուշարձանը կմնա իր տեղում և վերջակետ»,- կտրուկ հայտարարել էր նա[1]: Արդուան նաև գործող քաղաքապետ Վիլի Դեկուրի ուշադրությունը հրավիրեց փաստի վրա, որ «Քըրը մոտ է կանգնած Թուրքիայի դեսպանատանը»[2]: Եվս մեկ փաստարկ Թուրքիայի կողմից եվրոպաբնակ թուրքերի միջոցով հին աշխարհամասի ներքին գործերին միջամտելու օգտին: Ի դեպ, Իվ դե Յոնգ դ'Արդուան Հայաստանի Հանրային հեռուստատեսությանը տված մի հարցազրույցում հայտարարել էր, թե թուրքական կողմն իրեն սպառնացել է, որ Թուրքիա այցի հրավեր իրեն չեն տրամադրի, ինչին դ'Արդուան պատասխանել էր, որ «ինքը Թուրքիա չի այցելել և այցելելու ցանկություն չունի, սակայն 2 անգամ հյուրընկալվել է Հայաստանում»:

Մեկ տարի անց Բրյուսելի տարածքային խորհրդարանի անդամ, Բարեփոխումների շարժում կուսակցությունից Ժակ Սիմոնեն հայտարարեց, թե խորհրդարանում առաջ է քաշելու Էմիր Քըրին պաշտոնանկ անելու նախաձեռնություն՝ պահանջելով Քըրի փոխարեն նախարարի պաշտոնում նշանակել Սեֆի Բուարֆային: Պատճառը կրկին Քըրի դիրքորոշումն էր Մեծ եղեռնի հարցում[3]: Գրքի հրատարակության պահին Էմիր Քըրը շարունակում էր պաշտոնավարել որպես տարածքային նախարար:

Էմիր Քըրը ծագումով Թուրքիայի Աֆիոնի շրջանի Էմիրդաղ քաղաքից է: Ընդհանրապես Բելգիայի շուրջ 150 հազարանոց թուրքական համայնքից 30 հազարը ծագումով Էմիրդաղցի են: Պիեռ-Իվ Լամբերի խոսքով, ուսանողական շրջանում Քըրը մշտապես շփվում էր աջակողմյան թուրքական կուսակցությունների՝ *ANAP*-ի և *DYP*-ի, ավելի ուշ՝ նաև *MHP*-ի ներկայացուցիչների հետ:

[1] "Je veux avoir la garantie que ce monument reste là où il est, point à la ligne !" http://www.suffrage-universel.be/be/kirxl.htm

[2] "Interpellation de monsieur Yves de Jonghe d'Ardoye au college des bourgmestre et echevins le memorial au Genocide Armenien square Henri Michaux" http://www.suffrage-universel.be/be/kirxl.htm

[3] Génocide Arménien : Motion de défiance contre Emir Kir", http://www.armenews.com/, 21.12.2006.

Նա նախարար դարձավ 2004թ. հունիսի 13-ի ՏԻՄ ընտրությունների արդյունքներով, և միանշանակ է ու ակնհայտ, թե ինչ տարբերակով ապահովվեց Քըրի ընտրությունը: «Բելգիայի բնակիչ թուրք քաղաքացիների աջակցությամբ եմ նստելու այս աթոռին: Ես հպարտ եմ, որ Թուրքիայից դուրս ազգությամբ թուրք առաջին նախարարն եմ: Բելգիայում պատմություն է գրվում»,- ասաց Քըրը[1]: Իրականում Թուրքիայից դուրս առաջին թուրք նախարարները Բուլղարիայում գործող Իրավունքի և ազատությունների շարժում կուսակցության էթնիկ թուրքերն էին, որի մասին խոսք կլինի ավելի ուշ: Այնուհանդերձ, տվյալ պահին, երբ Քըրը դարձավ նախարար, Բուլղարիան Եվրամիության անդամ չէր (Բուլղարիան և Ռումինիան անդամակցեցին 2007թ. հունվարի 1-ին), և Էմիր Քըրը պատմության մեջ մտավ որպես Եվրամիության առաջին թուրք նախարար:

Թուրք ընտրողների օժանդակությամբ պաշտոնի անցնելու բազմաթիվ օրինակներից ևս մեկը. Բելգիայի թագավորության Լիեժի շրջանի Հերսթալ քաղաքի խորհրդարանի անդամ է Այհան Աքթյուրքը, որը նաև թուրքական 3 համայնքային հասարակական կազմակերպությունների և Բելգիայի ֆուտբոլի 2-րդ լիգայում հանդես եկող թուրքական թիմի նախագահն է: Բելգիայի թուրքական «Գյունդեմ» կայքէջում գրված է. «Հերսթալում բնակվում է 36 հազար քաղաքացի, որոնցից 2 հազարը՝ թուրք: 900 թուրք քաղաքացի, տեղական ինքնակառավարման ընտրություններին իրենց ձայնի իրավունքն օգտագործելով, Այհան Աքթյուրքին ուղարկեցին խորհրդարան»[2]: Ըստ առկա տեղեկությունների, Բելգիայի շուրջ 160 հազար թուրք բնակիչների մոտ 90 հազարն ունի քվեարկության իրավունք[3]:

2003-2007թթ. Բելգիայի դաշնային խորհրդարանի ստորին պալատի անդամ է եղել Ջեմալ Չավդարլը: Նա, ի դեպ, առաջին էթնիկ թուրքն էր, որն անցավ թագավորության խորհրդարան[4]: 2007թ. հունիսի 10-ի ընտրություններին Չավդարլին չհաջողվեց

[1] "AB'nin ilk Türk Bakanı", "Sabah", 19.07.2004.

[2] "Ayhan Aktürk: Başarımızı birlik ve beraberliğimize borçluyuz", www.gundem.be, 12.06.2008.

[3] «Բելգիայի ապագա վարչապետ Իվ Լեթերմը հայտարարել է Հայոց ցեղասպանության ճանաչման մասին», www.armtown.com, 11.07.2007:

[4] "Belcika Meclisinde ilk Turk milletvekili – Cemal Cavdarli" 14.07.2003, www.gurbetport.com

անցնել խորհրդարան, սակայն ընտրությունների արդյունքում ի հայտ եկան նոր թուրք օրենսդիրներ. թագավորության ստորին պալատի անդամներ են կանաչների կուսակցությունից Մերյեմ Ալմաջըն և Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցությունից Հիլալ Յալչընը[1]: Ֆաթմա Փեհլիվանը, որը ժամանակավորապես ստանձնել էր Գենթ քաղաքի փոխքաղաքապետի պաշտոնը, կրկին վերադարձել է Սենատ[2]:

Այսքանից հետո թուրքական «Զամանը» դժգոհ էր 2007-ի հունիսյան ընտրությունների արդյունքից: «Բելգիայի թուրքերի ընտրական հույսերը չարդարացան» հոդվածում նշվում է, որ թեկնածուներ Մերյեմ Քաչարը և Դույգու Այդեմիրը չկարողացան անցնել խորհրդարան, անհաջողությամբ ավարտվեց սենատոր դառնալու Էրգյուն Թոփի փորձը[3]: Ի դեպ, 2007թ. հունիսի 3-ին Թոփը հայտարարել էր, թե «Բելգիայի և Թուրքիայի միջև պատերազմ ծագելու պարագայում կմիանա թուրքական բանակին՝ կռվելով Բելգիայի դեմ»[4]: Պետք է համաձայնել՝ լկտիության աստիճանի հասնող հայտարարություն է Բելգիայի խոշոր քաղաքներից մեկում որպես օրենսդիր պաշտոնավարող գործչի համար: Հատկանշական է, որ թուրք նացիոնալիստը Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցությունից է: Արդյոք թուրք քրիստոնեա-դեմոկրատի նման ելույթները ստվեր չե՞ն գցում կուսակցության արժեքային համակարգի վրա: Թոփը թուրքական մամուլին տված հարցազրույցում Բելգիայի վարչապետ Իվ Լեթերմի անունից նաև հայտարարել էր, թե վերջինս չի ընդունում Հայոց ցեղասպանության փաստը[5]: Հայկական համայնքը կապ էր հաստատել Լեթերմի գրասենյակի հետ և հստակեցրել, որ թուրքական կողմն ապատեղեկատվություն է տարածում: Ավելի ուշ Բելգիայի վարչապետը հրապարակավ հայտարարեց, որ Հայոց ցեղասպանության փաստը կասկածից վեր է[6]:

Բելգիայի ակտիվ թուրք քաղաքական գործիչներից են նաև

[1] Տե՛ս Բելգիայի թագավորության խորհրդարանի կայքը՝ http://www.dekamer.be
[2] www.senat.be
[3] "Belcika'da Turkler secimlerde umdugunu bulamadi", "Zaman" 11.06.2007
[4] http://allochtone.blogspot.com/2007/06/ergn-top-en-cas-de-guerre-je-me-battrai.html
[5] The influence of the immigrants vote on Belgian and Dutch politics", "Brussels Journal", 28.06,2007, http://www.brusselsjournal.com/node/2222
[6] «Բելգիայի ապագա վարչապետ Իվ Լեթերմը հայտարարել է Հայոց ցեղասպանության ճանաչման մասին», 11.07.2007, www.armtown.com

Այնուր Քարագյոզը, Էրսի Յուքսելը, Եշիմ Քոչաքը, Ֆլամանդական լիբերալ կուսակցությունից Մուսթաֆա Գյոքչեգիլը: Ընդհանուր առմամբ, ըստ թուրքական աղբյուրի, Բելգիայի քաղաքական դաշտում գործում է, ոչ ավելի, ոչ պակաս, 250 թուրք քաղաքական գործիչ: Ըստ Բելգիայի թուրքական կազմակերպության կայքի, երկրում 200-ի չափ թուրքական հասարակական կազմակերպություններ են գործում: Դրանց թվում են, օրինակ, Աթաթուրքի մտածողության միություն ազգայնական կառույցի բելգիական մասնաճյուղերը, Ազգայնական հայացք, Թուրքական ուժ կառույցները: Արդյոք իրատեսակա՞ն է ակնկալել նման անուններով հասարակական միությունների ինտեգրումը եվրոպական հասարակայնությանն ու արժեքային համակարգին:

Բելգիայի թուրքական կազմակերպությունների համակարգող խորհուրդը հիմնվել է 1996-ին և միավորում է շուրջ 100 թուրքական կազմակերպություն: Ի դեպ, կառույցի ղեկավար Քենան Դաղցյունը 2003-ի մարտին Բրյուսելի Հայոց ցեղասպանության հուշարձանի մոտ կազմակերպված հանրահավաքի ընթացքում փորձել էր, ճեղքելով ոստիկաններին, հարվածել հուշարձանին, ինչի համար ձերբակալվել էր՝ դատապարտվելով 9 օրվա ազատազրկման[1]:

Բելգիայում բավական կազմակերպված են թուրքական երիտասարդական և ուսանողական կառույցները: 2005թ. Բրյուսելի *ULB* համալսարանի թուրք ուսանողները կազմավորեցին *"Turqoise"* ուսանողական միությունը, *VUB* համալսարանում գրանցված է *"Koeleur Locale"* կառույցը:

Բելգիայի թուրքական կայքերից են՝ *www.anadolu.be, www.gundem.be, www.belcikahaber.be, www.b-add.be, www.haber.b-add.be www.belhaber.be, www.binfikir.be, www.yenihaber.be, www.aman.be, www.tugok.be, www.turksestudent.be, www.tsleuven.be...* Եվ այդպես շարունակ…

[1] http://www.willyfautre.org/conferences/2007/0317%20Seyfo.pdf

Նիդեռլանդներ. «Նրանք հարյուրավոր թելերով կապված են Անկարայի հետ»

Նիդեռլանդների մոտ 350 հազար թուրք բնակչությունը կենտրոնացած է Ամստերդամ, Ռոտերդամ, Հաագա և Ուտրեխտ քաղաքներում: Ի դեպ, ցուցանիշը վիճարկելի է, քանի որ, ինչպես նշվել է, պաշտոնապես որպես «թուրք» են գրանցվում Թուրքիայի քաղաքացիները, որոնք կարող են ունենալ ոչ թուրքական էթնիկական ծագում՝ քուրդ, լազ, չերքեզ, զազա և նույնիսկ ասորի ու հայ[1]: Մասնավորապես, 1960-70-ական թվականներին Նիդեռլանդներ են փոխադրվել Թուրքիայի արևելյան Դիարբեքիր և Շրնակ շրջաններում պահպանված որոշ թվով հայեր[2]:

Ուշագրավ է, որ 1960թ., Հոլանդիայի թագավորության տարածքում բնակվում էր միայն 100 թուրք, իսկ 1964թ.՝ արդեն 6400: Այնուհետև նրանց թիվը սկսեց կտրուկ աճել, քանի որ աշխատուժի պակասի պատճառով երկիրը պայմաններ էր ստեղծել «գաստարբայտերների» համար: 1974թ. Հոլանդիան սկսեց սահմանափակումներ կիրառել ներգաղթի համար, բայց մասնավորապես թուրքական համայնքի պարագայում իրավիճակն արդեն արմատապես փոխվել էր: Տեղի թուրքերի թիվը շարունակում էր ավելանալ Թուրքիայից ընտանիքները Նիդեռլանդներ փոխադրելու կամ բնական վերարտադրության հաշվին[3]:

2006թ. Հոլանդական թագավորությունում խորհրդարանական ընտրություններին ծավալված իրադարձությունները շոկային էֆեկտ առաջացրին Թուրքիայում և Նիդեռլանդների թուրքական համայնքում: Պարզ դարձավ, որ Բելգիայում թուրք քաղաքական գործիչների հետ կատարվածը պատահականություն չէր և հին աշխարհամասում թուրքական մերժողականությանն արդեն հակազդում են ոչ միայն հայկական միությունները, այլև եվրոպական քաղաքական ուժերը: Սակայն, եթե Բելգիայում խոսքը տարածքային մակարդակում հանդես եկող քաղաքական գործիչների մասին էր,

[1] http://en.wikipedia.org/wiki/Turks_in_the_Netherlands
[2] "The Armenian community in Holland through the ages", Rene Beykus, http://www.hyetert.com/yazi3.asp?s=0&Id=30&Sayfa=1&DilId=2&AltYazi=Makaleler+%5C%3E+Diaspora, 06.12.2004
[3] http://en.wikipedia.org/wiki/Turks_in_the_Netherlands

ապա Նիդեռլանդական թագավորությունում խոսքը վերաբերում էր երկրի գլխավոր օրենսդրին:

2006թ. նոյեմբերի 22-ին Նիդեռլանդներում նախատեսված էին խորհրդարանական ընտրություններ: Սեպտեմբերի 12-ին հոլանդահայ կազմակերպությունների միությունը նամակով դիմեց Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցության ղեկավարությանը՝ նշելով, որ համամասնական ընտրացանկում ներառված թեկնածու Այհան Թոնջան իր նախկին ելույթներում հրապարակայնորեն մերժել է Հայոց ցեղասպանության փաստը, ինչը հակասում է հոլանդական պաշտոնական տեսակետին (2004թ. դեկտեմբերի 21-ին Նիդեռլանդների խորհրդարանը միաձայն ընդունել էր Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձև): Սեպտեմբերի 12-ին հայկական կառույցի մամուլի հաղորդագրությունն ուղարկվեց լրատվամիջոցներին և տեղադրվեց Հոլանդահայ կազմակերպությունների միության «Ապրիլի 24» կոմիտեի *www.24april.nl* կայքում, որտեղ հասանելի է մինչև այժմ[1]:

Սեպտեմբերի 20-ին թեման հայտնվեց հոլանդական «Նովա» հեռուստաալիքի եթերում, ուր պարզաբանումներ կատարեց «Ապրիլի 24» կոմիտեի նախագահ Նուբար Սիփանը: Վերջինս ներկայացրեց Նիդեռլանդների կողմից ցեղասպանության դատապարտման և թուրք քաղաքական գործիչների կողմից իրականացվող մերժողականության հարցը, ԵՄ արժեհամակարգին խնդրի անհարիրության իրողությունը: Թեման ներթափանցեց այլ լրատվամիջոցներ, և լրագրողական հետաքննություն ծավալվեց: Հոլանդական «Տրաու» թերթը սեպտեմբերի 22-ին «Մեծ թվով թուրքեր *CDA* (Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցություն), *PvdA* (Աշխատանքի կուսակցություն) և *VVD*-ից (Ազատություն և ժողովրդավարություն ժողովրդական կուսակցություն) մերժում են ցեղասպանությունը» հրապարակման մեջ գրեց. «Ոչ միայն *CDA*-ում, այլև ուրիշ կուսակցություններում կան թուրք քաղաքական գործիչներ, որոնք մերժում են հայերի ցեղասպանությունը»[2]:

[1] www.24april.nl

[2] *"Heel wat Turken in CDA, PvdA en VVD ontkennen genocide"* («Շատ մեծ թվով թուրքեր *CDA, PvdA* և *VVD* կուսակցություններում մերժում են ցեղասպանությունը», հոլանդերեն), "*Trouw"*, 22.09.2006.

Լրագրող Էյմերթ Մյուլդերը ներկայացրեց մեջբերումներ Նիդեռլանդների թուրքերի *www.siyaset.nl* կայքից, ըստ որի՝ *CDA* ընտրացանկի առավել ստորին հորիզոնականում գտնվող Օսման Էլմաջըն և *PvdA* անդամ Էրդինչ Սաչանը նույնպես մերժողականներ են: Թուրք պատգամավորները հրաժարվեցին վերանայել իրենց մոտեցումները և կարճ ժամանակ անց կուսակցական որոշումներով դուրս թռան ընտրացանկերից: Հայտարարությամբ հանդես եկան Նիդեռլանդներում Թուրքիայի դեսպանատունը, արտգործնախարարությունը, իսկ «տուժյալ» թուրք գործիչները պարգևատրվեցին Թուրքիայի Միլի մեջլիսի «պատվավոր խորհրդարանականներ» մեդալով: Հատկանշական է, որ Նիդեռլանդներում *CDA* անդամ 30 էթնիկ թուրքեր բողոքի հանրահավաք անցկացրին, երբ ընթանում էր կուսակցության համաժողովը[1]: Անսովոր և հակասական վիճակ է, երբ մահմեդականները միանում են եվրոպական Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցությանը, ապա նաև բողոքարկում կուսակցության որոշումները՝ էթնիկ գործոնի հիման վրա:

Հոլանդիայի մյուս թուրք քաղաքական գործիչները Մեծ եղեռնի թեմայով առավել խուսափողական, զգուշավոր, հաճախ՝ իրարամերժ ելույթներով հանդես եկան: Մասնավորապես, Ռոտերդամի քաղաքային խորհրդի անդամներ Համիթ Քարաքուշը և Օրհան Քայան հայտարարեցին. «1915թ. մեծ ողբերգություն է տեղի ունեցել, և մահացել են 100 հազարավոր հայեր: Միանշանակ ասել, թե ցեղասպանություն չի եղել՝ հնարավոր չէ: Միաժամանակ, չկա իրավական եզրակացություն, որ 1915թ. կատարվածը ցեղասպանություն էր»[2]:

Իսկ *PvdA*-ի ընտրացանկի 2-րդ հորիզոնականը զբաղեցնող Նեբահաթ Ալբայրաքը *«HP/De Tijd»* հանդեսին տված հարցազրույցում, դժգոհելով իր հանդեպ ճնշումներից՝ հայկական հարցի առիթով, ի վերջո ընդունել էր ցեղասպանության իրողությունը. «Ցեղասպանության փաստն ընդունում եմ, բայց գտնում եմ, որ պետք է ուսումնասիրել իրականացման գործընթացը»[3]: Այս

[1] "Genocide Question Continues To Dog PvdA", "NIS News Bulleten" *www.nisnews.nl,* 04.10.2006.
[2] "Belediyelerde Türk siyasetçilerin avı", "Hürriyet", 06.10.2006.
[3] "Spagaat", http://www.hpdetijd.nl/home.php?editie_id=157

փաստն անմիջապես արձագանք գտավ թուրքական մամուլում. «Հյուրիեթը» գրեց, թե «Ալբայրաքը ստիպողաբար է ընդունել ցեղասպանության փաստը»[1]:

Ավելի ուշ Ալբայրաքը հրաժարվեց իր խոսքերից՝ պնդելով, թե իրեն ճիշտ չեն հասկացել, և հրապարակմամբ հանդես եկավ «Տրաու» օրաթերթում: Հայ համայնքի ղեկավար անդամներից Մաթո Հախվերդյանն այսպես է ներկայացնում իրողությունը. «Մի խայտառակ հոդված տպեց՝ իմիջիայլոց գրելով, որ Հոլանդիայում առհասարակ զանգվածային ջարդերը ցեղասպանություն են անվանում, ինչպես, օրինակ, Ռուանդայում և Դարֆուրում, նույնպես էլ Հայոց սպանդը, սակայն դրա միջազգային իրավական բնորոշումը պետք է տան իրավաբանները և պատմաբանները: Այնուհետև նա կոչ էր անում հայ և թուրք պատմաբաններին միասնաբար քննել պատմական դեպքերը: Թոն Զվանը և բազմաթիվ այլ անձինք սուր հոդվածներով սպառիչ պատասխան տվեցին այդ հոդվածին»:

Թրքուհի Ալբայրաքը, սակայն, չարժանացավ Թոնջա-Էլմաջը-Սաչան եռյակի ճակատագրին՝ կուսակցությունում խիստ ամուր դիրքերի շնորհիվ: Նա մասնակցեց ընտրություններին և, քանի որ ընտրացանկում զբաղեցնում էր 2-րդ հորիզոնականը, իսկ *PvdA*-ն բարձր վարկանիշ ուներ, ենթադրվում էր, որ ընտրություններից հետո կստանա բարձր պաշտոն, հնարավոր է նաև դառնար խորհրդարանի խոսնակ: Բայց Ալբայրաքի քաղաքական թռիչքը չստացվեց, և միանշանակ է, որ դրանում ևս նշանակություն ունեցավ հայկական գործոնը: Ահա թե ինչ տեղի ունեցավ. ընտրությունների նախօրեին *PvdA* ղեկավար Վաութեր Բոսը որոշեց սերտացնել հարաբերությունները թուրքական համայնքի հետ՝ թուրքական համայնքի քվեները շահելու նպատակով: Նոյեմբերի 6-ին, քվեարկության օրվանից 18 օր առաջ, նա հանդիպեց տեղի թուրքական համայնքի անդամներին և լրագրողների ներկայությամբ հայտարարեց. «Այսուհետ *PvdA*-ն խուսափելու է «ցեղասպանություն» բառից և օգտագործելու է «Հայկական հարց» արտահայ-

[1] "Zorla söylettiler", *www.hurriyet.com.tr,* 07.10.2006, "Ermeni baskılarına dayanamayan Türk aday sözde soykırımı kabul etti", "Zaman".

տությունը: Ցեղասպանություն բառն ունի իրավական կիրարկում, և հստակ չէ, որ այն գործածական է թուրքական ջարդարարությունների պարագայում»[1]: Եվ չնայած Բոսը հավելել էր, թե իր հայտարարությունը կապված չէ առաջիկա ընտրությունների հետ, իրականում ամեն ինչ շատ պարզ էր: Բոսի արարքն ունեցավ հակադարձ համեմատական հետևանքներ. հետագա օրերին նիդեռլանդական մի շարք լրատվամիջոցներում խիստ բացասական արձագանքներ եղան սոցիալ-դեմոկրատ կուսակցապետի հայտարարության վերաբերյալ. *«Volkskrant»* օրաթերթի նոյեմբերի 8-ի համարը գրեց. «Այս անակնկալ շրջադարձը կարող է մեկնաբանվել բացառապես որպես տագնապալի նախընտրական օպորտունիզմ»[2]: *"Het Parool"* օրաթերթում ցեղասպանագետ Թոն Զվանը Բոսի քայլն անվանեց «ամոթալի նախընտրական մեքենայություն»[3]: *"De Telegraf"* օրաթերթի «Զանգվածային սպանությունները և ընտրարշավը» հրապարակման մեջ նշվում է. «*PvdA* առաջնորդ Վաութեր Բոսի բարոյական սկզբունքներն ակնհայտորեն որոշվում են ըստ պոտենցիալ ընտրողների պահանջների»[4]:

Թուրքական «Ենի շաֆաք» թերթը գրեց, թե Քրիստոնեա-դեմոկրատները, լիբերալները և Քրիստոնեական միություն կուսակցությունը հայտարարում են, որ «Բոսը կտրուկ շրջադարձ կատարեց իր դիրքորոշման մեջ՝ ծնկի իջնելով թուրք ընտրողների առջև»[5]:

Բոսը հոլանդական թերթերում ծաղրանկարների առարկա դարձավ: Նիդեռլանդական «Պոլիտիկեբարոմետր» կայքում այսօր էլ հասանելի են նոյեմբերի 6-ից անմիջապես հետո Բոսի ղեկավարած կուսակցության հեղինակության ցուցանիշները. նոյեմբերի 6-ի դրությամբ սոցիալիստների վարկանիշը կազմել է 27,8%, որը հնարավորություն էր տալիս 150 աթոռ ունեցող խորհրդարանում զբաղեցնել 43 աթոռ և շահել ընտրությունները: Այնուհետև, նոյեմբերի 10-ի դրությամբ՝ արդեն 25,6% կամ 39 տեղ, նոյեմբերի 13՝

[1] "Mijden van 'g-woord' door PvdA valt schecht", Volkstrant 19.11.2006.
[2] "Electoral opportunism", "Volkstrant" 08.11.06.
[3] "Is Bos playing up to the voters ", "Het Parool", 08.11.06.
[4] "Massmurder and election campaign", "De Telegraf", 08.11.2006.
[5] "Ermeni soykırımı Holldandayı karıştırdı", "Yeni Şafak", 09.11.2006.

21,4% կամ 33 տեղ, 14-ին՝ 20,8% կամ 32 տեղ: Ընտրությունների նախօրեին վարկանիշը փոքր-ինչ աճել է՝ չհասնելով նախկին մակարդակին՝ 24,1 կամ 37 մանդատ[1]:

«Ես կարծում եմ՝ ցեղասպանության դեպքը հեղինակազրկեց նրանց: Նիդեռլանդներում ընդունված է ասել, որ այն դարձավ *PvdA* վարկանիշի անկման պատճառներից մեկը, բայց իմ տպավորությամբ, այն նախընտրական փուլում Բոսի հետ կապված ամենախոշոր սկանդալն էր: Վարկանիշային ցուցիչները ևս փաստում են դա»,- այս առիթով հեղինակին ասել է Հոլանդահայ կազմակերպությունների միության համանախագահ Ինգա Դրոսթը: Սոցիալ-դեմոկրատները, ընտրություններում հաղթանակին շատ մոտ լինելով, պարտվեցին Քրիստոնեա-դեմոկրատներին, իսկ սոցիալ-դեմոկրատների ընտրացանկում 2-րդ հորիզոնականը զբաղեցնող Նեբահաթ Ալբայրաքը հոլանդական օրենսդրի ղեկավար չդարձավ:

Ընտրություններում «թուրքասեր» հայտարարություններով հանդես եկավ նաև *D66* (Դեմոկրատներ 1966) կուսակցությունը: Վերջինս ստացավ թուրքական համայնքի քվեները և 3 տեղ շահեց խորհրդարանում, որոնցից մեկը զբաղեցնում է թրքուհի Ֆաթմա Քոշեր Քայան: Ընդ որում, Նիդեռլանդներում ասեկոսեներ տարածվեցին, թե ընտրությունների նախօրեին թուրքական համայնքի շատ անդամներ էլեկտրոնային նամակներ էին ստացել ուղղակիորեն Թուրքիայի ԱԳ նախարարությունից, որոնցում Անկարան հայրենակիցներին կոչ էր անում ընտրել *D66* կուսակցությանը: Անկարան, 3200 կմ-ից հեռակառավարելով թուրքական համայնքը, ապահովեց թուրքամետ կուսակցության և թրքուհի Քայայի մուտքը եվրոպական օրենսդիր մարմին: Հոլանդիայում *D66*-ը սկսեցին կեսկատակ *T-66* անվանել՝ ակնարկելով հովանավորներին:

«Նախկինում երբևէ Հայոց ցեղասպանության հարցը հոլանդական քաղաքական կյանքում այնքան ուշադրության չէր արժանացել, որքան վերջին շաբաթներին»,- գրեց հոլանդական *"Het Parool"*-ը՝ մեջբերելով Ինգա Դրոսթի խոսքերը: «Մենք որևէ մեկին անտեղի չենք վնասել: Մենք միայն պարզաբանություն հարցրինք և

[1] http://www.politiekebarometer.nl/2006.cfm

մեծ մասամբ հաջողեցինք դա: Ես կարծում եմ՝ Նիդեռլանդներում կանխվեց երկրին սպառնացող մեծ չարիք: Այստեղ ներմուծվում է թուրքական պրոբլեմ: Այդ մարդկանց մի մասը հարյուրավոր թելերով կապված է Անկարայի հետ: Շատերը չեն ցանկանում ընդունել, որ թուրքերն ազդեցություն ունեն Հոլանդիայի քաղաքականության վրա»,- նշված էր «Հայկական լոբբին ուժեղ է» հոդվածում[1]:

Նիդեռլանդների խորհրդարանի *"ChristenUnie"* (Քրիստոնեական միություն) կուսակցության խմբակցությունը 2006թ. ներկայացրել է առաջարկ՝ Հոլանդիայի հիմնական օրենքում ավելացնել հոդված, ըստ որի՝ արգելվում է Ցեղասպանության և Հոլոքոստի մերժողականությունը: Առաջարկվող հոդվածի բացատրական բաժնում նշված է, որ մյուս ցեղասպանությունների կողքին օրենքով պետք է պատժվի նաև Մեծ եղեռնի մերժողականությունը: Նախաձեռնության հեղինակներից Տինեկե Հոյզինգան և Քրիստոնեական միություն կուսակցության այլ անդամներ բողոքի էլեկտրոնային նամակներ են ստանում տեղի թուրքերից[2]: 2010թ. տարեսկզբի դրությամբ օրինագիծը հաստատված չէր:

Ներկայացնենք Նիդեռլանդների մի շարք այլ թուրք քաղաքական գործիչների անուններ. Ֆաթիմե Օրգյու *(VVD)*, Ջոշքուն Քորուզ, *(CDA* պատգամավոր), Քեքլիք Յուջել *(PvdA)*, Նևին Օզությոք, *(GroenLinks – GL* - Ձախ կանաչներ*),* Ալի Սարաչ *(PvdA),* Մեհմեթ Դեմիրբաղ *(VVD)*, Ջոշքուն Չորուզ, *(CDA),* Նիհաթ Էսքի *(CDA),* Ֆադիմե Օրգյու *(VVD)* և այլք…

Այստեղ պարզապես կրկնենք, որ 1960թ. Նիդեռլանդներում բնակվում էր ընդամենը 100 թուրք:

Նիդեռլանդներում թուրքական ծայրահեղ ազգայնական շարժումների դեմ Ամստերդամի իշխանությունների «արթնացումի» առաջին նախանշանները 90-ականների սկզբներին էին, երբ Հոլանդական թագավորության իրավապահները տեղեկություններ ձեռք բերեցին, որ Հոլանդիայի թուրքական համայնքի ներկայացուցիչները ներգրավված են թմրաբիզնեսի, զենքի առևտրի ոլորտնե-

[1] "Armeense lobby is sterk", Addie Schutle, "Het Parool, 07.10.06.
[2] "ChristenUnie: bestraf onkenning van volkerenmord", ANP, 01.06.2006.

րում և առնչություններ ունեն թուրքական ծայրահեղական ուժերի և Թուրքիայի պետանվտանգության մարմինների հետ: Տվյալները վկայում էին, որ թուրք «Գորշ գայլերը» ներթափանցում էին թագավորության քաղաքական ոլորտ, ոստիկանություն, վարչական ատյաններ: 1993-94թթ. Հոլանդիայի ոստիկանությունն արդարադատության նախարարության ցուցումով իրականացրեց «Էկսոդյուս» գործողությունը, որը վերաբերում էր Ամստերդամի թուրքական համայնքին[1]: Հետաքննությունը բացահայտեց, որ Նիդեռլանդների թուրքական ֆեդերացիայի այդ ժամանակվա ղեկավար Հիքմեթ Յլդրզէլին և նրա տեղակալ Ահմեդ Ջեյհանն առնչվում են *MHP* Ազգայնական կուսակցությանը և «Գորշ գայլերին»: Ընդ որում, Ահմեդ Ջեյհանը նաև Ամստերդամի Խյոզենֆելդ-Սլոտերմիր քաղաքամասի քաղաքային խորհրդի անդամ էր:

«Արթնացումի» վկայություններից էր նաև 1997թ. հոլանդուհի լրագրող Ստելա Բրամի և քուրդ ուսումնասիրող, լրագրող Մեհմեթ Ուլգերի հետազոտությունը Նիդեռլանդներում թուրք ծայրահեղական կառույցների գործունեության մասին[2]: Աշխատությունը հարցականի տակ առավ հոլանդական պետական իշխանությունների քաղաքականությունը, թե Հոլանդիայի թուրքերին ընդհանրապես հնարավոր է ինտեգրել եվրոպական հասարակությանը: Լրագրողներն ուսումնասիրեցին թուրքական հասարակական, մշակութային կառույցների գործունեությունը, ղեկավար անձանց կենսագրությունները, հայացքները՝ գալով հետևյալ եզրակացության. թուրքական հասարակության ղեկավարների զգալի մասն իրականում թուրքական ազգայնական շրջանակների դրածոներ են, որոնք որևէ մտադրություն չունեն ինտեգրվել եվրոպական հասարակությանը: Ավելին, տեղի թուրքերն ընտանիք են կազմում թուրքերի հետ, անգամ եթե առկա է ազգակցական կապ: 2008թ. Հոլանդիայի Հասարակական առողջության և շրջակա միջավայրի ինստիտուտի ուսումնասիրությունները վկայեցին, որ Նիդեռլանդների

[1] «Գորշ գայլեր». հետազոտություն թուրք ծայրահեղ ազգայնականների մասին», Ստելա Բրամ, Մեհմեթ Ուլգեր, Երևան, «Զանգակ» հրատարակչություն, էջ 14:
[2] Grijze Wolven: Nijgh & Van Ditmar, Amsterdam, 1997, Stella Braam, Mehmet Ulger.

թուրքերի շուրջ 25 տոկոսն ամուսնանում է մոտ ազգականների հետ[1]: Կան նաև փաստեր, որ հասարակական կամ մշակութային միջոցառումների համար պետական շրջանակներից ստացվող դրամաշնորհներով տպվում է ազգայնական գրականություն: Թուրքական հասարակական-մշակութային կառույցներում և մզկիթներում ընթանում է ազգայնականության քարոզ և դրամահավաք: Գոյացած գումարներից 90-ականներին միջոցներ են ուղարկվել թե՛ Չեչնիայի ահաբեկիչներին, թե՛ Հյուսիսային Իրաքի թուրքմաններին և թե՛ Ադրբեջան:

Մասնավորապես, 1995թ. դեկտեմբերին, քուրբան բայրամի օրերին Ամստերդամի Ուլու Ջամի մզկիթի իմամ Աբդուլահը քարոզում էր իսլամական մատաղի տոնի առիթով կենդանի մորթելու փոխարեն այդ գումարը հանգանակել Չեչնիայի ահաբեկիչների օգտին: «Ամենից ճիշտն այն է, որ անասուն մորթելու փոխարեն դրա գինը փոխանցեք Չեչնիայի մեր եղբայրներին: Մեր թուրքական ֆեդերացիան ձեռնարկել է ակցիա «Օգնենք Չեչնիային» անվան տակ: Բոլոր մուսուլմանները պարտավոր են աջակցել ակցիային»,- հայտարարում էր իմամը:

«Դրամահավաքի արշավն ընթանում էր ողջ Եվրոպայի տարածքով: Դա պատահական չէր: 90-ականների սկզբներին «Չեչնիայի թուրքական հանրապետության ազատագրումը» *MHP*-ի սիրած թեման էր»,- այս առիթով նշում են Բրամը և Ուլգերը:

1996թ. մայիսի 3-ին Թուրքիայում լույս տեսնող «Թյուրքիե» թերթը հաղորդեց, որ ակցիային մասնակցել է ընդհանուր առմամբ 1133 թուրք: «Նիդեռլանդների թուրքական ֆեդերացիան երախտագիտություն է հայտնում Եվրոպայում բնակվող մեր եղբայրներին՝ ֆեդերացիային ցուցաբերած աջակցության համար: Ժողովված գումարը բաժանվել է հետևյալ թուրքական համայնքների միջև՝ Ղրիմ, Քըրքուք, Կահիրե, Արևմտյան Թրակիա և Ադրբեջան»,- նշված էր Ուլու Ջամիի տարածած հաղորդագրությունում[2]:

[1] "Turks in Netherlands mary close relatives", "Turkish Daily News", *www.tdn.com.tr,* 12.03.2008.

[2] «Գորշ գայլեր». հետազոտություն թուրք ծայրահեղ ազգայնականների մասին», Ստելա Բրամ, Մեհմեթ Ուլգեր, Երևան, «Զանգակ» հրատարակչություն, էջ 99:

2003թ. «Գորշ գայլերի» վերաբերյալ այս ուսումնասիրությունը թարգմանվեց և հրապարակվեց հայերեն՝ «Գորշ գայլեր». հետազոտություն թուրք ծայրահեղ աջակողմյանների մասին» խորագրով: Թարգմանությունը կատարվեց «Հոլանդիայի գրական ստեղծագործության և թարգմանության ֆոնդի» աջակցությամբ:

Նիդեռլանդներում թուրքական համայնքի մասին նշելիս առանձնացնենք նաև թրքուհի լրագրող Նևին Սունգուրին: Վերջինս 2006թ. հոկտեմբերին ամուսնացավ Նիդեռլանդներից Եվրախորհրդարանի պատգամավոր Յուսթ Լագենդայկի հետ և հաստատվեց Եվրոպայում[1]: Լագենդայկը Եվրամիություն-Թուրքիա միջխորհրդարանական հանձնաժողովի համանախագահն էր: Առավելապես ազատական հայացքների տեր Նևին Սունգուրը որպես լրագրող այցելել է Հայաստան:

P.S. 2006թ. աշնանը Բրյուսելից գնացքով մեկնում էի Ամստերդամ՝ տեղի հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպելու: Դիմացս նստած հոլանդացին թերթ էր կարդում: Հարցրի՝ քաղաքի կենտրոն հասնելու համար ո՞ր կայարանում պետք է իջնեմ: Պատասխանեց, ապա հարցրեց. «Որտեղացի՞ եք»: Ասացի՝ Հայաստանից: Նա մի փոքր մտածեց և ասաց. «Ինչ ամոթ է, որ թուրքերը չեն ընդունում ցեղասպանությունը»…

[1] "Nevin Sungur ile Joost Lagendijk dünya evine girdi", www.ntvmsnbc.com. 28.10.2006.

Գերմանիա. 3 միլիոն թուրքերի երկիրը

«Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում (ԳԴՀ) բնակվում է գրեթե 3 մլն թուրք, և այդ թիվն աստիճանաբար ավելանում է: Թուրքական համայնքները գերմանական քաղաքներում իսկական «զուգահեռ հանրույթներ» են ստեղծում, որոնցում չեն գործում Գերմանիայի օրենքները, որոնցում կնոջը կարող են սպանել գլխաշոր չկապելու համար, իսկ երեխաները հաճախ մեծանում են՝ գերմաներեն ոչ մի բառ չիմանալով: Թուրքական համայնքի՝ գերմանական հասարակությանն ինտեգրվելու ցանկության լիակատար բացակայություն, ապաստան տված երկրի հանդեպ ագրեսիվություն, համայնքի անդամների խիստ ցածր կրթամակարդակ. ահա այն հիմնախնդիրները, որոնք, ճիշտ է՝ անհաջող, բայց փորձում են լուծել գերմանական իշխանությունները՝ հանկարծ գիտակցելով, որ խաղաղ բազմամշակութային հասարակություն գոյություն ունի միայն երազներում»,- նշում է վերլուծաբան Սերգեյ Սումլյոննին[1]:

Գերմանիայի շուրջ 3 միլիոն թուրք բնակիչները կենտրոնացած են Բեռլին, Բրեմեն, Ֆրանկֆուրտ, Համբուրգ, Հաննովեր, Մյունխեն, Դորտմունդ, Շտուտգարտ քաղաքներում Կրեուզբերգի տարածաշրջանում: Թուրքական բնակչությամբ 3 խոշոր վարչատարածքային միավորներն են Նորթ-Ռայն Վեսթֆալիան, Բադեն-Վյուրտեմբերգը և Էսենը: Թուրքերի մեծ մասը բնակվում է քաղաքներում, և փոքր մասն է, որ գյուղաբնակ է[2]: Գերմանիայում գործում են 2400-ի չափ թուրքական համայնքային կազմակերպություններ: Դա Եվրոպայում գործող մոտ 4000 թուրքական միությունների կեսից ավելին է[3]:

Հայրենական պատերազմի ավարտից հետո դաշնային Գերմանիայի տնտեսական վերածննդի համար աշխատուժի պակաս էր զգացվում: Հետպատերազմյան առաջին տասնամյակի ընթացքում հարցը լուծվում էր հիմնականում Հարավսլավիայից աշխատ-

[1] «Գերմանիայի թուրք բնակչությունը՝ դանդաղ գործողության ռումբ», Սերգեյ Սումլյոննի, «21-րդ ԴԱՐ», N 2, 46 էջ, 2006:
[2] http://en.wikipedia.org/wiki/Turks_in_Germany
[3] "Euro-Türkler", Faruk Şen, Istanbul 2007, էջ 87:

ուժի ներգաղթի հաշվին, սակայն 50-ականների վերջերից ակնհայտ դարձավ, որ աշխատուժի «բացը», միևնույն է, պահպանվում է: 1961թ. դրությամբ Գերմանիայում կես միլիոն աշխատողի կարիք կար[1]: Դաշնային Գերմանիան գտնվում էր տնտեսական բումի վիճակում, որը պատմության մեջ մնաց «Գերմանական տնտեսական հրաշք» անվամբ՝ *Wirtschaftswunder:*

1961թ. Անկարայում դաշնային Գերմանիայի և Թուրքիայի իշխանությունները ստորագրեցին «Աշխատողների գործուղման» համաձայնագիր, որը կարգավորում էր դեպի Գերմանիա թուրքական աշխատուժի ներգաղթի օրինականացման հարցերը: Նույն տարում Գերմանիա մեկնեց 6800 թուրք[2]:

Կարճ ժամանակ անց թուրքերը դարձան Գերմանիայի ամենախոշոր «գաստարբայտերները»: 1966թ. Քյոլն քաղաքում հիմնվեց առաջին թուրքական մասնավոր ընկերությունը՝ «Թյուրքսանը», որը զբաղվում էր շինարարական բիզնեսով և տուրիզմով[3]:

Արդեն 1973թ. նոյեմբերի տվյալներով՝ Գերմանիայում բնակվում էր 910 հազ. 500 թուրք[4]: Նույն տարում գերմանական կառավարությունը սկսեց կիրառել ներգաղթի դեմ առաջին սահմանափակումները, սակայն թուրքերի թիվը շարունակում էր աճել: Պատճառն այն էր, որ եթե մինչև այդ թուրքերի մի մասը ժամանակ առ ժամանակ մեկնում էր Թուրքիա՝ ընտանիքին տեսակցելու, ապա 1973թ. օրենքից հետո առաջացավ մտավախություն, որ Թուրքիա մեկնելու դեպքում վերադառնալու խնդիրներ կարող են առաջանալ: Արդյունքում՝ թուրքերը սկսեցին Գերմանիա բերել իրենց հարազատներին: 1974թ. թուրքերի թիվը հատեց միլիոնի սահմանագիծը՝ 1 միլիոն 28 հազար, 1982թ.՝ 1 միլիոն 582 հազար, 1990-ին՝ 1 միլիոն 600 հազար[5]:

[1] "Almanya'nın asimilasyonist politikası ve entegrasyon anlayışı", Deniz Altınbaş Akgül, Semra Rana Sezal, www.avsam.org,

[2] Faruk Şen, Yunus Ulusoy ve Güray Öz, Avrupa Türkleri, İstanbul, Cumhuriyet Kitapları, 1999.

[3] "Turkish Diaspora in Germany", analysis Faruk Sen, "Magazine for development and cooperation" , 10/2004.

[4] Նույն տեղում:

[5] "Almanya'nın asimilasyonist politikaları ve entegrasyon anlayışı", Deniz Altınbaş Akgül, Semra Rana Sezal, www.avsam.org,

1983թ. Հելմութ Քոլի կառավարությունն ընդունեց օրենք, որով նյութական նպաստ էր տրամադրվում այն ներգաղթյալներին, որոնք վերադառնալու ցանկություն ունեն. մինչև 10500 մարկ չափահասների և 1500 մարկ՝ երեխաների համար: Գերմանիայի Էսեն քաղաքի Թուրքական հետազոտությունների կենտրոնի նախկին տնօրեն Ֆարուք Շենի դիտարկմամբ, այս որոշման հիմնական «հասցեատերը» Գերմանիայի թուրքերն էին: «Օրենսդիրների վճիռը հիմնված էր տնտեսական հաշվարկների, ինչպես նաև այն համոզմունքի վրա, որ թուրքական բնակչությանը հնարավոր չէ ինտեգրել քրիստոնեական ավանդույթներով արևմտաեվրոպական երկրում»[1]:

«Մյունխենում գոյություն ունեն թուրքական թաղամասեր, որտեղ դժվար թե կգտնվեն գերմաներեն ցուցանակներ»,- շարունակում է Սերգեյ Սումլյոննին[2]: Օրինակ, եթե թուրք բնակչության թիվը Բեռլինի Մոաբիթ շրջանում կազմում է 25%-ից փոքր-ինչ պակաս, ապա թուրք աշակերտների թիվն այդ շրջանի դպրոցներում տատանվում է 70-90%-ի միջև: Հանրակրթական դպրոցներում օտարերկրացիների այս աներևակայելի կուտակումն ի չիք է դարձնում գերմանական հասարակությունում երեխաներին ինտեգրելու ուսուցիչների բոլոր փորձերը, այն պայմաններում, երբ 10 դպրոցականից 9-ի մայրենի լեզուն թուրքերենն է, հավանականությունը, որ գերմանացիների 10%-ը կսկսի խոսել թուրքերեն, շատ ավելի մեծ է, քան թուրք դպրոցականներին գերմաներեն սովորեցնելու շանսերը[3]: Ըստ Բեռլինի սենատի տվյալների՝ 2000-2001թթ. ուստարում Գերմանիայի նախակրթարաններում, միջնակարգ դպրոցներում և լիցեյներում ուսանող էթնիկ թուրքերի թիվը կազմել է 407 հազար 459:

«Մինչև օրս չկա փոխհամաձայնություն այն հարցում, թե ինչ է նշանակելու թուրքական համայնքների ինտեգրացիան»,- գրում է թուրք վերլուծաբան Ֆարուք Շենը: «Գերմանիայում ծնված թուրքե-

[1] "Turkish Diaspora in Germany", analysys Faruk Sen, "Magazine for development and cooperation" , 10/2004.

[2] «Գերմանիայի թուրք բնակչությունը՝ դանդաղ գործողության ռումբ», Սերգեյ Սումլյոննի, «21-րդ ԴԱՐ», N 2, էջ 46, 2006:

[3] Նույն տեղում:

րի 90 տոկոսն ամուսանում է թուրքերի հետ, 1/3-ը չի ստանում նույնիսկ դպրոցական կրթություն: Գերմանիայում թուրքերի ինտեգրացիան տապալվեց, Ավստրիայում՝ նույնպես»,- հավելում է Վիեննայի համալսարանի պրոֆեսոր Թոմաս Բաուերը[1]:

Հատկանշական է, որ մինչև 2000թ. գործող օրենսդրությամբ Գերմանիայում ծնված օտարերկրացիների երեխաները չէին համարվում Գերմանիայի քաղաքացիներ: 2000թ. օրենսդրական փոփոխությունները դյուրացրին քաղաքացիություն ստանալու գործընթացը: Պետք է նշել, որ Գերմանիայում չի գործում երկքաղաքացիության օրենքը: 2000թ. դրությամբ գերմանաբնակ թուրքերի 36%-ը կամ 424 հազար 513-ը Գերմանիայի քաղաքացի է: Վերջին տարիներին գերմանական քաղաքացիություն ստացող թուրքերի թիվն աճում է. մասնավորապես, եթե 1972-1979թթ. ընթացքում Գերմանիայի քաղաքացիություն էր ընդունել 2219 թուրք, ապա 1999-2000թթ. այդ ցուցանիշը կազմել է արդեն 186.712[2]: 1983թ. դրությամբ թուրքերին էին պատկանում 322 մասնավոր ընկերություններ: Գերմանիա փոխադրվեցին նաև հազարավոր թուրքեր Կիպրոսից, Բուլղարիայից, Հունաստանից, իսկ 2006թ. իսրայելա-լիբանանյան ռազմական բախման հետևանքով Լիբանանից 20 հազարի չափ թուրքեր փոխադրվեցին Եվրոպա, մեծ մասամբ՝ Գերմանիա[3]:

Գերմանիայում թե՛ իշխանական և թե՛ հանրության շրջանակներում նկատելի է թուրքական ստվար համայնքի հանդեպ որոշակի մտահոգության տարրը: Քյոլնի թուրքական համայնքի նախաձեռնությունը՝ քաղաքում կառուցել Եվրոպայի ամենամեծ մզկիթը, առաջացրեց տեղի գերմանական համայնքի, քաղաքական որոշ ուժերի դժգոհությունը: «Պրո Քյոլն» կուսակցությունը իրականացնում է բողոքի հանրահավաքներ՝ շինարարությունն արգելելու նպատակով: Ըստ նախատեսվածի՝ մզկիթն ունենալու է 55 մետր բարձրությամբ 2 մինարեթ, իսկ գմբեթը գտնվելու է 35

[1] "Türken: Lange hier und trotzdem fremd", "Kurier" օրաթերթ, www.kurier.at, 26.01.2009.
[2] "Türkler'in Almanya'ya uyumu: bazı klişeler ve araştırma sonuçları", 2002թ., www.bteu.de
[3] "Turks in Germany", www.wikipedia.org

մետր բարձրության վրա: Այն միաժամանակ կարող է տեղավորել 1200 այցելու: Մզկիթը չափսերով ավելի մեծ է լինելու, քան Քյոլն քաղաքի մայր տաճարը[1]:

Աստիճանաբար հաճախակիանում են թուրքերի դեմ բռնությունները: Արդեն 90-ականներին սափրագլուխները և նեոնացիստական ուժերը սկսեցին գրոհներն էթնիկ թուրքերի դեմ: 2008թ. փետրվարին Գերմանիայի հարավ-արևմուտքում գտնվող Լյուդվիգշաֆեն քաղաքում հրի մատնեցին թուրքերով բնակեցված ամբողջ շենքը, որի արդյունքում զոհվեցին 9 թուրք բնակիչներ: Այս հարցը քննարկման առարկա դարձավ փետրվարին Թուրքիայի վարչապետ Էրդողանի Բեռլին այցի ընթացքում[2]: Հրդեհի բռնկման պատճառներն անհայտ են, բայց հրկիզված շենքի պատերին հայտնվել էին գերմանական սվաստիկաներ[3]:

Գերմանիայի թուրքական համայնքին ևս բնորոշ է ներքին ինքնակազմակերպման որոշակի մակարդակը: 1983թ. հիմնվեց Բեռլինի թուրքական համայնք կազմակերպությունը, որի հովանու ներքո գործում է 51 միություն[4]: «Բեռլինի թուրքական համայնքը թուրքական լոբբիի պիոներն էր և իրեն համարում է Բեռլինում բնակվող թուրքերի շահերի պաշտպանության խումբ»,- նշված է կազմակերպության կայքում:

2004թ. օգոստոսի 6-ին Քյոլն քաղաքում պաշտոնապես գրանցվեց Եվրոպայի թուրք դեմոկրատների միություն կազմակերպությունը: Թեև Եվրոպայի թուրքական լրատվամիջոցներում կառույցի ձևավորման նպատակների շարքում շեշտադրվում են եվրաինտեգրման և թուրք քաղաքացիներին օժանդակելու հիմնահարցերը, սակայն կառույցի 1-ին ղեկավար Ֆնզի Ջեբեն «Սթար» թերթին տված հարցազրույցում բավականաչափ տարբերվող հայտարարություններ արեց.

- Ո՞րն է Թուրք դեմոկրատների միության ձևավորման պատճառը,- հարցնում է լրագրողը:

[1] "Tartışılan camiye izin çıktı", www.gazetevatan.com, 30.08.2008.
[2] "Erdogan, Merkel to discuss Turkish immigrants, terror", "Today's Zaman", 19.02.2008.
[3] Erdogan salutes Germany's Turkish community, "Euronews.com", 19.02.2008.
[4] http://www.tgb-berlin.de/

- Միությունը ստեղծվել է թուրքերի համար և հանուն Թուրքիայի ուժեղ լոբբի ձևավորելու նպատակով:

- Թուրքերը Եվրոպայի լոբբիստական աշխատանքներում հե՞տ են մնացել:

- Իհարկե: Հայկական և հրեական լոբբիները շատ ակտիվ աշխատում են իրենց ժողովուրդների ձայնն աշխարհի հանրությանը լսելի դարձնելու համար: Եվրոպական աշխարհամասում միլիոնավոր թուրքեր կան, բայց լոբբիստական աշխատանքներում ուրիշների համեմատ հետ ենք մնացել:

Ուշագրավ է նաև այս հոդվածի վերնագիրը՝ «Թուրքերը կունենան Եվրոպայի ամենաազդեցիկ լոբբին»[1]:

Միությունը կարճ ժամանակում գրասենյակներ բացեց նաև Բեռլին, Ամստերդամ, Ռոտերդամ, Բրյուսել, Լոնդոն, Փարիզ, Վիեննա քաղաքներում, ԵՄ կենտրոնակայանում գրանցվել է որպես լոբբիստական միություն: Ղեկավար Ֆեզի Ջեբեին 2,5 տարի անց փոխարինեց հոլանդական բաժնի ղեկավար Վեիս Գյունգյորը[2]:

Կառույցի բացման արարողությանը ներկա էին Թուրքիայի վարչապետ Էրդողանը և Գերմանիայի այն ժամանակվա վարչապետ Գերհարդ Շրյոդերը: Ընդհանրապես Էրդողանը կարող է համարվել կառույցի «կնքահայրը»: Համաեվրոպական թուրքական միություն հիմնելու մասին նա խոսել էր դեռ 2002-ին, երբ վարչապետ չէր և իր կուսակցությունն ընդդիմադիր էր: Ըստ էության, խոսքը ոչ միայն լոբբինգի ձևավորման, այլև թուրքական «սփյուռքում» իսլամիստների դիրքերն ամրացնելուն ուղղված նախաձեռնության մասին է:

Իրենց դեմոկրատներ որակող այս թուրքերը բավական կոշտ հայտարարություն արեցին համացանցի միջոցով հայերից ներողություն հայցելու թուրք մտավորականների նախաձեռնության առիթով: Նրանց ելույթում բառերի ընտրությունն ավելի շատ բնորոշ կլիներ ծայրահեղականներին և ոչ թե Եվրոպայում բնակվող

[1] "Türkler Avrupa'nın en etkin lobisi olacak", «Star», www.stargazete.com, 12.03.2006.
[2] "Avrupa Türk Demokratlar birliği başkanı Cebe istifa etti", www.haberler.com, 16.02.2007.

դեմոկրատ ուժերին. «Ոչ ոք չի կարող նսեմացնել պապերից մեզ ավանդ մնացած ժառանգությունը, բնորոշել որպես «ոճիր» և ներողություն ակնկալել: Թուրք ազգին վիրավորելը որպես առաքինություն համարող այս խմբի անդամներին «մտավորականներ» համարելը վիրավորանք է թուրք ազգի հանդեպ: Հայ սփյուռքի գործակալների «նվագի տակ պարող» այս խմբի գործողությունները դատապարտում ենք ափսոսանքով և թողնում մեր մեծ ազգի գնահատականին»[1]:

Ըստ էության, թե՛ դեմոկրատիայի և թե՛ Եվրոպայի հետ բացարձակ կապ չունեցող մի հայտարարություն…

Գերմանիայի դաշնային խորհրդարանի անդամներ են էթնիկ թուրքեր Լալե Աքգյունը (Սոցիալ-դեմոկրատական կուսակցություն, *SPD),* Հյուսեին Քենան Այդընը (Ձախակողմյան դեմոկրատ, *Die Linke),* Հաքքը Քեսքինը (Ձախակողմյան դեմոկրատ, *Die Linke),* Սևիմ Դաղդելենը *(Die Linke),* Էքին Դելիգյոզը (Կանաչների խմբակցության անդամ)[2]:

Տարածքային մակարդակով Բեռլինի նահանգային խորհրդարանի անդամներ են Էվրիմ Բաբան (ազգությամբ քուրդ, *Die Linke),* Դիլեք Քոլաթը *(SPD),* Օզջան Մուլլուն (Կանաչների կուսակցություն), Բիլքայ Օնեյը *(SPD),* Ուլքյեր Ռանձվիլը *(SPD),* Գիյասեթին Սայան (էթնիկ քուրդ, *Die Linke)*[3]*:* Համբուրգի խորհրդարանի անդամներ են *SPD* կուսակցությունից Այդան Օզոդուզը և Կանաչների կուսակցությունից Նեբահաթ Գյուչլյուն, Ստորին Սաքսոնիայի խորհրդարանում պատգամավոր է կանաչներից Ֆիլիզ Փոլաթը, Իքբալ Բերբերը Սաարլանդի տարածքային խորհրդարանի անդամ էր 1999-2004թթ.:

Գերմանիայի Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցության կայքում առկա է 2006թ. դեկտեմբերի 12-ի ամսաթվով կուսակցության խորհրդարանական խմբակցության ղեկավար Յոհան Կոնրադ Ֆրոմի հայտարարությունը, որով գերմանացի քաղաքական

[1] "Özür'e bir tepki de Avrupa'dan", www.yenihareket.com, 28.12.2008.
[2] http://www.bundestag.de/htdocs_e/bundestag/members/complete.html
[3] http://www.abgeordnetenhaus.de/pari/web/wdefault.nsf/vHTML/C17_2?OpenDocument.

գործիչը Սոցիալ-դեմոկրատական ձախակողմյան կուսակցության ղեկավարությունից պահանջում էր «կարգի հրավիրել» թուրք գործիչ Հաքքը Քեսքինին (ներկայում՝ Ձախակողմյան դեմոկրատ, *Die Linke),* քանի որ վերջինս վիճարկում էր Մեծ եղեռնի փաստը: «Նա, ով կասկածի տակ է առնում կամ մերժում է 1915/16թթ. Հայոց ցեղասպանության փաստը, անարգանք է հասցնում 20-րդ դարի խոշորագույն բռնագաղթի ավելի քան 2 միլիոն զոհերին: Խստագույնս կոչ ենք անում խմբակցությանը կարգի հրավիրել պրոֆեսոր Քեսքինին և դիմել նրան՝ առանց վերապահման ընդունելու պատմական ճշմարտությունը»,- նշված էր հայտարարության տեքստում: Ֆրոմը հիշեցնում էր, որ երբ «2005թ. հունիսին Բունդեսթագը հարգանքի տուրք մատուցեց հայ նահատակներին, Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը միաձայն կողմ արտահայտվեց»[1]: Առավել կոշտ է արտահայտվել խորհրդարանի Կանաչների խմբակցության ղեկավար Ֆրից Կունը, որը ձախակողմյաններին համեմատեց «թուրքական ջարդարար ռեժիմին աջակցած կայսերական Գերմանիայի հետ»: «Ձախակողմյանները թուրք ազգայնականների քվեները շահելու նկատառումով Քեսքինի հետ միասին ոտքի տակ առան քաղաքական և բարոյական սկզբունքները»,- նշեց նա: Իր հերթին Քեսքինը հայտարարել էր, թե Գերմանիայում փորձ են անում սահմանափակել թուրք քաղաքական գործիչների քաղաքական ակտիվությունը, և հիշեցրել էր, որ «Հոլանդիայում և Բելգիայում նման դեպքեր արդեն իսկ գրանցվել են»: «Ես մտավախություն ունեմ, թե ինչպիսին կլինի այս գործիչների դիրքորոշումն այն բանից հետո, երբ նրանք կդառնան նախարարներ կամ գիտական աշխատողներ»,- նշել էր նա[2]: Ի վերջո, թուրք քաղաքական գործչի կուսակիցները (Սոցիալիստական կուսակցություն) ընդունեցին հայտարարություն, որով դատապարտեցին Քեսքինի ժխտողական քաղաքականությունը: «Հայոց ցեղասպանության հարցը վիճարկման ենթակա չէ: Մեր դիրքորոշման հիմքում Բունդեսթագի 2005թ.

[1] "Leugnung des Genozids an den Armeniern beraubt die Opfer von Vertreibung und Mord ihrer Würde", 12.12.2006, www.cducscu.de.

[2] "Keskin'e soykırımı kıskacı", "Yeni şafak", 10.01.2007, www.yenisafak.com.tr

հունիսին ընդունած բանաձևն է»,- նշված էր հայտարարությունում:

Գերմանիայի և ընդհանրապես արտասահմանի թուրք գործիչների շարքում բացառիկ դեր ունի Ջեմ Օզդեմիրը: Վերջինս նաև եզակի է ազգային փոքրամասնության ներկայացուցչի կողմից քաղաքական կարիերա անելու իմաստով: Ջեմ Օզդեմիրը Եվրախորհրդարանի և Գերմանիայի դաշնային խորհրդարանի պատգամավոր է եղել, ներկայում Գերմանիայի Կանաչների կուսակցության համանախագահն է: Օզդեմիրին նույնիսկ համարում են «Գերմանիայի Օբամա»: Հատկանշական է, որ երբ 2008-ի աշնանը Օզդեմիրը պայքարում էր Կանաչների կուսակցության համանախագահ դառնալու համար, «Ֆեյսբուք»-ում ձևավորվել էր խումբ *"Yes we Cem"* անվամբ, որն արվել էր Օբամայի հայտնի *«Yes we can»*-ի նմանությամբ: «Ֆեյսբուքի» էջում Օզդեմիրի և Օբամայի նկարները կողք կողքի են: «Օզդեմիրը շատ հարմար ժամանակ ընտրեց Գերմանիայի Կանաչների կուսակցության համանախագահ դառնալու համար: Ողջ Եվրոպան ձգտում է ունենալ եվրոպական Բարաք Օբամա: Որպես Գերմանիայի խոշոր կուսակցության առաջին էթնիկ թուրք ղեկավար՝ Օզդեմիրը դառնում է Գերմանիայից Օբամայի գլխավոր մրցակիցը»,- այս առիթով գրեց «Էկոնոմիստը»[1]:

Օզդեմիրի ծնողները, 60-ականներին Թուրքիայից փոխադրվելով Գերմանիա, աշխատել են ածխի և մետաղի հանքերում[2]: Ըստ տարբեր տեղեկությունների՝ Օզդեմիրն ունի չերքեսական կամ հրեական ծագում: 1992-ին ստանալով քաղաքացիություն՝ արդեն 2 տարի անց՝ 1994թ. դարձավ Գերմանիայի դաշնային խորհրդարանի առաջին թուրք պատգամավորը և պաշտոնավարեց 8 տարի[3]: 2002-2004թթ. անցկացնելով Վաշինգտոնում և Բրյուսելում և աշխատելով Մարշալի գերմանական հիմնադրամում՝ նա 2004-2009-ին նաև պաշտոնավարեց որպես Եվրախորհրդարանի պատգամավոր, իսկ 2008-ի նոյեմբերին ընտրվեց Կանաչների կուսակցության համանախագահ, որը ղեկավարում է Քլաուդիա Ռոթի հետ[4]:

[1] "Is it so important to have a Turkish chancellor", "The Economist", 20.11.2008.
[2] "Ozdemir set to win prominence in Gernan politics", www.todayszaman.com, 15.11.2008.
[3] http://www.politico.com/arena/bio/cem_ozdemir.html
[4] http://www.bbc.co.uk/education/languages/germany_insideout/berlin3.shtml

Ուշագրավ է Օզդեմիրի դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հիմնախնդրում: 2001թ. ապրիլի 24-ին նա Քյոլն քաղաքի Սբ. Քրիստափոր եկեղեցում մասնակցեց Հայոց ցեղասպանության հիշատակի արարողությանը: «Հյուրիեթի» լրագրող Թունջայ Յլդըրրըմը, որ ևս ներկա էր միջոցառմանը, ապրիլի 26-ին թերթում հոդված հրատարակեց՝ տեղեկացնելով, որ «Օզդեմիրը մոտեցել է հայ հոգևորականին, հանդես եկել ապաշխարանքի խոսքով և համբուրել հոգևորականի աջը»: Օզդեմիրը նաև փոքրիկ ելույթ էր ունեցել եկեղեցում՝ նշելով. «Որպես քաղաքական գործիչ ես ներկայացնում եմ ինչպես թուրքական հասարակությունը, այնպես էլ գերմանական հասարակության մեկ մասը: Այդ հատվածի անունից ցանկանում եմ իմ կսկիծը հայտնել Ձեր կրած ցավերի համար: Թուրքիան, կորցնելով իր հայ քաղաքացիներին, կորցրեց իր խճանկարի շատ կարևոր մի մասը»[1]: Հատկանշական է, որ այս խոսքերը հնչեցվել են 2001-ին, երբ «թուրքական ապաշխարանքի» տարրը դեռ տարածում չուներ և նոր էր ձևավորվում: Օզդեմիրի քայլը սուր հակազդեցության հանդիպեց. Համբուրգի տարածքային խորհրդարանի անդամ Մահմութ Էրդեմը, նամակով դիմելով Օզդեմիրին, անհամաձայնություն հայտնեց, իսկ Բավարիայի թուրքական միությունը հայտարարեց. «Գերմանիայի պատգամավորը կարող է գերմանացիներին ներկայացնել և անհեթեթություններ խոսել նրանց անունից, սակայն իրեն ոչ մեկն իրավունք չէր տվել հայտարարություն անել թուրքերի անունից: Ոչ մեկը չի կարող ներողություն հայցել երևակայական ցեղասպանության համար»[2]:

«Նա իրեն թուրք է անվանում, բայց միակ բանը, որ անում է՝ թուրք ժողովրդին և Թուրքիային սևացնելն է: Այդպիսի թուրքերին կարող են մեզանից գողանալ և տանել»,- Օզդեմիրի մասին հայտարարեց Գերմանիայում թուրքական *MHP* կուսակցության ներկայացուցիչ Դերման Օզալփը[3]:

[1] "Cem Özdemir Ermeni papazının elini öptü", "Hürriyet", 26.04.2001.

[2] "Meslektaşından Özdemir'e tepki", "Hürriyet", 27.04.2001.

[3] «Գորշ գայլեր». հետազոտություն թուրք ծայրահեղ աջակողմյանների մասին», Ստելա Բրամ, Մեհմեթ Ուլգեր, Երևան, «Զանգակ 97» հրատարակչություն, էջ 159:

Ավելի ուշ Ջեմ Օզդեմիրը հանդես եկավ Օրհան Փամուքի դեմ թուրքական պետության հետապնդումները դատապարտող հայտարարություններով, բազմիցս մեկնեց Թուրքիա՝ հետևելու դատավարություններին: Նոբելյան մրցանակ շահելու համար «կանաչներ» Ջեմ Օզդեմիրը, Դենիել Քոն Բենդիթը, Յուսթ Լագենդայկը (արդեն նշել ենք, որ կինը թրքուհի լրագրող Նևին Սունգուրն է) և Հելգա Թրյուփելը հանդես եկան Փամուքին ուղղված շնորհավորական ուղերձով՝ նշելով. «Մարտահրավեր նետելով թուրքական այն օրենքին, որը կասեցնում է 1915թ. իրադարձությունների շուրջ պաշտոնական պատմագրության հետ անհամաձայնություն հայտնելը, նա դարձավ ազատ խոսքի առաջամարտիկ»[1]: Սակայն նույն գործիչը նաև անհամաձայնություն է հնչեցնում նաև նույն շրջանում Ֆրանսիայում շրջանառվող Հայոց ցեղասպանության մերժումը քրեականացնող օրինագծի կապակցությամբ[2]:

Թուրքական *TGRT* հեռուստաալիքով իր ելույթներից մեկում Օզդեմիրը նաև նշել է, որ «Թուրքիայում մի խումբ ծայրահեղականներ ասես սեփականաշնորհել են հայրենասիրության գաղափարը և մերժողականությունը դարձրել են հայրենասիրության չափանիշ, մինչ ինքն իրական հայրենասիրություն է համարում պատմության հետ առերեսման քաղաքականությունը»:

Գերմանիայի թուրքերի հակահայ հանրահավաքների շարքում պետք է նշել «Թալեաթ փաշա» գործողությունը: Այս նախագծի շրջանակում 2006թ. մարտին Բեռլինում, Թալեաթի սպանության օրը նախատեսվում էր իրականացնել հակահայ երթ: Բեռլինի անվտանգության քաղաքային վարչությունը նախ արգելեց հանրահավաքը՝ նշելով, որ քայլարշավի ընթացքում հնարավոր են օրինազանցություններ: Ըստ Թուրքիայի մամուլի, գերմանական իշխանությունների համար մտահոգիչ էր փաստը, որ հանրահավաքն ուղղված էր լինելու Հայոց ցեղասպանության պատմական իրողության դեմ: Դրան գումարվեց նաև այն, որ Անկարայում Գեր-

[1] "Turkey: Nobel prize for Turkish writer contracts damage done to open debate Armenian Genocide", 12.10.2006, http://www.greens-efa.org

[2] "Armenian Genocide: Green MPs appeal for French bill on Armenian Genocide to be withdrawn", 11.10.2006, http://www.greens-efa.org

մանիայի դեսպանատունը հրաժարվեց վիզա տրամադրել Թուրքիայի այն քաղաքացիներին, ովքեր ցանկանում էին Անկարայից մեկնել Բեռլին՝ հանրահավաքին մասնակցելու:

«Խմբի անդամները, գնալով Գերմանիայի դեսպանատուն, նորից դիմեցին վիզա ստանալու: Միջոցառման Անկարայի պատասխանատու, փաստաբան Մեհմեթ Ջենգիզը հայտարարեց, որ ավելի վաղ այս հարցով բանակցել էին Գերմանիայի դեսպանատան հետ և համաձայնության եկել»,- գրեց «Զամանը»[1]: Թուրք փաստաբանը ահազանգել էր Թուրքիայի արտգործնախարարություն: Ի վերջո, սահմանափակ թվով թալեաթականների հաջողվել էր մեկնել Գերմանիա, իսկ Բեռլին-Բրանդենբուրգյան բարձր ատյանի դատարանն արտոնել էր հանրահավաքը՝ պայմանով, որ չինչեն մերժողական կոչեր: Վերջին պայմանն իմաստազրկում էր «Թալեաթ փաշա» գործողությունը:

Մարտի 18-ին տեղի ունեցած երթին, ըստ գերմանական աղբյուրների, մասնակցել էր 800 թուրք, իսկ ըստ թուրքական աղբյուրների՝ մինչև 3000: Քայլարշավը սկսվել է Թուրքական տուն կոչվող հաստատության մոտից մինչև Էռնստ Ռոյթեր հրապարակ: Թուրքիայից ժամանել էին Աշխատավորական կուսակցության ղեկավար Դողու Փերինչեքը, նախկինում Թուրքիայի վճռաբեկ դատարանի գլխավոր դատախազ Վուրալ Սավաշը, ռազմաօդային ուժերի պաշտոնաթող գնդապետ Մյուժդեջին, Աթաթուրքի մտածելակերպի միության ղեկավար Յավուզ Դեդեգիլը: Փերինչեքին ելույթից առաջ մոտեցել էին իրավապահները և նախազգուշացրել մերժողական հայտարարություններ չանել: Իսկ Թուրքիայի գլխավոր աշխատավորն իր ելույթում Թալեաթին անվանել էր, ոչ ավելի, ոչ պակաս, «մեծ հայրենասեր, որից պետք է օրինակ վերցնել»[2]:

Հետաքրքիր է, թե որ օրինակը նկատի ուներ Դողու Փերինչեքը…

[1] "Berlinde Talat paşa yürüyüşü yasaklandı", www.zaman.com.tr, 13.03.2006.
[2] "Berlin'deki Türk yürüyüşü olaysız bitti", www.voanews.com, 18.03.2006.

Ֆրանսիա. իսկ եթե էրդողանը մերժի ցեղասպանությունը...

Ֆրանսիայի արևելքում, Ստրասբուրգից ոչ հեռու գտնվող Կոլմար փոքրիկ քաղաքում 1993թ. օգոստոսին սպանվեց 15-ամյա թրքուհի Նազմիե Իլքիփընարը: Հետաքննությունը պարզեց, որ Նազմիեին սպանել էին հարազատ եղբայրը՝ Աբդուլահը, հայրը՝ Մուսթաֆան և ազգականներից մեկը: Պատճառն այն էր, որ Նազմիեն հրաժարվում էր գլխաշոր կապել, սովորում էր ֆրանսերեն, լողում էր լողավազանում, հագնում էր սպորտային կոշիկներ և չէր ցանկանում ամուսնանալ հոր ընտրած թեկնածուի հետ: Մեկ տարի անց ձերբակալված եղբայրը դատապարտվեց ցմահ, հայրը և ազգականը՝ 20 տարվա ազատազրկման[1]: Թուրք աղջկա ողբերգությունը լայն արձագանք ստացավ Ֆրանսիայում: Հրապարակումներով հանդես եկան «Լը Մոնդը», «Լիբերասիոնը», «Լը մոնդ դիպլոմաթիքը»: «Ֆրանս 2» հեռուստաալիքը նկարահանեց ֆիլմ՝ «Սպանել հանուն պատվի»[2]:

Մի շարք թուրք ընտանիքներ հրապարակայնորեն աջակցություն հայտնեցին մարդասպաններին՝ հայտարարելով, թե դա պատվի հարց էր[3]: «Հանուն պատվի յուրաքանչյուրը կարող էր նույնն անել, աղջկան սպանելը տեղին էր»,- ասում է ֆիլմում տեսագրված մեկ ուրիշ ֆրանսաբնակ թուրք, որի դուստրը Նազմիեի ընկերուհին էր:

«Ինտեգրացիայի ակնհայտ նշանները Նազմիեի ընտանիքում համարեցին անպատիվ արարք»,- գրեց ֆրանսիական հեղինակավոր «Լը մոնդ դիպլոմաթիքը»[4]: 15-ամյա Նազմիեի ողբերգությունը ևս մեկ անգամ մեջտեղ բերեց մեր ուսումնասիրության համար կարևոր այն հարցը, թե արդյոք իրատեսական է ակնկալել, որ

[1] "En bref meurtre de colmar: réclusion criminelle à perpétuité pour l'assassin d'une adolescente turque", "Le Monde", 06.12.1994, www.lemonde.fr

[2] "Au nom de l'honneur", "Liberation", 22.03.1997, www.liberation.com.tr, // "L'honneur perdu de la famille Ilikpinar Aux assises du Haut-Rhin, les parents et le frère d'une adolescente turque répondent de son meurtre en 1993", "Le Monde", 02.12.1994, www.lemonde.fr, // "Au nom de l'honneur, l'affaire Nazmiye", "Le Monde Diplomatique", հունիս 1997, էջ 22-23:

[3] "Plus Turcs que Turcs", 16.10.2004, http://www.info-turc.org/article424.html

[4] "Au nom de l'honneur, l'affaire Nazmiye", "Le Monde Diplomatique", հունիս 1997, էջ 22-23:

Եվրոպայում հաստատված միլիոնավոր էթնիկ թուրքերն ինտեգրվելու են եվրոպական հասարակությանը, թե հակառակը՝ հակադրվելու են՝ դառնալով «դանդաղ գործողության ռումբ»:

Ֆրանսիայի թուրքական համայնքի աշխատանքի արդյունք պետք է համարել երկրում Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանների պղծման դեպքերը: Լիոն քաղաքի հուշարձանի վրա մերժողական բնույթի գրություններ են հայտնվել արդեն 2 անգամ, իսկ Փարիզի մերձակա Շավիլ քաղաքի հայկական հուշարձանը 2006-ի հոկտեմբերի 15-ին պարզապես անհետացավ: Ուշագրավ է, որ դեպքից ընդամենը 3 օր առաջ Ֆրանսիայի խորհրդարանն ընդունել էր Հայոց ցեղասպանության մերժողականությունը քրեականացնող օրինագիծը: «Շատ տարօրինակ է, որ հուշարձանն անհետացավ խորհրդարանում քվեարկությունից անմիջապես հետո»,- լրագրողներին հայտարերել էր Շավիլի հայկական եկեղեցու հոգևորական Ստեփան Թոփալյանը[1]:

Կարճ ժամանակ անց Ֆրանսիայի թուրք գործարարների միության նախագահ Մուրադ Էրջանը դժգոհություն հայտնեց, թե Հայոց ցեղասպանության մերժողականությունը քրեականացնող օրինագծի դեմ ֆրանսաբնակ թուրքերի հակազդեցությունը չնչին էր: «Ճնշում գործադրելու համար պետք է կազմակերպվել: Լոբբինգը հնարավոր է միայն համապատասխան մարմիններ ձևավորելու դեպքում»,- նշեց Էրջանը: Դժգոհելով, որ Ֆրանսիայի մամուլն ընդհանրապես չհետաքրքրվեց տեղացի թուրքերի կարծիքով, թուրք գործարարը հայտարարեց, թե Ֆրանսիայի թուրքերը միասնական չեն[2]:

Սակայն արդեն 2008-ի մարտի ՏԻՄ ընտրություններին Ֆրանսիայի թուրքերը հանդես եկան որպես շատ ավելի կազմակերպված ուժ, ինչի մասին մանրամասն կներկայացնենք ստորև: Թուրքիայի վարչապետ Էրդողանը Մեծ եղեռնի մերժողականության քրեականացման առիթով հայտարարեց. «եթե ես Ֆրանսիայում մերժեմ ցեղասպանությունը՝ արդյո՞ք կձերբակալվեմ»:

[1] "Sözde soykırım anıtı çalındı", "Zaman" 15.10.2006.
[2] "Fransa'daki Türkler'den özeleştiri: etkisiz kaldık", "Zaman", 24.10.2006.

Հիշենք, որ 2007-ի ապրիլի 22-ին տեղի ունեցած Ֆրանսիայի նախագահական ընտրություններին թեկնածուներից սոցիալիստ Սեգոլեն Ռուայալը հայտարարել էր, որ ընթացք է տալու օրինագծի վերջնական հաստատմանը: Ի դեպ, Ռուայալի ամուսինը՝ Ֆրանսուա Օլանը, բուն օրինագծի հեղինակն է: Թուրքական կողմը քարոզչական աշխատանքով փորձում էր սոցիալիստական թևի նկատմամբ ճնշում բանեցնել՝ սպառնալով, որ թե՛ Ռուայալը և թե՛ Սոցիալիստական կուսակցությունը կորցնում են Ֆրանսիայի թուրքերի քվեները: 2007-ի Ֆրանսիայի նախագահական ընտրությունների օրերին արդեն նկատելի էր թուրքական համայնքի քաղաքական որոշակի ակտիվացումը:

«Սոցիալիստական կուսակցությունը, որին թուրքերը սատարում են վերջին տասնամյակի ընթացքում, կորցնում է աջակցությունը, քանի որ սատարում է Հայոց ցեղասպանության օրինագծին: Մեր կողմից հարցման ենթարկված 50 թուրքերի 75 տոկոսը նշել է, որ թեև ավանդապես եղել են ձախակողմյան կուսակցությունների աջակիցներ, բայց քվեարկելու են այլոց օգտին: Գուսենվիլ քաղաքի խորհրդի անդամ, սոցիալիստ Սնգի Քարամանը հաստատել է, որ թուրքերը խուսափում են իրենց կուսակցությունից»,- գրում է թուրքական օրաթերթի փարիզյան թղթակիցը[1]:

Հայոց եղեռնի հարցում մերժողական կեցվածք դրսևորելու պատճառով թուրք քաղաքական գործչի կարիերայի սահմանափակման վերջին դրսևորումը 2008թ. հունվարին Լիոնի մերձակա Վիլորբան քաղաքի օրենսդիր մարմնում պատգամավորության թեկնածու, թրքուհի Սրմա Օրանին ընտրացուցակներից դուրս թողնելու նախաձեռնությունն էր: ՏԻՄ ընտրությունները տեղի ունեցան 2008թ. մարտի 16-ին: Սրմա Օրանը զբաղեցնում էր Կանաչների ընտրացանկի 4-րդ հորիզոնականը, իսկ Կանաչներն ընտրություններին մասնակցում էին Սոցիալիստական կուսակցության հետ համատեղ: Մինչդեռ սոցիալիստներն, ինչպես նշեցինք, թե՛ 1998-2001թթ. Մեծ եղեռնի ֆրանսիական ճանաչման և

[1] "Most Turks to vote for Bayrou in France as political landscape changes", 14.04.2007, www.todayzaman.com

թե՛ մերժողականությունը քրեականացնող օրինագծի հիմնական նախաձեռնողներն էին: Դրա հետ մեկտեղ, Վիլորբանի գործող քաղաքապետ, սոցիալիստ Ժան-Պոլ Բրեն 2001թ., Ֆրանսիայի խորհրդարանի պատգամավոր լինելով, Հայկական օրինագծի հեղինակներից էր և Ֆրանսիա-Հայաստան միջխորհրդարանական հանձնաժողովի անդամ[1]: Վերջինս և Վիլորբանի քաղաքային խորհրդի անդամ, սոցիալիստ Մովսես Սինանյանը բարձրացրին հարց, թե արդյոք պատգամավորության թեկնածու Սրմա Օրանն ընդունում է Հայոց ցեղասպանությունը: Քաղաքապետը թրքուհի գործչին ուղղակի ասաց, թե ընտրվելու դեպքում 6 տարի պաշտոնավարման ընթացքում ապրիլի 24-ին պարտավոր է այցելել Լիոնի Մեծ եղեռնի ցեղասպանության զոհերի հուշարձան և խոսել լրագրողների հետ[2]: Սակայն Սրմա Օրանը հրաժարվում էր ընդունել Մեծ եղեռնի փաստը, թուրքական տարածված խուսափողական մարտավարությունը կիրառելով՝ նշում, թե «պատրաստ է պատմական երկխոսության»: Սա՝ այն դեպքում, երբ անձամբ մասնակցել էր 2006թ. մարտի 18-ին Լիոնում թուրքերի կազմակերպած մերժողական հանրահավաքին, որն ավարտվել էր հայ և ֆրանսիացի երիտասարդների հետ բախումներով: Այս հավաքին, ըստ Վիլորբանի քաղաքապետի, ներկա էին նաև թուրքական ծայրահեղական «Գորշ գայլեր» կազմակերպության անդամներ:

Արդյունքում՝ Սրմա Օրանը դուրս թողնվեց հետագա ընտրարշավից: Պնդելով, որ իր հանդեպ իրականացվել է խտրականության քաղաքականություն, նա բողոքով դիմեց Խտրականության դեմ պայքարի բարձրագույն խորհուրդ: «Ակոսի» լրագրողի հետ զրույցում Օրանը նաև դժգոհել էր Մեծ եղեռնի զոհերի հուշարձանի նշագրման առիթով: Հուշարձանի վրա գրված է. «1915թ. երիտթուրքերի կողմից ցեղասպանության ենթարկված հայերի հիշատակին», մինչդեռ Օրանը պահանջում էր, որ «երիտթուրքեր»-ը փոխարինվի «Միություն և առաջադիմություն» կուսակցության անվամբ, քանի որ դրանում բացակայում է «թուրք» բառը[3]: Պարզապես

[1] "Villeurbanne: des associations turques et les Verts accusent scandaleusement le maire PS Jean-Paul Bret de racisme", "Nouvelles d' Armenie", էջ 40-42, N 139, Mars 2008.
[2] "Seçilme hakkım elimden alındı", "Agos", 01.02.2008, էջ 4:
[3] "Sırma Oran Ayrımcılıkla mucadele kurulu'na başvurdu", "Agos", 08.02.2008, էջ 6:

հավելենք, որ «երիտթուրքեր» բառակապակցությունը կիրառվել է 20-րդ դարասկզբին, լայն տարածում գտել հատկապես Ֆրանսիայում և կիրարկելի է նաև մերօրյա թուրքական պատմագրության մեջ: 2010թ. տարեմուտի օրերին հրապարակված վճռի համաձայն՝ Սրմա Օրանը տանուլ տվեց դատավարությունը՝ հայտարարելով, որ կդիմի արդարադատության միջազգային ատյաններին[1]:

Իր հերթին, քաղաքապետ Ժան-Պոլ Բրեն մամուլում հայտարարեց, որ իր նախաձեռնությունն ուղղված էր ոչ թե Սրմա Օրանի անձի, այլ այն մտածելակերպի դեմ, որն անհարիր է ժողովրդավարական եվրոպական արժեքներին: «Գիտեմ, որ Անկարան մերժողականության քաղաքականությունն իրականացնում է իր դեսպանատների միջոցով: Պետք չէ ակնկալել, թե ես կընդունեմ, որ ընտրացանկում ներառված թեկնածուներն, անորոշ պատասխանների հետևում թաքնվելով, խուսափեն հստակ դիրքորոշումից: Միևնույն ցանկի թեկնածուները պետք է կիսեն միևնույն արժեքները»,- հայտարարել էր Բրեն[2]: Փոքր-ինչ տարօրինակ է Սրմա Օրանի այս ընդգծված մերժողական կեցվածքը՝ հաշվի առնելով, որ նրա հայրը՝ Բասքըն Օրանը, հայտնի է որպես ազատամիտ հայացքների տեր լրագրող և մտավորական, մասնակցել է Մեծ եղեռնի 90-ամյակի առիթով Երևանում կազմակերպված միջազգային գիտաժողովին, աշխատակցում է պոլսահայ «Ակոս» թերթին:

Կատարվածի առիթով հայտարարությամբ հանդես եկավ *“COJEP International”* կամ Ֆրանսիայի երիտասարդական բազմամշակութային խորհուրդ կազմակերպությունը: Չնայած անվանումից նկատելի չէ, բայց այն իրականում զուտ թուրքական կառույց է, որը, հիմնադրվելով Ֆրանսիայում, աստիճանաբար գրասենյակներ է բացում եվրոպական պետություններում: Բուն *“COJEP”* կառույցի մասին մանրամասն՝ ավելի ստորև:

“COJEP”-ի ղեկավար Ալի Գեդիքօղլուն նշեց, թե «կատարվածի համար մեղադրում է ոչ միայն հայկական համայնքին, այլև՝ թուրքականին, որը մենակ թողեց թրքուհուն»: «Մեր կազմակերպու-

[1] “Soykırım sorusu ayrımcılık" diyen Türk "haksız", www.cnnturk.com, 06.01.2010.
[2] “Önemli olan kimlik değil, zihniyettir”, “Agos” gazetesi, էջ 6, 08.02.2008:

թյունում կան երիտասարդներ, որոնք մշտական ճնշման տակ են այն տարածաշրջաններում, ուր հայ ազգաբնակչություն կա: Վիլորբանի սկանդալը բացառություն չէր»,- հայտարարեց Գեղիքօղլուն[1]:

Նշենք, որ 2008թ. մարտին փակվեց ֆրանսիական «20 ռոպե» թերթի ինտերնետային կայքի *«Turquie News – Türkiye haberleri»* բլոգը: Թուրքիայի կայքերը նշում էին, որ բլոգը փորձել էր սատարել Սրմա Օրանին, ինչի արդյունքում հայկական համայնքի ճնշման ներքո թերթի ղեկավարությունը մարտ ամսվա կեսերից կասեցրեց թուրքալեզու բլոգի հրապարակումը[2]:

Այսքանով հանդերձ, 2008թ. մարտի 18-ին ՏԻՄ ընտրություններին ֆրանսաթուրքերը հասան աննախադեպ հաջողությունների: Ընդհանուր առմամբ թեկնածություն էին առաջադրել 176 (այլ տվյալներով՝ 185) էթնիկ թուրքեր, որոնցից 52-ը (այլ տվյալներով՝ 57) հասան հաջողության[3]: Սակայն Ֆրանսիայի խորհրդարանում և Սենատում թուրք օրենսդիրներ ներկա դրությամբ չկան: Բավական ուշագրավ է թուրքական *NTV* հեռուստաալիքի վերլուծականը էթնիկ թուրքերի քաղաքական ակտիվության աճի մասին. «Թուրքիայի ԵՄ անդամակցության հարցում Ֆրանսիայի ընդդիմադիր կեցվածքը և Հայկական պնդումներ պարունակող օրինագծերի առաջադրումն առաջացրել են թուրք համայնքի հուսախաբությունը, որը կարևոր դեր է ունեցել թուրքական ծագում ունեցող թեկնածուների թվի աճի հարցում»[4]:

Դրա կողքին, թուրքական հեռուստաալիքը նշում է թուրք քաղաքական գործիչների թվաճին նպաստող մեկ այլ պայման. ավելացել է կրթված թուրք էմիգրանտների թիվը:

Կարելի է զուգահեռ ենթադրել, որ իրականում այս 2 իրողություններն ունեն տրամաբանության որոշակի տարրեր, բայց թուրքական կայքը չի բացահայտում մեկ իրողություն. ո՞վ է կանգնած այս ամբողջ գործընթացի հետևում: Որքան էլ թուրքական համայնքը խոցված լիներ ԵՄ-Թուրքիա բանակցային գործընթացում և Մեծ

[1] "Fransa'daki Ermeniler, Türk siyasetçi icin "ikna odasi" kurdu", "Zaman", 28.01.2008.
[2] "Fransa'da radikal Ermeniler cadı avına başladı", www.ntvmsnbc.com, 19.03.2008.
[3] "Fransa'da 52 Türk aday seçildi", www.ntvmsnbc.com, 18.03.2008.
[4] Նույն տեղում:

եղեռնի հիմնախնդրում Փարիզի կեցվածքից, պետք է լիներ մի ուժ, որը կկազմակերպեր թուրքական համայնքի ակտիվացումը, կխրախուսեր թուրք գործիչների թվի ավելացումը: Առանց «կուլիսային դիրիժորի» հնարավոր չէ, որ նմանօրինակ ռազմավարական կարևորության գործընթացները զարգանան արագացված տեմպերով և նպատակային քայլերով: Ֆրանսիայի արևմուտքում գործող Արևմտյան կազմակերպությունների ասոցիացիա թուրքական կառույցը միավորում է տարածաշրջանում գործող 10-ի չափ թուրքական կազմակերպություն: Կառույցի նախագահ Համիդ Բուլութի խոսքով՝ «տարածաշրջանում բնակվում է 14 հազար թուրք, որոնցից 2008թ. ՏԻՄ ընտրություններին մասնակցել է 5 հազարը: Մինչդեռ նախորդ ընտրություններին մասնակցել էր 800-ը»[1]: Մինչև 2008թ. Ստրասբուրգի քաղաքային խորհրդում չկար ոչ մի թուրք պատգամավոր, իսկ 2008-ի մարտից հետո 3 թուրք անցավ խորհրդարան:

Փարիզի հյուսիսում գտնվող Կլիշի սո-Բուա արվարձանի խորհրդարանում մինչև 2008թ. պաշտոնավարում էր միայն 1 թուրք, մարտից հետո նրան ընկերակցեցին ևս 3-ը: Հետաքրքիր է, որ Կիշի սո-Բուայում մահմեդականները զգալի թիվ են կազմում: Այստեղ 2005-ին սուր բախումներ են տեղի ունեցել ոստիկանության և աֆրիկացի մահմեդական սևամորթների միջև: Նման թաղամասերում ազգությամբ ֆրանսիացիների հաղթանակը քիչ հավանական էր, իսկ մահմեդական թուրքերի հաջողությունները՝ առավել հնարավոր: Այսպիսով, նկատելի է, որ թուրք քաղաքական գործիչները որոշակի նախահաշվարկներ էին կատարել: Ընտրությունների ընթացքում, թուրքական մամուլի վկայությամբ, մի կողմ թողնելով գաղափարական տարակարծությունները, ազգությամբ թուրք թեկնածուներն աշխատել են միասնական ճակատով: «Բելթյուրք» կայքէջի հրապարակումից երևում է, որ Կլիշի սո-Բուայի թուրք քաղաքական գործիչները, մրցակից քաղաքական կուսակցությունների անդամներ լինելով, աջակցել են միմյանց ընտրությունների ժամանակ: «Հայրիե Արբուքանը հայտարարել է, որ իր համար ուղեցույց է եղել Ջումհուր Գյունեշլիքը»,- գրում է

[1] "Zoom sur la presse Turquie", 23.04.2007, www.gamkonline.com

«Բելթյուրքը»: Սա՝ այն դեպքում, երբ Արբուքանը սոցիալիտ է, իսկ Գյունեշլիքը՝ իշխող *UMP* կուսակցությունից[1]:

Եվ մի փոքր մանրամասն ընտրված թուրքերի քաղաքական կողմնորոշումների մասին. լուսանկարների բաժնում ներկայացված է ընտրություններում հաղթած թեկնածու Շուայբի Չընգըն: Վերջինիս հետևում կանգնած երիտասարդները մատներով պարզել են «Գորշ գայլեր» ծայրահեղական ահաբեկչական կազմակերպության նշանը: Իսկ Գուսենվիլում պատգամավոր Գենջեբայ Չաքարը միաժամանակ *MHP*-ին կից գործող *"Ülkü ocakları"*՝ «Գաղափարապաշտների օջախներ» ծայրահեղական կազմակերպության գլխավոր տնօրենի տեղակալն է և մշակութային հարցերով պատասխանատուն[2]: Այս կառույցի կայքի առաջին էջին Քեմալ Աթաթուրք-Ալփարսլան Թյուրքեշ-Դևլեթ Բահչելի եռյակի նկարն է[3]: *"Ülkü ocakları"*-ն այն ուժն է, որի ստամբուլյան գրասենյակը սպառնում էր պոլսահայ խմբագրապետ Հրանտ Դինքին, Օրհան Փամուքին որակում էր «արևմուտքի առջև ստորացած դավաճան», բողոքի հանրահավաքներ էր կազմակերպում Ստամբուլի Հունաց պատրիարքարանի առջև, իսկ Թուրքիայի «Քանալ թյուրք» հեռուստաալիքով «Արարատ» ֆիլմի ցուցադրության առիթով *Ülkü ocaklari*-ն հայտարարեց. «Նրանք, ովքեր հանդգնում են ցուցադրել այս ֆիլմը, չպետք է մոռանան, որ թուրքերի նկատմամբ թշնամական արարքների համար պետք է հատուցել»[4]:

MHP ծայրահեղական կուսակցության և «Գորշ գայլերի» հետ ասոցիացված վերոնշյալ պատգամավորները միաժամանակ Ֆրանսիայի թուրքական համադաշնության ղեկավար անդամներ են[5]: Համադաշնությունը միավորում է Ֆրանսիայի 42 թուրքական կազմակերպություններ: Կառույցի գլխավոր տնօրենն է Օսման Սարըյուսուֆը, տեղակալը՝ Հասան Հալիլօղլուն: Սուայբի Չընգըն վարչական խորհրդի կազմում է: Ֆրանսիայի թուրքական համա-

[1] "Fransa belediye seçimlerinde 57 Türk kazandı" 18.03.2008, www.belturk.com
[2] http://www.francoturc95.com/3.kongre.htm
[3] http://www.ulkuocaklari.org.tr/
[4] "Turkish extremists threaten realese of Egoyan film", www.cbc.ca, 06.01.2004.
[5] http://www.francoturc95.com/3.kongre.htm

դաշնությունը ևս իր հերթին ասոցիացված է ազգայնական *MHP* կուսակցության հետ:

Ֆրանսիայի թուրքական կառույցներից աչքի ընկնող կազմակերպություն պետք է համարել նաև վերոնշյալ *"COJEP"*-ը կամ Ֆրանսիայի երիտասարդական բազմամշակութային խորհուրդը: Այն հիմնվել է 1985-ին, սկզբում գործում էր «Երիտասարդ թուրքեր» հնչեղ անվամբ, Փարիզի Բելֆոր թաղամասում: 1989-ին վերանվանվեց Ֆրանսիայի երիտասարդ թուրքերի բազմամշակութային և սպորտային ազգային միություն, իսկ 1992-ից գործում է որպես *"COJEP"*: Կենտրոնակայանը Ստրասբուրգում է, գրասենյակներ ունի Լիոն, Կոլմար, Սելեստաթ քաղաքներում, նաև մեկ տասնյակից ավելի պետություններում՝ Թուրքիա, Գերմանիա, Բելգիա, Հոլանդիա, Լյուքսեմբուրգ, Բոսնիա-Հերցեգովինա, Մոնտենեգրո, Բուլղարիա, Մակեդոնիա, Ալբանիա, Կոսովո և Ադրբեջան: Թեև պաշտոնապես կոչված է զբաղվելու սպորտային և մշակութային խնդիրներով, սակայն ակնհայտ քաղաքականացված կառույց է, Ֆրանսիայում Հայկական հարցի օրակարգ գալու հետ մեկտեղ ակտիվանում է: 2009-ի սեպտեմբերին Գերմանիայի Դյուսելդորֆ քաղաքի մերձակա Դույսբուրգ քաղաքում կառույցը կազմակերպել էր խորհրդաժողով Եվրոպայի թուրքական համայնքների ակտիվացման թեմայով:

Ֆրանսիայի թուրքական կազմակերպություններից ակտիվ է *www.tetedeturc.com*-ը: Կայքում մեծ ծավալի մերժողական բնույթի տեղեկություններն ավելի ստույգ ապատեղեկություններ են, նաև անդրադարձ կա Ղարաբաղյան հակամարտությանը, Խոջալիի դեպքերին, 70-80-ականներին արտերկրում իրականացված հայկական զինյալ պայքարի թեմային: Կայքը հատուկ անդրադարձ ունի «Կեսգիշերային ճեպընթաց» ամերիկյան խաղարկային ֆիլմին: 1978-ին նկարահանված ամերիկա-բրիտանական ֆիլմը ամերիկացի երիտասարդ Բիլի Հեյեզի կյանքի ողբերգությունն է, որը, ձերբակալվելով Ստամբուլի օդանավակայանում, թուրքական դատարանի կողմից դատապարտվում է նախ 4 տարվա, ապա՝ ցմահ ազատազրկման: 1977-ին Բիլի Հեյեզը հեղինակել է «Կեսգիշերային ճեպընթաց» գիրքը, որի հիման վրա 1978-ին սցենարիստ Օլիվեր Սթոունը և պրոդյուսեր Ալան Փարքերը նկարահանեցին հայտնի

խաղարկային ֆիլմը: Թուրքական մերժողականությունը պնդում է, թե գրքի և ֆիլմի միջև տարբերություններ կան: Թերևս, դժվար գտնվի ֆիլմ, որը միանշանակ արտացոլի հիմքում ընկած գիրքը: Այնուհանդերձ, գրքի հեղինակը երբևէ չի հայտարարել, թե Թուրքիայում բանտային պայմաններն այնպիսին չէին, ինչպես արտացոլված է ֆիլմում: 2001-ին Ստամբուլում այս ֆիլմի վերաբերյալ զրուցում էինք մի հայ մտավորականի հետ, որը ժամանակին արգելափակված է եղել Թուրքիայում: Նրա խոսքով՝ «Կեսգիշերային ճեպընթացը» շատ ավելի մեղմ ձևով է պատկերում թուրքական բանտը, քան իրականում է:

Ֆրանսիայի հարյուրի չափ թուրքական հասարակական կազմակերպություններից մի քանիսը գրասենյակներ ունեն երկրի տարբեր քաղաքներում, մասնավորապես Թուրք աշխատավորների աջակցության և մշակութային միությունը գործում է Կրուա Բլանշ (տնօրեն՝ Իսրաֆիլ Աթաք), Օյոնաքս (տնօրեն՝ Վեյսել Բագ), Բելգաղդ (տնօրեն՝ Ալի Քայմազ) և այլ քաղաքներում, Թուրքական մշակութային միությունը՝ Վիղիա (տնօրեն՝ Մեթին Յուքսել), Տղեվուա (տնօրեն՝ Բահադին Ադսըզ), Բուղգանոֆ (Մեհմեթ Ալաբայ), Մոնտելիմար (տնօրեն՝ Ահմեթ Քոչաք), Թուրք աշխատավորների աջակցության և համագործակցության միությունը՝ Բուղգ ան Բղեսե (տնօրեն՝ Նիյազի Շահին), Գրենոբլ (Աբդյուլքադիր Ջիդալ) և Անեսի (Մեհմեթ Յաքութ) քաղաքներում[1]:

Վոլվիչում գործում է Կապադովկիայի թուրքական սպորտային և մշակութային միությունը (տնօրեն՝ Նիյազի Յալչընն), Մեյսոնում «Բլյու-բլանշ թյուրք» միությունը (Ալի Քորքմազ), հայտնի են Լիոն քաղաքի և շրջակայքի թուրք կանանց միությունը (տնօրեն՝ Ջեմիլե Էքին), Մոնթերեյի թուրքական մշակութային միությունը (*http://cultureturque77.free.fr),* «Աթաթուրքիա» կազմակերպությունը՝ *www.ataturquie.asso.fr,* «Հոդրի Մեյդան» տեղեկատվական ցանցը՝ *www.hodrimeydan.net*[2]:

http://www.paristurc.com կայքում կենտրոնացված են տեղեկություններ Փարիզի թուրքական համայնքի, թուրքական սրճա-

[1] http://cojep.free.fr/dernekler.htm
[2] http://www.hodrimeydan.net/kategori.asp?CatID=17

բանների, փաստաբանների, մշակութային միությունների մասին, գործում է *http://france-turquie.blogspot.com* բլոգը, որտեղ տեղադրված են լինքեր դեպի Ֆրանսիայի թուրքական կազմակերպությունները, ինչպես նաև լինք դեպի ֆրանսալեզու *http://genocideazeri.free.fr* ադրբեջանական կայքը, որը ներկայացնում է կեղծ տեղեկություններ Խոջալիի դեպքերի վերաբերյալ[1]: *http://www.turquie-news.fr/* տեղեկատվական կայքում Թուրքիայի խորհրդանիշների բաժնում տեղադրված են Արարատ լեռը (ինչպես որ պատկերվում է Թուրքիայի կողմից) և Աղթամարի Սբ. Խաչ եկեղեցին:

2009-ի հուլիսից մինչև 2010-ի մարտ ամիսը Ֆրանսիայում տեղի ունեցավ Թուրքիայի կիսամյակը: Փարիզի հռչակավոր Թուիլրի պուրակում 2009-ի ամռանը, հուլիսի 17-ից մինչև օգոստոսի 7-ը, կազմակերպվել է «Թուրքական սրճարան» (*Le Cafe de Turc),* որտեղ հնարավոր էր ճաշակել խորտիկներ, քաղցրավենիք և խաղալ նարդի (թուրքական տարբերակով՝ թավլու)[2]:

Ֆրանսիայում հռչակվել է *«Fake Oddity»* ռոք խումբը, որի կազմում է ազգությամբ թուրք երգիչ Ֆայիք Սարդաղը[3]: Ֆրանսիական բանակի խաղաղարար ուժերի կազմում է ծառայում էթնիկ թուրք սպա Իսմայիլ Յալչընքայան[4]:

Այսպիսով, Ֆրանսիան ևս պատկանում է այն պետությունների թվին, ուր ընթացքի մեջ է թուրքական համայնքի շեշտակի ակտիվացումը: Վերոնշյալ *"COJEP"*-ի ղեկավար Գեղիքօղլուն հայտարարել է. «Ֆրանսիական քաղաքականության երկնակամարում առաջիկա տարիներին տեսանելի կլինեն նոր թուրք քաղաքական գործիչներ»:

«Տեղական ինքնակառավարման մարմիններում հաջողությունների հասած անձինք վճռական են առաջիկա տարիներին ինքնադրսևորվելու և իրենց խոսքն ասելու Ֆրանսիայի քաղաքական ասպարեզում»,- գրում է «Բելթյուրքը»:

Իսկ քաղաքական ասպարեզում էթնիկ թուրքերի սրընթաց առաջխաղացման և շեշտակի հաջողությունների վառ օրինակը, միանշանակ, Բուլղարիայում է:

[1] http://genocideazeri.free.fr/
[2] http://www.hodrimeydan.net/detay.asp?CatID=14&CID=1365
[3] "Turkish cultural season in France viewed from Lyon" www.eudebate.com, 22.10.08.
[4] "Türk asıllı Fransız asker", "Hürriyet", 07.04.2007.

Բուլղարաթուրքեր. ամենահաջողակ «սփյուռքը»

Բուլղարաթուրքերը կարող են դիտարկվել որպես առանցքային թեմա Թուրքիայից դուրս գտնվող թուրքական համայնքների և թուրք քաղաքական գործիչների գործունեության առումով: Բուլղարիայում տեղի թուրքական համայնքի քաղաքական գործիչները 8 տարի Բուլղարիայի կառավարող կոալիցիայի անդամներ են եղել, տասնյակ բուլղարաթուրքեր խորհրդարանում են գրեթե 20 տարի: Բուլղարիան Թուրքիայից բացի միակ պետությունն է, որտեղ էթնիկ թուրքերը պետական կառավարիչներ են (շատ ավելի թույլ արտահայտված քաղաքական ներկայություն կարճ ժամանակահատված նկատելի էր Մակեդոնիայի կառավարությունում): Եվրոպական *www.axisglobe.com* ռազմավարական վերլուծությունների հանդեսը բուլղարաթուրքերին բնորոշում է որպես «Արևելյան Եվրոպայի ամենահաջողակ ազգային փոքրամասնություններից մեկը»[1]:

Բուլղարիայի բնակչության թիվը 8,5 միլիոն է, որից 800 հազարն էթնիկ թուրքեր են՝ այսպիսով կազմելով բնակչության 9,4 տոկոսը: Մինչդեռ Բուլղարիայի 240 տեղանոց խորհրդարանն ունի 27 էթնիկ թուրք պատգամավոր, այսինքն՝ նրանք զբաղեցնում են խորհրդարանական աթոռների մոտ 11 տոկոսը: Փաստացի էթնիկ թուրքերը համամասնորեն ավելին են խորհրդարանում, քան երկրում թուրք բնակչության մասնաբաժինն է:

1989-ին, երբ մոսկովյան «պերեստրոյկայի» հովերը հասան նաև Բուլղարիա, սոցիալիստական երկիրը բացեց Թուրքիայի սահմանադռները՝ հունիսի 3-ին արտոնելով բուլղարաբնակ թուրքերի արտագաղթը Թուրքիա: Ընդամենը 2,5 ամսվա ընթացքում Բուլղարիայից Թուրքիա փոխադրվեց 311 հազար 862 (!) էթնիկ թուրք, այսինքն՝ միջինը օրական 4000-ի չափ: Օգոստոսի 21-ին բուլղարաթուրքերի առջև դռները կողպեց… Անկարան, քանի որ, գործող վարչապետ Թուրգութ Օզալի խոսքով՝ «թուրքական պետությունն ի վիճակի էր ընդունել տարեկան 30 հազար քաղաքացիներից ոչ ավելի»: Մինչդեռ Բուլղարիայի կոմունիստական ղեկավար Տոդոր Ժիվկովը հայտարարում էր, որ «բուլղարաթուրքերի

[1] "Bulgarian Turks: From Assimilation to Power", Can Karpat, www.axisglobe.com, 20.11.2005.

թիվն աճում է տարեկան 15-16 հազարի սահմաններում, և Սոֆիան շահագրգռված է մինչև կես միլիոն թուրքերի էքսպատրիացիայի հարցում, հակառակ դեպքում 20 տարում Բուլղարիային սպասվում է Կիպրոսի ճակատագիրը»[1]: Թերևս, ճիշտ այսօրինակ հաշվարկներով, նպատակ ունենալով կանխել Բուլղարիայի «պարպումը» թուրքերից, վարչապետ Օզալը փակեց սահմանադռները: Ժամանակը ցույց տվեց, որ թուրք քաղաքական ղեկավարի հաշվարկներում իրատեսական տարր կար. արդեն մի քանի տարի անց բուլղարաթուրքական խոշոր և ակտիվ համայնքը Անկարային հնարավորություն կտա որոշակի ազդեցություն ձեռք բերել Բուլղարիայում, ինչը, մասնավորապես, նկատելի է նաև Հայոց ցեղասպանության բուլղարական ճանաչումը տեղի թուրքերի ռեսուրսով պարբերաբար խափանելու դեպքում: Միաժամանակ, բուլղարաթուրք քաղաքական գործիչ Ադեմ Քենանի առաջարկը՝ «Բուլղարիան թուրքական և բուլղարական հատվածների մասնատելու վերաբերյալ», վկայում է նաև, որ Տոդոր Ժիվկովի տեսությունն ամբողջովին հիմնազուրկ չէր: «Եթե 1989թ. արտագաղթը չլիներ, այսօր ընդհանուր բնակչության 20 տոկոսը թուրքեր կլինեին»,- ակնհայտ ափսոսանքով նշում է բուլղարաթուրք քաղաքական գործիչ Չեթին Քազաքը[2]:

Բուլղարիայում կան մի շարք թուրքական քաղաքական կազմակերպություններ, բայց բուլղարաթուրքերը միավորված են նախ և առաջ Իրավունքների և ազատությունների շարժում (ԻԱՇ) քաղաքական կուսակցության մեջ, որի հիմքը դրվեց սոցիալիստական ժամանակահատվածում: 1984-ի վերջին մի խումբ բուլղարաթուրքեր Ահմեդ Դողանի ղեկավարությամբ ձևավորեցին «Բուլղարիայի թուրքերի ազգային ազատության շարժում» ընդհատակյա կազմակերպությունը: Կառույցը քարոզչական, հասարակական շարժում ծավալեց հանուն բուլղարաթուրքերի շահերի պաշտպանության: Ուշագրավ է, որ բուլղարաթուրքերն այդ ժամանակահատվածում դիմում էին նաև ահաբեկչության մարտավարությանը: 1986թ. ամ-

[1] The Ethnic Turks in Bulgaria: social integration and impact on Bulgarian Turkish relations, 1947-2000, Lilia Petkova, Budapest, Economics.

[2] http://icinizdenbiri.blogspot.com Çetin Kazak

ռանը ընդհատակյա կազմակերպության զինված խմբակը գրավեց և պատանդ վերցրեց Սոֆիայի «Զլատնի Պիասացի» հյուրանոցի կենվորներին՝ առաջադրելով քաղաքական պահանջներ[1]: Մերօրյա թուրքական քարոզչությունը, որ զօրուգիշեր ահաբեկչության մեջ է մեղադրում իր հարևաններին, չի ցանկանում հիշել բուլղարաթուրքերի զինյալ գործողությունների մասին:

Սոցիալիստական վարչակարգի տապալումից հետո կառույցը դուրս եկավ ընդհատակից. վերանվանվեց Իրավունքների և ազատությունների շարժում կուսակցության և ծավալեց բուռն գործունեություն: 1990թ. հունվարի 4-ին Բուլղարիայի Վառնա քաղաքում շարժման ակտիվիստները գրանցեցին ԻԱՇ-ը (բուլղարերեն՝ *Движение за права и свободи;* թուրքերեն՝ *Hak ve Özgürlükler Hareketi):* Գրանցման պահին այն ուներ 33 անդամ, ներկայում՝ 68 հազար, ևս 24 հազար՝ երիտասարդական կառույցում[2]: Կենտրոնամետ լիբերալ ուղղվածությամբ ԻԱՇ-ը 1990թ. հունիսին տեղի ունեցած ընտրություններին 23 տեղ ստացավ այդ ժամանակ 400 պատգամավոր ունեցող բուլղարական խորհրդարանում, 1991-ի արտահերթ ընտրություններին՝ 24 տեղ (ընդ որում՝ ընդունված նոր սահմանադրության համաձայն, խորհրդարանական աթոռների թիվը նվազեցվել էր մինչև 240), 1994թ.՝ 15, 1997թ.՝ 19, 2001թ.՝ 21: Խորհրդարանում կար նաև 1 անկախ թուրք պատգամավոր՝ Օսման Ահմեթ Օքթայը: 2005-ի հունիսի 25-ին կուսակցության հաջողությունն ավելի տպավորիչ էր. այն ստացավ ընդհանուր քվեների 14,07 տոկոսը, խորհրդարան անցան ԻԱՇ 34 անդամ, որոնցից 2-ը՝ բուլղարացի, 32-ը՝ թուրք:

2001-2009թթ. ընթացքում ԻԱՇ-ը կոալիցիոն կառավարության կազմում էր. նախ՝ 2001-2005թթ. «Սիմեոն Երկրորդ. ազգային շարժում» կուսակցության հետ, ապա 2 կուսակցությունների հետ համատեղ՝ Բուլղարիայի սոցիալիստական կուսակցություն, «Սիմեոն Երկրորդ ազգային շարժում» և ԻԱՇ[3]: 2001թ. թրքուհի Էմել

[1] http://en.wikipedia.org/wiki/Movement_for_Rights_and_Freedoms
[2] http://www.dps.bg/cgi-bin/e-cms/vis/vis.pl?s=001&p=0368&g
[3] http://www.parliament.bg

էթեմը զբաղեցրեց փոխվարչապետի և բնական ռեսուրսների նախարարի, Նիհաթ Քաբիլը՝ գյուղատնտեսության նախարարի, Զնդեթ Չաքարովը շրջակա միջավայրի նախարարի պաշտոնը: Բուլղարիայի թուրքաբնակ շրջաններում ևս ԻԱՇ-ը հիմնովին իր ձեռքն առավ տեղական ինքնակառավարման գործը. 2001-2005թթ. 27 քաղաքապետեր և 654 գյուղապետեր նշված կուսակցությունից էին, 2005թ. հոկտեմբերին կայացած տեղական ինքնակառավարման հերթական ընտրություններում բուլղարաթուրքերը հաղթեցին 29 քաղաքներում[1]: Սա 2-ով ավելի է 2001-2005 ժամանակահատվածի համեմատ: Այդ տարիներին ԵԽԽՎ-ում Բուլղարիայի պատվիրակությունը գլխավորում էր ԻԱՇ-ից Լյութֆի Յունալը:

2004թ. մարտին Քրջաալի այցի ընթացքում Միացյալ Նահանգների դեսպան Ջեյմս Փերդյուն մտահոգություն հայտնեց կուսակցության մոնոէթնիկ լինելու կապակցությամբ: Ի պատասխան՝ կուսակցապետ Ահմեդ Դողանը հայտարարեց. «Դեսպան Փերդյուն ակնհայտ չի թարմացրել իր տեղեկությունները: Վերջին 2 տարիներին կուսակցության շարքերում էթնիկ բուլղարացիների չափաբաժինը հասել է 10 տոկոսի»[2]: Այն պայմաններում, երբ էթնիկ թուրքերը կազմում են ողջ հանրապետության բնակչության 10 տոկոսը, կուսակցության կազմում 10 տոկոս բուլղարացիների առկայությունը բավական խոսուն փաստ է: Պետք է նաև նշել, որ ԻԱՇ կազմում էթնիկ բուլղարացիների ներկայությունը վերջին շրջանում շարունակում է աճել:

Առկա են փաստեր, որ Բուլղարիայում թուրքական կուսակցության հաջողությունները նաև Անկարայի հովանավորության արդյունք են: Մասնավորապես, 2005-ի հուլիսյան ընտրություններին ավտոբուսներով Թուրքիայից Բուլղարիա են փոխադրվել երկքաղաքացիություն ունեցող թուրքեր, որոնք իրենց տեղամասերում մասնակցել են ընտրություններին (դժվար չէ կռահել, թե ում օգտին են քվեարկել նրանք)[3]:

[1] http://www.seeurope.net

[2] Radio Free Europe/Radio Liberty, Prague, Czech Republic, RFE/RL, Newsline, Vol. 8, No. 49, Part II, 15 March 2004, Vol. 8, No. 49, Part II, 15 March 2004.

[3] http://en.wikipedia.org/wiki/Movement_for_Rights_and_Freedoms#Other_Turkish_political_factions

2009-ի հուլիսի 7-ի խորհրդարանական ընտրություններին թուրքական կուսակցությունը 14,45 տոկոս քվե ստանալով՝ զբաղեցրեց 37 աթոռ, որոնցից 10-ը բաժին հասավ կուսակցության բուլղարացիներին[1]: Ներկայում ԻԱՇ-ն ընդդիմադիր դաշտում է: Վերջին տարիներին Բուլղարիայից, ինչպես նաև եվրոպական այլ պետություններից էթնիկ թուրք պատգամավորների առաջխաղացման ևս մեկ ուղղություն է Եվրախորհրդարանը, որի մասին մանրամասներ են ներկայացված առանձին բաժնով:

Միաժամանակ, 2009թ. ընտրություններին, նախորդի պես, Թուրքիայից ավտոբուսներով Բուլղարիայի քաղաքացի թուրքեր էին ուղարկվում Բուլղարիա, որպեսզի մասնավոր ընտրատարածքներում, ուր ԻԱՇ կողմնակիցների թիվը մեծ չէ, թուրքական «դեսանտի» շնորհիվ փորձ արվի ապահովել հաջողությունը: Այս դեպքում Բուլղարիայի «Ատակա» (բուլղարերենում, ինչպես և ռուսերենում նշանակում է գրոհ) կուսակցությունը թուրքական կողմի գործողությունների դեմ միջոցառում էր նախատեսել: Երբ թուրքերով բեռնված ավտոբուսները մոտեցան թուրք-բուլղարական «Կապիտան Անդրեևո» սահմանադռանը՝ նրանց դիմավորեցին «Ատակայի» ցուցարարները, որոնք կրում էին «Թուրքեր, վերադարձեք Անատոլիա», «Թուրքեր՝ դուրս» և այլ կարգախոսներ: «Ատակայի» ղեկավար Վոլեն Սիդերովը հայտարարեց, որ բուլղարաթուրքերի առաքումը Թուրքիայում կազմակերպվում է պետական մակարդակով[2]: Հատկանշական է, որ 2009-ի հուլիսյան ընտրություններին ԻԱՇ-ը նախապես ստացել էր ոչ թե 37, այլ 38 աթոռ, որոնցից 28-ը զբաղեցնում էին էթնիկ թուրքերը: Սակայն ավելի ուշ, 2010թ. փետրվարին, բուլղարական Կարգ, օրենք և արդարություն կուսակցության դիմումի հիման վրա Բուլղարիայի Սահմանադրական դատարանը վճռեց, որ Թուրքիայում Բուլղարիայի քաղաքացի թուրքերի քվեարկության ժամանակ 18 հազար 358 ձայն կեղծվել է: Իսկ քանի որ այս ձայները ԻԱՇ օգտին էին, կուսակցությունը

[1] Տե՛ս Բուլղարիայի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքը՝ http://rezultati.cik2009.bg/results/proportional/index.html

[2] "Seçime gelen Türklere Ataka'dan çirkin saldırı", www.bg-turk.be, 05.07.2009.

զրկվեց մեկ պատգամավորական տեղից, և բուլղարական Դորբիչ քաղաքից ընտրված Ռուշեն Մեհմեթ Ռիզան դուրս մնաց օրենսդիր մարմնից[1]:

Բուլղարիայում թուրքական համայնքի քաղաքական ակտիվության և ԻԱՇ գործունեության շնորհիվ է, որ խորհրդարանում հաստատուն կերպով մերժվում է Հայոց ցեղասպանության ճանաչման օրինագիծը: Դեռևս 1995թ. ապրիլի 20-ին բուլղարական օրենսդիրը խոսնակ Բլագովեստ Սենդովի գլխավորությամբ անդրադարձավ Հայոց ցեղասպանության հարցին: Սենդովն իր ելույթում հայտարարեց. «Ապրիլի 24-ին նշվելու է Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության 80-րդ տարելիցը: Ժամանակակից աշխարհում սա զանգվածային ցեղասպանության առաջին փորձն էր, որն իրականացնողների համար մեծ խայտառակություն է: Որպես քաղաքակիրթ եվրոպական երկիր, որը վավերացրել է ՄԱԿ Ցեղասպանության կոնվենցիան և Մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող բոլոր միջազգային համաձայնագրերը, նշում ենք այս տարելիցը, որպեսզի պաշտոնապես հայտարարենք. մենք կանենք առավելագույնը, որպեսզի այլևս երբեք և ոչ մի տեղ չկրկնվի ցեղասպանություն 21-րդ դարի նախաշեմին»[2]: Լսումները ճանաչմամբ չավարտվեցին, և արդեն խորհրդարանում «տնավորված» թուրքական կուսակցությունն այս, ինչպես նաև հետագա տարիներին անմասն չէր դրանից:

2006թ. հունվարի 7-ին խորհրդարանում շրջանառության մեջ դրվեց Հայոց ցեղասպանության դատապարտման օրինագիծը: 10 օր անց փաստաթուղթն ուղարկվեց խորհրդարանի արտաքին հարաբերությունների, մարդու իրավունքների ու կրոնական հարցերով հանձնաժողովներին: Փաստաթղթում նշվում էր, որ Օսմանյան կայսրությունը ցեղասպանություն է գործել նաև բուլղար ժողովրդի հանդեպ, ուստի «հայերի դեմ գործադրված ցեղասպանությունը նաև բուլղար ժողովրդի պատմության տեսանկյունից առանձին

[1] Bulgaristan: Anayasa Mahkemesi Türkiye'de kullanılan oylardan 18 bin 358'ini iptal etti, www.kircaalihaber.com, 17.02.2010.

[2] "The Armenian Genocide. The World Speaks Out, 1915-2005", USA, California, 2005, էջ 35:

խորհուրդ է պարունակում»: «Եթե հաշվի առնենք (Եղեռնի ճանաչման- Հ.Ն.) միջազգային վիճակը, Բուլղարիան Հայոց ցեղասպանության ճանաչման գործում նույնիսկ ուշացել է»,- նշված էր օրենսդիր նախաձեռնության մեջ[1]: ԻԱՇ-ից պատգամավոր Ռեմզի Օսմանն այս առիթով թուրքական մամուլին ասաց, թե «ճանաչումը կհակասի ինչպես պատմական եղելությանը, այնպես էլ Բուլղարիայի ազգային շահերին»:

«Մենք շատ հստակ ցուցադրելու ենք մեր դիրքորոշումը, այսպես կոչված, ցեղասպանության հարցում: Ամեն ինչ կանենք, որ օրինագիծը մերժվի ոչ թե խորհրդարանում, այլ հանձնաժողովների մակարդակով»,- նշում էր Օսմանը[2]: Հայոց ցեղասպանության վերաբերյալ օրինագիծն, այնուամենայնիվ, դրվեց քվեարկության և 2006թ. մայիսի 10-ին մերժվեց 55 կողմ, 79 դեմ և 49 ձեռնպահ հարաբերակցությամբ: Ակնհայտ է, թե ինչպես քվեարկեցին ԻԱՇ 34 անդամները:

2007թ. ապրիլի 25-ին, երբ Բուլղարիայի խորհրդարանի միակ հայ պատգամավոր (իշխող «Սիմեոն Երկրորդ. ազգային շարժում») Ռուբեն Քրիքորյանի առաջարկով օրենսդիրը 1 ձայնով լռությամբ հարգեց Մեծ եղեռնի զոհերի հիշատակը, թուրքական կուսակցության անդամները ցուցադրաբար դուրս եկան սրահից: Բուլղարիայի ազգային միության անդամ Բոյկո Վատևը հայտարարեց. «Բուլղարիան պարտավոր է ճանաչել թե՛ Հայերի ցեղասպանությունը և թե՛ բուլղարացիների ցեղասպանությունը: Իլինդենի ապստամբությունը ճնշելիս Օսմանյան Թուրքիան ցեղասպանություն գործեց բուլղարացի ժողովրդի հանդեպ»: Իլինդենի ապստամբությունը 1903թ. բուլղարացիների և մակեդոնացիների համատեղ պայքարն էր Օսմանյան կայսրության դեմ, որը ճնշելու ընթացքում Աբդուլ Համիդի հրամանով այրվեցին 200-ից ավելի բուլղարական գյուղեր[3]: Այս առիթով խորհրդարանի «Ատակա» խմբակցության ղեկավար Վոլեն Սիդերովը հայտարարեց, որ Սո-

[1] "Bulgaristan'da Ermeni Soykırımı tasarısı", "Milliyet", 24.02.2006.

[2] Prof. Dr. Ali Eminov, "The Turks of Bulgaria"; "The Turks", Ankara 2002, Yeni Türkiye publications, էջ 584:

[3] http://kroraina.com

ֆիան պարտավոր է ընդունել Հայոց եղեռնը, բայց ինքը լուրջ կասկածներ ունի, թե առաջիկայում դա տեղի կունենա: «Իշխող մեծամասնության մեջ կա կուսակցություն, որը պաշտպանում է Թուրքիայի շահերը: Այդ կուսակցության ներկայացուցիչները չեն հարգում մեկուկես միլիոն հայերի հիշատակը»,- նշել էր Սիդերովը[1]: Ավելի ուշ, 2008թ. հունվարին բուլղարական օրենսդիրում Հայոց ցեղասպանության ճանաչման փորձը կրկին ձախողվեց, և կրկին՝ բուլղարաթուրք պատգամավորների միջամտությամբ:

Այսքանով հանդերձ, Բուլղարիայի հայ համայնքի և սատարող կուսակցությունների, հատկապես «Ատակայի» համատեղ ջանքերով վերջին 5 տարիներին ընթանում է տեղական մակարդակներով Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը: Մեծ եղեռնը արդեն ճանաչվել է 10-ի չափ բուլղարական քաղաքների օրենսդիր մարմինների կողմից՝ Վառնա, Ստարա Զագորա, Ռուսե, Բատակ, Սիլիստրա, Վիդին, Պլովդիվ և այլն:

Հայոց եղեռնի ճանաչման օրինագծի հիմնական նախաձեռնող «Ատակա» կուսակցությունն ամենաակտիվ ուժն է ընդդեմ ԻԱՇ-ի: «Ատակա» անվանումն այդ տրամաբանությունն ունի՝ գրոհ ԻԱՇ-ի դեմ: Կուսակցության ղեկավար Վոլեն Սիդերովը ենթարկվում է ԻԱՇ հետապնդումներին: Այնուհանդերձ, «Ատական» երկրում ամենահեղինակավոր կուսակցություններից է, ունի բավական կայուն էլեկտորատ, 2005թ. ընտրություններին քվեների 8,93%-ով խորհրդարանում ստացավ 21 պատգամավորական տեղ, նույնքան տեղ էլ զբաղեցնում է գործող խորհրդարանում[2]: 2006թ. հոկտեմբերի 22-ին Բուլղարիայի նախագահական ընտրություններին կուսակցության ղեկավար Սիդերովը և գործող նախագահ Գեորգի Պրվանովը դուրս եկան 2-րդ փուլ, ուր ձայները բաշխվեցին համապատասխանաբար 75,9 և 24,01% հօգուտ Պրվանովի: Ընդ որում՝ ընտրություններին բուլղարաթուրքերի մասնակցության ցուցանիշը բուն բուլղարացիների ակտիվության ցուցանիշից առավել բարձր էր: Մասնավորապես, Թուրքիայում բնակվող

[1] http://www.novinite.com/view_news.php?id=79794
[2] http://www.parliament.bg

Բուլղարիայի քաղաքացի թուրքերի 90 տոկոսը մասնակցել է ընտրություններին: «Բոլորի ձայները գնացին Պրվանովին... մոտ 55 հազար քվեի մասին է խոսքը»,- գրեց «Միլիեթի» լրագրողը[1]:

Նշենք, որ Սիդերովը 2006թ. հունիսին Սոֆիայի հայկական սրճարանում տողերիս հեղինակի հետ հանդիպմանը նշել է, որ համակրանք և հարգանք ունի հայ ժողովրդի հանդեպ, տեղյակ է և կարևորում է այն իրողությունը, որ Հայաստանում առաջինն է պետականորեն ընդունվել քրիստոնեությունը: Համեմատության համար նշենք, որ, օրինակ, ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը 2008թ. հունվարին Բեթղեհեմ այցի ժամանակ տեղի հայ հոգևորականից առաջին անգամ զարմանքով իմացել էր, թե որ երկրում են առաջինն ընդունել քրիստոնեությունը:

Ընդդեմ բուլղարաթուրքերի ծավալվող դիմադրության ազդանշան կարող է համարվել նաև 2006թ. մայիսին Բուլղարիայի ՆԳ նախարար Ռումեն Պետկովի հայտարարությունը: Վերջինս հայտարարեց, թե ԻԱՇ մի շարք ակտիվիստներ, ինչպես նաև Բուլղարիայի թուրքերի հոգևոր առաջնորդ Մուսթաֆա Ալիշ Հաջըն սոցիալիստական ժամանակահատվածում հանդիսացել են Բուլղարիայի պետանվտանգության մարմինների աշխատակիցներ: Նախարարի տվյալներով՝ մասնավորապես պատգամավոր Յունալ Լյութֆին 1967-90թթ. աշխատել էր *DS* բուլղարական ծառայության համար՝ «Մուրադ», ապա նաև «Սիդեր» ծածկանուններով: Ուշագրավ է թուրք գործչի պատասխանը. նա հայտարարել էր, թե «չի կարող պատասխանել իր մասին պնդումներին, քանի դեռ չի տեսել փաստաթղթերը»[2]:

Բուլղարաթուրքերի դեմ դիմադրության շարժման մեջ են նաև Բուլղարացի տղամարդկանց կուսակցությունը և «Ֆորցա Բուլղարիա» կառույցը: Երկուսն էլ հիմնադրվել են Ռոզեն Մարկովի կողմից: Վերջինս, բողոքելով Բուլղարիայի ազգային հեռուստատեսությամբ (ԲԱՀ) թուրքերեն լուրերի հեռարձակման առիթով, 2009թ. նոյեմբերի 11-ին Վառնա քաղաքում հեռուստաընկերության

[1] "Türkler Bulgaristan'ı faşizme karşı koruyor", www.milliyet.com.tr 02.11.2006.

[2] "Bulgaristan başmüftüsü ajan çıktı", www.hurriyet.com.tr, 31.05.2006.

գրասենյակի առջև տեղադրել էր ցուցանակ «Ոչ ԲԱՀ-ով թուրքերեն լուրերին» մակագրությամբ, ապա դիմել ինքնահրկիզման: Մերձակայքում գտնվող ոստիկանին հաջողվել էր արագ հանգցնել կրակը[1]: Նույն տրամաբանության շրջանակում էր նաև պահպանողական Կարգ, օրենք և արդարություն կուսակցության դիմումը ՄԴ-ին, որի արդյունքում 1-ով նվազեց գործող թուրք օրենսդիրների թիվը:

Բուլղարիայում գործում են նաև այլ թուրքական հասարակական-քաղաքական կառույցներ, որոնք, սակայն, իրենց ազդեցությամբ անհամեմատելի են ԻԱՇ-ի հետ: Մասնավորապես, 1991թ. Դողանի կուսակիցներից Ադեմ Քենանը հեռացավ կազմակերպությունից՝ հիմնելով Թուրքական դեմոկրատական կուսակցությունը: Կառույցն առայսօր չի գրանցվել Բուլղարիայի արդարադատության համակարգում: Այն ունի ռադիկալ պանթուրքական հայացքներ: Քենանի գաղափարախոսությամբ, Բուլղարիան պետք է մասնատվի բուլղարական և թուրքական ինքնավար հատվածների: Ահմեդ Դողանի կուսակցությունն անհամաձայնություն է հայտնել Քենանի ռադիկալ մոտեցումներին[2]: Գործնականում Քենանի ընդգծված ազգայնական հայացքները դրական միավորներ բերեցին ԻԱՇ-ին՝ համեմատության մեջ նրան դարձնելով առավել «ընդունելի» գործընկեր:

ԻԱՇ-ից անջատված կուսակցական գործիչ Մեհմեդ Հոջան հիմնել է Ժողովրդավարական բարեփոխումների կուսակցությունը: Բուլղարիայի թուրքերի նախկին հոգևոր առաջնորդ, մյուֆթի Նեջիմ Գենջևը ղեկավարում է Արդարության ժողովրդավարական կուսակցությունը: Հանդես է գալիս իսլամիստական գաղափարներով, բայց նաև ունի որոշակի սոցիալիստական թեքումներ: Կուսակցության կողմնակիցները «շոշափելի» չեն[3]:

1997թ. կեսերին ձևավորվեց Իրավունքների և ազատությունների ազգային շարժում (ԻԱԱՇ) կազմակերպությունը, որը ԻԱՇ «կլոնավորված» տարբերակն էր: Այս մարտավարությունն ընտրու-

[1] "Bulgarians drastic protest over Turkish TV news", 12.11.2009. www.euranet.eu
[2] "The Turks of Bulgaria", Ali Eminov, "The Turks", Ankara 2002, Yeni Türkiye publications.
[3] Նույն տեղում:

թյունների ժամանակ ընտրողներին մոլորեցնելու նպատակ է հետապնդում: Ընտրացուցակում նույնանման երկու անունների պարագայում ընտրողը կարող է շփոթվել, քվեարկել ոչ հիմնական կուսակցության օգտին: Առաջին կառույցը նաև որոշակի իմաստով կորցնում է իր «եզակիությունը» հասարակության աչքում: Այս տեխնոլոգիան նորություն չէ: Նման մեթոդներ կիրառվել են նաև այլ երկրներում: Նորաստեղծ ԻԱԱՇ-ը ղեկավարում էր ԻԱՇ նախկին փոխղեկավար Գյուներ Թահիրը:

Ժողովրդավարական թևի շարժում քաղաքական կառույցը ղեկավարում է Օսման Օքթայը (որպես անկուսակցական աշխատել էր բուլղարական 39-րդ խորհրդարանում 2001-2005թթ.), Բուլղարիայի թուրքերի միությունը՝ Սեյհան Թուրքանը: Աշիմ Հաջիհասանը հիմնել է Ուղիղ ճանապարհ թուրքական արմատներով Բուլղարիայի բնակիչներին հիմնադրամը, որը հովանավորում է մահմեդական թեքումներով կրթական ձեռնարկներ[1]: Բուլղարիայում գործում են *bg-turk.com, kircaalihaber.com* տեղեկատվական կայքերը:

Բուլղարաթուրքերի ակտիվությանը նպաստում է նաև այն, որ Թուրքիան հարևան է: Թուրքիայի ֆիզիկական մոտիկությունը ապահովության և առավել «ագրեսիվ» գործելու լրացուցիչ խթան է դառնում: Օրինակ, Մակեդոնիայի պարագայում նույն թուրքական համայնքը համեմատաբար զուսպ է, սակայն նույնը չի կարելի ասել Մակեդոնիայի ալբանացիների մասին, որոնք թվապես ավելի են, քան տեղի թուրքերը և վայելում են հարևան Ալբանիայի հովանավորությունը: «Այն փաստը, որ (Մակեդոնիայի և Թուրքիայի միջև- Հ.Ն.) չկա ընդհանուր սահման, նպաստում է, որ Մակեդոնիայի թուրքերը դառնան առավել «լոյալ» փոքրամասնություն, ի հակադրություն ալբանացիների, որոնք բնակվում են Ալբանիային հարակից արևմտյան շրջաններում»,- նշված է եվրոպական հաստատության զեկույցում[2]:

[1] "Bulgaria: Turkish party urged to rethink polices" "Novinite – Sofia news agency" – www.novinite.com, 17.05.2005.

[2] "Minorities in Southeast Europe, Turks of Macedonia", Center for documentation and Information of Minorities in Europe – Southeast Europe, http://www.greekhelsinki.gr/english/reports/CEDIME-Reports-Minorities-in-Macedonia.html

Մակեդոնիա, Ռումինիա.
«Այս հողերը ե՞րբ են նորից մերը լինելու…»

Մակեդոնիա

Աշխարհում 2-րդ պետությունը, ուր տեղի թուրքերի քաղաքական կազմակերպությունը երկրի կոալիցիոն կառավարության անդամ է հանդիսացել, նույնպես Բալկաններում է, և դա Մակեդոնիան է:

Նախկին հարավսլավական հանրապետությունում էթնիկ թուրքերի թիվը պաշտոնապես 80 հազար է կամ բնակչության 3,5 տոկոսը: 1994թ. մարդահամարի համաձայն՝ 78 հազարից քիչ ավելի: Թուրքական աղբյուրների պնդմամբ՝ անցնում է 100 հազարը: Մակեդոնիայի Թուրքական դեմոկրատական կուսակցության հիմնադիր և նախկին ղեկավար Էրդողան Սարաչը պնդում էր, թե մակեդոնացի թուրքերի թիվը 170-200 հազարի սահմաններում է, ինչը հավաստի չէ[1]:

Երկրի արևմուտքում՝ Ալբանիայի սահմանին մոտ, թուրքերը կենտրոնացած են Գոստիվար, Տետովո, Օհրիդ, Ստրոուգա, Ռեսեն քաղաքներում: Ի դեպ, Ռեսենում է 1908թ. հուլիսի 3-ին սկսվել երիտթուրքական ապստամբությունն ընդդեմ սուլթան Աբդուլ Համիդի:

Երկրի արևելքում էթնիկ թուրքերը բնակվում են Ռադովիշ, Ստրումիցա, Շտիպ քաղաքներում և հարակից գյուղերում: Սոցիալիստական Հարավսլավիայի պայմաններում գործում էր կոմունիստական գաղափարախոսությամբ Մակեդոնիայի թուրքերի ժողովրդավարական ալյանս կազմակերպությունը, մայրաքաղաք Սկոպյեում հիմնվել էր թուրքական թատրոն, 40-ականների վերջերին հիմնադրվեց «Ենի յոլ» (Նոր ճանապարհ) հասարակական կառույցը: Թատրոնը և «Ենի յոլը» շարունակում են գործել մեր օրերում[2]:

[1] "Minorities in Southeast Europe, Turks of Macedonia", Center for documentation and Information of Minorities in Europe – Southeast Europe, http://www.greekhelsinki.gr/english/reports/CEDIME-Reports-Minorities-in-Macedonia.html

[2] Նույն տեղում:

1990թ. հուլիսի 1-ին դեպի ժողովրդավարացում ընթացող Մակեդոնիայում տեղի թուրքերը գրանցեցին Թուրքական դեմոկրատական միությունը, որը 2 տարի անց վերաճեց Թուրքական դեմոկրատական կուսակցության (ԹԴԿ), մակեդոներեն՝ *Демократска партија на Турците,* թուրքերեն՝ *Türk Demokrat Partisi:* Այդ ընթացքում ընդունված Մակեդոնիայի սահմանադրությունը տեղացի թուրքերին ազգային փոքրամասնության կարգավիճակ շնորհեց: 1991-94թթ. ԹԴԿ-ին խորհրդարանում ներկայացուցիչ ունենալ չհաջողվեց, 1994-1998թ. կուսակցության հիմնադիր և ղեկավար Էրդողան Սարաչն ընտրվեց խորհրդարանի պատգամավոր, սակայն 1998թ. տապալվեց համամասնական կարգով խորհրդարան անցնելու փորձը: Սարաչին հատկապես զայրացրեց, որ Մակեդոնիայում քվեարկելու իրավունք ունեցող 50 հազար էթնիկ թուրքերից միայն 20 հազարն ընտրեց ԹԴԿ-ին: Մակեդոնիայի պետական ռադիոյի թուրքերեն լուրերի բաժնի ղեկավար Նեդիմ Աբաշի տվյալներով՝ Մակեդոնիայի թուրքերն այդ շրջանում քվեարկել են գերազանցապես Ժողովրդավարական այլընտրանք և Սոցիալ-դեմոկրատական միություն կուսակցությունների օգտին: 2002-ից առայսօր կուսակցության գլխավոր քարտուղարն է 1945թ. ծնված Քենան Հասիփին: Կենտրոնակայանը մայրաքաղաք Սկոպյեի Վրապչիշտե թաղամասում է, ուր թուրքերը կազմում են բնակչության 1/3-ից ավելին: Սակայն 2004թ. Մակեդոնիայի իշխանությունները վերաձևեցին Վրապչիշտեի վարչատարածքային սահմաններն այնպես, որ թուրքերի տոկոսային կշիռն իջավ մինչև 12 տոկոս: Մյուս կողմից, Մակեդոնիայի օրենսդրությամբ, ըստ Օհրիդ քաղաքում կնքված համաձայնագրի, էթնիկ փոքրամասնություններին տրվում են հավելյալ իրավունքներ, եթե վերջիններս կազմում են բնակչության 20 տոկոսից ավելին: Ոչ թուրքաբնակ բնակավայրերի հաշվին Վրապչիշտեի սահմանների ընդարձակումը փոխեց իրավիճակը, և թուրքական կուսակցությունը տեղի ալբանացիների հետ սկսեց բոյկոտի արշավ:

Այնուհանդերձ, կուսակցապետ Հասիփին Վրապչիշտեի միջադեպը բնորոշում էր որպես «լոկալ նշանակության կոնֆլիկտ»,

իսկ ընդհանուր առմամբ գոհ էր թուրքական համայնքի դիրքերի ամրապնդումից[1]: Տարօրինակ կլիներ, եթե գոհ չլիներ. 2002թ. խորհրդարանական ընտրություններին ԹԴԿ-ն մասնակցեց Սոցիալ-դեմոկրատական միության և Լիբերալ-դեմոկրատական կուսակցության հետ համատեղ: Հասիփին փոխեց մարտավարությունը և այս անգամ ընտրություններին մասնակցեց՝ դաշինք կազմելով նախկինում մրցակից ուժերի հետ: Արդյունքում՝ ԹԴԿ 2 անդամներ՝ Քենան Հասիփին և Գայուր Սարաչը մուտք գործեցին Մակեդոնիայի խորհրդարան, իսկ Մահսութ Ալին դարձավ ֆինանսների փոխնախարար[2]: Բացի այդ, թուրքական կուսակցությունը ներկայացուցիչներ ուներ տնտեսության և մշակույթի նախարարություններում, Կենտրոնական բանկում և Սահմանադրական դատարանում[3]: 2008-ի հունիսյան ընտրությունների արդյունքում խորհրդարան անցավ միայն Հասիփին: Նույն կուսակցությունից Հաղի Նեզիրը և անկուսակցական Նեջդեթ Մուսթաֆան պետնախարարներ են[4]: Էթնիկ թուրքեր կան նաև Սոցիալ-դեմոկրատական և Դեմոկրատական ալյանս կուսակցություններում: 2009-ի մարտի ՏԻՄ ընտրությունների արդյունքում մոտ 10 հազար բնակչությամբ Ցենտրա Ժուպա քաղաքի գործադիր իշխանության ղեկավար ընտրվեց ԹԴԿ-ից Մազլում Հասանը[5]: Թուրքական աղբյուրներն այս քաղաքը կոչում են Քոջաջիք, պնդում, որ այստեղ է ծնվել և մինչև 11 տարեկանն ապրել Աթաթուրքի հայրը: Նույն թուրքական աղբյուրները վկայում են, որ թյուրքական բնակչությունն Անատոլիայից Քոջաջիք-Ցենտրա Ժուպա է փոխադրվել հիմնականում Բայազիդ սուլթանի կառավարման տարիներին (1389-1402)[6]:

Թուրքական կուսակցությունից թեկնածուներ էին առաջադրվել նաև Գոստիվարի, Վրապչիշտեի, Չաիրի, Պլասնիցայի քաղա-

[1] "Hayat akarken", TRT-2 հեռուստալիք, 19.03.2004:

[2] "Behind the Turkish Boykot in Macedonia: Interview with Kenan Hasipi", http://www.balkanalysis.com, 24.02.2005.

[3] http://www.tdp.org.mk

[4] Տե՛ս Մակեդոնիայի կառավարության կայքը՝ http://www.vlada.mk

[5] "Amacımız her platformda Türklüğe hizmet etmek", www.mk.zaman.com.tr, 06.02.2010.

[6] "Kocacik belediye başkanı Mazlum Hasan Karamanı ziyaret etti", www.mk.zaman.com.tr, 17.10.2009.

քապետների պաշտոնների համար: ՏԻՄ ընտրությունների արդյունքում 6 էթնիկ թուրք մուտք գործեց Ցենտրա Ժուպայի քաղաքային խորհուրդ, 4-ը՝ Պլասնիցա, 2-ական՝ Գոստիվար և Վրապչիշտե, 1-ական՝ Չաիր, Տեարցե և Ռադովիշ[1]:

ԹԴԿ էթնիկ թուրքական կուսակցության խորհրդանիշը նույնն է, ինչ Թուրքիայի պետական դրոշը՝ վրան *TDP* նշագրումով *(նկարը՝ առդիր):* Մակեդոնիայում գործում են տասնյակ թուրքական հասարակական կազմակերպություններ, թուրք կանայք հիմնել են «Մաթուքաթ» հասարակական կազմակերպությունը, որը զբաղվում է կանանց իրավունքների և թուրք կանանց կրթության հարցերով: Գոստիվարում բացվել է թուրքական լիցեյ, Տետովոյում՝ տեխնիկական քոլեջ: Մայրաքաղաք Սկոպյեի և Բիտովա քաղաքի համալսարաններում գործում են հատուկ մրցութային տեղեր՝ քվոտաներ էթնիկ թուրք ուսանողների համար: Լույս է տեսնում թուրքալեզու մամուլ, կազմակերպվում են ռադիո- և հեռուստատեսային հեռարձակումներ[2]: 2003-ի մարտին հիմնվեց Թուրքական հասարակական կազմակերպությունների միությունը, կրճատ՝ *MATÜSITEB,* որի կազմում են Մակեդոնիայի թուրքական հասարակական 53 կազմակերպություններ, ղեկավարում է Սուլեյման Բաքին:

«Մենք բազմաթիվ դրական արդյունքների ենք հասել. ունենք թուրք փոխնախարար, տարբեր տնօրեններ և այլ պաշտոնյաներ, որոնք չունեինք նախկինում: Այս առումով, Վրապչիշտեն տեղական նշանակության պրոբլեմ էր»,- նշել է Հասիփին: Մակեդոնիայում լույս են տեսնում «Բիրլիք», «Սեսլեր», «Սևինչ», «Թոմուրջուք» թերթերն ու հանդեսները, 1994-ից հրատարակվում են «Զաման» թուրքական թերթի համարները, որոնք ունեն մակեդոներեն և ալբաներեն էջեր *(www.mk.zaman.com.tr):*

Մակեդոնիայում իրականացվում են ներդրումներ Թուրքիայից: «Քոչ հոլդինգը» մայրաքաղաք Սկոպյեում հիմնել է առևտրային

[1] www.tdp.org. ; Seçimler 2009.
[2] http://en.wikipedia.org/wiki/Turks_in_the_Republic_of_Macedonia

կենտրոն, ներդրումներ է կատարել «Չորլու գրուփ» ընկերությունը: Մակեդոնիայում ներկայացուցիչ ունի թուրքական պետական *TIKA* (Թուրքական գործակցություն և զարգացման գործակալություն) կազմակերպությունը, ներկայում՝ Թունջայ Բաշօղլուն: *TIKA*-ն իրականացնում է արտասահմանի թյուրքական միությունների և թյուրքալեզու պետությունների հետ պետական համագործակցության կոորդինացիան: Մակեդոնիայի կառավարության որոշմամբ, 2007-ից դեկտեմբերի 21-ը թուրքական համայնքի տոնական օր է համարվում, և տեղի էթնիկ թուրքերն այդ օրն իրավունք ունեն հանգստյան օր վերցնել, կազմակերպվում են հանդիսություններ[1]:

«Մակեդոնիայի թուրքերը կարոտով են հիշում օսմանյան ժամանակաշրջանը: Չեմ մոռանում մի թուրք երիտասարդի խոսքերը, որ հարցրեց ինձ. այս հողերը ե՞րբ են նորից մերը լինելու»,- գրում է ավստրիաբնակ թուրք լրագրողը Սկոպյե իր այցի մասին հուշերում[2]:

[1] http://en.wikipedia.org/wiki/Turks_in_the_Republic_of_Macedonia#National_day

[2] "Memleket havası Viyana havası", Yetkin Bülbül, www.yenihareket.com, 16.02.2008. http://www.yenihareket.com/index.php?option=com_content&task=view&id=218

Ռումինիա

Ռումինիայում թուրքերի թիվը մոտ 32 հազար է, որի շուրջ 90 տոկոսը բնակվում է Կոստանցա քաղաքում[1]: Ամենաակտիվ թուրքական քաղաքական կառույցն է Ռումինիայի թուրքական դեմոկրատական միությունը՝ *Uniunea Democrata Turca din Romania:* Կուսակցության անդամ Լյուսեին Իբրամը 2004-ից խորհրդարանի անդամ է ընտրված Կոստանցա քաղաքից: Լյուսեինը նաև Թուրքիայի, Ադրբեջանի ու Թուրքմենստանի հետ խորհրդարանական բարեկամության խմբերի անդամ է: Խորհրդարանի առողջապահության կոմիտեի փոխնախագահն է, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ու հաղորդակցության կոմիտեի անդամ[2]:

Ռումինիայի թաթարների թուրք-մահմեդական միությունից խորհրդարանի պատգամավոր է Ահմեթ Ալեդինը[3]:

[1] Structura Etno-demografica pe arii geografice, Centur de resurse pentru diversitate etnoculturala http://www.edrc.ro/recensamant.jsp?regiune_id=0&judet_id=634 և http://www.edrc.ro/recensamant.jsp?regiune_id=503&judet_id=634

[2] http://www.cdep.ro/pls/parlam/structura.mp?idm=143&cam=2&leg=2008&idl=2

[3] http://www.cdep.ro/pls/parlam/structura.mp?idm=5&cam=2&leg=2008&idl=2

Ավստրիա. ինչո՞ւ ավստրիացիները թուրքերեն չգիտեն

2006թ. Վիեննայի 10-րդ թաղամասի խորհրդարանի անդամ Մուսթաֆա Իշչելը պայքարում էր Ավստրիացի ժողովրդի կուսակցությունից նույն տարվա հոկտեմբերի 18-ի ընտրություններում դաշնային խորհրդարան անցնելու համար: Իշչելի նախընտրական գովազդային պաստառներին գրված էր. «Եթե չեք ցանկանում, որ հաստատվի հայկական օրինագիծը, քվեարկեք իմ օգտին»[1]: Ավստրիական *«Die Presse»* հանդեսին տված հարցազրույցում նա նշել էր, թե Հայերի ցեղասպանություն տեղի չի ունեցել: Իշչելի դեմ բողոքի արշավ սկսեց Ավստրիայի հայ համայնքը[2]: Հայկական կողմին սատարեց գերմանուհի պատմաբան, ցեղասպանագետ և հումանիստ Թեսա Հոֆմանը: Անդրադառնալով Իշչելի խայտառակ ցուցապաստառին՝ նա նշեց. «Մենք հաճախ ենք տեսնում պատգամավորության թեկնածուների, որոնք պատմության հարցում նման դիրքորոշում ունեն: Բայց երբեք չէր եղել դեպք, որ մերժողականությունը վերաճի նախընտրական խոստումի»[3]: Ճնշման ներքո Իշչելը հանեց թեկնածությունը:

Գերմանիայի թուրքական հետազոտությունների կենտրոնի նախկին ղեկավար Ֆարուք Շենը եվրոպացի թուրքերի վերաբերյալ մենագրության մեջ նշում է, որ Ավստրիայում Թուրքիայի դեմ առկա տրամադրություններն ունեն պատմական ակունքներ. խոսքը օսմանյան բանակի կողմից 1529 և 1683թթ. Վիեննան պաշարելու մասին է: «Դա նույնիսկ մեր օրերում չմոռացող ավստրիացիները Թուրքիային շատ դրական չեն վերաբերվում»[4]:

2001թ. տողերիս հեղինակը Ստամբուլի Սիրքեջի թաղամասի գրախանութներից մեկում զրուցում էր գրավաճառի հետ, որը պատմում էր Ավստրիա իր այցի մասին: Նրա խոսքով՝ Վիեննա-

[1] "Austrian Turkish candidate stigmatized for "Genocide" denial", "Cihan", www.cihan.com.tr, 21.10.2006.
[2] "Ermeniler'in yeni hedefi", www.habervakti.com, 30.10.2006.
[3] "Turkish Genocide denier", 18.10.2006, "Die Presse".
[4] "Euro-Türkler", Faruk Şen, Istanbul 2007, էջ 38:

յում տաքսիով շրջագայելիս ավստրիացի վարորդն անակնկալ արգելակել է մեքենան, դուրս է եկել, խաչակնքել և նորից նստելով մեքենան՝ շարունակել ընթացքը: Երբ թուրք գրավաճառը հետաքրքրվել է, թե ինչպես հասկանալ ավստրիացի վարորդի անսովոր պահվածքը, վերջինս պատասխանել է. «Սա այն վայրն էր, որտեղ մենք կասեցրինք օսմանյան բանակի առաջխաղացումը»:

Թերևս, կարելի է հավելել, որ մոտ 500 տարվա վաղեմության պատմական փաստերը միայն կից գործոններ են Ավստրիայի այն հասարակական-քաղաքական շրջանակների համար, որոնք չեն ցանկանում Թուրքիայի մուտքը ԵՄ և զգուշանում են ԵՄ և Ավստրիայի ժողովրդագրական պատկերի փոփոխությունից: Սակայն եթե ի դեմս մերօրյա Թուրքիայի Եվրոպան գործ ունենար դեմոկրատական և սեփական պատմությունից չփախչող պետության հետ, թերևս, միջնադարյան դեպքերը պակաս հրատապություն ունենային 21-րդ դարի ավստրիացիների համար:

Այն, ինչ չհաջողվեց Իշչիին, 2 տարի անց, սեպտեմբերի 28-ին տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններին հաջողվեց Կանաչների կուսակցությունից Ալև Քորունին. նա դաշնային խորհրդարան անցավ համամասնական ընտրացանկով: Վերջինս, ի դեպ, ծնունդով Թուրքիայից է[1]: Քորունը հայտարարել է, որ մտադիր է պաշտպանել Ավստրիայում հաստատված փախստականների իրավունքները: Թե որքանով թրքուհի պատգամավորը պատրաստակամ կլինի սատարել, օրինակ, Ադրբեջանից փոխադրված հայազգի փախստականներին, դժվար է ասել: Սակայն Թուրքիայի եվրաինտեգրման օգտին որոշակի հայտարարություններ արդեն արվել են: «Մեր կուսակցությունը սատարում է, որ Թուրքիան ԵՄ մուտք գործի մյուս երկրների հետ համահավասար սկզբունքների հիման վրա»,- նշել է նա[2]:

Ներկայում Ավստրիայի խորհրդարանի վերին պալատի անդամ է նույնպես կանաչ Էֆգանի Դյոնմեզը: Նույնպես ծնունդով

[1] Տե՛ս http://www.parlament.gv.at/WW/DE/PAD_51587/show.psp

[2] "Alev Korun Avusturya'da mecliste", www.zaman.com.tr, 28.09.2008. http://www.zaman.com.tr/haber.do?haberno=743930

Թուրքիայից: Դյոնմեզը Սվազի (Սեբաստիա) Քանգալ գյուղից է, որն, ի դեպ, պատմական հայկական բնակավայր է[1]:

Ավստրիայի ժողովրդական կուսակցությունից Վիեննայի քաղաքային խորհրդարանի անդամ է Շիրվան Էքիջին[2]:

Ավստրիայի թուրքական կայքերից հայտնի են *yenihareket.com* իսլամական թեքումով կայքը, «Եվրոաժանս» թերթը և *euroa jans.at* համապատասխան կայքը, գործում են «Թունա» *FM* և «Ռադիոմերհաբա» ռադիոկայանները, որոնք ուղիղ հեռարձակվում են համապատասխանաբար *radiyotuna.com* և *radyomerhaba.at* կայքերի միջոցով: Իսկ «Թյուրքիաբեր» ծայրահեղական թերթը կարծես թշնամանքով լցված լինի դեպի Եվրոպան և դեպի Ավստրիան մասնավորապես: Միայն մեկ մեջբերում. «Սիրելի ընթերցողներ, ինտեգրացիան թակարդ է, որով արևմտյան հասարակությունները ցանկանում են ցատկել մեզ վրա և ձիու պես հեծնել մեզ: …Նրանք ցանկանում են, որ մենք փայլուն գերմաներեն սովորենք, իսկ իրենք թուրքերեն ոչ մի բառ չխոսեն»[3]:

Խիստ ուշագրավ է, որ Թուրքիայից Եվրոպա փոխադրվելով՝ թուրքերն արդեն տեղացիներից են պահանջում թուրքերեն սովորել:

Ընդ որում, հոդվածը տպվել էր թերթի 1-ին էջում…

[1] http://www.parlament.gv.at/WW/DE/PAD_47067/pad_47067.shtml
[2] http://euroajans.at/details.php?haberid=109 27.07.2008.
[3] http://www.turkhaber.at/Yazarlar/entegrasyon-yalani.html

Մեծ Բրիտանիա. Լոնդոնի քաղաքապետն ազգությամբ թո՞ւրք է

Բրիտանիայի թուրքերի առաջին ալիքն այստեղ է եկել Կիպրոսից, որը բրիտանական գաղութ էր մինչև 1960թ. օգոստոսը: 30-50-ական թվականներին թուրքական առաջին համայնքները ձևավորվեցին Լոնդոնի Հեքնիի շրջանում: Երկրորդ ալիքը հետպատերազմյան շրջանում էր՝ կապված նույն աշխատուժի հիմնախնդրի հետ[1]: Այսօր թուրքերի թիվը Բրիտանիայում մոտ 250 հազար է: Կիպրոսից դուրս բնակվող թուրք կիպրոսցիների ամենամեծ համայնքը Մեծ Բրիտանիայում է՝ մոտ 130 հազար:

Ներկայում զգալի թվով թուրքեր կան նաև Լոնդոնի Էնֆիլդ, Հերինգեյ, Լամբեթ, Սաութարք, Քրոյդոն, Էնֆիլդ, Այսլինգտոն թաղամասերում, սակայն ամենաստվար թուրքական բնակչությամբ թաղամասը Հեքնին է մնում: Լոնդոնի թուրքերի մասին մի հեռարձակման մեջ *BBC*-ն նշում էր. «Էլ որտեղ թուրքական ներկայությունն առավել ակնհայտ կլինի, որքան Հեքնիի Քինգզլենդ ռոուդում: Այնտեղ… ականատես կլինեք թուրքական խանութների, սրճարանների, մզկիթների, ձեռնարկությունների շարքերի, որոնք փոխանցում են իսկական Թուրքիայի համն ու հոտը»[2]: 2006-ին թրքուհի Սեմրա Էրեն-Նիժհարը նկարահանեց «Լոնդոնի թուրքերը» տեսաֆիլմը, որի պրեմիերան տեղի ունեցավ Լոնդոնի քաղաքապետարանում 2006-ի նոյեմբերին[3]:

1990-ից Լոնդոնում գործում է Թուրքական բանկային ասոցիացիան, որը միավորում է թագավորության ֆինանսական համակարգում աշխատող թուրքերին: Ներկայում ղեկավարում են Չաղլար Քարաթաշը և Յավուզ Մաջունը, գործում է կայք՝ *http://www.turkishbankers.org:* Միավորվել են նաև թուրք ուսուցիչները՝ *Union of Turkish teachers in the UK*, և ուսանողները՝ *UK* Council of *Turkish students Asscoation:* Գործում են Թուրք-իսլամական մշակութային կենտրոն, Թուրք կիպրոսցիների միությունների բրիտա-

[1] http://en.wikipedia.org/wiki/British_Turks
[2] "Turkish London", www.bbc.co.uk, 20.08.2008.
[3] "London Turks exhibited in city hall", 07.11.2006, www.cyprus44.com

նական խորհուրդ, «Աթաթուրք» միություն, Մեծ Բրիտանիայի Մուսթաֆա Քեմալ ասոցիացիա, Մեծ Բրիտանիայի թուրք կանանց միություն, Երիտասարդ թուրքեր ակումբ և այլ կառույցներ[1]:

Լոնդոնում թուրքերեն լեզվով հրատարակվում են «Հյուրիեթ» և «Զաման» թերթերի օրինակները, ինչպես նաև «Աչըքգազեթե», «Ավրուփա», «Լոնդրա» (Լոնդոն քաղաքի թուրքերեն անվանումն է) թերթերը, հրատարակվում է «Փրոֆեշընըլզ ինսայթ» հանդեսը: Լոնդոնում գործում է նաև թուրքական ռադիոկայան[2]:

«Վիկիպեդիա» շտեմարանում ականավոր բրիտանացի թուրքերի ցանկում է ներկայացված նաև Լոնդոնի գործող քաղաքապետ Բորիս Ջոնսոնի անունը: Արձագանքելով «Վիկիպեդիայի» այս հրապարակմանը՝ անգլիական բլոգերից մեկը կեսկատակ նշում է. «Բոլորս էլ տեղյակ ենք, թե որքան «ճշգրիտ է» Վիկիպեդիան»[3]:

Քաղաքապետ Բորիս Ջոնսոնը թուրք չէ, բայց ապուպապը թուրք էր: Այսպիսով, Ջոնսոնի պապը եղել է կիսով չափ թուրք Օսման Քեմալը, որը Մեծ Բրիտանիայում անունը փոխել է Ուիլֆրիդ Ջոնսոնի: Քեմալ-Ջոնսոնի հայրը՝ ազգությամբ թուրք Ալի Քեմալ բեյը, Օսմանյան կայսրությունում ականավոր լրագրող էր, իսկ երբ Առաջին աշխարհամարտի ավարտին բրիտանական զորքերն ափ իջան Ստամբուլում, Անգլիայի հետ կապեր ունեցող և լեզվին տիրապետող Ալի Քեմալը 3 ամսով նաև ՆԳ նախարար դարձավ 1919թ.[4]: Ավելի ուշ՝ 1922-ին նա սպանվեց քեմալականների կողմից: Ըստ պաշտոնական տեսակետի, սպանության պատճառը Ալի Քեմալի ընդդիմությունն էր Մուսթաֆա Քեմալի վարչակարգին, սակայն Բելգիայի «Ինֆո թուրք» կազմակերպության ղեկավար Դողան Օզգյուդենի տվյալներով՝ իրական պատճառն այն էր, որ «Ալի Քեմալը պահանջում էր հետաքննել հայկական ջարդերը և պատժել մեղավորներին»[5]: Այսպիսով, Լոնդոնի քաղաքապետ Բորիս Ջոնսոնը նրա ծոռն է:

[1] http://www.turkishconsulate.org.uk/en/commun.htm
[2] http://www.turkishconsulate.org.uk/en/commun.htm
[3] http://thekrays.wordpress.com/2008/05/03/boris-johnson-new-mayor-of-london-of-turkish-heritage/
[4] "My Dream for Turkey, by Boris's great-grandfather", www.spectator.co.uk, Norman Stone, 26.04.2008.
[5] http://www.info-turk.be/363.htm#turc

Ըստ մամուլի հրապարակումների, Բորիս Ջոնսոնը շատ հեռավոր կապեր ունի նաև բրիտանական, շվեդական, գերմանական և հոլանդական արքայական ընտանիքների հետ և այսքանով Մեծ Բրիտանիայի թագուհու հետ ևս ազգակցական կապեր ունի[1]:

«Հյուրիեթ» թերթի 2005 թվականի մարտի 17-ի հրապարակումից տեղեկանում ենք, որ Մեծ Բրիտանիայում գործում է քրիստոնյա թուրքերի եկեղեցի: Թերթը չի նշում եկեղեցու հստակ հասցեն: Ըստ բրիտանահայ աղբյուրներից ստացված տեղեկությունների, նման եկեղեցի, իրոք, գործում է և հովանավորվում է բրիտանական պետությանը մոտ կանգնած շրջանակների կողմից:

Բրիտանիայի թուրքերը ևս հակահայ լոբբիստական շարժման մեջ են: 2008թ. հունվարի 28-ին Մեծ Բրիտանիայի Թուրքական միությունների համադաշնությունը կազմակերպեց խորհրդաժողով: Ներկա էին Թուրքիայի և Ադրբեջանի դեսպաններ Բահադիր Քալելին և Ֆահրեթին Քուրբանովը, Մեծ Բրիտանիայում բնակվող պրոֆեսոր, պատմաբան Սելմա Բասքեթը (ծնունդով Թուրքիայից), Թուրքիայի պատմության ինստիտուտի հայկական բաժանմունքի փոխղեկավար, Սևծովյան տեխնիկական համալսարանի դասախոս Քեմալ Չիչեքը, պատմաբան Սալահի Սոնյելը[2]: Ուշագրավ է Սելմա Բասքեթի այն դիտարկումը, թե «պատերազմական պայմաններում տեղի ունեցած իրադարձությունները չեն կարող բնութագրվել որպես հանցանք և ջարդարարություն»[3]:

Այս «կուռ» տրամաբանությամբ ինքնաբերաբար հերքվում են Հոլոքոստը և պատերազմական հանցանքների հասկացողությունն ընդհանրապես:

[1] "Mayor of London Boris Johnson is a distant relative of the queen", "Telegraph", 04.08.2008.
[2] "Ingiltere'de Ermenilerin katlettigi diplomatlar anisina konferans", "Zaman", 29.01.2008.
[3] Նույն տեղում:

Եվրախորհրդարանի թուրք ներկայացուցիչները

ԵՄ անդամ պետությունները համամասնորեն, ըստ բնակչության թվաքանակի, պատգամավորներ են գործուղում Եվրախորհրդարան: Ներկայում ԵՄ 27 պետությունները ԵԽ-ում ներկայացնում են 785 պատգամավոր:

Առավելագույն թվով պատգամավորներ գործուղվում են 80 միլիոն բնակչությամբ Գերմանիայից՝ 99, 60-ական միլիոն հաշվվող Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան և 58 միլիոն հաշվվող Իտալիան ներկայացնում են 72 պատգամավոր: Նվազագույն՝ 5 ներկայացուցիչ համաեվրոպական ներկայացուցչական մարմնում ունի Մալթան, որի բնակչությունը մոտ 404 հազար է[1]:

2007թ. հունվարի 1-ին Բուլղարիան անդամակցեց Եվրամիությանը: Այս նոր եվրաերկիրը պետք է 17 պատգամավոր գործուղեր Եվրամիության խորհրդարան: 2007թ. հունվարի 1-ից Եվրախորհրդարանում բուլղարական պետությունը ներկայացնող 18 պատգամավորներից 3-ը ԻԱՇ-ից էին՝ Ֆիլիզ Հյուսեինովա, Չեթին Քազաք, Նեջմի Ալի[2]: Ներկայում ԵԽ-ում Բուլղարիան ներկայացնում են 2 էթնիկ թուրքեր՝ Ֆիլիզ Հյուսեինովա և Մեթին Քազաք: Վերջինիս երկվորյակ եղբայրը՝ Չեթին Քազաքը, որը նախկինում աշխատում էր ԵԽ-ում, ներկայում Բուլղարիայի խորհրդարանի անդամ է ԻԱՇ-ից: Եվրախորհրդարանում բուլղարացի պատգամավոր Վլադկո Պանայոտովը նույնպես ԻԱՇ-ից է[3]:

Գերմանիայից ԵԽ-ում ներկայացված պատգամավորներից ազգությամբ թուրք է Իսմայիլ Էրթուղը, Նիդեռլանդների 25 պատգամավորներից ազգությամբ թրքուհի է Էմինե Բոզքուրտը:

Էմինե Բոզքուրտը ծնվել է 1967թ. օգոստոսի 9-ին Նիդեռլանդների Զաանդամ քաղաքում: 1992-1993թ. աշխատել է Գերմանիայում Նիդեռլանդների գլխավոր հյուպատոսությունում, Նիդեռլանդների մահմեդական հեռարձակումների ընկերությունում, տարբեր պաշտոններ վարել Սոցիալիստական կուսակցության կառույցում՝ մասնագիտանալով կանանց իրավունքների և ազգային

[1] http://www.europarl.europa.eu/members/expert/groupAndCountry.do
[2] "3 Türk Avrupa Parlamentosu'nda", "Milliyet", 21.12.2006.
[3] http://www.europarl.europa.eu/members/expert/groupAndCountry/search.do?country=BG&language=EN

փոքրամասնությունների հիմնախնդիրներով[1]: Բոզքուրտը կարող է բնորոշվել որպես ազատական հայացքներ կրող թրքուհի: Նա լուրջ վերապահումներ ունի Թուրքիայում ժողովրդավարական ինստիտուտների չկայացած լինելու, կանանց իրավունքների ոտնահարման հարցերում: Բոզքուրտը խորհրդարանի աշխատանքի և սոցիալական հարցերով հանձնաժողովի և կանանց իրավունքների և գենդերային հավասարության հանձնաժողովի անդամ է:

ԵԽ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի անդամ է Մեթին Քազաքը[2], որը ծնվել է 1972թ. Բուլղարիայի Տարգովիշտե քաղաքում: Կրթությունը ստացել է Ֆրանսիայում, աշխատել որպես *RFI* ֆրանսիական ռադիոընկերության թղթակից Բուլղարիայում, 2000-ից՝ որպես փորձագետ և ԻԱՇ անդամ, տարբեր քաղաքական պաշտոններ է վարել Բուլղարիայի կառավարությունում: 2005-ից մինչև ԵԽ գործուղվելը հանդիսացել է Բուլղարիայի օմբուդսմենի օգնականը: Էմինե Բոզքուրտը և Մեթին Քազաքը նաև ԵՄ-Թուրքիա խորհրդարանական հանձնաժողովի անդամներ են:

Ինչպես նշվել է, 2004-2009թթ. ԵԽ-ում է պաշտոնավարել նաև Գերմանիայից Ջեմ Օզդեմիրը: Հատկանշական է, որ եթե Բոզքուրտը և Օզդեմիրը լիբերալ կողմնորոշմամբ գործիչներ են, ապա ԻԱՇ-ը ներկայացնող և Անկարայից «հեռակառավարվող» բուլղարաթուրքերը ակտիվ մերժողական գիծ ունեն: Ուստի, Բուլղարիայի անդամակցությամբ ԵԽ-ում հաստատվեցին 2 թուրք մերժողականներ, որոնք, անկասկած, ակտիվ աշխատում են Թուրքիայի օգտին, մասնավորապես՝ ԵԽ-ում Մեծ եղեռնին առնչվող օրինագծերի հարցում: Հատկանշական է, որ վերջին տարիներին Եվրախորհրդարանում Մեծ եղեռնի հիմնահարցում Թուրքիային առաջադրվող պահանջները նախկինի համեմատ մեղմացել են: Այսպես, եթե 2005թ. սեպտեմբերի 26-ին ԵԽ-ը Մեծ եղեռնի ճանաչման փաստն առաջադրեց Թուրքիայի անդամակցության նախապայման, ապա 2006թ. աշնանն այն վերափոխվեց պայմանի, իսկ 2007թ. քվեարկությամբ ընդհանրապես մերժվեց:

Այսպիսով, ներկա պահին Եվրախորհրդարանում կա 4 թուրք ներկայացուցիչ: Նշենք, որ Եվրախորհրդարանում մինչև այժմ չի եղել և ոչ մի հայազգի ներկայացուցիչ:

[1] http://www.europarl.europa.eu/members
[2] Նույն տեղում:

Արտասահմանի ազատական հայացքներով թուրք գործիչները

Արտասահմանում բնակվող էթնիկ թուրքերի մասին առավել ամբողջական պատկեր ձևավորելու համար հարկ է նկատել, որ, այո, թուրքական «սփյուռքում» տիրապետող են մերժողական ակտիվ հասարակական-քաղաքական գործիչները, բայց առկա են նաև պետական գծին խիստ անհամաձայնություն հայտնող թուրք գործիչներ: Դրանց մի մասն, ըստ էության, արտասահման է փոխադրվել՝ խուսափելով հետապնդումներից:

Ներկայում ԱՄՆ-ում, Մինեսոթա նահանգում է բնակվում թուրք սոցիոլոգ Թաներ Աքչամը, որը հայտնի է Մեծ եղեռնի հիմնախնդրում ունեցած ազատական հայացքներով: Թաներ Աքչամը ծնունդով Թուրքիայի Արդահանի տարածաշրջանից է, ձախակողմյան հայացքների համար հետապնդվել է Թուրքիայի իշխանությունների կողմից, դատապարտվել 9 տարվա ազատազրկման, բայց 1973թ. փախել է բանտից, հաստատվել Գերմանիայում, որտեղ հեղինակել է Մեծ եղեռնի թեմայով «Թուրքական ազգային ինքնությունը և հայկական հարցը» և «Մարդու իրավունքները և հայկական հարցը» մենագրությունները: 1999-ից բնակվում է ԱՄՆ-ում, դասավանդում է Մինեսոթայի նահանգային համալսարանում: Այս ընթացքում հեղինակել է «Հայկական տաբուն վերանում է. երկխոսությունն այլընտրանք ունի՞» (2001), «Ամոթալի արարք. Հայոց ցեղասպանությունը և թուրքական պատասխանատվության հարցը» (2006) մենագրությունները:

Աքչամը Մեծ եղեռնի հիմնախնդրում թուրքական ազատական գաղափարախոսության առաջնեկներից էր, նրա «Թուրքական ազգային ինքնությունը և հայկական հարցը» (1992) թուրք իրականության մեջ առաջին աշխատությունն էր, որում արտացոլվեց «ապաշխարանքի» տարրը: «Մենք մեծ անհանգստություն ենք ապրում, երբ մեզ մեղադրում են՝ ասելով «մարդասպան»: Հավատում ենք, թե անցյալում տեղ գտած իրադարձությունների հետ կապ չունենք և զայրանում, երբ դրանց պատճառով մեզ անվանում են «հանցագործ» կամ «մարդասպան»: Ուրեմն պարտավոր ենք հաս-

կանալ. դրա հիմնական պատճառն այն է, որ իբրև հասարակություն խույս ենք տալիս պատմության ընթացքում տեղի ունեցած իրադարձությունների մասին խոսելուց: Պատմությունից փախչելով՝ «մարդասպանի» կնիքից ազատվել չի լինի: Տրավմա վերապրած հասարակության համար այդ տրավման թոթափելու միակ ուղին պատճառ դարձած իրադարձության հետ առերեսումն է»,- գրում է Թաներ Աքչամը «Հայկական տաբուն վերանում է» աշխատության մեջ[1]: Աքչամը մասնակցել է Հայոց ցեղասպանության թեմային նվիրված գիտաժողովների, այդ թվում նաև Երևանում 2005-ին Մեծ եղեռնի 90-ամյակին նվիրված «Ծանրագույն հանցանք, ծայրագույն մարտահրավեր» գիտաժողովին, նույն օրերին, Հրանտ Դինքի և հրապարակախոս Մուրաթ Բելգեի հետ այցելեց Հայաստանի Հանրային հեռուստատեսություն՝ մասնակցելով «Հայլուր» հարցազրույց» հաղորդաշարին: «Մեծ ոճիրները, որպես կանոն, փաստաթղթեր չեն ունենում, եղածներն էլ ոչնչացվում են, բայց նույնիսկ «զտվելուց» հետո օսմանյան արխիվները մեծ թվով ապացույցներ են պարունակում Հայոց ցեղասպանության վերաբերյալ»,- հարցազրույցի ընթացքում նշեց Աքչամը[2]:

Միացյալ Նահանգների Միչիգան նահանգում է բնակվում Ֆաթմա Մյուգե Գյոչեքը: Ծնվել է Թուրքիայում, կրթություն է ստացել Ստամբուլի Բոսֆորի, այնուհետև Ֆրանսիայի Սորբոնի և ԱՄՆ Եյլի համալսարաններում: Իր հրապարակախոսական, գիտական, դասախոսական գործունեության ընթացքում բազմիցս հրապարակայնորեն ընդունել է Մեծ եղեռնի պատմական փաստը: 2005թ. ապրիլի 1-3-ը Կալիֆոռնիայի համալսարանում «Հայոց ցեղասպանությունը 9 տասնամյակ անց» գիտաժողովի ժամանակ Ֆաթմա Գյոչեքը ներողություն է հայցել հայ ժողովրդից Մեծ եղեռնի համար:

«Ազգայնական հռետորությունը, որն արտացոլված է դասագրքերում, մինչև վերջերս խոչընդոտում էր երևակայական «ազգայնական անցյալի» քննադատական վերլուծությանը: Այդ հնարովի անցյալը թուրք ժողովրդին տեղադրել էր աշխարհի կենտրոնում:

[1] "Ermeni tabusu aralanırken", Taner Akçam, Istanbul 2000, էջ 35-36:
[2] «Հայլուր», հարցազրույց», 24.04.2005:

Ահա այս կեղծ ազգայնական մնացուկների համառությունն է, որ մեր օրերում թուրքական պետությանը հնարավորություն է տալիս շարունակել մերժողականությունը թուրքական հասարակայնության շրջանակներում... Երբ մանրակրկիտ վերլուծության է ենթարկվում Անատոլիայի հայերին վերաբերող թուրքական պատմագիտությունը, թուրքական ազգայնականության զսպանակները և 1915թ. իրադարձությունների խեղաթյուրումը ջրի երես են բարձրանում որպես 2 տարր, որոնք պետք է քննադատական ուսումնասիրությամբ կազմալուծել: Թուրքական գաղափարախոսության, այն է՝ թուրքական ազգայնականության տիրապետումը և պատմական եղելությունը (այսինքն՝ 1915թ.) մնում են չուսումնասիրված, քանի դեռ գիտնականները շարունակում են աղբյուրներին մոտենալ ոչ քննադատաբար, տեքստային հռետորությունն ընդունում են որպես պատմական իրականություն»,- գրում է Ֆաթմա Գյոչեքը[1]:

Լիբանանահայկական «Ազդակ» հանդեսին տված հարցազրույցում Գյոչեքը լրացնում է. «Իրենց անցեալը չիմանալն է, որ ձեւավորած է թրքերու կեցուածքը: Այս տգիտութեան պատասխանատուն թրքական պատմագիտութիւնն է եւ նաեւ այն իրողութիւնը, որ այբուբենի բարեկարգումներուն պատճառով (նկատի ունի 1928-ից ի վեր օսմանյան արաբատառ այբուբենի փոխարինումը ներկայիս թուրքերենի լատինատառ այբուբենի- Հ.Ն.) մարդիկ չեն կրնար անձամբ կարդալ փաստաթուղթերը, իսկ օսմաներէնից լատինատառ թրքերէնի թարգմանութեան աշխատանքները պետութեան հակակշռին տակ կը գտնուին: Բայց անձնական փորձառութիւններու եւ շշուկներու պատճառով ընդհանուր գիտակցութիւն մը կայ, թէ հարցերը իրենց ներկայացուածին պէս չեն, եւ շղթային մէջ պակաս օղակներ կան»[2]:

Գերմանիայում է բնակվում թրքուհի իրավապաշտպան Ելդան կամ Ելդաղ Օզջանը: Ծնվել է 1961թ. Դիարբեքիրում: 2001թ., խուսա-

[1] "Cultural and Ethical legacies", "The Armenian Genocide"; "Turkish historiography and unbearable weight of 1915", Fatma Muge Gocek, p. 335.

[2] «Անպայման է, որ ճանաչումը պիտի ցնցէ թրքական պետութեան հիմերը, բայց փախուստ չկայ անկէ», «Ազդակ» օրաթերթ, 17.01.2005:

փելով հետապնդումներից, հաստատվել է Գերմանիայում: Զրույցներից մեկում Ելդան ասել է, որ Թուրքիա կվերադառնա միայն այն բանից հետո, երբ Անկարան կճանաչի Հայոց ցեղասպանությունը:

Ելդայի «Ստամբուլում և Դիարբեքիրում նրանց թիվը նվազում է» գիրքն «Ակոսը» բնորոշեց որպես «1996թ. կարևորագույն հրատարակություններից մեկը»[1]: Ելդան իրեն բնորոշ սուր հումորով ու անխնա քննադատությամբ է խոսում թուրքական մերժողականության մասին: Նաև խարազանում է Գերմանիայի թուրք բնակիչներին, ովքեր պատրաստ են հավերժացնել Թալեաթ փաշայի անունը և դատապարտել Սողոմոն Թեհլերյանին: «Միայն հակաժողովրդավարական Թուրքիայի կառավարությունը չէ, որ Ստամբուլում դամբարան է կառուցել ի պատիվ Թալեաթի և հուշարձան Թոփալ Օսմանի պես մարդասպանին: Ըստ Բեռլինի թուրքական համայնքի, մեկ և կես միլիոն մարդկանց սպանությունը խնդիր չէ, բայց խնդիր է մեկ անձի սպանությունը, մեկ անհատի կյանքը: Մարդասպան համարում են Թեհլերյանին, ...իսկ Թալեաթ փաշային՝ հայրենասեր: …Իրականում մարդասպանը մահացել է ոչ թե Սան Ֆրանցիսկոյում, այլ Բեռլինում 1921թ.»,- գրում է Ելդան[2]:

Նա ուսումնասիրում է հայերենը և հենց հայերենով է ներողություն հայցել Հայոց ցեղասպանության համար 2006թ. ապրիլի 24-ին՝ Հայաստանի Հանրային հեռուստատեսությամբ ունեցած ելույթում[3]:

Գերմանիայի Ռուհր քաղաքում է բնակվում պատմաբան Ֆիքրեթ Ադաները: «Մենք պետք է հաշվի նստենք մեր պատմության հետ, ինչպես որ գերմանացիներն արեցին պատերազմից հետո: Դա կարևոր է քաղաքացիական հասարակության և ժողովրդավարական առողջացման տեսանկյունից»,- նշում է Ադաները[4]:

Գերմանիայում է բնակվում նաև հրապարակախոս Դողան Աքիանլը: Վերջինս մինչև 1991թ. բնակվել է Թուրքիայում, ապա, խուսափելով քաղաքական հետապնդումներից, հաստատվել է

[1] "Istanbul'da, Diyarbakır'da coğalırken", Oşin Çilingir, "Agos", 03.01.1997.

[2] "Katil San Francisco'da degil Berlin'de öldü", "Hele bir gitsinler, diyalog sonra", "Belge yayınları", Istanbul 2003.

[3] «Հայլուր» լրատվական ծառայություն, 24.04.2006:

[4] "Turks breach wall of scielence on Armenians", "New York Times" 06.03.2004.

Գերմանիայի Քյոլն քաղաքում: Աքիանլըն հրապարակել է «Դատաստանի օրվա դատավորները» (1999) մենագրությունը, թուրքերեն է թարգմանել Սողոմոն Թեհլերյանի դատավարության սղագրությունը ներկայացնող «Թալեաթ փաշայի դատավարությունը» հատորյակը (2003)[1]: Գրքերը հրատարակվել են նաև Թուրքիայում: 2005թ.՝ Հայոց մեծ եղեռնի 90-ամյակի օրերին Աքիանլըն այցելել է Երևան: Հայ լրագրողների հետ հանդիպմանը նշել է, որ ցանկություն ունի Թուրքիայում մեկ և կես միլիոն նռնենու տունկ կազմակերպել ի հիշատակ Մեծ եղեռնի զոհերի[2]:

«Գերմանական ԶԼՄ-ում հրապարակվող բանավեճերում Թուրքիայի՝ ԵՄ անդամակցության դեմ ուղղված ամենաարմատական արտահայտությունները, որքան էլ տարօրինակ է հնչում, պատկանում են թուրք այլախոհներին, որոնք Գերմանիա են եկել այն հետապնդումների պատճառով, որոնց ենթարկվել են իրենց հայրենիքում՝ հայերի ցեղասպանության հարցի շուրջ հասարակական բանավեճ սկսելու փորձի համար»[3],- այս առիթով նշում է Սերգեյ Սումլյոննին:

Բրյուսելում է բնակվում Դողան Օզգյուդենը, որն իր կնոջ՝ Ինջի Թուգսավուլի հետ «Ինֆո-թուրք» տեղեկատվական հանգույցի և ձախակողմյան Ժողովրդավարական դիմադրության շարժում կազմակերպության հիմնադիրն է[4]: 1936թ. Թուրքիայում ծնված Օզգյուդենը 1964-66թթ. «Աքշամ» թերթի խմբագիրն էր, ավելի ուշ հիմնել է ձախակողմյան «Անթ» թերթը և նույնանուն հրատարակչատունը, որը 1971-ին փակվել է թուրքական պետության կողմից: Օզգյուդենի դեմ Թուրքիայում ընդհանուր առմամբ 50 դատավարություն է բացվել, որոնց արդյունքում նա դատապարտվել է ավելի քան 300 տարվա ազատազրկման: Վերջին դատը տեղի է ունեցել 2001-ին՝ տխրահռչակ 301 հոդվածի հիման վրա: Առայսօր 74-ամյա Օզգյուդենին թույլ չեն տալիս այցելել Թուրքիա:

[1] Doğan Akhanlı, "Talat Paşa davası", Belge yayınları, Istanbul, 2003.

[2] «Հայլուր» լրատվական ծառայություն, 26.04.2005:

[3] «Գերմանիայի թուրք բնակչությունը՝ դանդաղ գործողության ռումբ», Սերգեյ Սումլյոննի, «21-րդ ԴԱՐ», N 2, էջ 46, 2006թ.:

[4] www.info-turk.be և http://www.info-turk.be/resistance.htm#DEMOCRATIC

2008թ. նոյեմբերի 11-ին Օզգյուդենն առաջինն իր կայքի միջոցով տեղեկացրեց Բելգիայում Թուրքիայի դեսպանատանը տեղի ունեցած հավաքի մասին, որտեղ պաշտպանության նախարար Վեջդի Գյոնուլը արդարացրել էր հայկական և հույն-պոնտական ցեղասպանությունների փաստը[1]: Այս առիթով Բելգիայի թուրքական *belturk.be* և *gundem.be* կայքերում Օզգյուդենի դեմ սուր հոդվածներ զետեղվեցին[2]: Արդյունքում՝ նրա անձնական անվտանգության հարցը փոխադրվեց քաղաքական հարթություն: Սենատոր Խոսի Դյուբեն դեկտեմբերի 11-ին այս առիթով հանդիպեց ՆԳ նախարար Պատրիկ Դյուվաելին: Վերջինս հայտարարեց, որ «ձեռնարկվում են համարժեք քայլեր Օզգյուդենին պաշտպանելու համար», որոնք չեն կարող հրապարակվել՝ պահպանությանը չվնասելու նպատակով[3]:

Մենագրության առաջին բաժնի վերջում, օգտվելով Դողան Օզգյուդենի կայքից, ներկայացնենք այն հայտարարությունը, որը Բելգիայի թուրքական դեսպանատանն արել էր Թուրքիայի կառավարության անդամ, պաշտպանության նախարար Վեջդի Գյոնուլը. «Հիշեք, որ մինչև հանրապետական շրջանը, Անկարան բաղկացած էր 4 շրջաններից՝ հրեական, մահմեդական, հայկական և հունական… Երբ ես Իզմիրի նահանգապետն էի, տեղեկացա, որ Իզմիրի Առևտրային պալատում միայն ոչ մահմեդականներ են եղել: Նրանց մեջ թուրք չկար: **Հնարավոր կլինե՞ր արդյոք մեր օրերում ունենալ ազգային պետություն, եթե Էգեյան տարածաշրջանում շարունակվեր հույների, իսկ Թուրքիայի տարբեր շրջաններում՝ հայերի ներկայությունը»:**

Վեջդի Գյոնուլն ակամա ընդունեց Հայոց ցեղասպանության փաստը…

[1] "Le ministre turc a fait des éloges de la déportation des Grecs et Arméniens" 11.11.2008 http://www.info-turk.be/363.htm#turc

[2] http://www.belturk.be/go.php?go=3031ac5&do=details&return=summary

[3] "Turkish journalist faces threats in Belgium for writing against national remarks", 12.12.2008, www.bianet.org

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱԿԱՀԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ադրբեջանական սփյուռքի կայացման գործընթացը

Ադրբեջանական *diaspora.az* պաշտոնական կայքը որպես արտասահմանի առաջին ադրբեջանական կազմակերպություն է ներկայացնում 1949թ. Անկարայում հիմնված Ադրբեջանական մշակութային կենտրոնը: Ուշագրավ է, որ կայքում բացակայում են Լեհաստանում, նացիստական Գերմանիայում և Ֆրանսիայում ավելի վաղ ձևավորված ադրբեջանական կառույցների վերաբերյալ տվյալները: Արտերկրի առաջին ադրբեջանական համայնքների կորիզը կազմում էին այն մուսավաթականները (մասնավորապես՝ առաջին վարչապետ Մեմեդ Էմին Ռասուլզադե, ԱԳ նախարար և մեջլիսի խոսնակ Ալիմարդան Թոփչիբաշև, Ալիբեյ Հյուսեինզադե, Ահմեդ Աղաև և այլք), որոնք 1920թ. հեռացել էին Ադրբեջանից Կարմիր բանակի մուտք գործելուց հետո: Արդեն 20-ականներից Ֆրանսիայում գործում էր Ադրբեջանցի էմիգրանտների միությունը, իսկ 30-ականներին Լեհաստանում, ապա նաև Գերմանիայում պետական իշխանությունների հովանավորությամբ սկսեցին ի հայտ գալ մի քանի ադրբեջանական համայնքային միություններ:

Արտասահմանում ադրբեջանական «սփյուռքի» թվային աճի հանգեցրեց նաև Հայրենական մեծ պատերազմը, քանի որ ԽՍՀՄ բանակից գերի ընկած ադրբեջանցիների մի մասը նախընտրեց չվերադառնալ Ադրբեջան և հաստատվեց արտերկրում:

Ավելի ուշ, 1957թ. նույն Ռասուլզադեն և մուսավաթական Ադրբեջանի անվտանգության նախարար Նաղի Շեյխզամանլիի որդին՝ Սալեհ Շեյխզամանլին, Վաշինգտոնում հիմնեցին ԱՄՆ

ադրբեջանական համայնք կառույցը[1]: Մինչև ԽՍՀՄ փլուզումը ձևավորվել են մի քանի ադրբեջանական կառույցներ, որոնք հիմնականում ոչ թե բուն Ադրբեջանի, այլ Իրանից արտագաղթած ադրբեջանցիների հասարակական կառույցներ էին, ինչպես, օրինակ, Շվեդիայի Մալմյո քաղաքի ադրբեջանական մշակութային միությունը (1989թ.): Ավելի փոքր թիվ էին կազմում հիմնականում «պերեստրոյկայի» ժամանակահատվածում միութենական Ադրբեջանից փոխադրվածների ձևավորած հաստատությունները, օրինակ՝ Քվեբեկի ադրբեջանցիների ասոցիացիան՝ 1989թ: Ադրբեջանական միություններ էին գործում բուն խորհրդային հանրապետություններում, որոնք ԽՍՀՄ տրոհման հետ մեկտեղ վերաճեցին արտերկրի համայնքային կառույցների՝ Լատվիայի ադրբեջանական մշակութային միություն՝ 1988թ., Էստոնիայի «Այդան» մշակութային միություն, Բելառուսի «Գոբուստան» մշակութային-կրթական կենտրոն՝ 1990թ և այլն: Ադրբեջանական համայնքների թիվն աստիճանաբար աճում էր ԽՍՀՄ փլուզումից հետո: Այդ գործընթացի ակտիվացումը նկատելի դարձավ 1999-2000թթ., իսկ շրջադարձային կարող է համարվել 2002թ. հուլիսի 5-ը, երբ Հեյդար Ալիևի հրամանով ձևավորվեց Արտասահմանում բնակվող ադրբեջանցիների հետ աշխատանքի կոմիտե պետական կառույցը (այսուհետ՝ Պետկոմիտե): Այն զբաղվում է համայնքների կազմակերպման, նոր համայնքային կառույցների հիմնադրման, համայնքի «լիդերների» առաջքաշման, արտասահմանի ադրբեջանական միությունների գործունեության (այդ թվում և հակահայ) ֆինանսավորման, երիտասարդ կադրերի պատրաստման, քարոզչության (առաջին հերթին պետք է հասկանալ՝ հակահայ քարոզչության) հարցերով[2]: 2008թ. նոյեմբերին կառույցը վերանվանվեց Դիասպորայի հետ աշխատանքի կոմիտե:

Պետկոմիտեի նախագահն է Նազիմ Հյուսեին օղլի Իբրահիմովը: Նախիջևանյան կլանի ներկայացուցիչ է: Ծնվել է 1963թ. դեկտեմբերի 23-ին Նախիջևանում, ավարտել Ադրբեջանի պոլիտեխնիկ ինստիտուտը, զբաղվել գործարարությամբ, 1997-99թթ. Ադրբե-

[1] www.diaspora.az
[2] Նույն տեղում:

ջանի դեսպանն էր Ուկրաինայում և համատեղության կարգով՝ Մոլդովայում, ապա 1999թ. մարտից Ադրբեջանի դեսպանն էր Բելառուսի Հանրապետությունում: 2000թ. ընտրվել է խորհրդարանի պատգամավոր իշխող «Ենի Ազերբայջան» կուսակցությունից[1]:

Ըստ Իբրահիմովի՝ իրենց գերատեսչության առաջնահերթ նպատակներից մեկը «հայկական սփյուռքին հակազդելն է»[2]:

«Ադրբեջանական սփյուռքի» հարցերով Պետկոմիտեն ունի մոտ 40 աշխատակից: Կառուցվածքային առումով բաժանված է վարչությունների՝ ըստ աշխարհագրական գոտիների: Առայժմ չի հաջողվել ադրբեջանական մամուլում գտնել հրապարակում, որը ներկայացներ կոմիտեի ամբողջական համակարգը: Տարբեր աղբյուրներից հնարավոր է «սոսնձել» հետևյալ պատկերը. կոմիտեի նախագահի տեղակալն է Վալեհ Հաջիևը: Ռուսաստանը, Ուկրաինան, Բելառուսը, Չինաստանը և Հնդկաստանը միավորված են մեկ վարչության մեջ, որը ղեկավարում է Շաքիր Սալիմովը: Ակնհայտ է, որ այստեղ աշխատանքների գերակշիռ մասը բաժին է ընկնում Ռուսաստանին: Ռուսական բաժնի ղեկավարն է Նազիմ Գարախանովը, ավելի վաղ Միկաիլ Հուսեինովն էր[3]: Հնդկաստանի և Չինաստանի ուղղությամբ իրական քայլեր առայսօր արված չեն: Հատկանշական է, որ հարցազրույցներից մեկում Շաքիր Սալիմովն անգամ չի կարողացել նշել, թե քանի ադրբեջանցի է ապրում այս պետություններում[4]: Վրաստանի և Կենտրոնական Ասիայի վարչությունը համակարգում է Ռիզվան Ալիևը[5]: Վրաստանի ուղղությունը համակարգում է Ֆիզուլի Նաջաֆովը[6]: Քյավուս Կասիմովը համակարգում է Մերձավոր Արևելքի երկրների վարչությունը: Այստեղ առանցքային է Իսրայելի հետ համագործակցությունը: Եվրոպայի վարչությունը համակարգում է Թահիր Հաջիևը:

[1] www.diaspora.az

[2] «Назим Ибрагимов: создание азербайджанского лобби стоит дорого», Э. Фахрединоглу, «Эхо».

[3] «Азербайджанская и русская диаспоры - важный фактор в развитии двустороннего сотрудничества», www.azertag.com, 19.06.2006.

[4] «Госкомитет по работе с азербайджанцами, проживающими за рубежом: в России проживают около 2 миллионов азербайджанцев», *www.day.az,* 28.12.2007.

[5] «Проблемы азербайджанцев в Грузии по прежнему существуют», «Эхо», *www.echo-az.com,* 16.04.04.

[6] «Азербайджанцы в Грузии», www.osradio.ru, 02.03.2006.

Գործում է նաև ԱՄՆ-ի և Կանադայի առանձին վարչություն:

2005թ. դրությամբ Պետկոմիտեն նորոգվել է բյուջետային հատկացումների հաշվին, տեխնիկական հագեցվածությունը, ըստ ադրբեջանական մամուլի, բավարար է: Կառույցի կայքերն են՝ *www.dias pora.az* և *www.diaspora.gov.az:* Կայքերն ադրբեջաներենով ներկայացնում են տեղեկատվություն ադրբեջանական համայնքների վերաբերյալ, ընդհանուր տեղեկություններ Ադրբեջանի Հանրապետության աշխարհագրության, տնտեսության, պատմության, մշակույթի մասին և առանձին բաժնով՝ ԼՂ հակամարտությունը, հունվարի 20-ի դեպքերն ու Խոջալիի իրադարձություններն ըստ Բաքվի պաշտոնական դիտանկյունի: Կայքում տեղադրված են նաև կոմիտեի կողմից հրատարակվող «Ուլքյեմ» (Երկիրս) ամսագրի էլեկտրոնային տարբերակները:

Կոմիտեն գործում է Բաքվում, Սամեդ Վուրղունի փ. 24 հասցեում: Կառույցի բյուջեն տարեցտարի ավելացվում է, ընդ որում, Բաքվի աղբյուրների հավաստմամբ, երկրաչափական պրոգրեսիայով: Այսպես, Նազիմ Իբրահիմովի խոսքով, եթե 2005թ. հատկացվել էր 80 հազար ԱՄՆ դոլար, ապա 2006թ.՝ կես միլիոն դոլար[1]: Թեև չի բացառվում, որ թվերն ուռճացվում են, սակայն կոմիտեի բյուջեի աճն ակնհայտ է թեկուզ Ադրբեջանի ընդհանուր տնտեսական զարգացման և կոմիտեի ակտիվացման տրամաբանությամբ:

1990-ականների վերջերից և հատկապես կոմիտեի ձևավորումից հետո «ադրբեջանական սփյուռքի» կազմակերպման ուղղությամբ աշխատանքների շեշտակի ակտիվացումը հստակ երևում է հետևյալ օրինակներից. Պետկոմիտեի կայքում նշված ՌԴ բոլոր ադրբեջանական միությունները հիմնվել են 1999-ից հետո, Շվեյցարիայի 9 ադրբեջանական միություններից 5-ը՝ 2003-2005թթ., Իտալիայի, Չեխիայի, Ճապոնիայի, Եգիպտոսի, Մոլդովայի բոլոր ադրբեջանական կազմակերպությունները հիմնվել են 2002թ. հուլիսի 5-ի հրամանից հետո:

Ըստ կոմիտեի տվյալների, ադրբեջանական համայնքային հաստատություններ են գործում 40 պետություններում՝ Միացյալ Նահանգներ, Գերմանիա, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Բելգիա,

[1] «Растет внимание к формированию диаспоры», www.azertag.com, 20.06.2006.

Չեխիա, Ֆինլանդիա, մերձբալթյան 3 հանրապետություններ, անգամ Իսլանդիա, Ճապոնիա և Նոր Զելանդիա և այլն[1]:

«Աշխարհասփյուռ» ադրբեջանցիների կոնսոլիդացման նպատակով դեկտեմբերի 31-ը նշվում է որպես «աշխարհի ադրբեջանցիների համերաշխության օր»: Այս ամսաթիվը ևս կապված է Հեյդար Ալիևի անվան հետ. 1991թ. դեկտեմբերի 16-ին այն ժամանակ Նախիջևանի Գերագույն խորհրդի նախագահ Հեյդար Ալիևի նախաձեռնությամբ ընդունված որոշմամբ դեկտեմբերի 31-ը հռչակվեց «Աշխարհի ադրբեջանցիների համերաշխության և միաբանության օր»[2]: Ավելի ուշ, հեղաշրջման ճանապարհով Բաքու փոխադրված Հեյդար Ալիևը Նախիջևանից Բաքու բերեց նաև իր այս ինքնատիպ «հայտնագործությունը»՝ ամանորը նաև ադրբեջանական տոն դարձնելու մասին: Այդ օրը Ադրբեջանում և «սփյուռքում» կազմակերպվում են միջոցառումներ: Ադրբեջանցիների համերաշխության օրվա տոնական միջոցառումների աշխարհագրությունն ընդգրկում է մի քանի տասնյակ երկիր՝ ԱՄՆ, Գերմանիա, Բելգիա, Ֆրանսիա, Նիդեռլանդներ, Ֆինլանդիա, Շվեդիա, Չեխիա, Լիտվա, Լատվիա, Էստոնիա, Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուս, Վրաստան և այլն:

Իշխանությունները հայտարարում էին, որ պատրաստ են գործակցել «սփյուռքի» բոլոր կառույցների հետ՝ անկախ այն իրողությունից, թե ինչպես են տրամադրված պաշտոնական Բաքվի հանդեպ: «Ձևավորման առաջին իսկ պահից Պետկոմիտեն հայտարարեց, որ հարաբերությունները դիասպորայի հետ չեն կառուցվի և չեն կառուցվելու «իշխանամետ» ու «ընդդիմադիր» հասկացությունների շրջանակում: Մեր դռները բաց են այն բոլոր միությունների համար, որոնք աշխատում են հանուն ադրբեջանցիների, և մենք պատրաստ ենք աշխատել նրանց հետ»,- նշում է նախագահ Իբրահիմովը[3]: Իսկ Պետկոմիտեի ղեկավար պաշտոնյա Ֆիզուլի Նաջաֆովի խոսքով՝ «իրենց կառույցի հիմնական նպատակն է բոլոր ադրբեջանցիների կոնսոլիդացումը մեկ ընդհանուր և կենտրո-

[1] www.diaspora.az
[2] Նույն տեղում:
[3] Назим Ибрагимов: «Мне известны причины необъединения Конгресса азербайджанцев мира», www.trend.az, 23.06.2006.

նացված համակարգի ներքո»[1]:

Առավել մանրակրկիտ ուսումնասիրությունը և հատկապես մի շարք համայնքային ղեկավարների հայտարարությունները վկայում են, որ գուցեև բոլոր միությունները հավասար են, բայց որոշ միություններ ավելի հավասար են: Սա առավել ընդգծված է Ռուսաստանի, Ուկրաինայի, նաև եվրոպական երկրների օրինակներում, որոնք կներկայացնենք առաջիկայում: Բաքուն քայլ առ քայլ ավելի ընդգծված է դարձնում «սփյուռքը» վերահսկելու, անցանկալի համայնքային գործիչներին «սևացնելու», «լուսանցքում թողնելու» արշավը:

Ադրբեջանում «դիասպորայի» վերաբերյալ նկարահանվել է ֆիլմ, որը համեստորեն վերնագրված է «Մեր 50 միլիոնանոց ազգը», հրատարակվել է երկհատորյակ՝ «Պետական հոգածություն ադրբեջանական սփյուռքի հանդեպ» վերնագրով, որը խտացնում է Ալիև առաջինի և Ալիև երկրորդի պետական հոգածության հարցերը:

2009թ. լույս է տեսել աշխարհի ադրբեջանցիների վերաբերյալ տեղեկատուն: Հրատարակչական հարցերով զբաղվել է Ադրբեջանի նախագահի աշխատակազմի աշխարհի ադրբեջանցիների գործադիր ապարատի հասարակական-քաղաքական բաժինը[2]:

Թուրքական «սփյուռքի» մասում ներկայացրինք նաև Արտասահմանի ազատական թուրք գործիչների վերաբերյալ բաժինը, որում ներկայացված էին ազգային հարցերում և, մասնավորապես, Մեծ եղեռնի հիմնախնդրում ազատական մոտեցումներ ունեցող թուրք պատմաբաններ, իրավապաշտպաններ: Ադրբեջանի պարագայում նման բաժին կազմել չհաջողվեց, քանի որ տեսանելի չեն այն գործիչները, որոնք Ղարաբաղյան հարցում կարող են, համենայնդեպս հրապարակավ, հանդես գալ ազատական դիրքորոշումներով, բարձրաձայնել Արցախի պատմության հարցում պաշտոնական դիրքորոշման կեղծ լինելը, Խոջալիի դեպքերի կեղծիքի և ուռճացվածության ֆոնին դատապարտել Սումգայիթը կամ Կիրովաբադը: Սա, թերևս, բխում է նաև պատերազմում պարտվող կողմ

[1] «Азербайджанцы Казахстана готовятся провести свой первый съезд», «Эхо», www.echo-az. com, 20.02.2005.

[2] «Книга об азербайджанцах мира выйдет в свет в 2009-ом году», «Зеркало», 08.09.2007.

լինելու փաստից, որը դժվարացնում է առերեսումը, ինչպես նաև Ղարաբաղյան հարցում Ադրբեջանում տիրող ծայրահեղական տրամադրությունների գործոնից:

Բացառություն կարող է համարվել Մոսկվայում բնակվող ադրբեջանցի արվեստագետ, կինոսցենարիստ Ռուստամ Իբրահիմբեկովը (ծագումով՝ հրեա): Վերջինս 1969թ. նկարահանված խորհրդային հռչակավոր «Անապատի սպիտակ արևը» ֆիլմի, Նիկիտա Միխալկովի «Արևից ընդարմացածները» (1994), «Սիբիրյան սափրիչը» (1999) ֆիլմերի սցենարների համահեղինակն է, Ռոման Բալայանի հետ նկարահանել է «Պահպանիր ինձ, իմ թալիսման» հայտնի ֆիլմը: 2004թ. մայիսին *BBC* ռադիոկայանին տված հարցազրույցում Իբրահիմբեկովը հայտարարել էր, թե «չի կարող մերժել Ղարաբաղյան հակամարտության 2 կողմերի իրավունքը՝ Ղարաբաղը համարել իրենց հայրենիքը»: «Ես իրավունք չունեմ մերժել հայերի այս իրավունքը… և եթե նույնիսկ հայկական կողմին հաջողվի ապացուցել, որ պատմական կամ իրավական առումով այս հողերը պետք է անջատվեն Ադրբեջանից, միևնույն է, 21-րդ դարում հակամարտությունները ռազմական զավթումի տարբերակով լուծելը, իմ տեսակետով՝ մարդկության դեմ հանցանք է»[1]: Ինչպես նկատելի է, հրապարակումը հստակ հայամետ որակել դժվար կլինի, Իբրահիմբեկովը պարզապես ակնարկել էր Ղարաբաղի հայկական լինելու հնարավորության մասին, հարցազրույցի մեկ այլ հատվածում էլ նշել էր, որ Բաքվի հայերն աշխատասեր և պրոֆեսիոնալ մասնագետներ էին:

Ադրբեջանական մամուլում առաջացած խիստ բացասական ռեզոնանսը, ըստ ադրբեջանցի արվեստագետի, համակարգվում էր նախագահի աշխատակազմից, մասնավորապես՝ նախագահականի հումանիտար (!) բաժնի ղեկավարի կողմից: «Զերկալո» և «Էխո» օրաթերթերում ծաղրուծանակի ենթարկեցին Ռուստամ Իբրահիմբեկովին: 2004թ. հունիսին նա ժամանեց Բաքու և ասուլիս կազմակերպեց՝ կատարվածի համար պարզաբանումներ տալու նպատակով, բայց նորից ոչինչ չստացվեց: Դիտարկենք ասուլիսի վերաբերյալ Բաքվի մամուլի արձագանքները:

[1] Bbcrussian.com «Рустам Ибрагимбеков: Карабаху в Азербайджане выгодно», 18.05.2004.

«Զերկալո» օրաթերթ, 24 հունիսի 2004թ. «Ռուստամ Իբրահիմբեկովն իրեն սամուրայի տեղ է դրել»

«Ժամանելով՝ «մետրը» պատմության դասեր տվեց լրագրողներիս, երկար պատմելով առանց այդ էլ հայտնի բաներ, ինչպես, օրինակ, այն, որ «Բաքսովետում մշտապես աշխատել է հայ տեղակալ» կամ որ «Ղարաբաղի հայերը շատ նախաձեռնող ժողովուրդ են»: Կռիվ փնտրող լրագրողների այն հարցին, թե իրոք գրողն իրեն թույլ էր տվել այնպիսի ձևակերպում, որ «հայերն իրավասու են Ղարաբաղը համարել սեփական տարածքը», Ռուստամ Իբրահիմբեկովը համարձակ դրական պատասխան տվեց: Ասուլիսի արդյունքը հաստատեց, որ արվեստագետը հեռու է քաղաքականությունից: Հանդիպումը փոխակերպվեց երկուստեք դժգոհությունների: Բացի փոխադարձ մեղադրանքներից, Իբրահիմբեկովը ոչպեն մեկ լրագրողներին մեղադրում էր ոչ կոմպետենտ լինելու մեջ: Իբրահիմբեկովը կամ տառապում է աստեղային հիվանդությամբ, կամ…»:

«Զերկալոյի» բազմակետը, հավանական է, հայերի կողմից կաշառված լինելու ակնարկ էր: Համենայնդեպս, «Բաքիքիլար» կայքում տեսակետ էին հայտնում, թե հնարավոր է՝ Ռուստամ Իբրահիմբեկովին Հոլիվուդում աջակցություն է խոստացել հայկական լոբբին:

Իսկ երբ Ռուստամ Իբրահիմբեկովը հայտարարել էր, թե կցանկանար Ռոման Բալայանի հետ նկարահանել նոր ֆիլմ, ադրբեջանցի պատգամավոր և բանաստեղծ (!) Սաբիր Ռուստամխանլին այս առիթով հակադարձել էր, որ «անձնապես իր համար ամեն մի հայ թշնամի է»[1]: Ադրբեջանական բոլոր լրատվամիջոցներում Իբրահիմբեկովին հիմնավորապես սևացնելու ընթացքում ադրբեջանցի լրագրողները գոնե մեկ անգամ, ըստ հրապարակումներից ստացված տպավորության, չգիտակցեցին, որ գործ ունեն արվեստի աշխարհում Ադրբեջանը ներկայացնող ամենակարկառուն համաշխարհային դեմքի հետ: Ավելորդ չի լինի նկատել, որ Իբրահիմ-

[1] «Пропаганда антипропаганды против…», 26.01.2009, www.yerkramas.org

բեկովը համաշխարհային համբավ ունեցող միակ մշակութային գործիչն է, որը ներկայանում է «ադրբեջանցի»: Ադրբեջանցի այլ արվեստագետներին (Կարա Կարաև, Ուզեիր Հաջիբեկով, Սամեդ Վուրղուն) որպես համաշխարհային մեծություններ ներկայացնելու ադրբեջանական կողմի բոլոր փորձերն առանձնապես համոզիչ չեն. այս անունները զուցե հայտնի են միայն նեղ մասնագետներին: Ռուստամ Իբրահիմբեկովին խարազանեցին ճշմարտությունը բարձրաձայնելու համարձակության համար: Թերևս, կարելի է զուգահեռներ տեսնել Իբրահիմբեկովի և աշխարհահռչակ թուրք գրող Օրհան Փամուքի միջև:

Ադրբեջանական լոբբինգի զարգացման ուղղությամբ կատարված աշխատանքին զուգընթաց, ադրբեջանցի լոբբիստները սկսել են հայտարարություններ անել, թե իրականում հայկական սփյուռքի ներուժը գերագնահատվել է և հայկական ուժեղ լոբբինգի մասին երբեմնի խոսակցություններն անտեղի էին: Սա նաև հոգեբանական ենթատեքստ ունի. ադրբեջանական իշխանությունները ձգտում են սեփական ժողովրդին համոզել, թե Ադրբեջանը Հայաստանից ավելի զորեղ է բոլոր առումներով, և լոբբինգի ուղղությունը բացառություն չէ: Հայկական սփյուռքի վերաբերյալ նման հայտարարությունները «մեկ գումարտակով մինչև Երևան հասնելու» (խորհրդարանի անդամ Էլման Մամեդովի հայտարարությունը 2008թ. փետրվարի 21-ին, *www.day.az*) կամ «25-30 տարի անց Հայաստանը քաղաքական քարտեզից ջնջելու» (Ադրբեջանի ՊՆ նախկին խոսնակ Ռամիզ Մելիքովի հայտարարությունը 2004թ. օգոստոսի 14-ին, *www.zerkalo.az*) ելույթների հետ նույն համատեքստում են:

Մասնավորապես, Եվրոպայի ադրբեջանցի ուսանողների ֆորումի ղեկավար Էմին Միլին 2007թ. տարեվերջին հայտարարեց. «Ցանկանում եմ նշել, որ իրականում Ադրբեջանում ստեղծվել է պատրանք հզոր հայկական լոբբիի մասին: Ադրբեջանի լրատվամիջոցներում, տարբեր խորհրդաժողովներում քննարկումների ժամանակ մենք միշտ խոսում ենք հայկական սփյուռքի ուժի մասին: Ես կարծում եմ, որ հայկական լոբբիի հզորության մասին խոսակցությունն օճառի պղպջակ է: Հայկական լոբբին իրականում մի քա-

նի կառույց է»[1]:

Պետկոմիտեի նախագահ Նազիմ Իբրահիմովը 2006թ. հուլիսի 6-ին «Ոչ մի հայկական հզոր ուժ գոյություն չունի» հրապարակման մեջ նշում է. «Պարզապես մինչև վերջերս հայերը տեղեկատվական դաշտում միայնակ էին գործում, իսկ մենք ոչինչ չէինք անում: Դրանից էլ մեզ թվում էր, թե մենք անզոր ենք իրենց հանդեպ: Հիմա վիճակը սկսել է փոխվել»[2]: Իսկ Պետկոմիտեում ՌԴ ուղղության պատասխանատու Շաքիր Սալիմովի կարծիքով՝ «ՌԴ ադրբեջանական համայնքը տասնապատիկ ավելի ուժեղ է, քան հայկական համայնքը»[3]: Հավելենք նաև, որ դրա հետ մեկտեղ Ադրբեջանի գնահատականներում առկա է հակասականություն: Ադրբեջանի ԱԳՆ խոսնակ Խազար Իբրահիմը համարում է, որ «հայկական սփյուռքը աշխարհի ուժեղագույն համայնքային կառույցներից է»[4]: «Եթե որպես մրցում դիտարկենք Հայաստանին ամերիկյան օժանդակության տրամադրումը, ապա Հայաստանը վաղուց է հաղթանակել, քանի որ 1992-2007թթ. Հայաստանն ԱՄՆ-ից 2 մլրդ դոլարի օգնություն է ստացել (1.745.930.000), իսկ Ադրբեջանը՝ մեկ միլիարդով պակաս (743 400 000)»,- միջազգային կայքում գրում է վերլուծաբան Ջեսիքա Փոուլի Հեյդենը[5]:

Որպես ամփոփում նշենք, որ ըստ անձնական դիտարկումների՝ հայկական սփյուռքի ռեսուրսների մեկտեղման, պետական համակարգված աշխատանքի, այս գործում մասնագետ կադրեր ներգրավելու, որոշակի արդիականացման ու վերակազմավորման պարագաներում հայկական սփյուռքն ունակ է այնպիսի ուժ դրսևորել, որ ադրբեջանական կողմի նման հայտարարությունները հենց ադրբեջանցիների համար բնավ համոզիչ չեն հնչի…

---

[1] Эмин Милли: «Армянское лобби – это несколько организаций, которые заполняют информационный вакуум, будь то в Европе, США или в любой другой точке мира», *www.day.az,* 30.12.2007.

[2] «Назим Ибрагимов: Никакой мощной армянской силы не существует», *www.zerkalo.az,* 06.07.2006.

[3] Шакир Салимов: «Азербайджанская диаспора в России не нуждаеться в помощи армянской диаспоры для решения стоящих перед ней задач и проблем», *www.day.az,* 24.02.2008.

[4] «Дипломатическим представительствам Азербайджана за рубежом поручено усилить пропаганду», www.trend.az, 19.05.2007.

[5] Азербайджан: организация диаспоры пытается противодействовать влиянию армяно-американского лобби в Вашингтоне, 08.05/2009, *www.russian.eurasianet.org.*

Համաեվրոպական և համաշխարհային ադրբեջանական կառույցները

Ադրբեջանը լոբբիստական աշխատանքի ակտիվացման նպատակով իրականացնում է «աշխարհասփյուռ» ադրբեջանցիների հավաքներ: 2004թ. ապրիլի 24-ին (ուշադրություն դարձնենք ամսաթվին) Բեռլինի «Հիլթոն» հյուրանոցում տեղի ունեցավ Եվրոպայի ադրբեջանական կոնգրես (ԵԱԿ) կազմակերպության հիմնադիր ժողովը: Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելառուսի, Գերմանիայի, Շվեդիայի, Իսպանիայի, Չեխիայի, ընդհանուր առմամբ 19 եվրոպական պետությունների ներկայացուցիչների, թուրք-ադրբեջանական պաշտոնյաների, լրագրողների մասնակցությամբ գերմանաբնակ թուրք գործարար Բահադին Քայան ընտրվեց կառույցի նախագահ, Ռուսաստանն ու Ուկրաինան ներկայացնող Նաթիկ Աղամիրովը և Օքթայ Էֆենդիևը՝ փոխնախագահներ: ԵԱԿ կենտրոնակայանը հաստատվեց Բեռլինում[1]: Ավելի ուշ Աղամիրովը փոխարինեց նախագահ Քայային: Ըստ որոշ տեղեկությունների, Բահադին Քայայի աշխատանքից լուրջ դժգոհություններ էին ծագել: Գերմանիայի «Նիզամի Գյանջևի» կենտրոնի ղեկավար Նուրիդա Աթեշիի խոսքով՝ «Թուրքիայի քաղաքացուն ԵԱԿ ղեկավար նշանակելը շատ սխալ որոշում էր, եթե նոր նախագահը շարունակի նրա ճանապարհով, դա ոչ մի օգուտ չի բերի ադրբեջանական դիասպորային»[2]: Աղամիրովի փոխնախագահներն էին գերմանաբնակ Նուսրեթ Դելբեստը և Հոլանդիայից Գյուլսեն Քյազիմովան: Վերջինս նաև ադրբեջանցի կանանց միավորող «Անա Վաթան» կառույցի ղեկավարն է, իսկ նախագահ Աղամիրովը միաժամանակ Համառուսաստանյան ադրբեջանական կոնգրես կազմակերպության փոխնախագահն է[3]: ԵԱԿ կառույցի կենտրոնական խորհուրդը բաղկացած է 103, գործադիր կոմիտեն՝ 27 անդամից:

2007թ. մարտին Բաքվում ԵԱԿ 2-րդ համագումարին մասնակցում էին 30-ից ավելի երկրների 84 ադրբեջանական միություններ[4]: 2009-ի ապրիլի 14-ին Ֆրանկֆուրտում տեղի ունեցավ Եվրո-

[1] Учрежден Конгресс азербайджанцев Европы», «Эхо», www.echo-az.com, 27.04.2004.
[2] Nuridə Atəşi: «Məhəmməd Əsəd bəy Almaniya ilə Azərbaycan arasinda ilk mədəniyyət köprüsünü yaradan insandır», 03.11.2007, *www.euxeber.com*
[3] "Avropa Azərbaycanlıları konqresinin II qurultayı keçirilmişdir", www.diaspora.az, 16.03.2007.
[4] Նույն տեղում:

պայի ադրբեջանցիների 3-րդ համաժողովը, որի ընթացքում նախագահ ընտրվեց Վաշար Քյոմուրը, փոխնախագահ՝ Սամիրա Փաթցեր Իսմայիլովան[1]: Եվրոպայի ադրբեջանցիների հաջորդ հավաքը տեղի կունենա 2011թ. եվրոպական պետություններից մեկում, հնարավոր է՝ Հունգարիայում:

Ներկայում ԵԱԿ անդամ են մոտ 40 ադրբեջանական կազմակերպություններ: Կառույցը լծված է ադրբեջանամետ քարոզչության գործին. երբ 2009-ից շրջանառության մեջ հայտնվեցին հայ-թուրքական սահմանի վերաբացման վերաբերյալ տեղեկություններ, կազմակերպությունը նախ ապրիլին, ապա հոկտեմբերին դեմ արտահայտվեց սահմանի վերաբացմանը[2]:

Առավել խճողված են Աշխարհի ադրբեջանցիների կոնգրեսի (ԱԱԿ) գործերը: Կառույցը հիմնվել է 1997թ.: Սկզբնական փուլում այն առավելապես կենտրոնացած էր Իրանի ադրբեջանցիների իրավունքների խնդրի վրա: Առայսօր կոնգրեսը հաճախ նորություններ է տարածում Իրանի ադրբեջանական համայնքի կացության, նրանց գործունեության, իրանական պետության հետ «կոնֆլիկտների» մասին: ԱԱԿ-ն նաև դժգոհություն հայտնեց 2009թ. Իրանում հետընտրական շրջանում տեղի ունեցած բախումների առիթով: Պետք է ենթադրել, որ կազմակերպությունը վայելում է նաև Արևմուտքի կուլիսային հովանավորությունը:

Սկզբից ի վեր կառույցի գործունեության անբաժան ուղեկիցն են սկանդալային պառակտումները: Առաջին ղեկավար Ջավադ Դերահթին խստորեն քննադատվեց, և կոնգրեսը մասնատվեց 2 թևի: Մեկը շարունակում էր ղեկավարել Ջավադ Դերահթին, մյուսը՝ Մուհամեդ Ռզա Հեշտին: Դերահթին համագործակցում էր Բաքվի հետ, Հեշտին՝ ոչ: Ընդ որում, անջատված թևի՝ Հեշտիի խմբակում ևս հակասություններ ծագեցին. Հեշտիի առաջին տեղակալը հրաժարական ներկայացրեց: Մոտ 10-ամյա վայրիվերումներից հետո, 2008թ. հունիսին տեղի ունեցավ ԱԱԿ 10-րդ նիստը, որի ժամանակ Քյոլնում ընթանում էր պառակտված մի թևի՝ մեծամասնության, իսկ Բրյուսելում, Եվրախորհրդարանի շենքում, մյուս

[1] «Четвертый съезд КАЕ состоится в 2011году», *www.day.az,* 15.04.2009.

[2] «Азербайджанская и турецкая диаспоры дали оценку турецко-армянскому сближению», *www.day.az,* 23.11.2007.

թևի՝ փոքրամասնության ժողովը: «Բոլշևիկները» «մենշևիկներին» խորհուրդ տվեցին փոխել անունը՝ նշելով, որ այլ անվամբ հանդես գալու պարագայում հեռանկարում հնարավոր է գործակցություն, հակառակ դեպքում սպառնալով դատական հետապնդում սկսել[1]: «Մենշևիկներն» անտեսեցին նախկին գործընկերների թե՛ խորհուրդը և թե՛ սպառնալիքը և իրենց թևում հաստատեցին համանախագահության սկզբունքը. համանախագահներից մեկը պետք է ներկայացներ Ադրբեջանը, մյուսը՝ հարավային կամ իրանական Ադրբեջանը: Ընտրությունների արդյունքում պաշտոններ ստանձնեցին համապատասխանաբար Փաշա Գելբինուրը (Ադրբեջան) և Մեմեդռզա Խյաշթին (Իրանական Ատրպատական): Իրենց հերթին Քյոլնում, Ադրբեջանցիների համաշխարհային կոնգրեսի մեծամասնական թևում համանախագահներ հաստատեցին կառույցի ակտիվիստ, Քաղաքացիական միաբանության կուսակցության ղեկավար, պատգամավոր, բանաստեղծ Սաբիր Ռուստամխանլիին (Ադրբեջան) և Ֆիրիդուն Փարվիզնիյային (Իրանական Ատրպատական): Սա այն նույն բանաստեղծ Ռուստամխանլին է, որը կինոռեժիսոր Իբրահիմբեկովին ուղղված նամակում նշել է, թե «անձամբ իր համար ամեն մի հայ թշնամի է»: Կառույցի քարտուղարության նախագահ Սամիր Ասադլին ևս Քաղաքացիական միաբանության կուսակցության անդամ է, Ռուստամխանլիի կուսակիցը: Նախատեսվում է կոնգրեսի ենթակառույցում ձևավորել Հարավային կոմիտե, որը կզբաղվի իրանական Ադրբեջանի հարցերով, և Լեռնային Ղարաբաղի կոմիտե[2]:

Վերջին շրջանում կառույցի ուշադրության առանցքում է նաև Վրաստանը: 2009թ. մարտին Վրաստան այցելեցին «բոլշևիկ» համանախագահներ Ռուստամխանլին և Փարվիզնիյան, կառույցի խորհրդի նախագահ Աջար Թաղիզադեն և կառույցի վարչության անդամ Սաֆար Ռաղիմլին: Նրանք ծանոթացան վրացաբնակ ադրբեջանցիների հիմնախնդիրներին և, ըստ ադրբեջանական աղբյուրների, այս առիթով հանդիպումներ ունեցան վրացի պաշտոնյաների հետ[3]: ԱԱԿ համաադրբեջանական դրսևորումներից էր նաև Բաքվում

[1] «Предотвращение деятельности КАМ не будет допущено», *www.stars.ru,* 25.06.2008.
[2] Նույն տեղում:
[3] «Сопредседатели КАМ ознакомились с проблемами азербайджанцев, проживающих в Грузии», *www.day.az,* 17.03.2009.

չինական դեսպանատան մոտ տեղի ունեցած բողոքի միջոցառումը Չինաստանի ույղուրական համայնքի ներկայացուցիչների հետ կառավարական ուժերի բախումների ընթացքում: Հետաքրքիր է, որ սև ծաղկեպսակ թողնելով Բաքվում չինական դեսպանատան առջև՝ կառույցի քարտուղար Ասադլին հայտարարեց, որ «իրենք աջակցում են ույղուրների՝ հանուն անկախության մղված պայքարին»[1]: Ընդհանրապես, Հայաստանին տարածքային պահանջներ առաջադրելու հարցում մշտապես մեղադրող ադրբեջանցի հասարակական-քաղաքական մի շարք գործիչներ, թերևս, լավ կլիներ, որ հաշվեին, թե քանի երկրների տարածքային ամբողջականություն չեն հարգում հենց Ադրբեջանում՝ Հայաստան, Վրաստան, Իրան, Չինաստան, ինչ-որ առումով՝ նաև… Թուրքիա: Օրինակ, *iravan.az* կայքի գլխավոր էջին… Արարատի նկարն է: Կայքը պատմականորեն հավակնում է հայկական Երևանին և Արարատին, իսկ քաղաքական առումով՝ նաև մերօրյա Թուրքիայի արևելքին…

ԱԱԿ գործունեությանն ուշադիր հետևում են Իրանում: Իրանական «Սեհեր» հեռուստաալիքի եթերում ԱԱԿ «բոլշևիկ» համանախագահ Սաբիր Ռուստամխանլիին անվանել էին «ապաշնորհ բանաստեղծ», որն անձնական նպատակներով վատնում է ԱԱԿ փողերը:

ԱԱԿ-ն իր հերթին զայրացած հայտարարեց, թե «Սեհերը» նման ելույթով խախտում է ԱԱԿ կանոնադրությունը: Իսկ ընդհանրապես, ի՞նչ կապ ունի իրանական «Սեհեր» հեռուստաընկերությունն ԱԱԿ կանոնադրության հետ՝ հարցնում է հայ հրապարակախոսը «Երկրամաս» հանդեսի հրապարակման մեջ և նշում. «ԱԱԿ-ը կոչ է ուղղում Ադրբեջանի Ազգային անվտանգության նախարարությանը և Կապի ու տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանը՝ հետաքննել «Սեհեր» հեռուստաընկերությունից արված զանգերը Ադրբեջանի որոշ քաղաքացիների, ինչպես նաև Ադրբեջանից հեռուստաալիք արված զանգերը»[2]: Եթե կարելի է կալանել Եվրատեսիլ 2009-ին հայ մասնակիցների օգտին քվեարկած քաղաքացիներին, ապա, ինչ խոսք, կարելի է նաև անվտանգության նախարարություն բերման ենթարկել «Սեհեր» զանգահարող «օրինազանցներին»…

[1] «Активисты Конгресса азербайджанцев мира возложили черный венок возле здания посольства Китая в Баку», *www.day.az,* 15.06.2009.
[2] «Пропаганда антипропаганды против…», 26.01.2009, www.yerkramas.org.

ԱՄՆ. «Տեսեք, թե ինչ ակտիվ են հայերը, նույնը պետք է անենք մենք»

Միացյալ Նահանգներում գործում է 16 ադրբեջանական համայնքային հաստատություն, որոնցից 11-ը հիմնվել է 2002-2008թթ., Ադրբեջանի անկախացումից մինչև 2002թ.՝ 4: Մեկ ադրբեջանական համայնքային կառույց՝ ԱՄՆ ադրբեջանական համայնքը *(ASA),* հիմնվել է 1957թ.՝ հանդիսանալով տվյալ ժամանակաշրջանում արտերկրում գործող եզակի ադրբեջանական համայնքային հաստատություններից մեկը: Ինչպես նշվել է, կառույցը հիմնվել է Նյու Ջերսի նահանգում, մուսավաթական Ադրբեջանի հիմնադիր և առաջին վարչապետ Մեմեդ Էմին Ռասուլզադեի և անվտանգության նախարար Նաղի Շեյխզամանլիի որդի Սալեհի կողմից: Որպես հիմնադրման նպատակ նշվում էր «ԱՄՆ-ում բնակվող ադրբեջանցի երեխաների մեջ հայրենասիրական զգացումների դաստիարակությունը, պատմության ուսուցանումը»: Ներկայում *ASA* կենտրոնակայանը գտնվում է Նյու Յորքում, կառույցի ղեկավարն է Թոմրիս Ազերին, որը Սալեհի դուստրն է, նախարար Նաղի Շեյխզամանլիի թոռնուհին[1]:

«Թեև ԱՄՆ ադրբեջանական լոբբին դեռ աճում և զարգանում է, մենք ջանքեր ենք գործադրում, որպեսզի նույնքան կարևոր լինենք, որքան հրեական կամ թուրքական լոբբիները: Որպես ամերիկաբնակ ադրբեջանցիներ մենք աշխատում ենք տարբեր հարթություններում կարևոր կապեր հաստատել ԱՄՆ իշխանությունների և դաշնային կառավարության ճյուղերի հետ: Զգտում ենք կառուցել ուժեղ և ազդու լոբբի, որը համեմատելի և արդյունավետ կլինի, ինչպես ԱՄՆ մյուս էթնիկ միությունները»,- նշում է Ազերին[2]: Վերջին մասում Ազերին տողատակում ակնհայտ խոսում է հայկական համայնքի մասին: Ամերիկահայության հետ մրցակցելու թեմայով 2008թ. փետրվարի 25-ին Նյու Յորքի թուրքական հյուպատոսությունում կազմակերպված արարողությանը Ազերին

[1] Tomris Azeri: "ATAA's Component Associations: Azerbaijan Society of America - ASA", "The Turkish Times", June 15, 2002.
[2] Նույն տեղում:

նշել էր. «Տեսեք, թե ինչպես են կազմակերպված ԱՄՆ հայերը. 2 միլիոնանոց հայ համայնքի 50 հազարն են ակտիվ, որոնք կարողանում են իրենց ձայնը լսեցնել ողջ աշխարհին: Նույնը պետք է կարողանան անել նաև թուրքերը»[1]: 2006թ. գարնանը Ադրբեջանում տեղի ունեցած Աշխարհի ադրբեջանցիների 2-րդ համագումարին Ադրբեջանի նախագահը Փառքի շքանշան է հանձնել *ASA* ղեկավար Ազերիին[2]:

ASA կազմակերպության նախաձեռնությամբ կյանքի է կոչվել Գյանջայի և Նյու Ջերսի նահանգի Նյուարքի քույր քաղաքներ դառնալու նախաձեռնությունը: Թոմրիս Ազերին ինքը Նյու Արքի բնակիչ է: *ASA*-ն Ադրբեջանի անկախության օրը Նյու Յորքում անց է կացնում միջոցառում: Սակայն, ըստ ստացված տպավորության, վերջին շրջանում *ASA*-ն պաշտոնական Բաքվի հետ կապերի տեսանկյունից փոքր-ինչ լուսանցքում է մնում: Նախիջևանյան կլանին առավել սերտ են ԱՄՆ-ադրբեջանական խորհուրդ կազմակերպությունը *(AAC)* և ԱՄՆ-Ադրբեջան առևտրային պալատը *(USACC), USAN*-ը:

2007թ. գրանցվեց ԱՄՆ ադրբեջանցիների ցանց *(US Azeris Net work-USAN)* կազմակերպությունը, որը գործունեությունը ծավալեց 2008թ. հունվարի 1-ից *(www.usazeris.org):* Կառույցի գործադիր տնօրեն, քաղաքական գիտությունների դոկտոր Ադիլ Բաղիրովը 2008թ. փետրվարին նշեց. «Ընդամենը մեկ ամսում *USAN*-ը ուղարկել է 8 հազար նամակ, ֆաքս և *email:* Դա ավելի մեծ ցուցանիշ է, քան ադրբեջանցի-ամերիկացիները գրել են բոլոր նախորդ տարիների ընթացքում միասին վերցրած»[3]: 2009-ին արդեն *USAN* անդամները 1345 նամակ են ուղարկել Կոնգրեսի անդամներին՝ երախտագիտություն հայտնելով Ադրբեջանին հատկացվելիք օժանդակության համար և 8000-ի չափ նամակ Կոնգրեսի զույգ պալատների Ֆինանսական հատկացումների կոմիտեների անդամներին: Մինչև այդ, *USAN* գործադիր տնօրենի անունից նամակներ են ուղարկվել Կոնգրեսի աշխատակազմի գրեթե բոլոր աշխատակիցներին՝ բո-

[1] «Tokat gibi cevap», «Tercuman», 25.02.2008.
[2] www.ataa.org
[3] www.day.az, 11.02.2008.

ղոքներ հայտնելով հայկական լոբբիի գործողությունների առիթով[1]: «Մենք կարող ենք շատ արդյունքների հասնել և ոտք գցել նույնիսկ այնպիսի հզոր մրցակիցների հետ, ինչպիսին հայկական համայնքն է և իր լոբբին»,- նշել է Բաղիրովը[2]:

Նախկինում *USAN* վարչության անդամ էր նաև Թոմրիս Ազերին, սակայն ներկայում կառույցի կայքում նրա անունը բացակայում է: *USAN* վարչության անդամներ են ԱՄՆ-ում Ադրբեջանի առաջին դիվանագիտական ներկայացուցիչ (1992-1993) Ջեյհուն Մոլազադեն, որը նաև *AAC*-ի կառույցի նախագահն է, գործարար Ազեր Թեբրիզլին, որը ծագումով իրանական Ատրպատականից է և *USAN* ներկայացուցիչն է ԱՄՆ արևմուտքում և կենտրոնական շրջաններում, Տեխասում բնակվող բժշկուհի Նիգյար Ղասիմովան, լոբբիստներ Յուսիֆ Բաբանլին, որը զուգահեռ *AAC* գործադիր տնօրենն է, և Բեդիր Մեմեդլին[3]: Ղեկավար Ադիլ Բաղիրովը ԱՄՆ քաղաքացի է, *МГИМО*-ի և Հարավային Կալիֆոռնիայի համալսարանի շրջանավարտ: 90-ականներին հիմնել էր «Հաբարլար», ավելի ուշ՝ «Ենի Դոսթլար» լրահոսը, որն էլեկտրոնային տեղեկություններ էր տարածում ադրբեջանա-թուրքական համայնքների համար, նաև *www.virtual azerbaijan.com* (ապա) տեղեկատվական և *www.turkica.com* սոցիալական շփման կայքերը: Բաղիրովը 2008թ. հուլիսին գերմանաբնակ համայնքային գործիչ Իբրահիմխալիլ Բալանի, Նիդեռլանդներից Սահիլ Ղասիմլիի, այն ժամանակ Բուդապեշտում գործող Վուգար Սեիդովի հետ միասին հիմնեց միություն, որն աջակցում էր Իլհամ Ալիևի վերընտրվելուն 2008թ. հոկտեմբերի նախագահական ընտրություններին[4]:

2008թ. *USAN* նախաձեռնությամբ Վաշինգտոնում տեղի ունեցավ «Դիասպորայի դերը Վաշինգտոն-ԱՄՆ ռազմավարական

[1] Адиль Багиров: «Если армяне добьются восстановления действия 907 поправки, это ударит не только по Азербайджану, но и по самой Армении», *www.day.az,* 29.06.2009.

[2] «Азербайджан: организация диаспоры пытается противодействовать влиянию армяно-американского лобби в Вашингтоне», 08.05/2009, *www.russian.eurasianet.org.*

[3] http://www.usazeris.org/index-3/106.html

[4] «Создана диаспорская группа азербайджанцев для выдвижения кандидатуры Ильхама Алиева на президентсткие выборы», 03.07.2008, www.day.az

գործընկերային հարաբերությունների զարգացման գործում» խորհրդաժողովը:

Ըստ *usazeris.org* կայքի, *USAN* նպատակային դրույթներն են.

1. Կառույցը նախատեսում է ստեղծել ամերիկաբնակ ադրբեջանցիների մասին տեղեկատվական շտեմարան, որը կլինի «ամբողջական և կոնֆիդենցիալ», ցանկանում է մեծացնել ամերիկաբնակ ադրբեջանցիների քաղաքական ակտիվությունը դաշնային, նահանգային և մունիցիպալ մակարդակներով:
2. Աշխատանք կատարել այն պաշտոնյաների և չինովնիկների հետ, որոնք լիարժեք չեն հասկանում 2 պետությունների միջև ռազմավարական հարաբերությունների կարևորությունը, հաշվի չեն առնում ադրբեջանական ծագմամբ ԱՄՆ քաղաքացիների շահերը:

Այս կետով կառույցն, ըստ ամենայնի, կփորձի աշխատանք տանել Կոնգրեսի հայկական հանձնախմբի և այլ հարթություններում հանդես եկող հայանպաստ գործիչների հետ: Ի դեպ, ուշագրավ է, որ Կոնգրեսի Ադրբեջանական հարցերով հանձնախմբի անդամ Ռենդի Քուիլը նախկինում աջակցում էր Մեծ եղեռնի օրինագծին, սակայն հետ վերցրեց իր ստորագրությունը և 110-րդ գումարման Կոնգրեսում դարձավ «Ադրբեջանի բարեկամ»:

USAN կառույցը նախատեսում է աշխատել նաև նահանգային խորհրդարաններում ադրբեջանամետ «մինի-հանձնաժողովների» ձևավորման ուղղությամբ, աջակցել Ադրբեջանի անդամակցությանը Առևտրի համաշխարհային կազմակերպությանը, Ջեքսոն-Վենիկի հոդվածի վերացմանը: Կառույցի հիմնավոր և հեռահար նպատակներով հանդես գալու վկայություն կարող է համարվել այն, որ *USAN*-ը նախատեսում է նաև «առավելագույն թվով ամերիկացի-ադրբեջանցիներ նախապատրաստել 2010թ. ԱՄՆ-ում տեղի ունենալիք մարդահամարին, որպեսզի այդ ընթացքում առավելագույնս ճշգրիտ նշվեն նրանց ազգային պատկանելությունը, ծննդյան վայրը, հստակեցվի նրանց թիվը»:

Հատկանշական է, որ 2008թ. տարեսկզբին, երբ Բարաք Օբա-

ման դեռ չէր դիտվում որպես ԱՄՆ նախագահի հավանական ֆավորիտ թեկնածու և տանուլ էր տալիս նախնական ընտրություններում, *usazeris. org* կայքն արշավ էր տանում նրա դեմ: Կայքում տեղադրվեց 2 նամակ, որոնցում դատապարտում էին սենատոր Օբամային Ղարաբաղի ինքնորոշման օգտին և Մեծ եղեռնը ճանաչելու վերաբերյալ իր արտահայտությունների համար: Առաջինում նշված էր, թե «Օբամայի հայտարարությունները վիրավորում են բոլոր ամերիկաբնակ ադրբեջանցիներին և թուրքերին ու ԱՄՆ դաշնակիցներ Ադրբեջանին և Թուրքիային»: Ադրբեջանցիները նույնիսկ ուսուցողական բնույթի արտահայտությունների էին անցել՝ նշելով, թե «Օբամայի մոտեցումները փաստում են նրա անփորձությունը և դատողությունների մակերեսայնությունը, ինչպես նաև ներքին և արտաքին քաղաքական հարցերով խորհրդականների ոչ պրոֆեսիոնալիզմը»: Հայաստանի հանդեպ թուրք-ադրբեջանական շրջափակման առիթով Օբամայի քննադատական մոտեցումներին ամերիկաբնակ ադրբեջանցիներն առավել ուշագրավ պատասխան էին շարադրել. պարզվում է, ըստ ադրբեջանական կողմի, Հայաստանը նույնիսկ շրջափակման մեջ չէ, իսկ, օրինակ, Նախիջևանը շրջափակված է արդեն մոտ 20 տարի:

«Չկա Ադրբեջանի կամ Թուրքիայի կողմից Հայաստանի և ոչ մի շրջափակում, դա պարզապես տնտեսական պատժամիջոց է: Մինչդեռ Հայաստանը, իրոք, 1989-ից շրջափակել և նույնիսկ մասամբ գրավել է Նախիջևանի տարածքը, որը 300 հազարանոց բնակչությամբ ադրբեջանական էքսկլավ է»,- հորինել էին կայքի աշխատակցիները[1]:

Յուրատեսակ է կառույցի ֆինանսավորման եղանակը. այն, ըստ ադրբեջանական կայքի, գոյանալու է ամերիկաբնակ ադրբեջանցիների նյութական նվիրատվությունների հաշվին: Միաժամանակ, ադրբեջանցի քաղաքագետի խոսքով՝ 2000 դոլարից մեծ նվիրատվություններ չեն ընդունվելու՝ կառույցի անկախությունը չվտանգելու համար: Ընդ որում, կախված նվիրատվության չափից, *USAN*-ն իր բարերարներին շնորհելու է տիտղոսներ՝ «աթաբեկ»,

[1] «Кампания против кандидата Барака Обамы», «Эхо», 29.01.2008.

«բեյլերբեյ», «խան» և «մելիք»[1]: Կարելի է ենթադրել, որ կառույցը կֆինանսավորվի նաև Բաքվի գանձարանից, իսկ «աթաբեկների» և «բեյլերբեյերի» նվիրատվությունները կօգտագործվեն արտաքին ֆինանսավորումը կոծկելու նպատակով:

ԱՄՆ-Ադրբեջան. առևտրային պալատ *(United States – Azerbaijan: Chamber of Commerce - USACC)* կազմակերպությունը նույնպես տեղակայված է Վաշինգտոնում: Հիմնադրվել է 1995թ.: Այն զբաղվում է Ադրբեջանում ամերիկյան ներդրումների խրախուսման, բիզնես-զարգացման հարցերով: Ամենամյա կտրվածքով հրատարակվում է Ադրբեջանում ներդրումների ուղեցույց: Կառույցի կայքում տեղադրվում են Ադրբեջանին առնչվող բիզնես նորություններ, *USACC* լինքը ԱՄՆ-ում ադրբեջանական դեսպանատան կայքում է: Կառույցի նախագահն է Սեյմուր Խալիլովը: Առևտրային պալատը մրցանակներ է հանձնում այն պաշտոնյաներին, որոնք նպաստում են Բաքու-Վաշինգտոն հարաբերությունների բարելավմանը: Արդեն մրցանակներ են ստացել Ադրբեջանի վարչապետ Արթուր Ռասիզադեն, ԱՄՆ Էներգետիկայի նախարար Ֆեդերիկո Փենան, Բաքվում ԱՄՆ նախկին դեսպաններ Ռիչարդ Արմիթեջը և Սթենլի Էսկուդերոն, սենատորներ Սեմ Բրաունբեքը, Ռոբերտ Բըրդը, Ռիչարդ Լյուգարը, ԱՄՆ փոխնախագահ, նախկին պաշտպանության նախարար Դիք Չեյնին և այլն[2]: Վերջին 3-ը մրցանակ են ստացել նաև *ATAA*-ից: Ուշագրավ է, որ Սեմ Բրաունբեքը 2010թ. Կոնգրեսում առաջ քաշված Հայոց ցեղասպանության օրինագծի աջակիցներից է[3]:

Վաշինգտոնում է գործում նաև *AAC*-ն՝ Ադրբեջանա-ամերիկյան խորհուրդը *(www.azeris.org):* Կառույցը հիմնվել է ծագումով բաքվեցի, դիվանագետ Ջեյհուն Մոլլազադեի կողմից, որը 1992-1993թթ. Ադրբեջանի առաջին հավատարմատարն էր ԱՄՆ-ում: 1994թ. հիմնվեց *AAC*-ն, իսկ մեկ տարի անց սկսվեց *"Caspian Cross roads"* եռամսյայի թողարկումը[4]: Կազմակերպությունը Բերքլիի համալսարանի թուրքական ուսանողական միության հետ թողար-

[1] www.day.az, 11.02.2008
[2] "USACC Freedom Support Award", www.usacc.org
[3] "Eastern, Central European Coalition Supports Genocide resolution", "The Armenian Mirror Spectator" http://www.mirrorspectator.com, 07.02.2010.
[4] http://www.echo-az.com/board/steno/steno48.htm

կում է «Բիրլիք» հանդեսը[1]: *AAC*-ն գրասենյակներ ունի նաև Կալիֆոռնիայում, Քոնեկտիքուտ և Տեխաս նահանգներում:

Ադրբեջանական կողմի համար համեմատաբար դյուրին է աշխատել Տեխասում, ուր առկա են նավթի պաշարներ, հայկական ներկայությունն էլ մեծաթիվ չէ: Տեխաս նահանգի խոշորագույն քաղաք Հյուսթոնը քույր քաղաքների համաձայնագիր ունի 17 քաղաքների հետ, որոնց թվում են Բաքուն և Ստամբուլը: Գործում է *houstonbaku.com* կայքը, աշխատանքները կոորդինացնում է *Houston-Baku Sister City Association* կազմակերպությունը: Քաղաքի Հերման հրապարակում կազմակերպվում են ամենամյա թյուրքական փառատոներ, որոնց մասնակիցն է նաև Ադրբեջանը: Մասնակիցներին հյուրասիրում են սև սուրճ, տոլմա, փախլավա[2]…

Չիկագոյում է գործում «Գյունազ *TV» (Guney Azerbaycan*, Հարավային Ադրբեջան հեռուստաընկերություն) հեռուստաալիքը, ուր աշխատում են գերազանցապես ամերիկաբնակ իրանցի ադրբեջանցիներ և գերազանցապես ուշադրության տակ է պահվում իրանական ադրբեջանցիների թեման, սակայն հեռուստաալիքը հաճախ անդրադառնում է նաև Ղարաբաղյան հակամարտությանը, Իրան-Թուրքիա հարաբերություններին և այլն: Որպես կանոն, «Գյունազ»-ի եթերում Իրանի իշխանություններին մեղադրում են Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հայանպաստ դիրքորոշման համար, որի նպատակը, ըստ քաղաքագետ Արիֆ Քեսքինի, «Ադրբեջանի թուլացումն է»[3]:

ԱՄՆ մյուս ադրբեջանական կառույցներն են.

- ԱՄՆ-Ադրբեջան կրթական և մշակութային հիմնադրամ (Ինդիանա)
- «Միրվարի» միջազգային հիմնադրամ, զբաղվում է Ադրբեջանի երեխաներին օժանդակելու ծրագրերով
- Ադրբեջանի հրեաների միություն (Նյու Յորք)
- Ադրբեջան-ԱՄՆ մշակութային միություն (Նյու Յորք)

[1] http://birlik/paxturcica.org
[2] http://turkicfest.org/
[3] "Iran Karabag sorunu'nda neden Ermenistan'in yaninda", 28.11.2009 www.gunaz.tv

- Ադրբեջանական տուն (Լոս Անջելես)
- Ադրբեջանական մշակութային միություն (Սան Խոսե, Կալիֆոռնիա)
- ԱՄՆ-Ադրբեջան բարեկամության միություն (Անահայմ, Կալիֆոռնիա)
- «Մուղամ» մշակութային կենտրոն (Նյու Ջերսի)
- Միսուրի նահանգի ադրբեջանական համայնք
- ԱՄՆ-Ադրբեջան փոխօգնության հիմնադրամ (Հյուսթոն, Տեխաս)
- Կոլումբիայի համալսարանի ադրբեջանցի ուսանողների միություն, Նյու Յորք
- Ռիվերսայդի Կալիֆոռնիայի պետական համալսարանի ադրբեջանցի ուսանողների միություն
- Նոր Անգլիայի ադրբեջանա-ամերիկյան միություն, *www.azerisociety.org*
- Հյուսիսային Կալիֆոռնիայի ադրբեջանական մշակութային միություն
- ԱՄՆ ադրբեջանցի կանանց միություն, *http://www.azwomenofamerica.org/*[1]

Հատկանշական է, որ ադրբեջանական կազմակերպություններ են գործում հայաշատ Կալիֆոռնիայում: Սույն փաստը, ինչպես նաև այն իրողությունը, որ Լոս Անջելեսում բացվել է ադրբեջանական հյուպատոսություն, խորհելու տեղ են թողնում Կալիֆոռնիայով ադրբեջանական կողմի հետաքրքրության իրական պատճառների մասին:

Հյուպատոսությունը գործում է 2006թ. մայիսից: Այն Բաքվից ամենահեռու ադրբեջանական դիվանագիտական ներկայացուցչությունն է: «Ծածկում» է ԱՄՆ արևմուտքի 13 նահանգներ: Հյուպատոսն է Էլին Սուլեյմանովը: Հյուպատոսության հաստատման պատճառների թվում Սուլեյմանովը նշում է. «Իհարկե, Կալիֆոռ-

[1] Տվյալները՝ ըստ www.diaspora.az կայքի և http://www.usazeris.org/index-3/103.html

նիան ներկայացված է ստվար հայկական համայնքով: Այս պատճառով երկար ժամանակ Կալիֆոռնիայում գերիշխում էին հայկական դիրքորոշումները: Մեր նպատակներից մեկն է ներկայացնել ադրբեջանական մոտեցումները»[1]:

2006թ. հոկտեմբերին Լոս Անջելեսում կազմակերպվեց առաջին ադրբեջանական երիտասարդական ֆորումը: Կալիֆոռնիայում ոչ պարբերական հիմունքներով հրատարակվում է նաև «Ազերբայջան ինթերնեյշընըլ» ամսագիրը:

ԱՄՆ ադրբեջանական կառույցներից ուշագրավ է նաև Նյու Յորքում գործող Ադրբեջանի հրեաների միությունը, որը հիմնականում Բաքվից ԱՄՆ փոխադրված հրեաների միություն է: Ղեկավարն է Յակով Աբրամովը: Նշված կառույցը, թերևս, տեղին է դիտարկել հրեական համայնքային միությունների և բուն Իսրայելի հետ սերտանալու պաշտոնական Բաքվի ձգտման համապատկերում: Ակնհայտ է, որ, մասնավորապես, ԱՄՆ-ում հայկական համայնքի առավելապես ինտեգրված լինելու, ամերիկահայության շրջանում գործող որոշակի ավանդույթների, համահայկական ընդգրկում ունեցող մի շարք կառույցների (Հայ Առաքելական եկեղեցի, ՀՅԴ, ՀԲԸՄ) առկայության պայմաններում Բաքվի, ինչպես նաև Անկարայի համար զգալիորեն բարդանում է հայկական սփյուռքին հակակշռելու գերխնդիրը: Այլ հարց է, որ նշված իրավիճակը, տիպական լինելով որոշ երկրների պարագայում (ԱՄՆ, Կանադա, Ֆրանսիա և այլն)՝ կարող է չգործել այլ պետություններում, որտեղ Թուրքիան և Ադրբեջանն ակտիվանալու հավելյալ հնարավորություն են ստանում:

Որպես ԱՄՆ-ում ադրբեջանական կողմի հակահայ լոբբիստական աշխատանքի հաջողություն պետք է դիտարկել նաև Նևադայի նահանգապետ Ջիմ Գիբոնսի կողմից 2009թ. մարտի 31-ը որպես «1918-ին զոհված ադրբեջանցիների հիշատակի օր» հռչակելու նախաձեռնությունը: «Նահանգապետը տարածել է հայտարարություն մեր պատմության արյունոտ էջի մասին՝ պատասխանելով

[1] Armenian viewpoints dominated information about Azerbaijan in California for a long time, 19.02.2007, www.apa.az

USAN-ի միջոցով իրենց հասցեագրված տասնյակ նամակներին: Հայտարարության ի հայտ գալու գործում մեծ է *USAN* նահանգային ակտիվիստ Բոբ Գյունեի դերը»,- գրում է լոբբիստ Բաղիրովը[1]: Ուշագրավ է, որ երբ հայտարարության հրապարակման օրը ԱՄՆ-ում գործող հայկական լրատվամիջոցների ներկայացուցիչները զանգահարեցին նահանգապետի գրասենյակ, այնտեղ որևէ տեղեկություն հիշատակի օրվանից չունեին: Նահանգապետարանի *nv.gov* պաշտոնական կայքում չկար և այդպես էլ չհայտնվեց նահանգապետի խոսքը: Այն տեղադրվեց միայն ԱՄՆ ադրբեջանական կայքերում. Գիբոնսն ակնհայտ խուսափում էր հնչեղությունից:

Ներկայացնենք Լոս Անջելեսի հայկական հյուպատոսության աշխատակցուհի և լրագրող Նաիրա Մանուչարովայի հրապարակումը. «Զանգահարելով Գիբոնսի գրասենյակ՝ մենք հետաքրքրվեցինք, թե ինչ հայտարարություն է ընդունել նահանգի ղեկավարը մարտի 31-ի առիթով: Նահանգապետի գրասենյակում, ի զարմանս մեզ, տեղյակ չէին ոչ միայն հայտարարությունից, այլ նաև Ադրբեջանից: Լսելով Ադրբեջան բառը՝ աշխատակցուհին հարցրեց. դա, ինչ է, Հնդկաստանո՞ւմ է: Ստիպված էինք բացատրել, որ Ադրբեջանն այնքան էլ Հնդկաստանում չէ, այլ Կովկասում, Կասպիցի հատվածում, Թուրքիային մոտիկ: Այնուհետև խնդրեցին տառ առ տառ արտասանել անհայտ երկրի անունը և աղբյուրը»[2]: Ադրբեջանական աղբյուրներն ակնհայտ աղավաղել էին իրողությունը: Մասնավորապես, *day.az* հանգույցի ապրիլի 1-ի հաղորդագրությունը վերնագրված էր «Ամերիկյան Նևադա նահանգում սուգ է հայտարարված ադրբեջանցիների ցեղասպանության առիթով», մինչդեռ սուգ հայտարարելու մասին խոսք չկար, հայտարարության մեջ նշված չէր նաև «ցեղասպանություն» եզրը: Դժվար է պատկերացնել, որ Նևադայի նման նահանգում, ուր գտնվում է հանրահայտ Լաս Վեգասը, սուգ հայտարարվի ադրբեջանցիների համար:

Երբ ԱՄՆ Հայ դատի գրասենյակը և ՀՀ դիվանագիտական

[1] «Губернатор штата Невада стал первым официальным лицом в США, официально признавшим 31 марта днем памяти», Бакинский рабочий, 01.04.2009.

[2] «Как азербайджанцы дописали за губернатора Невады прокламацию», «Новое Время», 04.04.2009, *www.nv.am*

շրջանակները հակազդելով Գիբոնսին՝ նահանգապետարան ներկայացրին նաև ամերիկյան «Նյու Յորք թայմսի» արխիվային հրապարակումները, որոնք ոչ միայն հակասում էին ընդունված հայտարարության տրամաբանությանը, այլև փաստում էին ճիշտ հակառակը, *USAN*-ն իր հերթին կոչ արեց ադրբեջանցիներին նամակներ գրել Գիբոնսին՝ երախտիք հայտնելով կատարած քայլի համար[1]: Թեև քիչ հավանական է, որ *USAN* նախաձեռնությունն արդյունավետ լիներ: Համենայնդեպս, հայտնի է, որ երբ *ACC*-ն նախաձեռնեց *change.org* կայքում ստորագրահավաք սկսել Խոջալիի դեպքերի ամերիկյան ճանաչման համար, շուրջ մեկ ամսվա ընթացքում արձագանքեց… 200 քաղաքացի: Դա մոտ կրկնակի պակաս էր նույն կայքում հանուն Հայոց ցեղասպանության ամերիկյան ճանաչման ընդամենը մեկ օրում ստացվող արձագանքներից:

Նշենք, որ Լոս Անջելեսի ադրբեջանական հյուպատոսությունը շարունակում է աշխատանք տանել Նևադայի հետ ջերմ հարաբերություններ պահպանելու ուղղությամբ: 2009թ. նոյեմբերին հյուպատոսության պատվիրակությունը կրկին այցելել էր Նևադա[2]:

Մի քանի խոսք այն մասին, թե ով է նահանգապետ Գիբոնսը:

2005-ին նա գրագողություն կատարեց. Նևադայի Էլկո քաղաքում ունեցած նրա ելույթն իրականում ալաբամացի քաղաքական գործիչ Բեթ Չափմանի «Ոտքի, Ամերիկա» ելույթի կրկնությունն էր[3]: Գիբոնսը զանգահարել էր Չափմանին և ներողություն խնդրել: Այնուհետև բաժանվեց կինը՝ Դոն Գիբոնսը, քանի որ նահանգապետն արտամուսնական սիրային կապ էր ունեցել «Փլեյ բոյ» ամսագրի մոդելի հետ[4]: Գիբոնսը նաև մեղադրվել է հետաքննություններին միջամտելու, սեռական ոտնձգությունների, եկամուտները թաքցնելու, նահանգի շրջակա միջավայրին վնաս հասցնող նախագծերին համաձայնություն տալու, կաշառակերության մեջ: Վերջին միջա-

[1] «Армяне атакуют губернатора Невады из-за провозглашения 31 марта Днем памяти азербайджанцев», *www.day.az*, 04.04.2009.

[2] «Сотрудники генконсульства Азербайджана в Лос-Анджелесе выступили в штате Невада», 23.11.2009, 1news.az

[3] "Gibbons speech plagiarism", 04.03.2005, "The Las Vegas Review Journal".

[4] "Nevada Governor affair allegations: Jim Gibbons accused by wife of Affair with former playboy model", The Huntington Post, 06.04.2009.

դեպը հայտնվել է նաև «Նյու Յորք թայմսի» էջերում: Գիբոնսը *NBC* հեռուստաալիքի կողմից ճանաչվել է որպես «մոլորակի ամենավատ մարդ»: Ինտերնետում գործում է Գիբոնսին պաշտոնանկ անելուն ուղղված բլոգ՝ *www.votegibbonsout.com,* համապատասխան խումբ կա «Ֆեյսբուքում», իսկ «Փոլիթիքս դեյլի» հանդեսը նրան որակել է որպես «ԱՄՆ ամենավատ նահանգապետ»[1]:

2004թ. մարտի 25-ին ԱՄՆ Կոնգրեսում գրանցվեց Ադրբեջանի հարցերով հանձնախումբը, որը կոչվում է Ադրբեջանի բարեկամների խումբ: Համանախագահներն էին դեմոկրատական Սոլոմոն Օրթիսը (Տեխաս) և հանրապետական Քուրթ Ուելդոնը (Փենսիլվանիա), որին ավելի ուշ փոխարինեց նույնպես Փենսիլվանիայից հանրապետական Բիլ Շուսթերը: Մեր արևելյան հարևանը ԱՊՀ տարածքում Հայաստանից և Ուկրաինայից հետո դարձավ 3-րդ հանրապետությունը, որի օգտին Կոնգրեսում ձևավորվեց աշխատանքային խումբ: Գրանցման պահին այն ուներ 8 անդամ: Այնուհետև կառույցի անդամների աճն ունեցավ հետևյալ պատկերը. 2006թ. հունիսին՝ 17 անդամ, 2007թ. մարտին՝ 18, հոկտեմբերին՝ 24, 2008թ. փետրվարի սկզբին նրանց թիվն էր 31, մարտին՝ 37, 2010թ. փետրվարին՝ 41: Նրանցից 26-ը նաև Թուրքիայի հարցերով հանձնախմբի անդամներ են:

Ինչպես նշվել է, 2008թ. փետրվարին միացած Ռենդի Քուիլը ավելի վաղ հանդիսացել է Մեծ եղեռնի օրինագծի ճանաչման աջակիցներից, ապա հետ է կանչել իր ստորագրությունը և դարձել «Ադրբեջանի բարեկամ»: «Կոնգրեսականը միացավ հանձնախմբին այն բանից հետո, երբ համանախագահներ Սոլոմոն Օրթիսը և Բիլ Շուսթերը նամակով դիմեցին իրեն՝ խմբին անդամակցելու առաջարկով»,- նշված էր Ադրբեջանի ԱԳ նախարարության հայտարարության մեջ:

Ուշագրավ է Նյու Յորքից Էդոլֆուս Թաունսի պատմությունը Ադրբեջանի բարեկամների խմբին միանալու մասին: Նովրուզ բայրամի կապակցությամբ 2008թ. մարտի 1-ին Նյու Յորքում ԱՄՆ-Ադրբեջան միության կողմից կազմակերպված միջոցառմանը հրա-

[1] "Jim Gibbons is Americas worst governor", *www.politicsdaily.com,* 06.03.08.

վիրված Էդոլֆուս Թաունսը հայտարարեց, թե նման որոշում է ընդունել ԱՄՆ ռազմածովային ուժերի սպա, էթնիկ ադրբեջանցի Նաիմի Ամիրալիևի և նրա կնոջ՝ Նաիլայի հետ հանդիպելուց հետո[1]: Անկախ այն իրողությունից՝ ադրբեջանցի ծովայինի հետ հանդիպումն, իրոք, առանցքային նշանակություն է ունեցել, թե ոչ, ամերիկյան բանակի ադրբեջանցի զինվորականի ներգրավումը լոբբիստական աշխատանքին խոսուն փաստ է:

Կոնգրեսում ադրբեջանական հանձնախմբի անդամները Խոջալիի իրադարձությունների տարելիցի օրը հանդես են գալիս հայտարարությամբ: Առաջինը Կոնգրեսում Խոջալիի մասին բարձրաձայնել է Դեն Բարթոնը (Ինդիանա նահանգ): 2005թ. փետրվարի 18-ին նա հայտարարել էր, թե «վիճելի Հայոց ցեղասպանությունը ճանաչելու կոչ անող կոնգրեսականները չեն անդրադառնում հայերի կողմից իրականացված ադրբեջանցիների էթնիկ զտումների խնդրին»: Արձանագրենք նաև, որ անցնող 5 տարիների ընթացքում կոնգրեսականներից և ոչ մեկն, այնուհանդերձ, Խոջալիի դեպքերը չի բնորոշել որպես ցեղասպանություն: 2005թ. հունիսին Դեն Բարթոնը ևս մեկ անգամ Ներկայացուցիչների պալատում բարձրաձայնեց ադրբեջանական կեղծ թեզը՝ խոսելով Արցախի պատմական պատկանելության խնդրի շուրջ. «Որքանով ես տեղյակ եմ, Լեռնային Ղարաբաղը երբևէ չի հանդիսացել Հայաստանի բաղկացուցիչը»,- նշել էր անտեղյակ կոնգրեսականը: 2007թ. փետրվարի 15-ին Խոջալիի դեպքերի առիթով խոսեց կոնգրեսական Բիլ Շուսթերը, 2008թ.՝ Սոլոմոն Օրթիսը և Վիրջինիա Ֆոքսը: Օրթիսի ելույթը հագեցած էր հակահայ ձևակերպումներով, կոշտ մեղադրական և կեղծ փաստարկներով ու թվականներով: «Փաստացի դաժանության և սպանդի այն մակարդակը, որ գործադրվեց Խոջալիում, դարձավ նմուշ, որին հայկական ուժերը հետևեցին ԼՂ պատերազմի հետագա ընթացքում»,- հայտարարեց Ադրբեջանի բարեկամը՝ իր ելույթի մնացած մասը ևս համեմելով անստույգ փաստերով և թվերով:

Ադրբեջանական հանձնախմբի առաջնահերթ խնդիրների

[1] «Еще один конгрессмен стал членом рабочей группы США по Азербайджану», *www.day.az,* 17.03.2008.

շարքում է նաև թիվ 907 բանաձևին դիմագրավելը, որն, ինչպես հայտնի է, արգելափակում է ԱՄՆ կառավարական օգնությունն Ադրբեջանին: Փաստաթուղթն ընդունվել է 1992թ., միաժամանակ 2002 թվականից ԱՄՆ նախագահն ամեն տարի, մեկ տարի ժամկետով արգելանք է կիրառում 907-ի հանդեպ: 2009-ին ադրբեջանական լրատվամիջոցները բազմակողմանի տեղեկատվական պրեսինգ ծավալեցին: 907-ի վերջնական վերացման անհրաժեշտության օգտին արտահայտվեցին կոնգրեսականներ Բիլ Շուսթերը, Սեմ Բրաունբեքը, ԱՄՆ-ում Ադրբեջանի դեսպան Յաշար Ալիևը[1]: Շուսթերը նաև դեմ արտահայտվեց Արցախին ամերիկյան պետական օգնության հատկացմանը[2]:

Այս պահի դրությամբ, նրանց ջանքերը լիակատար ձախողման են ենթարկվել, քանի որ նույն 2009-ին ԱՄՆ Կոնգրեսում արտաքին ֆինանսական օժանդակության հարցի քննարկման ժամանակ Հայ դատի գրասենյակի նախաձեռնությամբ հաստատվեց առավել խիստ ձևակերպում 907 բանաձևի վերաբերյալ, որով ԱՄՆ նախագահին կոչ էր արվում 907 բանաձևի հանդեպ մորատորիում կիրառելուց առաջ հարցը քննարկել ԱՄՆ Կոնգրեսի անդամների հետ: Հատկանշական է նաև, որ նախագահ Բարաք Օբաման 2009թ. ընթացքում այդպես էլ չկասեցրեց 907 բանաձևի գործունեությունը, այսինքն՝ զուտ իրավական առումով Բաքուն իրավասու չէ ուղղակի պետական օգնություն ստանալ Վաշինգտոնից:

Ուշադրության է արժանի նաև ադրբեջանական կողմի փորձը՝ ինչ-որ մի դերակատարություն ձեռք բերել Միացյալ Նահանգներում ընթացող նախագահական ընտրություններին: 2004թ. Բաքուն առաջին անգամ փորձեց ձեռնարկել ԱՄՆ ադրբեջանական համայնքի ներգրավումը ընտրական գործընթացին: ԱՄՆ ադրբեջանական համայնքը կողմնորոշվեց դեպի Ջորջ Բուշը: Պատճառը բավական ակնհայտ էր. Ջոն Քերին հստակ հայանպաստ մոտե-

[1] Американский конгрессмен: Рабочая группа по Азербайджану Конгресса призывает аннулировать 907 поправку, www.day.az, 21.07.2009, "Сенатор Сэм Броунбек: Мы не должны предпринимать шаги, вызывающие беспокойство Азербайджана, www.day.az, 08.07.2009, Посол Азербайджана: «Действие 907 поправки на 2009г. приостановлено», 25.06.2009, *www.day.az*

[2] Американский конгрессмен: Выделение денег оккупированным Арменией территориям Азербайджана - это ошибка, 10.07.2009 *www.day.az*

ցումներ ուներ: Նոյեմբերի 3-ի ընտրություններից կարճ ժամանակ առաջ գործարկվեց *www.azerbaijanforbush.com* կայքը: Ժամանակի սղության և փորձառության պակասի պատճառով կայքը և Միացյալ Նահանգներում բնակվող ադրբեջանցիները չհասցրին բավարար աշխատանք կատարել: 2008թ. ընտրություններում պատկերը որակապես տարբերվում էր: Դեռևս նախնական ընտրությունների շրջանում, երբ զույգ կուսակցություններում վիճարկվում էր նախագահի թեկնածուի հարցը, ԱՄՆ ադրբեջանական համայնքը կողմնորոշվեց դեպի հանրապետական Ջոն Մըկ-Քեյնը: Որպես դրա պատճառներ նշվում էին վերջինիս այցն Ադրբեջան, Ցեղասպանության հիմնախնդրում առավել պասիվ դիրքորոշումը դեմոկրատ թեկնածուներ Բարաք Օբամայի և Հիլըրի Քլինթոնի համեմատությամբ: Նաև համարվում է, որ Հանրապետական կուսակցությունը համեմատաբար ավելի շատ է կողմնորոշված դեպի Թուրքիան, Ադրբեջանը, էներգետիկ գործոնը: «Ադրբեջանական համայնքի համար առավել նախընտրելի թեկնածու էր Ջոն Մըկքեյնը, իսկ հայկական կողմի համար, համապատասխանաբար, Բարաք Օբաման»,- նշում էր արևելյան ափին Ադրբեջանի հյուպատոս Էլին Սուլեյմանովը[1]:

Նյու Յորքում բնակվող ադրբեջանցի իրավաբան, հանրապետական Ջոն Վաֆային ձևավորեց Ադրբեջանցիները հանուն Մըկ-Քեյնի շարժումը: Ջոն Չինգիզ Վաֆային իրանական Ատրպատականից է, ըստ ադրբեջանական աղբյուրների՝ սովորել է Թեհրանի համալսարանում, ապա ամերիկյան Հարվարդի և Եյլի համալսարաններում, աշխատել է Ադրբեջանում և Ռուսաստանում:

«Հավատում ենք մեր թեկնածուի հաղթանակին»,- հայտարարել էր Վաֆային[2]: Ընդ որում, 2008թ. նոյեմբերի 5-ի առավոտյան, երբ այս թեմայով հոդվածը լույս տեսավ ադրբեջանական թերթում, նախնական ցուցանիշներով արդեն հայտնի էր, որ թեկնածու Ջոն Մըկ-Քեյնը ԱՄՆ նախագահական ընտրություններում պարտվել է…

[1] Элин Сулейманов: «Если для азербайджанской диаспоры наиболее предпочтительным кандидатом выглядит Джон Маккейн, то для армянской – соответственно Барак Обама», www.day.az, 07.02.2008.

[2] «Азербайджанцы за Джона Маккейна», «Эхо», 05.11.2008.

Նիդեռլանդներ և Բելգիա. առաջին հուշարձանը և առաջին թերթը

2008թ. փետրվարի 24-ին Հաագա քաղաքի Կամպեռֆոելիեստրաատ փողոցում գտնվող Նեու Էյկենդունեն գերեզմանոցի տարածքում տեղի ունեցավ Խոջալիի դեպքերին նվիրված հուշարձանի բացման արարողությունը: Հուշարձանին պատկերված է կին, որը փորձում է կրակից պաշտպանել իր երեխային: Սա առաջին դեպքն է, որ Թուրքիայից և Ադրբեջանից դուրս հակահայ հուշարձան է բացվում: Ընդհանրապես արտասահմանում հայկական թեմային առնչվող հուշարձանները մինչև այդ պահը կրել են հայանպաստ խորհուրդ. տասնամյակների ընթացքում տեղադրվել են մեծ թվով խաչքար-հուշարձաններ, հուշաքարեր՝ նվիրված Մեծ եղեռնի զոհերին, ականավոր հայ գրողներին, արվեստագետներին, ռազմական գործիչներին: Այս առումով Հաագայում ադրբեջանական հուշաքարը, ինքնին, նոր երևույթ է: Միաժամանակ, հստակ է, որ հուշարձանի տեղադրումը չի կարող համարվել հոլանդական իշխանությունների պաշտոնական դիրքորոշում: Նեու Էյկենդունեն գերեզմանատունը մասնավոր սեփականություն է, և տեղադրման համար պաշտոնական թույլտվություն ստանալու կարիքը չկա: Ըստ այդմ, քաղաքային ղեկավարությունը որևէ առնչություն չունի ադրբեջանական հուշարձանի հետ: Բաքուն պարզապես փողով գնել է տարածք գերեզմանոցի մահմեդականների համար նախատեսված հատվածում, ճիշտ նույն տրամաբանությամբ, ինչպես հարևանությամբ գտնվող ննջեցյալների համար տարածք են գնել վերջիններիս հարազատները:

Ավելին, ըստ մեր ունեցած հավաստի տվյալների, հստակ է, որ պաշտոնական իշխանությունները դեմ էին հուշարձանի տեղադրմանը, և որոշ քննարկումներ են եղել գերեզմանատան մասնավոր սեփականատերերի հետ: Փաստ է նաև, որ հուշարձանին բացակայում է «ցեղասպանություն» եզրաբառը, մինչդեռ Բաքուն, եթե թողնվեր նրա սեփական հայեցողությանը, անշուշտ ոչ մի դեպքում չէր խուսափի այդ բառեզրից: Այս իրողությունը գալիս է անուղղակիորեն վկայելու Նիդեռլանդների իշխանությունների զգուշավոր

դիրքորոշումը ադրբեջանա-թուրքական համայնքների մեքենայությունների շուրջ և խոսում է այն մասին, որ ադրբեջանցի-թուրքերին որոշակի զգուշացում է արվել:

Բացման արարողությանը ադրբեջանա-թուրք կազմակերպիչները հրավերներ էին ուղարկել Հաագայում գործող օտարերկրյա դեսպանատներին (Նիդեռլանդներում կառավարությունը, պառլամենտը և դեսպանատները գտնվում են ոչ թե մայրաքաղաք Ամստերդամում, այլ՝ Հաագայում), սակայն արձագանքել էր միայն... Ալժիրի դեսպանատան մշակութային կցորդ Խալիֆ Մունան: Այսպիսով, ադրբեջանցիների, թուրքերի և ալժիրցի Խալիֆ Մունայի եռյակը Եվրոպայի կենտրոնում բացեց առաջին հակահայ հուշարձանը:

Հաագայում Ադրբեջանի դեսպան Ֆուադ Իսկենդերովը, փորձելով մասնավոր գերեզմանատանը տեղադրված հուշարձանի տեղադրումը ներկայացնել որպես շոնդալից իրադարձություն, հայտարարել էր. «Սա միայն սկիզբն է: Սա Եվրոպայում մեծ աղետին նվիրված առաջին հուշարձանն է: Ապագայում նոր հուշարձաններ են տեղադրվելու աշխարհի բոլոր կողմերում»[1]: Ադրբեջանական հյուպատոսությունը պատրաստվում է զբաղվել հուշարձանի տարածքում բարեկարգումներ կատարելու աշխատանքներով: Հուշարձանը զբաղեցնում է մոտ 200 քառակուսի մետրից ավելի տարածք և փաստում է Ադրբեջանի կողմից քարոզչական նպատակներով զգալի նավթադոլարներ ծախսելու պատրաստակամության մասին:

Նիդեռլանդների ադրբեջանական միության ղեկավար, ծագումով ներկայիս Թուրքիայի Իգդիրից Յուջել Աշքընը հայտարարել էր, թե ցանկանում են, որ «հայերի կատարած քայլերի մասին խոսեն ոչ միայն ադրբեջանական շրջանակներում, այլև պատմեն եվրոպացիներին, որոնք իրենց հռչակել են մարդու իրավունքների պաշտպաններ»[2]:

Նկատենք նաև, որ մասնավորապես Ֆրանսիայի թուրքական համայնքին տասնամյակներով չի հաջողվել Ֆրանսիայում տե-

[1] "Lahey'de Hocalı soykırım anıtı dikildi", "Zaman", 25.02.2008.

[2] «Открытие памятника жертвам Ходжалы в Гааге – это большая победа», «Зеркало», www.zerkalo.az, 10.04.2008.

ղադրել Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի արձանը: Փարիզի իշխանությունները մերժում են՝ հայտարարելով, որ հարմար տեղ չեն գտնում արձանի տեղադրման համար: Մինչդեռ Ադրբեջանը «առաջ է անցել» ավագ եղբորից՝ զանազան «զարտուղի» եղանակներով Եվրոպայում տեղադրել արձան՝ ընթացք տալով Խոջալիի կեղծ թեմային: Հավելենք, որ ադրբեջանական կառավարությունը սկսել է նաև աշխարհի տարբեր երկրներում Հեյդար Ալիևի հուշարձանները տեղադրելու ուղղությամբ տարվող աշխատանքը:

Նիդեռլանդներում գործում է ադրբեջանցի կանանց «Անա Վաթան» հասարակական կազմակերպությունը: Նկատելի է կանանց հասարակական շարժումներն ակտիվացնելու միտումը. ադրբեջանուհիների միություններ են գործում նաև Մեծ Բրիտանիայում և ԱՄՆ-ում: Ադրբեջանական աղբյուրների վկայությամբ, «Անա Վաթանի» նախագահ Գյուլսեն Քյազիմովան Ադրբեջանի և Նիդեռլանդների գրողների միությունների անդամ է: Նրա նախաձեռնությամբ 2009-ի նոյեմբերին ձևավորվել է Եվրոպայի ադրբեջանցի կանանց միությունների նախաձեռնող խումբ, որը զբաղվելու է ադրբեջանցի կնոջ վերաբերյալ քարոզչական հարցերով[1]: Ինչպես նշվեց, Քյազիմովան նաև որպես փոխնախագահ պաշտոնավարել է Եվրոպայի ադրբեջանցիների կոնգրեսում:

Քյազիմովան և Նիդեռլանդներում ադրբեջանական դեսպանատան ներկայացուցիչը Հաագայի Խաղաղության պալատի գրադարանին են նվիրել 16 հատոր գիրք «Խոջալիի ցեղասպանության» թեմայով, ինչպես նաև հոլանդերենով հրատարակված Կուրբան Սայիդի «Ալի և Նինո» գեղարվեստական պատումը[2]: Այլ հարց է, որ ադրբեջանցի ներկայացվող Կուրբան Սայիդն ամենևին էլ ադրբեջանցի չէ: Լև Աֆենբաումը ծնունդով Բաքվից էր, բնակվել է Ավստրիայում և ֆաշիզմի ծավալման տարիներին ծպտվել Կուրբան Սայիդ ծածկանվան տակ: Այնուամենայնիվ, գեստապոյին հաջողվել է պարզել նրա ինքնությունը: Աֆենբաումը ձերբակալվել է,

[1] «Азербайджанские женские организации создали инициативную группу», www.day.az, 24.11.2009.
[2] "Haaqa beynəlxalq Hüquq Akademiyasinin kitabxanasına "Xocalı Soyqırımı" adli 16 cildlik kitap toplusu təqdim olunub", *www.diaspora.az,* 29.02.2008.

ուղարկվել համակենտրոնացման ճամբար և մահացել 1942-ին Իտալիայում: Կուրբան Սայիդ-Լև Աֆենբաումի կյանքին է նվիրված ամերիկացի հետազոտող Թոմ Ռեյսի «Արևելագետը. լուծելով տարօրինակ և վտանգավոր կյանքի առեղծվածը» գիրքը[1]: Հեյդար Ալիևի հիմնադրամի հովանավորությամբ, «Ալի և Նինո» վեպն արդեն թարգմանվել է 33 լեզուներով, բայց տասնյակ հրատարակություններից և ոչ մեկում, որքան հայտնի է, ադրբեջանական կողմը չի նշում հեղինակի հրեական ծագման մասին:

Իսկ Հաագայի գրադարանի ողջ շտեմարանը ներկայացված է ինտերնետային կայքում, որից հետևում է, որ գրադարանում, իրոք, կա 12 հատոր գիրք Խոջալիի թեմայով, մասնավորապես Հեյդար Ալիևի հիմնադրամի կողմից 2006թ. հրատարակված *«Khojaly genocide»* անգլիալեզու աշխատությունը, Էլխան Սուլեյմանովի «1 միլիոն ստորագրություն՝ 1 պահանջով» հատորյակը՝ անգլերեն և ադրբեջաներեն, և այլ գրքեր[2]:

Ըստ գրադարանի կայքի տվյալների, այնտեղ առկա է նաև Արցախյան խնդրում հայկական, այսինքն՝ օբյեկտիվ մոտեցումն արտահայտող գրականություն: Սակայն կայքից հետևում է, որ դրանցից ոչ մեկը ՀՀ-ում չի հրատարակվել և, պետք է ենթադրել, գրադարանին են փոխանցվել սփյուռքահայ միությունների ջանքերով: 2006թ. Բուդապեշտի Կենտրոնական Եվրոպայի համալսարանում տեսել եմ մի քանի հատոր գրքեր «Խոջալիի դեպքերի», «Արևմտյան Ադրբեջանում ադրբեջանցիների բնաջնջման», «Հայկական ահաբեկչության» մասին: Դժվար չէ կռահել, թե եվրոպական հեղինակավոր համալսարանում ինչպես են հայտնվել այս «աշխատությունները»: Արտասահմանյան գրադարանների ֆոնդերը ադրբեջանական հերյուրանքներով համալրելուն ուղղված Բաքվի ռազմավարությունը ևս պետք է դիտարկել որպես ՀՀ առջև կանգնած մարտահրավերներից մեկը:

2008թ. մարտին Ամստերդամում ձևավորվեց Ադրբեջան-

[1] Տե՛ս "The Orientalist: Solving the mystery of a strange and dangereous life", Tom Reiss, Random house, 2006.

[2] http://catalogue.ppl.nl

Իսրայել կազմակերպության հոլանդական գրասենյակը: Ադրբեջան-Իսրայել («ԱզԻս») կառույցը միավորում է նախկին ադրբեջանաբնակ հրեաներին: Կառույցի վերաբերյալ հավելյալ մանրամասներ կան Իսրայելին նվիրված բաժնում: Ամստերդամի «Մերիոթ» հյուրանոցում կազմակերպված միջոցառման ընթացքում նշվել է, որ «տեղի հրեաների հետ կապերի հաստատումն ու նրանց փորձառությունից օգտվելը կազմակերպության աշխատանքի առանցքային ուղղություններից են լինելու»[1]:

«Բելգիայում Ադրբեջանական տուն համայնքային կազմակերպությունը հիմնադրվել է խորհրդանշական շրջադարձային թվականի՝ 2000թ., մայրաքաղաք Բրյուսելում: Բելգիայում Ադրբեջանական տունը հիմնադրման պահից մինչև օրս Եվրոպային և համաշխարհային հանրությանը Ադրբեջանի մասին ճշմարտությունը փոխանցելու հարցում մեծ աշխատանք է կատարել»,- գրում է ադրբեջանական կայքը[2]:

Ադրբեջանական տունն, անկասկած, հսկայական աշխատանք է կատարել ադրբեջանական ներհամայնքային կազմակերպման և հատկապես քարոզչության առումներով: Այն գործում է Բրյուսելում (Շոսե դե Մոնս հասցեում): Կառույցի հիմնադիրն է Գյուրջամ Բյուլենթ Ֆերմանօղլուն: Վերջինս ծնվել է 1962թ. Իգդիրում: Ուշագրավ է, որ Ֆերմանօղլուները ծագումով Հայաստանից են, Արմավիրի մարզի Ջանֆիդա գյուղից: 1931թ. Հայկական ԽՍՀ-ի և Թուրքիայի միջև տեղի ունեցավ բնակչության փոխանակում, և Ֆերմանօղլուները հաստատվեցին Իգդիրում: Ի դեպ, ադրբեջանական կայքը գրում է, թե Ֆերմանօղլուն սերում է «Արևմտյան Ադրբեջանից»: Ադրբեջանական քարոզչական մեքենայի և պատմաբանների մեկնությամբ, ներկայիս Հայաստանի Հանրապետությունը Արևմտյան Ադրբեջանն է: Հարց է առաջանում. եթե Թուրքիայի սահմանի ճիշտ հարևանությամբ գտնվող Ջանֆիդա գյուղը «Արևմտյան Ադրբեջան է», այդ պարագայում որտե՞ղ է, ըստ Բաքվի, Արևմտյան Ադրբեջանի և Թուրքիայի սահմանը: Արդյոք Ջան-

[1] "Hollandiya'da Azərbaycan-Israil təşəbbüs qrubu yaradılıb", www.diaspora.az, 11.03.2008.
[2] www.euxeber.com

ֆիդայից ընդամենը մի քանի հարյուր մետր հեռավորության վրա գտնվող Իգդիրի շրջանը Արևելյան Թուրքիա՞ է, թե՞ Արևմտյան Ադրբեջան: Այս պարագայում ադրբեջանցի գրչակները կրկին կարող են տարածքային պահանջ ներկայացնել եղբայրական Թուրքիայի Հանրապետությանը:

1980թ. Ֆերմանօղլուն հաստատվել է Բրյուսելում, աշխատել որպես թուրքական «Հյուրիեթ» և «Թերջյուման» թերթերի թղթակից: 1987թ. հիմնել է թուրքալեզու «Գյուրբեթ» թերթը, որը Բելգիայում առաջին թյուրքալեզու տպագիր օրգանն էր: 1989թ. այցելելով Բաքու՝ նա հունվարին հայերի զանգվածային ջարդերի և հունվարի 20-ի խորհրդային բանակի պատժիչ գործողությունների ականատեսը եղավ: Տեսագրելով հայերի ջարդարարությամբ զբաղված ադրբեջանցիների դեմ խորհրդային բանակի գործողությունները՝ նա մեկնեց Մոսկվա, ուր միջազգային ԶԼՄ թղթակիցներին փոխանցեց կադրերը: Սակայն 1 շաբաթ շարունակ հայ ազգաբնակչության սպանդի, թալանի ու խոշտանգումների մասին ծագումով հայաստանցի գործիչը բացարձակ լռություն է պահպանել: 1995թ. Բրյուսելում ադրբեջանական դեսպանատան հիմնադրումից հետո, 5 տարի նա աշխատել է դեսպանատանը, ապա 2000թ. բացել Ադրբեջանական տունը: 2000թ. նաև հիմնեց «Ադրբեջանական մշակույթ և ինֆորմացիա» հանդեսը, 2003-ից Խոջալիի դեպքերի տարելիցին հրապարակում է «Ջենոսայդ» հատորյակը, 2006-ին թողարկվել է եռալեզու խտասկավառակ Խոջալիի դեպքերի վերաբերյալ: Ադրբեջանական տան նախաձեռնությամբ ֆրանսերենով հրատարակվել է «Պատանդ հողը. Լեռնային Ղարաբաղ» գիրքը, որում նշված է, թե «Լեռնային Ղարաբաղը, ինչպես նաև Երևանը պատմականորեն ադրբեջանական տարածքներ են» և այլ ապատեղեկություններ[1]:

Ադրբեջանական «սփյուռքի» ակտիվիստը հիմնել է նաև «Եվրոխաբար» *("Euroxeber", www.euxeber.com)* հանդեսը: Այն հրատարակվում է Բաքվում, 4 հազար տպաքանակով, ամիսը 2 անգամ, մասամբ սպառվում է Ադրբեջանում, ավելի մեծ տպաքանակ

[1] "Fransız dilində nəşr edilmiş "Əsir torpaq – Qarabağ" kitabının təqdimati olmuşdur", http://www.euxeber.com, 25.02.2008.

ուղարկվում է Եվրոպա[1]: 2004թ. հուլիսի 22-ին լույս տեսավ առաջին «Եվրոխաբարը»: Շնորհանդեսը Բաքվի մամուլի ակումբում էր: «Թերթը կամուրջ կլինի Եվրոպայի և Ադրբեջանի միջև, և այս առումով տրամաբանական է, որ խմբագրությունը գործելու է ԵՄ մայրաքաղաք Բրյուսելում»,- նշեց Ջանֆիդայից սերող ադրբեջանցի լոբբիստը[2]: Թերթի առաջին համարում տպվել էին Բելգիայի թագավորության փոխվարչապետ և ԱԳ նախարար Լուի Միշելի, Բրյուսելում գործող համաշխարհային մաքսային կազմակերպության տնօրեն Միշել Դանյեի շնորհավորական ուղերձները[3]:

Ադրբեջանցի խմբագիր-լոբբիստը ներկա է եղել նաև Բուդապեշտում Ռամիլ Սաֆարովի դատավարության նիստերին, եղել այս թեմայով ադրբեջանական ԶԼՄ-ին տեղեկատվություն փոխանցող հիմնական լրագրողը: Ներկայում «Եվրոխաբարի» խմբագիրն է Նովրուզ Նովրուզովը: Թերթի կայքում բացվել են բաժիններ ԼՂ հակամարտության և Խոջալիի վերաբերյալ, ընդ որում, վերջինը ֆրանսերեն լեզվով է:

Եվրախորհրդարանում, ըստ գործող աշխատակարգի, կարող են գրանցվել հասարակական կազմակերպություններ, որոնք հանդես են գալիս որպես լոբբիստական կազմակերպություններ: Այս հասարակական կառույցների անդամներին հնարավորություն է տրվում ներկա գտնվել Եվրախորհրդարանի նիստերին, ազատ ելումուտ ունենալ ինչպես Բրյուսելի, այնպես էլ Ստրասբուրգի խորհրդարանական շենքեր՝ ցանկացած աշխատանքային օր, անկախ այն հանգամանքից՝ խորհրդարանը տվյալ օրը գումարել է նիստ, թե ոչ: Ստեղծված են հաջող աշխատանքային հնարավորություններ թե՛ եվրապատգամավորների և թե՛ ԵՄ տարբեր տրամաչափի պաշտոնյաների հետ շփումների առումով:

2006թ. աշնանը Եվրախորհրդարանում գրանցվեց առաջին և առայժմ միակ ադրբեջանական լոբբիստական կազմակերպությունը՝ Եվրոպայի ադրբեջանցի ուսանողների ֆորումը: Հիմնադիր ժո-

[1] «В Азербайджане появится новая газета», “Zerkalo”, www.zerkalo.az, 21.07.2004.

[2] Avropaya adım-adım Azərbaycan’da yeni işiq üzü görən qəzetin devizi beləcdir, «Üç nöqtə» 24.07.2004.

[3] «EU Xəbər geldi», «Şərq» qəzeti, 24.07.2004.

ղովը տեղի ունեցավ Եվրախորհրդարանի շենքում՝ «Ապագան ինքն իրեն չի գալիս» կարգախոսով: 2007թ. մայիսին Բրյուսելում երկրորդ ֆորումին ներկա էր Հարավային Կովկասում ԵՄ ներկայացուցիչ Փիթեր Սեմնեբին[1]: Ավելի ուշ հավաքներ գումարվեցին ՆԱՏՕ կենտրոնակայանում, բեռլինյան Բունդեսթագի, Ֆրանսիայի Սենատի շենքերում և այլն:

«Ֆրանսիայում թուրքական կամ ադրբեջանական ուսանողների ֆորումի համար պատգամավորների թույլտվություն ստանալը դժվարին գործ է»,- նշում են հենց իրենք՝ կազմակերպիչները[2]:

Նիդեռլանդների, Բելգիայի և Լյուքսեմբուրգի ադրբեջանական կազմակերպությունները ձևավորել են Բենիլյուքսի երկրների ադրբեջանական կազմակերպությունների համակարգող խորհուրդ: Կենտրոնակայանն Ամստերդամում է: Հատկանշական է, որ խորհրդի պատվավոր նախագահն Ադրբեջանի քաղաքացի է, ավելին՝ Բրյուսելում ադրբեջանական դեսպանատան աշխատակից է՝ 1-ին քարտուղար Ֆուադ Գումբաթովը[3]: Նա միաժամանակ Ադրբեջանի պաշտոնական ներկայացուցիչն է ԵՄ-ում: 2007-ից նաև գործում է Բենիլյուքսի ադրբեջանցիների կոնգրես (ԲԱԿ) կառույցը: Պատվավոր նախագահն է Շահիլ Ղասիմովը, նախագահն է Էլսևար Մամեդովը: Ըստ կառույցի տեղեկատվության, ԲԱԿ-ի ջանքերով և Հեյդար Ալիևի հիմնադրամի աջակցությամբ, Ամստերդամում բացվել են ադրբեջաներեն լեզվի 3, իսկ Ռոտերդամում՝ 2 դպրոց, որոնց դասագրքերով և այլ պարագաներով ապահովում է կրկին հիմնադրամը (այսինքն՝ Բաքուն)[4]:

[1] «В Брюсселе начал работу форум азербайджанских студентов в Европе», *www.day.az,* 14.05.2007.

[2] «6-7 февраля в здании Сената Франции состоится очередное мероприятие Форума Азербайджанских студентов в Европе». *www.day.az,* 29.12.2007.

[3] «Открытие памятника жертвам Ходжалы в Гааге – это большая победа», *www.zerkalo.az,* 10.04.2008.

[4] «В Нидерландах прошел второй съезд Конгресса азербайджанцев Бенилюкса», *www.day.az,* 10.04.2009.

Գերմանիա և Լեհաստան. դիասպորայի ձևավորման առաջին նախանշանները

Եվրոպական այս երկու պետությունները միասնաբար ներկայացնելու պատճառն այն է, որ նախորդ դարի 30-ականների վերջերից, երբ «ադրբեջանցի» էթնոնիմը մտավ շրջանառության մեջ, զուգահեռաբար սկսվեց Գերմանիայի և Լեհաստանի ադրբեջանական համայնքների ակտիվացման գործընթացը: Նախ լեհական կառավարությունը, ապա՝ նացիստական Գերմանիան կապեր զարգացրին ադրբեջանական միությունների հետ, ձևավորվեցին վերմախտի ադրբեջանական ստորաբաժանումները, որոնք և մասնակցեցին ԽՍՀՄ-ի դեմ պատերազմական գործողություններին, իսկ ավելի ուշ ներգրավվեցին Վարշավայում 1944թ. օգոստոսյան ապստամբությունը ճնշելու գործում:

1925թ. Լեհաստանի բանակի գլխավոր շտաբի գնդապետ Խորոշկևիչը սկսեց աշխատանք տանել կովկասյան ժողովուրդների, ինչպես նաև ուկրաինացի հասարակական-քաղաքական գործիչների հետ Եվրոպայում հակախորհրդային ուղղվածության կառույցներ ձևավորելու ուղղությամբ: Վերջիններս հեռանկարում պետք է ռազմական գործողություններ իրականացնեին ԽՍՀՄ տարածքում: Լեհական ռազմական հետախուզության նախաձեռնությամբ ձևավորված կառույցի մեջ ներգրավված էր այդ տարիներին Վարշավայում բնակվող մուսավաթական Ադրբեջանի հիմնադիր Մեմեդ Էմին Ռասուլզադեն: Վերջինս նաև ընտանիք էր կազմել լեհուհու հետ: Ադրբեջանցի գործիչը գլխավորեց «Պրոմեթևս» միությունը: Ռասուլզադեի նշանակումը հակախորհրդային կառույցի ղեկավար պաշտոնին կապված էր Թուրքիայի հետ գործակցելու լեհական հետախուզության ծրագրերի հետ. հետագայում Կովկասում ծավալվելիք հակասովետական պարտիզանական գործողությունների տեսանկյունից Թուրքիայի աշխարհագրական դիրքն անփոխարինելի էր թե՛ մարտիկների փոխադրման և թե՛ զենքի մատակարարման առումներով: «Ենթադրվում էր, որ զենքի մեծ խմբաքանակը ծովային ճանապարհով պետք է ուղարկվեր Ստամբուլ կամ Թուրքիայի տարածքի որևէ այլ հարմար նավա-

հանգիստ: Նշված վայրից գաղտնի բեռը պետք է հասներ խորհրդա-թուրքական սահմանի անմիջական հարևանությամբ գտնվող հատուկ պահեստներ»[1],- նշված է այս թեմայով հրատարակված գրքում:

«Պրոմեթևսի» խորհրդի անդամ էր նաև ադրբեջանցի ոմն Մեհթին: 30-ականներին «Պրոմեթևսի» հայազգի անդամները սկսեցին կտրուկ անհամաձայնություն հայտնել ծրագրերում Թուրքիային հատկացվող նշանակալի դերի կապակցությամբ՝ նաև հայտարարելով, որ հայ պարտիզանները չեն կրակի ԽՍՀՄ բանակի դեմ, եթե հայտնի դառնա, որ առջևի ստորաբաժանումները համալրված են հայազգի զինվորականներով[2]: Հակասությունների արդյունքում հայերը դուրս եկան կառույցից և չմասնակցեցին լեհական իշխանությունների հետագա ծրագրերին:

Վարշավայում էր «Մուսավաթի» կենտրոնակայանը, այստեղ էին կենտրոնացած նաև ադրբեջանցի այլ գործիչներ: 1934-ից Ռասուլզադեի և կուսակցության ղեկավար անդամ Խասմամեդովի միջև տարակարծություններից հետո «Մուսավաթը» կիսվեց «Վարշավյան» (ղեկավարում էր Ռասուլզադեն) և «Ստամբուլյան» (Խասմամեդով) գրասենյակների[3]: Արդեն 30-ականներից Լեհաստանում էր գործում նաև «Իսթիգլալ» (Անկախություն) ադրբեջանական ռազմականացված միությունը, որի ղեկավարն էր մուսավաթական Ադրբեջանի ԱԳ նախարար և խորհրդարանի խոսնակ Ալիմարդան Թոփչիբաշևը: 1934թ. Բրյուսելում տեղի ունեցավ Կովկասյան ժողովուրդների խորհրդաժողով, որտեղ Ադրբեջանը ներկայացնում էին Ռասուլզադեն և Թոփչիբաշևը: Հայկական պատվիրակությունը հավաքին չի մասնակցել[4]: 1936թ. Ռասուլզադեն և մի քանի այլ համայնքային ղեկավարներ փոխադրվեցին Գերմանիա,

[1] «Забытый Легион. Неизвестные страницы соединения специального назначения Бергман», Эдуард Абрамян, Ереван, 2005, էջ 12-13:

[2] "Razmik" 15/05/1942 N 9, հղումն ըստ «Забытый Легион. Неизвестные страницы соединения специального назначения Бергман», Эдуард Абрамян, Ереван, 2005.

[3] «Забытый Легион. Неизвестные страницы соединения специального назначения Бергман», Эдуард Абрамян, Ереван, 2005, էջ 30:

[4] «Пятая колонна Гитлера: От Кутепова до Власова», О. Смыслов, Москва, 2004, стр. 32.

որտեղ սկսեցին հրատարակել «Ազերբայջան», «Ենի Կավկազ», «Քուրթուլուշ» հանդեսները: Նացիստական Գերմանիայի և կովկասյան ժողովուրդների համագործակցությունը առավել հիմնավոր բնույթ ստացավ: Ձևավորվեցին Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի և հյուսիսկովկասյան ժողովուրդների ազատագրական կոմիտեները: Մոտավորապես 1942թ. մայիսին օկուպացված տարածքների նախարար Ալֆրեդ Ռոզենբերգի հետ հանդիպեցին Ադրբեջանական ազգային կոմիտեի ղեկավար Աբո Դուդանգինսկին, Մեմեդ Էմին Ռասուլզադեն, Ազեր Թեքինը և Մահոմեդ Նաբի Օղլին: Վերջինս ավելի ուշ գլխավորեց «Ազերբայջան» գունդը, որը ենթարկվում էր գերմանական էսէսական հրամանատարությանը:

Գերմանական Ռայխի հետ ԽՍՀՄ ժողովուրդների համագործակցության թեման վերջին ժամանակահատվածում զգալիորեն ուսումնասիրվել է հայ, ռուս, ինչպես նաև եվրոպական պատմաբանների կողմից[1]: Ադրբեջանական ստորաբաժանման մասով առանձնացնենք Վարշավայում 1944թ. ապստամբության ճնշման մեջ ունեցած նրանց դերակատարումը:

1944թ. հուլիսին «Բերգման 2» ադրբեջանական գումարտակը տեղակայվեց Վարշավայի մերձակայքում, դեպի հարավ: Օգոստոսին այն մտավ գերմանական զինված ուժերի 111-րդ ադրբեջանական գնդի կազմի մեջ: Նույն գնդում գործում էր նաև «Դյոնմեք» ադրբեջանական հրաձգային գումարտակը: Երբ 1944թ. օգոստոսի 1-ին Վարշավայի Վոլյա և Օխոտա թաղամասերում Կրայովայի բանակի և լեհական աշխատավորական կուսակցության նախաձեռնությամբ սկիզբ առավ ապստամբությունը, Հիտլերը հրամայեց բնաջնջել բոլոր ապստամբներին, իսկ Վարշավան հավասարեցնել հողին: Էսէսի գեներալ Էրնստ Ռոդեն Նյուրնբերգյան դատավարությանը վկայել է, որ գերմանական «Դիրլեվանգեր» գունդը, «Կամինսկու բրիգադը» և 3-րդ Ռայխի ադրբեջանական ստորաբաժանումներն իրավունք էին ստացել սպանել ում կցանկանան: Օգոստոսի 5-ին գերմանա-ադր-

[1] Տե՛ս «Забытый Легион. Неизвестные страницы соединения специального назначения Бергман», Эдуард Абрамян, Ереван, 2005; «Пятая колонна Гитлера: От Кутепова до Власова», О.Смыслов, Москва, 2004; «Под знаменами врага», Сергей Дробязко, Москва, 2004; «Грузины по ту сторону», Андерсен Э, Доклад, 1992г.

բեջանական ուժերը ճնշեցին ապստամբությունը: «Ադրբեջանական գումարտակի զինվորականներն իրենց դրսևորեցին որպես նույնպիսի ոճրագործներ ու մարդասպաններ, ինչպիսիք են Դիրլեվանգերի և Կամինսկու զինվորները»,- նշում է պատմաբան Էդվարդ Աբրահամյանը[1]: Լեհական ապստամբության վերաբերյալ *BBC*-ի կայքում կարդում ենք. «Ապստամբությունը ճնշելու համար պատասխանատվություն էր ստանձնել Էրիխ ֆոն Բախը: Նրան էին ենթակա արագ կազմավորված մի շարք ստորաբաժանումներ՝ համալրված էսէսի զինվորականներով, կազակներով, ադրբեջանցիներով և ուկրաինացիներով»[2]:

Մինչև վերջին տարիները Գերմանիայի ամենաակտիվ ադրբեջանական կառույց կարող էր համարվել «Նիզամի Գյանջևի» մշակութային միությունը, սակայն ավելի ուշ Պետկոմիտեի աջակցությամբ առաջացան նոր միություններ: Ադրբեջանացված բանաստեղծ Նիզամի Գյանջևիի անունը կրող կառույցի ղեկավար Նուրիդա Աթեշին Ադրբեջանից Գերմանիա է փոխադրվել 90-ականների սկզբներին՝ դստերը վիրահատելու նպատակով և հաստատվել Բեռլինում: Գերմանիայում աշխատել է թուրքական հեռուստատեսությունում, ինչը հնարավորություն է տվել հասնել որոշակի սոցիալական կարգավիճակի: «Ընդամենը 10 օրով էի եկել Գերմանիա: Բախտս բերեց, երբ Գերմանիայի թուրքական հեռուստաալիքը հրավիրեց ինձ: Բոլոր դժվարությունները կարողացա հաղթահարել Բեռլինի թուրքական հեռուստատեսության նյութական աջակցությամբ»,- գրում է Աթեշին[3]:

Նուրիդա Աթեշին և «Նիզամի Գյանջևի» միությունը հաջողություններ են արձանագրել հակահայ աշխատանքներում: 2000-2005թթ. Գերմանիայում հրատարակված 8-րդ դասարանի աշխարհագրության դպրոցական դասագրքերում նշվում էր, որ «Լեռնային Ղարաբաղը պատմականորեն հայկական տարածք է, և

[1] «Забытый Легион. Неизвестные страницы соединения специального назначения Бергман», Эдуард Абрамян, Ереван, 2005, стр. 155.

[2] «Варшавское восстание, «не замеченное» Сталиным», www.news.bbc.co.uk, 03.08.1944.

[3] Nuridə Atəşi: «Məhəmməd Əsəd bəy Almaniya ilə Azərbaycan arasinda ilk mədəniyyət köprüsünü yaradan insandır», 03.11.2007, *www.euxeber.com*

ադրբեջանցիները ուժով փորձում են վտարել հայերին»: Դասագիրքը պատրաստել էր «Վեսթերման» հրատարակչությունը: Նուրիդա Աթեշին բողոքով դիմել էր Գերմանիայի կրթության նախարարությանը, ապա նաև դատական ատյաններին: 2006թ. դրությամբ «Վեսթերմանի» տնօրեն Մարկուս Վեբերը Աթեշիին տեղեկացրել է, որ նոր դասագրքերում հատվածը խմբագրվել է, և հայկական պատմական պատկանելության մասը հանվել է[1]:

Ադրբեջանցի լոբբիստուհի Աթեշին մի կողմից ընդգծում է, որ «Գերմանիայի հայ համայնքն ավելի գործուն է», բայց և նշում, որ Գերմանիայում ուսանող և հաստատված ադրբեջանցի երիտասարդները բավական ակտիվ են, և նրանց հովանավորելու պարագայում զգալի ուժ կձևավորվի:

Ադրբեջանական կառավարությունը 2008-ից սկսեց քայլեր իրականացնել նաև գերմանաբնակ ադրբեջանցիներին մեկ կառույցի մեջ միավորելու ուղղությամբ: Մայիսի 28-ին առաջին հանրապետության օրվա առիթով Նյուրնբերգում տեղի ունեցավ Գերմանիայի ադրբեջանցի ուսանողների և գիտաշխատողների միության հիմնադիր ժողովը: Այն միավորեց Բեռլին, Քյոլն, Ֆրայբերգ, Վուրտսբուրգ, Մյունխեն, Անսբախ քաղաքների ադրբեջանցի ուսանողներին և գիտաշխատողներին: Նախագահն է Ֆրայբերգի տեխնիկական համալսարանի ուսանող Սամիր Աբասովը: Կառույցն ունի մի քանի տասնյակ անդամներ[2]: Նույն Ֆրայբերգում 2007թ. հուլիսի 4-11-ը տեղի էր ունեցել խորհրդաժողով Եվրոպայում ադրբեջանական լոբբինգի ակտիվացման թեմաներով[3]: Ընդունված որոշման համաձայն՝ կես տարվա ընթացքում դեսպանատան և Պետկոմիտեի աջակցությամբ ձևավորվեց Ադրբեջանական համայնքային կազմակերպությունների համակարգող կենտրոնը: Կառույցի գործադիր քարտուղարն է համայնքային գործիչ Սամիրա Փաթցեր Իսմայիլովան, որը պաշտոնավարում է նաև

[1] «Ликвидация лжи», «Зеркало», 20.10.2006, *www.zerkalo.az*

[2] "Almaniya'da təhsil alan Azərbaycanli tələbələrin və elmi işçilərin ikinci görüşü keçirilib", *www.diaspora.az,* 02.06.08.

[3] "Almaniya'da Azərbaycanin Avropada lobbiçiliyinin güçlendirməsinə həsr olunmuş forum kəçirilecək", *www.diaspora.az,* 05.06.2007.

Եվրոպայի ադրբեջանական կոնգրեսում[1]: Հիմնվել է նաև Ադրբեջանական համայնքի համակարգող խորհուրդը, որը ռոտացիոն սկզբունքով կղեկավարեն Գերմանիայի շուրջ 4 տասնյակի չափ ադրբեջանական հասարակական կազմակերպությունները:

Գերմանաբնակ ադրբեջանցի լոբբիստ Նուսրեթ Դելբեստը, որը նաև Եվրոպայի ադրբեջանական կոնգրեսի փոխնախագահն է և Գերմանիայի ադրբեջանական միությունների համադաշնության նախագահը, հեղինակել է գերմաներեն լեզվով ադրբեջաներենի դասագիրք: Նույն դասագրքով դեսպանատանը կից նախատեսվում են ադրբեջաներենի դասընթացներ երեխաների համար[2]: Բեռլինում գործում է Ադրբեջանական տուն կազմակերպությունը, որը 2010-ի տարեսկզբին նոր գրասենյակ տեղափոխվեց[3]:

2006թ. հունիսին Բեռլինում տեղի ունեցավ Գերմանիայում ադրբեջանական մշակույթի բարեկամների միություն կազմակերպության հիմնադիր ժողովը: Ղեկավարը հրեական ծագումով գերմանացի արվեստաբան Շտեֆան Շտերմերն է, վարչական մասում են գերմանացի և ադրբեջանցի մշակութային գործիչներ: Կառույցն, ըստ պաշտոնական տեղեկատվության, աշխատելու է ադրբեջանական մշակույթի քարոզչության ուղղությամբ:

2008թ. փետրվարի 26-ին Դյուսելդորֆ քաղաքի *«Chanel Europe»* հեռուստաալիքով ցուցադրվեց տեսանյութ Խոջալիի դեպքերի մասին: Փետրվարի 27-ին թեմային անդրադարձել է Ֆրանկֆուրտի *Chanel 7*-ը: Նույն օրը Գերմանիայի տարածքում սփռվող թուրքական *TGRT* հեռուստաալիքով ելույթ ունեցավ ադրբեջանական պետկոմիտեի փոխնախագահ Վալեհ Հաջիևը[4]:

2008-ը Գերմանիայում հայտարարված էր Ադրբեջանի տարի:

---

[1] «Создан Координационный центр функционирующих в Германии азербайджанских диаспорских организаций», www.azertag.com 20.01.2008.

[2] «Мы хотим, чтобы и наши дети сохранили родной язык и связи с исторической родиной», www.azeri.ru, 08.02.08.

[3] «Дом Азербайджана в Германии», *www.zerkalo.az,* 09.01.2010.

[4] "German TV to broadcast programs on Khojaly tragedy", *www.azertag.com,* 26.02.2008.

Ֆրանսիա. ո՞վ գողացավ Հայաստանի դրոշը

1920թ. ապրիլի 28-ին, երբ Ադրբեջանում, առաջինը հարավկովկասյան հանրապետություններից, հաստատվեցին խորհրդային կարգեր, Փարիզում գտնվող ադրբեջանական պատվիրակությունը, խորհրդարանի խոսնակ Ալիմարդան Թոփչիբաշևի գլխավորությամբ, որոշում ընդունեց քաղաքական ապաստան խնդրել Ֆրանսիայի իշխանություններից և չվերադարձավ Ադրբեջան: Ներկայում Փարիզի Դեկամպ 37 հասցեում գտնվող տանը փակցված է ցուցանակ այն մասին, որ այդտեղ ապրել է Թոփչիբաշևը: Վերջինիս նախաձեռնությամբ ձևավորվեց Ադրբեջանցիների էմիգրանտների ասոցիացիան, հրատարակվեցին «Ազերբայջան» տեղեկատվական բյուլետենի 12 համարներ, իսկ 1925-ի ապրիլի 4-ին Փարիզի «Ֆեմինա» թատրոնում բեմադրվեց «Արշին մալ ալան» կատակերգությունը[1]:

Ներկայում Ֆրանսիայում գործում է 16 ադրբեջանական համայնքային կազմակերպություն, որոնցից 7-ը՝ Ստրասբուրգում[2]: Եվրոպայի վարչական կենտրոնում նման քանակի ադրբեջանական միությունների «կուտակումը» պատահականություն համարել հնարավոր չէ: Ստրասբուրգում Խոջալիի դեպքերի առիթով ադրբեջանական հանրահավաքները «սովորական» իրողություն են դարձել: Հավաքվելով Եվրախորհրդի կենտրոնակայանի մուտքի մոտ՝ մասնակիցները քայլում են դեպի քաղաքապետարանին հարող հրապարակ: «Տարեցտարի մասնակիցների թիվն ավելանում է»,- նշում է ականատես, Ստրասբուրգի համալսարանի հայազգի ուսանող Էդգար Հակոբյանը:

Կարելի է նաև ենթադրություններ անել, թե որ ուժերի կողմից կազմակերպվեց Հայաստանի պետական դրոշի առևանգումը Ստրասբուրգում Եվրախորհրդի կենտրոնակայանի մուտքի մոտից 2005թ. հուլիսին[3]: Համենայնդեպս, հստակ հայտնի է, որ ԵԽ կենտրոնակայանից հեռու չէ այն ուսանողական հանրակացարանը, ուր բնակվում են ադրբեջանցի ուսանողներ:

[1] "Азербайджанцы во Франции", *www.azeri.ru,* 02,12.2009.
[2] Տե՛ս http://www.diaspora.gov.az/teze/teskilatlar/fransa.htm
[3] "Armenian flag at Council of Europe stolen", *www.armenialiberty.org,* 01.08.2005.

Ստրասբուրգում 2006թ. բացվել է «Բաքվի գիշեր» ադրբեջանական ռեստորանը, որը երիտասարդական հավաքատեղի է: Այստեղ են մշակվում հակահայ հանրահավաքների և այլ ձեռնարկների ռազմավարությունները: Նույն ռեստորանում 2007թ. նոյեմբերի 9-ին Եվրախորհրդարանում գրանցված Ադրբեջանցի ուսանողների ֆորում կառույցն իրականացրեց «Ադրբեջանական գիշեր» միջոցառումը: Նպատակը մի կողմից Ադրբեջանի «գովազդումն» էր տեղացիների շրջանում, մյուս կողմից՝ Եվրոպայի մի շարք քաղաքներից մասնակցելու նպատակով ժամանած ադրբեջանցի ուսանողների միջև շփումների հաստատումը[1]: Ի դեպ, ռեստորանի սեփականատիրոջ որդին սպանվեց գերմանացի ազգայնականի կողմից 2007թ. դեկտեմբերին՝ ազգային հողի վրա ծագած վեճի ժամանակ: Ըստ որոշ տեղեկությունների, Ստրասբուրգի ադրբեջանցի ուսանողներ Շահին Հյուսեինլին և Էլվին Աբասբեյլին աշխատանք են տարել քաղաքային ռադիոյով Ադրբեջանի վերաբերյալ հեռարձակումներ կազմակերպելու ուղղությամբ[2]:

Մայրաքաղաք Փարիզում ադրբեջանա-ֆրանսիական երիտասարդական ասոցիացիա կազմակերպությունն իրականացնում է «Լե Պոն - Մոստ» հանդեսի հրատարակությունը, որը երկլեզու՝ ադրբեջաներեն և ֆրանսերեն հոդվածներ է հրապարակում: Այն ունի ճանաչողական, հասարակական, մշակութային ուղղվածություն, նաև ներկայացնում է «ադրբեջանցի ժողովրդի հազարամյակների (!) պատմությունը» (ադրբեջանցի էթնոնիմը շրջանառության մեջ է դրվել 1936-ից), «Ղարաբաղի ադրբեջանական խանությունը» և այլն[3]:

Ֆրանսիայի ադրբեջանցիները 2006թ. հոկտեմբերի 21-ին Բաստիլի հրապարակում կազմակերպեցին բողոքի հանրահավաք Ֆրանսիայի խորհրդարանի ստորին պալատում Հայոց ցեղասպանության մերժողականությունը քրեականացնող օրենքի ընդունման կապակցությամբ: Նախաձեռնողը Աշխարհի ադրբեջա-

[1] «Bugün Strasburq'da Azerbaycan gecəsi keçiriləcek», *http://www.euxeber.com,* 09.11.2007.

[2] "Strasburqda fransız dilində Azərbaycanla bağlı növbəti radio verilişi səslənib", *www.diaspora.az,* 26.11.2009.

[3] «В Париже вышел очередной номер журнала Ле-Пон-Мост», *www.azertag.com,* 14.06. 2006.

նական կոնգրեսն էր[1]: Այսպիսով, Եվրոպայի ադրբեջանցիները հրապարակայնորեն մաս կազմեցին Եվրոպայում իրականացվող Հայոց ցեղասպանության մերժողականության աշխատանքներին: Պետք է ենթադրել, որ ժամանակի ընթացքում Հին աշխարհի քաղաքական ղեկավարությունն աստիճանաբար որոշակի վերաբերմունք կմշակի ադրբեջանական մերժողականության հանդեպ, այնպես, ինչպես դա եղավ թուրք ժխտողականների պարագայում: Համենայնդեպս, ադրբեջանցիների մերժողական հանրահավաքը հերթական վկայությունն էր, որ հոկտեմբերի 12-ի օրենքը այժմեական է և վերջնական հաստատումը՝ անհրաժեշտություն:

Ֆրանսիայի ադրբեջանական միություններից են Ադրբեջանական տունը (Փարիզ, ղեկավար՝ Սեիդ Իսմայիլով), Ադրբեջանական մշակութային կապերի միությունը (Ստրասբուրգ, ղեկավար՝ Մուսթաֆա Ալընջա), «Ստրասբուրգի ադրբեջանական տուն» միություն (ղեկավար՝ Մուսթաֆա Ալընջա), Ադրբեջանական մշակութային կենտրոնը (Ստրասբուրգ, ղեկավար՝ Ահմեդ Մեհրիբանի), Ադրբեջան-Ֆրանսիա ազատ փոխանակման ասոցիացիան (Գրենոբլ, ղեկավար՝ Աղասելիմ Ռասուլով), Ադրբեջան-Ֆրանսիա երիտասարդական ասոցիացիան (Փարիզ, ղեկավար՝ Միրվարի Ֆաթալիևա), Ֆրանսիա-Ադրբեջան ասոցիացիան (Թուլուզ, ղեկավար՝ Ռաշադ Ալիև), Ստրասբուրգի Ադրբեջանցի երիտասարդների միությունը (ղեկավար՝ Նահիդ Ռամազանով) և այլն[2]:

Ֆրանսիայում որոշակի հաջողությունների է հասել ծնունդով բաքվեցի, դաշնակահարուհի Ռենարա Ախունդովան[3]: Մարսելի մերձակա Մոնպելիե քաղաքում է բնակվում ակտիվ ադրբեջանցի լոբբիստ Ֆուադ Գարաշևը[4]: Ինչպես նշեցինք Ֆրանսիայի թուրքերին վերաբերող բաժնում, գործում է *http://genocideazeri.free.fr* ադրբեջանական կայքը, որը ներկայացնում է կեղծ տեղեկություններ Խոջալիի դեպքերի վերաբերյալ:

[1] «Азербайджанцы проведут пикет в Париже», «Зеркало», *www.zerkalo.az,* 20.10.2006.
[2] http://www.diaspora.gov.az/teze/teskilatlar/fransa.htm
[3] «Пианистка из Парижа Ренара Ахундова», www.azeri.ru, 23.03.2009.
[4] «Азербайджанские оборотни во Франции», www.1news.az, 16.11.2009.

Եվ որպես ամփոփում ներկայացնենք Ֆրանսիայի ադրբեջանական համայնքի հետ նախորդ նախագահ Հեյդար Ալիևի հանդիպումից մեկ հատված: Ալիևի ելույթից նկատելի է, որ ադրբեջանական «սփյուռքի» զարգացման գործում Բաքուն օրինակ է վերցնում սփյուռքահայերից:

Հ.Ալիև – Չգիտեմ, թե այժմ որքան հայեր են ապրում Ֆրանսիայում:

Հանդիպման ներկաներից – Ֆրանսիայում 300 հազար հայ կա:

Հ.Ալիև – Ֆրանսիայի բնակչությունը 60 միլիոն է, նրանցից 300 հազարը հայեր են: Ինձ հետ զրույցում նախագահ Ժակ Շիրակն ասաց, որ Ֆրանսիայում 5 միլիոն մահմեդական է ապրում: Բայց նրանք մեծ ազդեցություն չունեն Ֆրանսիայի քաղաքական կյանքի վրա, իսկ 300 հազար հայերն ունեն:

Հանդիպման ներկաներից – Պարոն նախագահ, Ֆրանսիայի հայերը, ինչպես ասում են, տեր ու տիրական են այստեղի հեռուստատեսությունում, բոլոր ամսագրերում, թերթերում: Ոչ միայն մամուլում, այլև մյուս ասպարեզներում մեծ թվով հայեր կան:

Հ.Ալիև - Դուք ճիշտ եք, հայերը շատ տեղերում են ներկայացված: Ինչքան շատ հայեր կան արտգործնախարարությունում: Նախկին վարչապետ Բալադյուրն էլ հայկական արմատներ ուներ: …Եվրոպական երկրներում մեծ թվով ադրբեջանցիներ կան: Պարզ ասեմ, մի վիրավորվեք, հայրենիքի հանդեպ նրանց շատերի վերաբերմունքը, հայրենասիրական զգացումները թույլ են արտահայտված:

Հանդիպման ներկաներից – Պարոն նախագահ, հայերը «Մոնդ» թերթում Ադրբեջանի դեմ հոդված են գրել, լավ կլինի, եթե այդ հրապարակմանը հետևի արձագանք:

Հ.Ալիև - Ես պատվիրել եմ, որ այդ հոդվածին հետևի պատասխան: Բայց այդ հոդվածը հայերն են գրել: Ադրբեջանցիներն էլ կարող են այստեղի ուրիշ թերթերում հրապարակումներ գրել,

բայց չեն գրում: Ես լսել եմ, որ «Մոնդ»-ում փողով են հոդվածները տպում: Չեմ ասի, թե Ֆրանսիայի բոլոր ադրբեջանցիներն աղքատ են, կան նաև հավանաբար հարուստներ ու միջին խավ: Բայց չեն գրում:

Հանդիպման ներկաներից - Պարոն նախագահ, ճիշտ եք, «Մոնդ»-ում փողով են նյութեր հրատարակում, բացի դրանից, հայերն այնտեղ իրենց մարդիկ ունեն:

Հ.Ալիև - Լավ կլիներ, որ դուք էլ մի բան ձեռնարկեիք…[1]

«Ադրբեջանը հետևում է իր հիմնական քաղաքական հակառակորդին՝ Հայաստանին: Իզուր չէր խորաթափանց Հեյդար Ալիևը կոչ անում հայերից սովորել սփյուռքի միաբանության գործը»,- գրում է Ռուսաստանի ռազմաքաղաքական վերլուծության ինստիտուտի աշխատակից Սերգեյ Մարկեդոնովը[2]:

ԱՄՆ-ում Արցախի ներկայացուցիչ Ռոբերտ Ավետիսյանին ԱՄՆ ադրբեջանական համայնքի ներկայացուցիչները մի անգամ ասել էին՝ դուք մեր ուսուցիչներն եք…

[1] http://library.aliyev-heritage.org/ru/2364190.html

[2] «Начало пути: зарождается азербайджанская диаспора», Сергей Маркедонов, http://arabeski.globalrus.ru/print_this/163770/

Շվեդիա. Հրանտ Դինքի սպանության հետքերով

Շվեդիայի ադրբեջանական համայնքի թիվը գնահատվում է 15 հազարի սահմաններում, սակայն բուն Ադրբեջանի Հանրապետությունից սերում են հազարից ոչ ավելին, մնացածը իրանական Ատրպատականից են: Ընդհանրապես, Շվեդիայում է բնակվում ամենաակտիվ իրանա-ադրբեջանական համայնքը: Հենց Հարավային Ադրբեջանի ազգային վերազարթոնքի շարժում կազմակերպության եվրոպական բաժանմունքի նախաձեռնությամբ 2006թ. հունիսի 13-ից Շվեդիայում գործում է «Օյանըշ» ադրբեջանական հեռուստաալիքը: «Մեր նպատակն է պատմել Հարավային Ադրբեջանում տիրող իրավիճակի մասին»,- նշել է գրասենյակի ղեկավար Մահմուդալի Բիլգինը[1]:

Սակայն Ապշերոնյան թերակղզուց սերող ադրբեջանցիները ևս ցանկանում են հեռուստաժամ ունենալ: 2007թ. նոյեմբերի 6-ին գրանցվեց Բյուտյով քաղաքի ադրբեջանական միությունը: 70 անդամ ունեցող հասարակական կառույցը մտադիր է բարձրացնել Շվեդիայի հեռուստատեսությամբ ադրբեջանական եթերի կազմակերպման հարցը[2]:

Շվեդիայում գործում է «Ադրբեջանական ձայն» *FM* ռադիոկայանը: Այն մատչելի է նաև ինտերնետով՝ *www.azerbayca.se:*

Շվեդիայի ադրբեջանական համայնքը որոշակի առնչություն ունի «Ակոսի» խմբագրապետ Հրանտ Դինքի 2007թ. հունվարի 19-ի սպանության հետ: Դեռևս սպանությունից առաջ, 2005թ. մամուլում տեղեկություններ կային, որ Թուրքիայի Ժանդարմերիայի հետախուզության՝ *JITEM*-ի հիմնադիրներից և ղեկավար անդամ, բրիգադի գեներալ (գեներալ-մայոր) Վելի Քյուչյուքը սերտ հարաբերություններ ունի Շվեդիայի թուրքական և ադրբեջանական համայնքների հետ: «Օզգյուր Փոլիթիկա» հանդեսը հաղորդում է, որ Քյուչյուքը 2005թ. մայիսի 20-ին Շվեդիայում մասնակցել է Աշխարհի

[1] «Азербайджанская диаспора Швеции открывает собственный телеканал», www.day.az, 14.06.2006.

[2] "Isveçdə yeni Azərbaycan təşkilatı qeydiyyatdan keçdi", www.euroxeber.org, 07.11.2007.

ադրբեջանցիների կոնգրեսի նիստին: Այստեղ նա շփվել է Թուրան Ա. անունով 23-ամյա մի ադրբեջանցի երիտասարդի հետ: Վերջինս նախագահ Էլչիբեյի կառավարությունում ՆԳ նախարար Սիյավուշ Մուսթաֆայի (Մուսթաֆան) քրոջ որդին է և ալիևյան գերդաստանի իշխանության գալուց հետո ապաստանել է Շվեդիայում: «Քյուչյուքը բազմիցս այցելել է Ադրբեջան և մարզել է ադրբեջանցիների՝ պատրաստելով հանցախմբեր Հայաստանի դեմ»: Ավելի ուշ Թուրան Ա.-ն պատմել է. «Նա [Ադրբեջան] հայերի դեմ թուրքերին վարժեցնելու համար էր գալիս, նաև որոշ անձանց տանում էր Թուրքիա: Քյուչյուքի ադրբեջանական գործողություններին աջակցում էր ոչ միայն *MHP*-ն, այլև թուրքական պետությունը: Պատերազմի ընթացքում շատ թուրքեր եկան Ադրբեջան և Նախիջևանում պատերազմեցին հայերի դեմ»[1]: Շարունակելով սենսացիոն խոստովանությունները՝ Թուրան Ա.-ն նշել է. «Քյուչյուքին դիտում ենք որպես մի հերոս: Նա օգնել է ոչ միայն Ադրբեջանին, այլև օգնում է նաև մեզ այստեղ: Նա ասում է՝ հանուն չինական պատից մինչև Վիեննա թուրքական կայսրության գաղափարի մեր ձեռքից եկածը պիտի անենք»: Շվեդիայում հավաքին ներկա են եղել նաև «Մուսավաթ» կուսակցության ղեկավար Իսա Ղամբարը և նույն կուսակցության անդամ, լրագրող Ֆուաթ Սեդանովը, որոնց խոսքով՝ «Հայաստանյան շատ դիմակայություններում էլ Թուրքիայի մատը խառն է», սակայն Ղամբարն ու Սեդանովը խուսափել են նշել մանրամասները:

Շվեդիա այցի ժամանակ, ադրբեջանական Կոնգրեսի հավաքին, Քյուչյուքը հանդիպել է նաև Ալփարսլան Ասլանի հետ և միասին լուսանկարվել են: Ասլանը 2006թ. մայիսի 17-ին Թուրքիայի պետական խորհրդի դեմ կազմակերպած զինված հարձակման խմբի մեջ էր[2]:

Ինչպես հայտնի է, Վելի Քյուչյուքը ձերբակալված է որպես «Էրգենեքոն» ընդհատակյա կազմակերպության անդամ՝ մեղադրվելով

[1] "JITEM'ci general Veli Küçük sınırları aştı", "Özgür Politika", 02.08.2005.
[2] "So whats the deal with Kucuk and Azerbaijan?", 24.07.2007, http://wotisitgood4.blogspot.com

իշխանափոխության փորձի մեջ: Նրա անվան հետ են կապվում նաև տասնյակ քաղաքական սպանություններ, որոնք իրականացվել են *JITEM*-ի կողմից: *«JITEM*-ի գործունեության 80 տոկոսը հակաօրինական էր»,- «Զաման» թերթին հայտնել է կառույցի տեղեկատու աշխատած, իսկ ներկայում Շվեդիայում քաղաքական ապաստան ստացած Աբդյուլքադիր Այգանը[1]: Ըստ որոշ տեղեկությունների, Քյուչյուքին նույնիսկ առաջարկվել է ղեկավարել Աշխարհի ադրբեջանցիների կոնգրեսը, սակայն հրաժարվել է Լոնդոնի համալսարանի աշխատակից Գյուլամռզա Սաբրի Թաբրիզիի օգտին[2]:

Ի դեպ, Քյուչյուքը ոչ թե սուննի մահմեդական է, ինչպես թուրքերը, այլ շիա, ինչպես ադրբեջանցիները: Սա նրա ադրբեջանամետ գործունեության պատճառներից մեկը կարելի է համարել[3]:

Քյուչյուքի անունը կապվում է Հրանտ Դինքի սպանության հետ: *JITEM*-ի գեներալը խմբագրապետի կյանքի օրոք սպառնացել է նրան: Հրանտ Դինքի եղբայրը հայտարարել է, որ Քյուչյուքը վկայություն է տվել Դինքի կյանքի օրոք նրա դեմ ընթացող դատավարության ժամանակ: «Հրանտն ասաց, որ անհանգստացած է, համարում է, որ իր կյանքը վտանգի տակ է այն բանից հետո, երբ Վելի Քյուչյուքը՝ Թուրքիայի վատահամբավ *JITEM* կառույցի հեղինակավոր անդամը, դատարան եկավ»[4],- նշել է նա:

Ըստ ամերիկյան մամուլի հրապարակումների, Դինքի սպանության օրերին Թուրքիայում էր գտնվում Շվեդիայի ադրբեջանական համայնքից ոմն Ս.Մամեդ, որը ծանոթ էր Վելի Քյուչյուքի հետ և հանդիպել էր նրան Քյուչյուքի շվեդական ուղևորությունների ընթացքում: Խմբագրապետի սպանությունից անմիջապես հետո Ս.Մամեդը Թուրքիայից մեկնել էր Շվեդիա[5]:

---

[1] "JITEM hitman: Veli Küçük conceals masterminds", «Todays Zaman», 30.01.2008.

[2] "General Veli Kucuk mentions Azerbaijan during court hearing", 15.12.2008.

[3] «Куда ведет ущелье Эргенекон?», Евгений Бахревский, http://www.voskanapat.info, www.geopolitica.ru , 20.10.2009.

[4] "So whats the deal with Kucuk and Azerbaijan?", 24.07.2007, http://wotisitgood4.blogspot.com

[5] «Тегеран не любит глупых шуток», Сергей Шакарянц, «Новое Время», 22.01.2009.

Շվեդիայի ադրբեջանական համայնքի օրինակով վերստին երևում է ադրբեջանական սփյուռքը ըստ «յուրայինների» և «օտարների» դասակարգելու պաշտոնական միտումը: Ադրբեջանի մշակույթի նախարարությունը հետապնդում է նախկինում ադրբեջանաբնակ, ներկայում Շվեդիայում հաստատված բալետմեյստեր Ֆարաջ Կարանին: Նրան պաշտոնապես արգելում են Շվեդիայում բեմադրել ադրբեջանական բալետներ: Ֆարաջ Կարանը կոմպոզիտոր Կարա Կարանի որդին է և լարված հարաբերություններ ունի ադրբեջանական իշխանությունների, մասնավորապես՝ ալիևյան ընտանիքի հետ[1]:

Ըստ ադրբեջանական աղբյուրների, Շվեդիայում գործող «Հանուն Ադրբեջանի» միության ղեկավար Նադիր Գոլանբրանտը 2009-ի փետրվարին հանդիպել է Շվեդիայի խորհրդարանի նախագահ Պիեռ Վեստերբերգին և վերջինիս (ապա)տեղեկատվություն փոխանցել Խոջալիի դեպքերի վերաբերյալ[2]:

[1] www.karaev.net

[2] «Азербайджанская диаспора в Швеции встретилась со спикером парламента в связи с годовщиной Ходжалинской трагедии», www.regionplus.az, 23.02.2009.

Մեծ Բրիտանիա. ադրբեջանցիները նավթային և բանկային սեկտորներում

«Մեծ Բրիտանիայի նավթային կենտրոն Աբերդին քաղաքի խոշոր նավթավերամշակող ընկերություններում աշխատանքի են անցել ոչ քիչ թվով մեր հայրենակիցներ»,- նշում է Լոնդոնում Ադրբեջանի դեսպան Ֆահրեդին Գուրբանովը: Նրա խոսքով, Բրիտանիայի բանկային համակարգում ևս աշխատում են զգալի թվով ադրբեջանցիներ[1]: Թեև այլ աղբյուրներ դեռևս չեն փաստում անգլիական բանկերում ադրբեջանցիների աշխատանքի անցնելու մասին, սակայն չի բացառվում, որ բանկային սեկտորում ադրբեջանցի երիտասարդների առաջընթացին աջակցեր Անգլիայի թուրքական բանկային ասոցիացիան:

Լոնդոնի ադրբեջանական համայնք կազմակերպության նախաձեռնությամբ «Խոջալիի ողբերգությունը. միջազգային տեսակետ» և «Միջազգային տեսակետներ. Ղարաբաղի շուրջ հայ-ադրբեջանական հակամարտությունը» անգլիալեզու գրքերից օրինակներ են ուղարկվել Միացյալ Թագավորության ԱԳ նախարար Դևիդ Միլիբանդին, համայնքների պալատի 646 անդամներին, ԵՄ խորհրդարանում Բրիտանիան ներկայացնող 78 պատգամավորներին, միջազգային ԶԼՄ-ին՝ «Ուաշինգթոն Փոստ», «Սանդի թայմս», «Նյու Յորք թայմս», «Նյուզուիք» «Բոսթոն գլոբ» և այլն: Ըստ ադրբեջանական աղբյուրի, գրքից օրինակներ են ուղարկվել աշխարհի 60 գրադարանների:

Մեծ Բրիտանիայում է բնակվում ադրբեջանցի գիտնական Գոլամրզա Սաբրի Թաբրիզին, որի օգտին ԱԱԿ ղեկավարությունից հրաժարվել էր գեներալ Վելի Քյուչյուքը: Իրանական Ատրպատականից սերող Գոլամրզան, մասնակցելով կոնգրեսի աշխատանքներին, հայտարարել էր, թե «հայերը ահաբեկչության և ցեղասպանության 65 գործողություն են իրականացրել»: Նա նաև Իրանական ժողովուրդների միացյալ ընդդիմադիր ճակատ կազմակերպության անդամ է: Կառույցը ձևավորվել է բրիտանական

[1] Посол Фахреддин Гурбанов: «Большое количество наших молодых ребят сегодня трудится в ведущих банках Великобритании», www.day.az, 09.11.2009.

կառավարության հովանավորությամբ 2005-ին, միավորում է ադրբեջանցիների, քրդերի և բելուջների և Թեհրանի վարչակազմին ընդդեմ ուղղվածություն ունի[1]: Կառույցն ակտիվ չէ հատկապես ադրբեջանական և քրդական կողմերի միջև հակասությունների արդյունքում: Թաբրիզիի խոսքով՝ քրդերը, մասնավորապես *PKK* և *Komala* կազմակերպությունները, հավակնում են իրանական Ադրբեջանի տարածքներին:

Բրիտանական «Լոթըրի ֆաունդեյշընի» հովանավորությամբ 2006թ. հոկտեմբերից գործում է Հարավային ադրբեջանցիների կազմակերպությունը, որի ղեկավարն է Ալաեդին Ֆեթհրազին: Նշված կառույցը և Լոնդոնի ադրբեջանական համայնք միությունն ու վերջինին կից գործող Կասպիրն-Խազար ընկերությունը համատեղ կազմակերպում են Մեծ Բրիտանիայի տարածքում ադրբեջանական դպրոցների հիմնադրման աշխատանքները: Առաջին դպրոցը հիմնվել է 2006թ. ապրիլի 28-ին, 2 տարի անց նույն օրը բացվել է 2-րդ դպրոցը, այնուհետև՝ 3-րդը նույն թվականի աշնանը: Առաջին 2-ը գործում են Լոնդոնում, 3-ը՝ Շոտլանդիայում[2]: 2008թ. նոյեմբերի 14-ին էթնիկ թուրքերով խիտ բնակեցված Հեքնի թաղամասում, Քինգսլանդ ռոուդում բացվեց Լոնդոնի Ադրբեջանական տունը *(www.azerbaijanhouse.org):* Աշխատանքները սկսվել էին 2006-ին, այն բանից հետո, երբ գրանցվեց Լոնդոնի ադրբեջանական տուն մշակութային և բարեկամության կենտրոն հասարակական կազմակերպությունը: Դասարան, համերգասրահ և գրադարան ներկայացնող տան նախագահն է Ալի Թեքին Աթալարը, գործադիր վարչության կազմում են նաև Թամարա Դրագաձեն, Սիմուզար Բալաօղլանովան (զուգահեռ նաև Կասպիրն-Խազար կրթական ընկերության տնօրենն է) և ուրիշներ[3]: Դատելով կազմակերպության կայքից՝ կազմակերպվում են միջոցառումներ իրանական Ատրպատականի համայնքի հետ համատեղ՝ նվիրված ԻԻՀ-ում ադրբեջաներեն լեզվի խնդրին, հանդիպումներ են լինում Լոնդոնի թուրքերի հետ, 2010թ. հունվարի 20-ին նշվել է Բաքվի

[1] «В бой единым фронтом», www.ethnoglobus.com, 15.05.2008.
[2] "London'da ikinci Azərbaycan məktəbi açıldı", press-release.az, 28.04.2008, »õ "Azərbaycan məktəbi Şotlandiya'da", www.euxeber.com, 02.09.2008.
[3] www.azerbaijanhouse.org

դեպքերի 20-րդ տարելիցը:

Ըստ ադրբեջանական աղբյուրների, 2006թ. Մեծ Բրիտանիայում ձևավորվել է *«Azerproductions»* կառույցը, որը զբաղվելու է ադրբեջանական արտադրանքի արտահանման հարցերով:

Մեծ Բրիտանիայում է գործում «Սառա խաթուն» կանանց համայնքային միությունը, որը 2008թ. մարտի 8-ին անցկացրեց Բրիտանիայի ադրբեջանցի կանանց գեղեցկության մրցույթ: Հաղթանակ տարավ Սևինչ Նաբիևան[1]:

[1] «Севинч Набиева объявлена первой мисс Азербайджана Великобритании», www.rol.ru, 21.03.2008.

Իսրայել. ամենակարևոր համայնքը

ԽՍՀՄ կազմալուծումից հետո Ադրբեջանից Իսրայել փոխադրվեց 40-50 հազար հրեա, այլ հաշվարկներով՝ մինչև 70 հազար: Բացի այդ, Ադրբեջանից Իսրայել մեկնեցին նաև 20 հազարի չափ ադրբեջանցիներ: 21-րդ դարի սկզբում ծավալվեց Իսրայելում բնակվող նախկին ադրբեջանաբնակ քաղաքացիների ինքնակազմակերպումը: Բնականաբար, նրանցով չէր կարող չհետաքրքրվել նաև մեր արևելյան հարևանը՝ հաշվի առնելով Իսրայելի փորձն ու կարողությունները համաշխարհային լոբբիստական աշխատանքներում:

2007թ. ապրիլի 12-ին Թել Ավիվում պաշտոնապես հիմնվեց Ադրբեջան-Իսրայել միջազգային ասոցիացիան (կրճատ՝ ԱզԻս): Այն նախկինում Ադրբեջանում բնակված և Իսրայել փոխադրված հրեաների հասարակական կառույցն է: ԱզԻս-ի կառույցում գործում է 12 կոմիտե՝ արտաքին կապերի, գիտության և կրթության, առևտրատնտեսական, կրոնական հարցերով, տեղեկատվական-վերլուծական և այլն: Նախաձեռնության հետևում նկատելի են լոբբիզմով զբաղվելու պետական նախագծի «ականջները»: Կառույցի վարչության անդամ Յանա Սալմանի խոսքով՝ նպատակների թվում է «մասնակցել ողջ աշխարհում ադրբեջանական դիասպորայի միասնականացման գործընթացին» և «Ղարաբաղի վերաբերյալ տարածել ճշմարտությունը»[1]: Առաջին գործում առաջընթացը հնարավոր է, բայց Ղարաբաղի վերաբերյալ ճշմարտությունը ԱզԻս-ը դժվար թե տարածի:

Կառույցի հիմնադրմանը ներկա էր Ադրբեջանի 20 (!) հոգուց բաղկացած պատվիրակությունը Նազիմ Իբրահիմովի գլխավորությամբ: Հրավիրված էին Իսրայելի 32 քաղաքները ներկայացնող 400-ի չափ մասնակիցներ: Իբրահիմովն ընթերցել է նախագահ Ալիևի ուղերձն «Ադրբեջան-Իսրայել պատմական կապերի» մասին: Անհասկանալի է, թե ինչ պատմական կապերի մասին է խոսքը, եթե Ադրբեջանն առաջին անգամ քարտեզին հայտնվել է 1918թ. մայիսին, երբ Իսրայելը դեռ անկախ չէր, իսկ Քրիստոսից առաջ գո-

[1] Стенограмма первого съезда международной ассоциации «Израиль - Азербайджан» http://www.druzya.com/forum/showthread.php?30969

յություն ունեցող հրեական պետության ժամանակներում «ադրբեջանցի» գաղափարն ընդհանրապես «նոնսենս» էր: Ադրբեջանցի պաշտոնյան հայտարարել էր, որ իրենց կառույցը պատրաստ է գործակցել ցանկացած պետության ցանկացած հրեական կազմակերպության հետ:

Իսրայելական կողմից միջոցառմանը ներկա էին փոխվարչապետ և ռազմավարական պլանավորման նախարար, նախկինում խորհրդային քաղաքացի Ավիգդոր Լիբերմանը, որը նաև Իսրայելը մեր տունն է կուսակցության ղեկավարն էր և գրքի հրատարակության պահին զբաղեցնում է ԱԳ նախարարի պաշտոնը: Ներկա էր նաև տրանսպորտի նախարար, գեներալ Շաուֆ Մոֆազը, տուրիզմի նախարար Իսհակ Արանովիչը: Հասարակական կազմակերպության նախագահ է ընտրվել տվյալ ժամանակահատվածում Քնեսետի պատգամավոր Իոսիֆ Շագալը, որն Իսրայելը մեր տունն է կուսակցության անդամ է: ԱզԻս կազմակերպության փոխնախագահներն են Նեխամիա Միխաելին, Ալեքս Շապիրոն և Նինա Յարովայան, գլխավոր տնօրենը՝ Լև Սպիվակը[1]: Անցնող տարիներին ԱզԻս-ը գրասենյակներ է բացել Գերմանիայում և Նիդեռլանդներում:

Իոսիֆ Շագալը հաճախ այցելում է Բաքու, որտեղ և ծնվել է 1949թ.: Իսրայել է փոխադրվել 1990-ին, աշխատել որպես լրագրող «Նովոստի նեդելի», «Նաշա ստրանա» թերթերում, հեռուստատեսությունում, Վալենտինա Մալցևա անվամբ ստորագրել մի շարք գեղարվեստական գրքեր, որոնցում անդրադարձել է տարբեր պետություններում ԽՍՀՄ հետախուզության գործունեությանը[2]: Ավելի ուշ դրանց հիման վրա ՌԴ-ում նկարահանվեց *«КГБ в смокинге»* գեղարվեստական ֆիլմաշարը[3]:

Շագալը առանցքային դեր է ստանձնել իսրայելա-ադրբեջանա-թուրքական գաղթօջախների գործակցությունը խորացնելու գործում: Այն բանից հետո, երբ Բաքուն դատապարտեց 2009-ի

[1] И. Шагал избран президентом Ассоциации израильтян, выходцев из Азербайджана, www.anspress.com, 13.04.2007.
[2] «Песнь песней от Иосифа Шагала», www.azcongress.ru, 15.05.06.
[3] http://www.ruskino.ru/mov/forum/2951

տարեսկզբին Գազայի հատվածում իսրայելական բանակի գործողությունները, Շագալը հայտնվեց երկակի վիճակում: *«Izrus»* կայքի փոխանցմամբ, «Ադրբեջանի միակողմանի դիրքորոշումը շատերի համար զարմանալի էր», և կայքի հարցերին պատասխանելիս Շագալը փորձում էր արդարացնել Ադրբեջանի կեցվածքը «մահմեդական միաբանության» և «արևելքին բնորոշ առանձնահատկությունների» արդարացումներով, սակայն վերջնահաշվում ընդունելի համարեց «Ադրբեջանի երկերեսանիության» տարբերակը: Նույն *«Izrus»* կայքը նշում էր, որ «Հայաստանի արտաքին քաղաքականությունն այս առումով ավելի հավասարակշիռ էր»[1]: Մասնավորապես, Ադրբեջանի կանաչների կուսակցությունը Իսրայելին մեղադրել էր ցեղասպանություն գործադրելու մեջ, պատգամավոր Լալա Աբասովան դուրս եկավ Ադրբեջան-Իսրայել միջխորհրդարանական բարեկամության խմբից, իսկ Պաղեստին պետության ձևավորման վերաբերյալ Ադրբեջանի ԱԳ նախարարության տեքստին ծանոթանալուց հետո ԱզԻս-ի տնօրեն Լև Սպիվակը կարծիք հայտնեց, թե հայտարարության տեքստում, հավանաբար, սխալ կա, ինչի առիթով Բաքվի ԱԳ նախարարությունում նոր հայտարարություն արեցին՝ հավաստելով, թե սխալ չկար[2]:

Կոմիտեի Մերձավոր Արևելքի երկրների բաժնի ղեկավար Քյավուզ Կասիմովը գտնում է, որ ԱզԻս-ը պետք է Քնեսետում առաջ մղի Խոջալիի դեպքերի թեման: «Պետք է համոզել Իսրայելի կառավարությանը, որ դա նույնպես ցեղասպանություն էր, ինչպես և Հոլոքոստը»,- հայտարարել է նա: Կասիմովի խոսքով՝ այս նպատակով Ադրբեջանը պետք է շահարկի նավթի գործոնը:

Իսրայելը տարեկան ներկրում է 12 մլն տոննա նավթ, որից մոտ 2 մլն-ը՝ Ադրբեջանից: Այս ցուցանիշը աճման միտում ունի: Իսրայելը ադրբեջանական նավթի 2-րդ գնորդն է աշխարհում: Իսրայելի էներգետիկ շահերի համատեքստում էր Բաքու-Ջեյհանի շինարարությունը, քանի որ Ջեյհանը Հայֆա քաղաքից մոտ 600 կմ

[1] Война в Газе: Азербайджан ведет расчетливую игру, www.izrus.co.il, 07.01.2009.

[2] «Партия зеленых Азербайджана», Действия Израиля в секторе Газа следует оценивать как Геноцид палестинцев», www.day.az, 09.01.2009.

հեռավորության վրա է, Հայֆայի նավթամշակման գործարաններն օգտագործում են Ջեյհանում ստացվող ադրբեջանական նավթը, Իսրայելում էլ քննարկման փուլում է Միջերկրականով խողովակաշարի կառուցման ծրագիրը, որը Բաքվի նավթը Ջեյհանից կփոխադրի Իսրայել[1]: Էներգետիկ, ռազմավարական և մի շարք աշխարհաքաղաքական գործոններն ամուր հիմք են ստեղծում և Բաքվին հնարավորություն տալիս, զուգահեռաբար լոբբինգի ուղղությամբ նավթադոլարներ ծախսելով, նպատակային աշխատել Իսրայելի հետ հարաբերությունների սերտացման ուղղությամբ՝ ենթատեքստում դնելով իսրայելական լոբբիի հետ հայկական սփյուռքին դիմագրավելու և հակահայ ձեռնարկներ նախաձեռնելու հեռահար նպատակը:

Իսրայելում գործում է նաև Իսրայելի ադրբեջանցիների կոնգրես կազմակերպությունը, որի գործունեության առանցքում Իսրայել-Ադրբեջան-Թուրքիա առանցքի ամրապնդմանը նպաստելու առաքելությունն է: Կառույցի ղեկավարն է Ալեքս Շապիրո Սուլիմանը: Հատկանշական է, որ Բաքվից վերահսկվող ԱզԻս-ի և անկախ գործող կոնգրեսի միջև առկա է սուր մրցակցություն: 2008թ. փետրվարի 26-ին Հայֆա քաղաքի «Լոտոս» ռեստորանում ԱզԻս-ի կողմից իրականացվում էր մշակութային միջոցառում, երբ ներխուժեցին կոնգրեսի ներկայացուցիչները, անկարգություններ ու քաշքշուկ սկսեցին՝ հայտարարելով, որ Խոջալիի դեպքերի տարելիցի օրը միջոցառման կազմակերպումն անվայելուչ է[2]:

«Եթե Թուրքիան և Ադրբեջանը Իսրայելում ունեն շահերը պաշտպանող 2 կազմակերպություն, ապա Հայաստանը ոչ մի նման կառույց չունի»,- այս առիթով նշում է Իսրայելի քաղաքական վերլուծաբան Շիմոն Բրիմանը[3]: «Մերեց» ձախակողմյան կուսակցությունից Քնեսետի անդամ Խայիմ Արոնը մի անգամ հայտարարել է, որ երբ 2007 և 2008թթ. օրակարգ էր բերում Հայոց ցեղասպանության օրինագիծը, իրեն ավելի շատ զանգահարում էին ադրբե-

[1] http://www.druzya.com/forum/showthread.php?30969

[2] «Про израильско-азербайджанские взаимоотношения», www.analitika.at.ua, 07.09.2009.

[3] Նույն տեղում:

ջանցիները, քան թե հայերը: Իհարկե, այստեղ պետք է հաշվի առնել, որ Իսրայելում Ադրբեջանից փոխադրված քաղաքացիների թիվն ավելի մեծ է:

Միայն Հայֆայում 6-8 հազար նախկին ադրբեջանաբնակ քաղաքացիներ են ապրում, նշում է նախկինում Խորհրդային Ադրբեջանի գլխավոր մանկական հոբեբույժ, ներկայում Հայֆայի բնակիչ, դոկտոր, պրոֆեսոր Միրոն Ֆելը: Նա 1991թ. հիմնեց «Հայֆա-Բաքու» միությունը, որը միավորում էր քաղաքի նախկին ադրբեջանաբնակներին: Ըստ կազմակերպության կայքի, 700-800 ընտանիք արդեն միացել է կառույցին, նրանցից ոմանք երբեմն այցելում են Ադրբեջան, իսկ կառույցի նախագահն Ալիևի կողմից պարգևատրվել է «Առաջադիմության և զարգացման համար» մեդալով: Ֆելը նաև Հայֆայի հասարակական կազմակերպությունների միության նախագահն է[1]:

Ներկայում Իսրայելում են ապրում «Ազերինֆորմ» լրատվական գործակալության նախկին գլխավոր խմբագիր Սավելի Պերեցը, «Շախմատ» ադրբեջանական հանդեսի գլխավոր խմբագիր Ազեր Զեյնալին, Օղուզ քաղաքի նախկին 2-րդ կուսքարտուղար Ռաբայ Խանանաևը, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Բախթիյար Յակուբովը, որոնք հիմնականում ԱզԻս-ի միջոցով կապ են պահպանում ադրբեջանական պետական շրջանակների հետ:

Իսրայելի Խադերա քաղաքում Հեյդար Ալիևի անվամբ կկոչվի փողոցներից մեկը: Նախաձեռնության հեղինակն է իշխող Մեր տունն Ադրբեջանն է կուսակցության գլխավոր տնօրեն, Քնեսետի պատգամավոր Ֆաինա Կիրշենբաումը[2]:

Այնուհանդերձ, ավելի խոր վերլուծությունները ցույց են տալիս, որ չնայած Բաքվի ջանքերին, ադրբեջանա-իսրայելական հարաբերությունները թեև, այո, խորանում են, սակայն լուրջ հակահայ թեքումներ այս պահի դրությամբ դեռ տեսանելի չեն: Հայֆայի քաղաքապետարանը 10 տարուց ավելի է՝ ընթացք չի տալիս Բաք-

[1] Станет ли Хайфа по счету побратимом Баку?, www.baku.ru, 01.03.2002.

[2] «В одном из городов Израиля будет открыт парк им. Гейдара Алиева», www.juhuro.com, 10.12.2009.

վի հետ քույր քաղաքների համաձայնագիր ստորագրելու Ադրբեջանի և Հայֆայի ադրբեջանցիների նախաձեռնությանը: «Հայֆայի քաղաքապետարանում այս գաղափարին փոքր-ինչ սառն են վերաբերվում: Նախկին քաղաքապետը Բաքվի քաղաքապետից այցի հրավեր ստացավ, բայց չարձագանքեց, նոր քաղաքապետը 1999-ին ասաց, որ կայցելի, բայց առայսօր չի եղել Ադրբեջանում»,- նշում է Միրոն Ֆելը[1]: Եվրատեսիլ 2008-ի ժամանակ Իսրայելը Հայաստանին փոխանցեց 8 միավոր, մինչդեռ Ադրբեջանին՝ միայն 3: Սա՝ այն դեպքում, երբ հայկական համայնքի թիվն է 2000, իսկ նախկին ադրբեջանաբնակները տասնյակ հազարներ են:

Պարբերաբար հետաձգվում է Իսրայելում Ադրբեջանի դեսպանատան բացումը, չնայած ադրբեջանական կողմի ջանքերին, իսրայելցի պաշտոնյաները, ընդհուպ մինչև Իոսիֆ Շագալը, Իսրայելում Հայոց ցեղասպանության ճանաչման թեմային անդրադառնալիս չեն մերժում բուն պատմական փաստը, այլ խոսում են պաշտոնական ճանաչման աննպատակահարմարության մասին: Այսքանով հանդերձ, հաշվի առնելով ընդհանուր ռազմավարական մեծաթիվ հետաքրքրությունները, հարաբերություններն ունեն զարգացման ներուժ:

Ադրբեջանա-իսրայելական հարաբերությունները զարգանում են նաև լոբբիստական գործընկերության ասպարեզում, ինչի մասին մանրամասներ ներկայացված են համապատասխան բաժնում:

[1] Станет ли Хайфа по счету побратимом Баку?, www.baku.ru, 01.03.2002.

Այլ պետություններ. Կանադայից մինչև Եվրոպա ու Նոր Զելանդիա

Կանադայի Վաթերլոյի համալսարանում է աշխատում պրոֆեսոր Իլհամ Ախունդովը, որը Կանադա-Ադրբեջան համագործակցության ասոցիացիայի նախագահն է: Ադրբեջանական աղբյուրները նշում են, որ Կանադայում 33 հազար ադրբեջանցի է ապրում, գործում է 12 ադրբեջանական կառույց: 2005-ին ձևավորվեց Կանադայի ադրբեջանական կազմակերպությունների ֆեդերացիան, որը ներքին հակասությունների պատճառով կազմալուծվեց, իսկ 2006-ին ձևավորվեց Կանադայի ադրբեջանական միությունների համագումարը:

2006թ. մայիսին Կանադայի Օնտարիո քաղաքում տեղի ունեցավ Ցեղասպանության թանգարանի կանադական կազմակերպության հերթական նիստը, որին ներկա էին Կանադայում գործող «Ադրբեջանական մշակույթի և կրթության» ներկայացուցիչները: Ադրբեջանցի մասնակիցները ներկաներին բաժանել են բացիկներ, որոնք ներկայացնում էին Խոջալիի դեպքերը և մարտի 31ը՝ որպես «ադրբեջանցիների ցեղասպանության օր»:

Ըստ Չեխիայի հայկական շրջանակներից ստացված տեղեկությունների, մայրաքաղաք Պրահայում բացվել է Ադրբեջանական տուն: 2007թ. նոյեմբերի 6-ին Լիդիցա բնակավայրում գերմանացիների կողմից չեխերի զանգվածային սպանությունների և տարագրության դեպքերի 65-ամյակի կապակցությամբ կազմակերպված միջոցառմանը 2 ամիս ժամկետով ներկայացված է եղել նաև Խոջալիի դեպքերին նվիրված ցուցահանդես[1]: Լիդիցայում 2010թ. կրկին իրականացվել է Խոջալիի դեպքերին նվիրված միջոցառում: 2007թ. մարտին Բռնո քաղաքում Ղարաբաղյան հակամարտության թեմայով հայ կինոռեժիսոր Դավիթ Հովհաննիսյանի «Պատերազմ և խաղաղություն» ֆիլմի ցուցադրության ժամանակ Չեխիայի ադրբեջանական համայնքի ներկայացուցիչները և տեղի բուհերի ադրբեջանցի ուսանողները տարածել են թռուցիկներ, որոնցում ներ-

[1] «Азербайджанцы зажгли «Свет за Ходжалы» в Чешских Лидицах» http://old.radio.cz, 28.02.2007.

կայացված են եղել կեղծ տեղեկություններ Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ[1]:

Չեխիայի հայկական համայնքի ներկայացուցիչներից մեկի հետ առանձնազրույցում Չեխիայի ԱԳ փոխնախարարը նշել էր, որ Ադրբեջանի դեսպան Թահիր Թաղիզադեն իրեն նվիրել է «Ղարաբաղ» խորագրով քարոզչական բնույթի ալբոմ՝ տպված Ադրբեջանում, մեծ թվով լուսանկարներով:

Էստոնիայում բնակվում է մոտ 1000 ադրբեջանցի[2]: Ընդդիմադիր Ցենտրիստական կուսակցությունից Էստոնիայի Ռիյգկոգուի՝ խորհրդարանի անդամ է էթնիկ ադրբեջանցի Էլդար Էֆենդիևը, որն ավելի վաղ (2002-2003) զբաղեցրել է հասարակական հարցերով նախարարի պաշտոնը, նաև եղել է Նարվայի քաղաքապետը (1999-2000)[3]: Խորհրդային ժամանակահատվածում Էֆենդիևն ուսանել է Բաքվում: 2003թ. Ադրբեջանում նախագահական ընտրություններին ԵԽ դիտորդ էր: Այստեղ ձեռք է բերել պայմանավորվածություն ադրբեջանական համայնքի կազմակերպման վերաբերյալ: 2004թ. Էֆենդիևի նախաձեռնությամբ Տալլինում բացվել է Բաքվեցիների ակումբը, որը միավորում է ինչպես ադրբեջանցիներին, այնպես էլ Բաքվից փոխադրված այլ ազգությունների ներկայացուցիչներին, որոնց թիվն ընդհանուր առմամբ մոտ 2500 է[4]:

Ադրբեջանական ծագում ուներ Լիտվայի նախկին նախագահ Ադամկուսի խորհրդական Գալինա Կոբեսկայտեն, որը լիտվերեն է թարգմանել ադրբեջանցի հեղինակների ստեղծագործություններ: Իսկ Լատվիայի մայրաքաղաք Ռիգայում քաղխորհրդի մակարդակով որոշում է ընդունվել ադրբեջանա-լատիշական բարեկամության զբոսայգի հիմնելու մասին[5]:

---

[1] «В Брно показан фильм «Война и мир» о Карабахском конфликте», www.panarmenian.net, 16.03.2007.

[2] «Назим Ибрагимов: создание азербайджанского лобби стоит дорого».

[3] Эфендиев Эльдар, ru.wikipedia.ru և այլ աղբյուրներ:

[4] «Эстония поможет Азербайджану интегрироваться в Европейское пространство», "Zerkalo" www.zerkalo.az, 06.07.2007.

[5] «На трибуне азербайджанская диаспора», «Новый рубеж», (США), 23.04.2006.

Նորվեգիայում ադրբեջանական միություններ են գործում մայրաքաղաք Օսլոյում և Ստավանկերում: 2005թ. հիմնվեց Նորվեգիա-Ադրբեջան երիտասարդական միությունը, որի ղեկավարն է Ռամիլ Ալիևը[1]: Կառույցը երկրի արտաքին հարաբերությունների ինստիտուտում անցկացրել է «Ադրբեջանի աշխարհագրական դերը Հարավային Կովկասում» գիտաժողովը, 2009-ի փետրվարին կազմակերպել է 3 տասնյակի չափ նորվեգացի ուսանողների այցն Ադրբեջան: Ադրբեջանական հասարակական կազմակերպությունը Նորվեգիայում 72 կազմակերպություններից բաղկացած Նորվեգիայի երիտասարդական կոնսիլիումի անդամ է: Ռ.Ալիևի խոսքով՝ իրենք սերտորեն աշխատում են Շվեդիայի թուրքական և ադրբեջանական միությունների հետ, հանդիպել են Շվեդիայի խորհրդարանի պատգամավոր Մեհմեթ Քափլանին, Օսլոյի քաղաքային խորհրդի անդամ, ազգությամբ թուրք Մերթեֆե Բաթինօղլուին:

Հեռավոր Ճապոնիայում գործում են Ադրբեջան-Ճապոնիա բարեկամության միությունը և համապատասխան *www.azeri-diaspora.com* կայքը: Պարզվում է՝ ադրբեջանական միություններ կան նույնիսկ Նոր Զելանդիայում. պաշտոնապես գրանցված է 2 ադրբեջանական կառույց, գործարկվել է կայք՝ *www.azeri.org.nz:*

[1] "Norveç -Azerbaycan – Bizi birleşdiren nedir?", "Ölkem", էջ 56-58, http://85.132.70.139/olkem/Olkem9.pdf

Ադրբեջանական համայնքներն ԱՊՀ-ում
«Շուկայից ուժային համակարգ. խորհրդարան և լրատվամիջոցներ»

Ռուսաստան

Ադրբեջանական տվյալներով՝ Ռուսաստանում բնակվում է 2 միլիոն ադրբեջանցի, որոնցից 700 հազարը՝ ՌԴ քաղաքացի, մնացածը՝ գերազանցապես Ադրբեջանի քաղաքացի են[1]: Ըստ 2002թ. ՌԴ մարդահամարի տվյալների՝ ռուսաստանաբնակ ադրբեջանցիների թիվը 621 հազար 840 է: Համեմատության համար. ՌԴ հայ բնակչության թիվը, ըստ պաշտոնական վիճակագրության, 1,13 միլիոնի սահմաններում է[2]: Մեծ թիվ են կազմում առանց պաշտոնական կարգավիճակի ապրող «գաստարբայտերները». ըստ տարբեր տեղեկությունների, ՌԴ-ում կա մինչև 2 միլիոն օրինական և անօրինական ապրող ադրբեջանցի: Ադրբեջանական զգալի ազգաբնակչություն կա Մոսկվա, Կրասնոյարսկ, Ռոստով, Սարատով, Սամարա, Ստավրոպոլ քաղաքներում և շրջակա բնակավայրերում: Էթնիկ ադրբեջանցիներ են Դաղստանի Դերբենտ քաղաքի բնակիչների 1/3-ը (մոտ 35 հազար): Ընդհանրապես, Դաղստանում ադրբեջանական համայնքի թիվը 110 հազարի սահմաններում է: Դերբենտը, որը ՌԴ ամենահարավային քաղաքն է, Գյանջայի հետ քույր քաղաքների համաձայնագիր ունի: Մեծ թվով ադրբեջանցիներ են բնակվում նաև Դաղստանի Թաբասարանի, Ռուտոիլիի, Կիզլյարի շրջաններում, մայրաքաղաք Մախաչկալայում, Բույնակսկում, Խասավյուրտում[3]: Դերբենտում գործում է ադրբեջանական դրամատիկ թատրոն, հրատարակվում են թերթեր:

Նկատելի է, որ ադրբեջանական պետական ղեկավարությունը ձգտում ունի փոխել ՌԴ-ում և հետխորհրդային տարածքում

[1] «Госкомитет по работе с азербайджанцами, проживающими за рубежом: «В России проживает около 2 миллионов азербайджанцев», www.day.az, 28.12.2007.

[2] www.perepis2002.ru

[3] «Ислам и проблемы безопасности в Южном федеральном округе», К. Ханбабаев, Институт религии и политики, www.i-r-p.ru, 05.09.2005.

առկա «շուկայում մթերք ծախող ադրբեջանցու» կարծրատիպը, այս հարցում որոշակի խանդի զգացողություն կա հայկական համայնքի հանդեպ: Իհարկե, ՌԴ-ում հայ բնակիչները նույնպես զգալի չափով ներագրավված են առևտրի ոլորտում, սակայն հայ մտավորականները, քաղաքագետները, բժիշկները, մշակույթի, ռազմական ոլորտի, անվտանգության համակարգի հռչակված գործիչները, ինչպես ԽՍՀՄ օրոք, այնպես էլ հետխորհրդային շրջանում զգալի հաջողությունների են հասել՝ նպաստելով թե՛ ԽՍՀՄ-ի և թե՛ ներկայիս Ռուսաստանի Դաշնության տնտեսական զարգացմանը, գիտական առաջընթացին, ռազմարդյունաբերության զարգացմանն ու անվտանգության ամրապնդմանը:

ՌԴ-ում հայ և ադրբեջանցի բնակիչների կարգավիճակների միջև առկա որոշակի տարբերության թեմայով արտահայտվել է Մոսկվայում բնակվող ադրբեջանցի խոշոր գործարար Արազ Աղալարովը. «Երբ դեռ նոր էի եկել Մոսկվա՝ ասպիրանտուրայում սովորելու, շատ զարմացել էի. բացում ես ցանկացած տեղեկատու՝ Արհմիությունների կենտրոնական խորհուրդ, ԱԳՆ, Գիտությունների ակադեմիա, ու տեսնում համատարած հայկական ազգանուններ: Եվ դա՝ ցանկացած մակարդակում: Չգիտեմ ինչու, ադրբեջանցիներն իրենց բնույթով առավելապես գործարար են, իսկ հայերը ձգտում են պետական ծառայության»[1]: Այստեղ «բնույթով գործարար են» ձևակերպման ենթատեքստը, թերևս, ավելի շուտ վերաբերում է շուկայում աշխատող ադրբեջանցու բնույթին, քանի որ նույն հարցազրույցի այլ հատվածներում Աղալարովը խոսում է հետևյալ կերպ. «Ադրբեջանցիներին չի կարելի համարել «վատը» այն բանի համար, որ իրենց երկիրը պատմականորեն դարձել է Ռուսաստանի բանջարանոցը: Խորհրդային Միությունում մեկ շնչին բաժին էր ընկնում 36կգ բանջարեղեն ու միրգ, իսկ Ադրբեջանում այդ թիվը հասնում էր 600կգ-ի: Եվ երբ մերոնց վրա «տակառ են գլորում»՝ ասելով, թե նրանք հեղեղել են շուկաները և չեն ցանկանում գնալ պետական ծառայության, ես պատասխանում եմ՝ այդպես է ստացվել»:

[1] Араз Агаларов: «Мои капиталы возрастут до 1 млрд долларов», «Зеркало», 21 08 2004.

Մեկ այլ ադրբեջանական վերլուծականում կարդում ենք. «Բավական է միացնել ռուսաստանյան հեռուստաալիքը, և կհամոզվենք, թե որքան հաճախ է ռուսաստանցի հեռուստադիտողը լսում հայկական ազգանուններ և որքան սակավ՝ ադրբեջանական: Դատեք ինքներդ՝ մեծ թվով ռուսաստանցիների ականջին սովոր են Տիգրան Քեոսայան, Արթուր Գասպարյան, Արմեն Ջիգարխանյան, Եվգենի Պետրոսյան, Անդրանիկ Միհրանյան, Արթուր Չիլինգարյան հայերի անունները: Իսկ վերջին անգամ ո՞ր ադրբեջանցու ազգանունն են լսել ռուսաստանցիները»[1]: Մեկ ուրիշ ադրբեջանցի լրագրողի դիտարկմամբ, «Ռուսաստանի գրեթե բոլոր կինոնկարահանման հրապարակներում հնչում են հայկական ազգանուններ»[2]: Պետկոմիտեում Ռուսաստանի ուղղությունը համակարգող վարչության պետ Սալիմովը ՌԴ-ում ադրբեջանցու կարծրատիպի առնչությամբ նշում է. «Պետք է հիշել, որ ՌԴ-ում բնակվող ամենևին էլ ոչ բոլոր ադրբեջանցիներն են ունակ միայն շուկայում առևտուր անելու»[3]:

Ժամանակակից Ռուսաստանում հաջողության հասած ադրբեջանցիների թվում են ԼՈՒԿՕՅԼ-ի նախագահ Վագիթ Ալեքպերովը, խոշոր գործարարներ Արազ Աղալարովը, Իսկենդեր Խալիլովը, ՌԴ խորհրդարանի վերին պալատի՝ Սենատի անդամ Ֆարհադ Ահմեդովը: Վերջինս, ի դեպ, Սենատ է ընտրվել հայաշատ Կրասնոդարի երկրամասից: ՌԴ կառավարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետն է Սուբհի Շիխլինսկին, Ռուսաստանի փաստաբանների գիլդիայի նախագահն է Հասան Միրզոևը: «Ֆորբսի» տվյալներով՝ ՌԴ ամենահարուստ 100 քաղաքացիների թվում են 3 ադրբեջանցի՝ Վագիթ Ալեքպերով (ԼՈՒԿՕՅԼ, 12 միլիարդ ԱՄՆ դոլար, 8-րդ հորիզոնական), Ֆարհադ Ահմեդով (Նորդգազ, 1,5 միլիարդ ԱՄՆ դոլար, 44-րդ հորիզոնական) և Արազ Աղալարով («Կրոկուս սիթի», 690 միլիոն ԱՄՆ դոլար, 84-րդ հորիզոնական): Ավելի վաղ ցուցակում էր նաև Թելման Իսմայիլովը,

[1] «Квадратура круга или почему в России избивают азербайджанцев», www.day.az, 15.09.2006.

[2] «Рустам Ибрагимбеков сыграл в самурая», «Эхо», 05.06.2004.

[3] «Госкомитет по работе с азербайджанцами, проживающими за рубежом: «В России проживает около 2 миллионов азербайджанцев», www.day.az, 28.12.2007.

որը հայտնի Չերկիզյան շուկայի սեփականատերն էր, սակայն շուկայի փակման պատճառով Իսմայիլովի եկամուտները նվազեցին, և նա դուրս մնաց «ոսկե հարյուրյակից»[1]:

Ծագումով ադրբեջանցի է ՌԴ իսլամական կոմիտեի ղեկավար Հայդար Ջեմալը: Ծնվել է 1947թ. Մոսկվայում, բայց հայրը՝ Ջահիդը, ծնունդով Շուշիից է: Խորհրդային դարաշրջանում Հայդար Ջեմալն աչքի էր ընկնում նոն-կոմֆորմիստական հայացքներով, 1990թ., դեռ ԽՍՀՄ պայմաններում դարձավ Աստրախանում ձևավորված Իսլամական վերածննդի կուսակցության ստեղծման նախաձեռնողներից մեկը և փոխնախագահը: Նույն թվականին ստեղծում է «Թաուհիդ» իսլամական տեղեկատվական կենտրոնն ու սկսում «Ալ-վահդաթ» (Միասնություն) թերթի տպագրությունը: 90-ականներին Հայդար Ջեմալը գործակցում էր Իրանի վարչակազմի հետ, մտերիմ էր Այաթոլա Խոմեյնիի որդի Ահմադ Խոմեյնիի հետ մինչև վերջինի մահը՝ 1994թ.:

Ջեմալը հայտնի է ընդգծված հակահայ հայտարարություններով: Հարցազրույցներից մեկում, որը վերնագրված է «Հայաստանը պետք է կազմալուծվի», նշում է. «Հայաստանը որպես ինքնիշխան պետություն չպետք է գոյություն ունենա: Եվ վերջ: Ինչպես որ չպետք է լինի նաև Իսրայելը, ինչը բոլոր ուղղափառ մահմեդականների ֆունդամենտալ պահանջն է»[2]:

ՌԴ Պետդումայում ներկայում ադրբեջանցիներ չկան, բայց համայնքի շրջանակում (պետք է ենթադրել՝ Բաքվի հետ սինքրոնացված) ընթանում են նախապատրաստական աշխատանքները: Համառուսաստանյան ադրբեջանական կոնգրես լոբբիստական կազմակերպության ղեկավար անդամներից Իլղար Հաջիևի խոսքով՝ 2007-ին, ինչպես և 2003թ., ադրբեջանցիները չառաջադրվեցին, քանի որ առկա էր պարտվելու վտանգը: «Ցանկանում ենք մեզ հաղթողի դերում ներկայացնել: Եթե պատգամավորության թեկնածու ենք առաջադրում, նա պետք է պարտադիր անցնի»,- նշել էր Հաջիևը[3]:

[1] http://www.nbuv.gov.ua/polit/07rusforbes.htm

[2] «Армения должна быть упразднена”, www.zerkalo.az, 24.10.2009.

[3] «Азербайджанцы, которые по своему статусу и возможностям могли стать депутатами российской Госдумы, не пожелали этого, так как опасались быть неизбранными», www.day.az, 05.12.2007.

Ռուսաստանում գործում է 150-ի չափ ադրբեջանական հասարակական կազմերպություն[1]: Խոշորագույն 2 ադրբեջանական համայնքային միություններ են վերոնշյալ Համառուսաստանյան ադրբեջանական կոնգրեսը և «Ազեռռոս»-ը, որոնց բաժանմունքներն առկա են ՌԴ տասնյակ սուբյեկտներում:

Համառուսաստանյան ադրբեջանական կոնգրեսը (ՀԱԿ) հիմնվել է 2001թ. մարտին և մայիսին գրանցվել ՌԴ Արդարադատության նախարարությունում: Ներկայում այն միավորում է 7 տասնյակի չափ ադրբեջանական հասարակական միություններ, որոնք գործում են ՌԴ 68 սուբյեկտներում: «Կոնգրեսը միավորում է ՌԴ ադրբեջանական համայնքը ազգային-մշակութային շահերի և քաղաքացիական իրավունքների իրականացմանն աջակցելու նպատակով, նպաստում 2 պետությունների քաղաքական, տնտեսական և մշակութային հարաբերությունների խորացմանը»[2]: Կազմակերպությունը զբաղվում է նաև ՌԴ-ում ադրբեջանցիների շահերի իրավապաշտպանությամբ, ՀԱԿ ենթակառույցում այս նպատակով ստեղծվել է իրավական պաշտպանության կենտրոն:

Կառույցը նաև հովանավորել է Մոսկվայում Ռուստամ Իբրահիմբեկովի կողմից «Իբրուս» թատրոնի հիմնադրումը: Ներկայացումները բեմադրվում են ռուսերեն և ադրբեջաներեն: Գալիք ծրագրերի շրջանակում է Ադրբեջանի իշխանությունների և ՌԴ-ում գործող ադրբեջանցի գործարարների համատեղ ջանքերով Ադրբեջանական առևտրային տան հիմնումը[3]: ՀԱԿ ղեկավարն է պրոֆեսոր, ակադեմիկոս Մեհմեդ Ալիևը, առաջին փոխնախագահը՝ Վագիթ Ալեքպերովը, փոխնախագահները՝ Նաթիգ Աղամիրովը, որը միաժամանակ Եվրոպայի ադրբեջանցիների կոնգրեսի ղեկավարն է, գործարար Արազ Աղալարովը, Ռուստամ Իբրահիմբեկովը, պատմաբան Ահմեդ Իսկենդերովը («Պատմագիտական հարցեր» ամսագրի գլխավոր խմբագիրն է, ՌԴ Գիտությունների ազգա-

[1] «Проблемы азербайджанцев в Грузии по-прежнему существуют», «Эхо», www.echo-az.com, 16.04.04.
[2] www.vakmos.org
[3] «Первый вице-премьер Якуб Эюбов встретился с руководством Всероссийского азербайджанского конгресса», www.day.az, 30.03.2007.

յին ակադեմիայի թղթակից անդամ), Ռուսաստանի գեղարվեստի ակադեմիայի փոխնախագահ, նկարիչ Թահիր Սալահովը և ուրիշներ: Ընդհանուր առմամբ, ՀԱԿ-ն ունի 23 փոխնախագահ[1]:

Համառուսաստանյան ադրբեջանական կոնգրեսին յուրաքանչյուր տարի հատկացումներ են կատարում ՌԴ մի շարք հաջողակ ադրբեջանցի գործարարներ: Գործարար Արազ Աղալարովը նշում է, որ անձամբ ինքը, Իսկանդեր Խալիլովը և Թելման Իսմայիլովը յուրաքանչյուր տարի հատկացնում են մինչև 100 հազար ԱՄՆ դոլար[2]:

Գործարար Արազ Աղալարովը նաև բարեկամացել է Ալիևյան կլանի հետ. գործարարի որդին՝ Էմին Աղալարովը, 2006թ. ապրիլի 30-ին ամուսնացել է նախագահի դուստր Լեյլա Ալիևայի հետ: Նրանք ծանոթացել էին 2005թ. հունվարին շվեյցարական լեռնադահուկային կուրորտներից մեկում, ուր հանգստանում էին գործարարի որդին և «արքայադուստր» Ալիևան:

Արազ Աղալարովը Ադրբեջանի մերձկասպյան Նարդարան և Քյուրդախանի բնակավայրերի տարածքում սկսել էր տարբեր հաշվարկներով մինչև 1 միլիարդ դոլար արժողությամբ զբոսաշրջային կենտրոնի կառուցումը: Այն ներառելու էր հյուրանոցներ, վիլլաներ, «յախտ-կլուբ» և այլն: Սակայն տնտեսական ճգնաժամի և Վլադիվոստոկի մերձակա Ռուսկի կղզում իր կողմից իրականացվող խոշոր շինարարության պատճառով Աղալարովը ժամանակավորապես սառեցրել է շինարարությունը, որը հավակնում է դառնել ամենամեծ ռուսաստանյան ներդրումն Ադրբեջանում[3]: 2007թ. դեկտեմբերի 21-ին Մոսկվայի «Ռից» հյուրանոցում տեղի ունեցավ «Բաքու» ռուսալեզու հանդեսի շնորհանդեսը, որի գլխավոր խմբագիրն է Իլհամ Ալիևի դուստր և Աղալարովի հարս Լեյլա Ալիևան[4]:

ՌԴ ամենահարուստ ադրբեջանցի և մոլորակի 58-րդ միլիարդատեր Վագիթ Ալեքպերովը ԽՍՀՄ փլուզման և ընդհանուր իշխանության թուլացման օրերին զբաղեցնում էր Խորհրդային նավթարդյունաբերության փոխնախարարի պաշտոնը: 1991-ին

[1] www.vakmos.org

[2] «Араз Агаларов: «Мои капиталы возрастут до 1 млрд долларов», «Зеркало», 21 08 2004.

[3] «Араз Агаларов приостановил проекты в Азербайджане», www.abc.az, 07.10.2009.

[4] «Лейла Алиева презентовала в Москве новый элитный журнал», www.day.az, 21.12.2007.

փոխնախարարը սեփականաշնորհեց 3 խոշոր նավթահանք՝ Լենգեպաս, Ուրայ և Կազալիմ՝ ձևավորելով ԼՈՒԿօյլ ընկերությունը: Ներկայում նրան է պատկանում ընկերության բաժնետոմսերի 20 տոկոսը: ԼՈՒԿօյլի նավթային պաշարներն աշխարհում 2-րդն են Էքսոն-Մոբիլից հետո[1]:

Երկրորդ ամենախոշոր համայնքային կառույցը՝ «Ազեռռոսը», հիմնվել է 1999-ին: Կազմակերպության նախագահն է Սոյուն Սադիխովը, փոխնախագահները՝ Ռաջաբ Մամեդովը և Ռաֆիկ Մեհթիևը: 2000-ից հրատարակվում է «Ազեռռոս» երկշաբաթաթերթը: Գլխավոր խմբագիրն է ազգությամբ ռուս Ալեքսանդր Բաբյակինը: Թերթում որոշակի թվով ռուս լրագրողներ կան: Հատկանշական է, որ վերջիններիս և թերթի ադրբեջանցի լրագրողների հրապարակումներում նկատելի է տարբերություն հայկական թեմատիկայի լուսաբանման հարցերում: «Ազեռռոսի» ռուս լրագրողներից մեկի հոդվածում «Սուխոյի» ավիաշինարարական ընկերության փոխղեկավար Վլադիմիր Իլյուշինը դրականորեն է արտահայտվում «Սուխոյի» գլխավոր կոնստրուկտոր Միքայել Պողոսյանի մասին: Մինչդեռ նույն թերթի մեկ այլ էջում ՀՀ ներքաղաքական կացության մասին ադրբեջանցի լրագրողի հոդվածը հեղեղված է անվանարկող ձևակերպումներով[2]:

2008թ. ՌԴ նախագահական ընտրությունների ընթացքում Լիբերալ- դեմոկրատական կուսակցությունից նախագահության թեկնածու Վլադիմիր Ժիրինովսկու կողմնակիցներն ագիտացիոն նպատակներով տարածում էին նրա հեղինակած «Վերջին ցատկը դեպի հարավ» գիրքը: Ժիրինովսկու մենագրությունը հրատարակվել է 1997թ. և մի քանի անգամ վերահրատարակել: «Ազեռռոսի» ղեկավար Սոյուն Սադիխովին հատկապես զայրացրել են գրքի այն հատվածները, որտեղ հեղինակը խոսում է ադրբեջանցիների կողմից հայերին սպանելու և ադրբեջանցիների ծագումնաբանության մասին:

«Հեղինակը 39-րդ էջում նշում է. «Որքա՞ն են շարունակվելու հայերի և ադրբեջանցիների միջև բախումները: Մինչև հայ ժողովր-

[1] "The worlds bilionaries # 57 Vagit Alekperov", www.forbes.com, 03.11.2009.
[2] «Азеррос», N 2, 2008, www.azerros.ru

դի բնաջնջո՞ւմը: Սակայն այս անգամ ոչ թե թուրքերի ձեռամբ, այլ մի ուրիշ թյուրքախոս ժողովրդի՝ ադրբեջանցիների: Ըստ էության, ադրբեջանցիները և թուրքերը նույն ժողովուրդն են: Թուրքերը 1915թ. մեկ և կես միլիոն հայ են սպանել: Իսկ ադրբեջանցիները նրանց ոչնչացնում են 1988թ. փետրվարից»,- գրքից մեջբերում է Սադիխովը, ապա շարունակում.- «Ժիրինովսկին ադրբեջանցիներին քամահրելով՝ անվանում է պարսկական ցեղ, որը թյուրքացվել է թուրքական գերիշխանության ժամանակ: Նա թուրք ժողովրդին համեմատում է ֆաշիստների հետ, իսկ ադրբեջանցիներին անվանում արյունարբու վայրենիներ»:

«Ազեռոսի» ղեկավարը գտնում էր, թե Ժիրինովսկու աշխատությունը խախտում է գործող ռուսաստանյան օրենսդրությունը, և Լիբերալ-դեմոկրատական կուսակցության ղեկավարը պետք է կանչվի պատասխանատվության: Այնուհանդերձ, պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ Սադիխովը քայլեր չի ձեռնարկել[1]:

Ռուսաստանում ադրբեջանական համայնքների կազմակերպման գործընթացում, թերևս, ամենահստակ ձևով է երևում, որ Բաքուն իրականացնում է իշխանությունների վերահսկողության տակ «սփյուռք» ձևավորելու ծրագիր: Ալիևին ոչ հնազանդ լոբբիստական կառույցները ենթարկվում են ճնշումների, գործադրվում են տարատեսակ մեքենայություններ: Այս առումով, իշխանության հսկողության տակ գտնվող ՀԱԿ-ին զուգահեռ գործող 2 խոշոր կազմակերպությունները՝ «Ազեռոսը» և «Շարժում հանուն Ադրբեջանի» կազմակերպությունը, փաստացի պետական շրջանակների «սև ցուցակում» են:

2001թ., երբ ձևավորվում էր Համառուսաստանյան ադրբեջանական կոնգրեսը, «Ազեռոսն» արդեն գործում էր մոտ 2 տարի: «Ազեռոսի» նախագահ Սադիխովը նշում է, որ Մոսկվայում ադրբեջանական դեսպանատնից դիմել էին իրեն՝ նոր կառույցի ձևավորման գործում օժանդակելու խնդրանքով: Ուշագրավ է Սադիխովի հարցազրույցի հետևյալ հատվածը. «Ես ընդառաջեցի, առավել ևս շտապում

[1] Союн Садыхов – «Владимир Жириновский сравнил азербайджанцев с кровожадными дикарями, убийцами и религиозными фанатиками», www.day.az, 22.02.2008.

էի՝ իմանալով, որ *դեսպանատունը Հեյդար Ալիևին էր ուղարկել զեկուցագիր այն մասին, որ ՀԱԿ-ն արդեն ձևավորվել է, մինչդեռ իրականում դեռ ընթանում էին բանակցություններ»* (ընդգծումը – Հ.Ն.)[1]: Խոսուն ապացույց, որ Բաքվում նախագահի մակարդակով են աշխատում արտասահմանի ադրբեջանցիների կազմակերպման և սեփական տեսադաշտում պահելու աշխատանքով: Իսկ ավելի ուշ, երբ ՀԱԿ-ի և «Ազեռռոսի» ճանապարհները բաժանվեցին, ՀԱԿ-ը «Ազեռռոսի» դեմ «սև *PR*»-արշավ ծավալեց:

«ՀԱԿ-ը տգեղ գործ է անում, ինչը նրանց պատիվ չի բերում: Կոնգրեսում բոլորին, չգիտես ինչու, անհանգստացնում է այն, որ ես ծնունդով Վրաստանից եմ»,-ադրբեջանական մամուլին նշել է Սադիխովը[2]:

Այժմ մեջբերում «Ազեռռոսի» փոխնախագահ, Վոլգոգրադի ռազմարդյունաբերական-նավաշինարարական «Ախտուբա» գործարանի նախկին տնօրեն, ադրբեջանա-վրացական «Քյուփրյու» միության և «Սաբահ» ոչ կառավարական կառույցի ղեկավար անդամ Սաքիթ Ալահվերդիևի հարցազրույցից. «Ինձ ոչ պակաս չափով անհանգստացնում է նաև «Քյուփրյուի» և «Սաբահի» հանդեպ Ադրբեջանի պետական կառույցների, իսկ ավելի հստակ՝ Պետկոմիտեի վերաբերմունքը: Այս կառույցների նկատմամբ կիրառվում է նույնպիսի մարտավարություն, ինչպիսին կիրառվեց Պետկոմիտեի ղեկավարության կողմից ՌԴ-ում համայնքային միությունների ձևավորման ընթացքում: …Պետկոմիտեի գործունեության հիմքում պետք է դրված լիներ ադրբեջանականության գաղափարը: Իրականության մեջ լրիվ հակառակ պատկեր է: Ինչ-որ մեկը ադրբեջանականության գաղափարն ակնհայտ շփոթել է տեղային շահերի գաղափարաբանության հետ: *Հիշում եմ՝ ինչպես էին Պետկոմիտեի էմիսարներն այս սկզբունքով փորձում ձևավորել դիասպորայի միությունները և նրանց վարչական օրգանները* (ընդգծումը-Հ.Ն.): Վոլգոգրադի շրջանում, ուր բնակվում է ավելի քան 80 հա-

[1] «Страны СНГ должны поставить ультиматум Армении», «Зеркало», www.zerkalo.az, 25.06.2004.

[2] Նույն տեղում:

զար ադրբեջանցի, այս նկրտումները հաջողություն չունեցան: Իսկ այն վայրերում, ուր դա հաջողվեց, «ենթակա» միությունների հետ սկսվեց ՌԴ-ում Ադրբեջանի դեսպանի հեղինակազրկման արշավը: Իսկ դա արդեն վնաս է պետական հեղինակությանը: Պետկոմիտեի նույն ձեռագիրը տեսնում եմ «Քյուփրյու»-ին և «Սաբահ»-ին զուգահեռ այլընտրանքային միություններ ձևավորելու ձգտման մեջ»[1]: Ադրբեջանական պետության կողմից հետապնդվում է նաև ռուսաստանյան Շարժում հանուն Ադրբեջանի կազմակերպության ղեկավար Իլղար Ղասիմովը: Վերջինս 2004թ. սեպտեմբերի 25-ին Մոսկվայի Թատերական հրապարակում կազմակերպված հերթական հակահայ հավաքին ուշագրավ հայտարարություն արեց. «Սկզբնական շրջանում մեր միջոցառումներին գալիս էին «Ազեռռոս»-ի ներկայացուցիչները, բայց հետո «Ազեռռոսը» որոշեց բոյկոտել մեր միջոցառումները: Իսկ ՀԱԿ ներկայացուցիչներն ի սկզբանե չէին էլ գալիս: *Հավանաբար սպասում են Բաքվի հրահանգին* (ընդգծումը – Հ.Ն.): Միայն Մոսկվայում և Մոսկվայի շրջանում բնակվում է մոտ 1,5 մլն ադրբեջանցի: Նույնքան էլ ադրբեջանական կազմակերպություններ ու ինտրիգներ կան: *Վիճակն էլ ավելի վատթարացավ այն բանից հետո, երբ պաշտոնական Բաքուն սկսեց միջամտել դիասպորայի գործերին* (ընդգծումը– Հ.Ն.)[2]:

Իսկ ադրբեջանցի լրագրողը «Էխո» թերթում «սփյուռքի» թեմայով հրապարակումներից մեկում ՀԱԿ-ն անվանում է «Պետկոմիտեի զավակ» (բառացի՝ *"детище Госкомитета"*)[3]:

Միանշանակ է, որ Հայաստանում առավել հանդուրժողական մթնոլորտ է ադրբեջանական կողմի հանդեպ, քան Ադրբեջանի պարագայում՝ Հայաստանի հանդեպ: Դա տեսանելի է բազմաթիվ օրինակներով, երբ ադրբեջանցի լրագրողները, հասարակական գործիչները ՀՀ այցի ընթացքում որևէ բարդության չեն բախվում, իսկ Բաքու հայկական պատվիրակության այցերը ադրբեջանական իշխանությունները կամ կասեցնում են, կամ դրանք ընթանում են չափազանց լարված մթնոլորտում, բողոքի միջոցառումների

[1] http://www.allakhverdiev.ru/smi_017.php
[2] «Азербайджанцы в Москве проводят митинг», «Эхо», 25.09.2004.
[3] Проблемы азербайджанцев в Грузии по прежнему существуют», «Эхо», www.echo-az.com, 16.04.04.

պայմաններում: Նման «ասիմետրիայի» դրսևորում առկա է նաև սփյուռքի պարագայում: Հայտնի է դեպք, երբ 2004թ. նոյեմբերին Բուլղարիայից Ադրբեջան այցելած «24 ժամ» *(24 часа)* թերթի սպորտային լրագրող Էդուարդ Փափազյանին արտաքսեցին Ադրբեջանից՝ պատճառաբանելով նրա հայկական ծագումը: Մեկ այլ պարագայում օդանավակայանից վտարեցին թուրք երգչուհի Սերթաբ Էրենների հետ նույն նվագախմբում Բաքու ժամանած Թուրքիայի քաղաքացի, դաշնակահար Բուրաք Բեդիկյանին: Արդյունքում՝ Թուրքիայի ԱԳ նախարարությունը բողոքի նոտա ուղարկեց Ադրբեջան: 2006թ. Ֆրանսիայի Սենատի պատվիրակության կազմում Բաքու էր այցելել հայազգի Պիեռ Գոդսիյանը, որն ուղեկցում էր սենատոր Բեռնար Ֆուռնիեին: Այս թեմայով նյարդային հրապարակումներ ադրբեջանական մամուլում եղան, սակայն, ի տարբերություն Բուլղարիայի և Թուրքիայի, Ֆրանսիայի քաղաքացուն արտաքսելու հանդգնություն Բաքվում չունեցան:

Հայկական կողմի առավել հավասարակշիռ պահվածքի և Ադրբեջանի ասիմետրիկ անհանդուրժողականության մեկ դրսևորում ևս արդեն Ռուսաստանի պարագայում. Համաշխարհային հայկական կոնգրեսի ղեկավար, Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանն ադրբեջանական լրատվամիջոցին տված հարցազրույցում մատնանշել էր Ռուսաստանի հայ և ադրբեջանական համայնքների շահերի միջև հնարավոր շփման կետերի մասին. «Ես գտնում եմ, որ անհրաժեշտ է ՌԴ-ում հայկական, ադրբեջանական և վրացական համայնքների ջանքերի համադրում դաշնային մակարդակով և ՌԴ տարածաշրջաններում, որպեսզի համատեղ ջանքերով հակազդենք քսենոֆոբիայի այնպիսի զարհուրելի դրսևորումների, ինչպիսիք են սկինհեդների ելույթները, ազգային հողի վրա սպանությունները, չինովնիկների և իրավապահների կամայականությունները: Այսպիսի միջադեպեր հաճախ են պատահում ինչպես կենտրոնական քաղաքներում՝ Մոսկվա, Պետերբուրգ, Նովոսիբիրսկ, Նիժնի Նովգորոդ, Վորոնեժ, այնպես էլ երկրի խորքերում»[1]:

[1] «Ара Абрамян: в идеале мы считаем, что Нагорный Карабах должен быть частью Армении. Но, в принципе, для нас максимальный компромисс – это независимый статус этой территории», www.day.az, 08.02.2008.

Մինչդեռ Պետկոմիտեի ղեկավարներից Շաքիր Սալիմովը նույն լրատվամիջոցի նույն լրագրողի հարցմանը հայտարարեց. «Ես կարծում եմ, որ ադրբեջանական դիասպորան իր առջև ծառացած խնդիրների լուծման համար հայկական սփյուռքի աջակցության կարիքը չի զգում: Մեր դիասպորան բավականաչափ ուժեղ է, որպեսզի ինքնուրույն կարգավորի իր հիմնահարցերը»: Սա, ի դեպ, այն վիճակագրության դեպքում, որ 2007թ. ՌԴ-ում ազգայնականների կողմից սպանվել է Ադրբեջանի 50 քաղաքացի[1]: Լրագրողի տրամաբանական հարցադրմանը, թե «արդյոք միավորվելով՝ երեք՝ հայկական, ադրբեջանական և վրացական համայնքները չեն գործի առավել արդյունավետ և արագ», Սալիմովը հակադարձել է. «Կրկնում եմ, ՌԴ ադրբեջանական համայնքը տասնապատիկ ավելի ուժեղ է, քան հայկական համայնքը: Այդ պատճառով, ոչ այդ, ոչ էլ ուրիշ հարցում մենք հայկական սփյուռքի աջակցության կարիքը չունենք»[2]:

Նույն թեմայի համապատկերում հնարավոր է մեջբերել նաև ՌԴ Կարելիայի տարածաշրջանի Կանդապոգա քաղաքում 2006թ. սեպտեմբերին տեղի ունեցած բախումը ռուսների և ադրբեջանցիների միջև: Բախումների ժամանակ զոհվեց Կանդապոգայի 2 ռուս քաղաքացի, իսկ քաղաքում հավաքված շուրջ 2000 տեղացիների հանրահավաքն իշխանություններից պահանջում էր կարգի հրավիրել Կանդապոգայում անլեգալ հաստատված կովկասցիներին և նույնիսկ արտաքսել նրանց: Կանդապոգայի միջադեպի ակունքում էթնիկ ադրբեջանցի բարմենի վեճն էր տեղացիների հետ[3]:

[1] «В прошлом году в Азербайджан пришло 50 гробов с погибшими в России от рук националистов», www.day.az, 21.02.2008.

[2] Шакир Салимов: “Азербайджанская диаспора в России не нуждается в помощи армянской диаспоры для решения стоящих перед ней задач и проблем», www.day.az, 24.02.2008.

[3] «Антикавказский митинг в Кандапоге», www.regnum.ru, 02.09.2006.

Ուկրաինա

Ուկրաինայում ադրբեջանցիների թիվն, ըստ Բաքվի աղբյուրների, կես միլիոնի սահմաններում է: Ուկրաինայի ադրբեջանցիները կենտրոնացած են մայրաքաղաք Կիևում, ինչպես նաև Խարկով, Դոնեցկ, Դնեպրոպետրովսկ, Լվով քաղաքներում, Ղրիմում: Պետկոմիտեի ղեկավար Նազիմ Իբրահիմովը 1997-99թթ. աշխատել է Ուկրաինայում, ինչպես նաև Բելառուսում, Մոլդովայում և Լեհաստանում՝ որպես Ադրբեջանի արտակարգ և լիազոր դեսպան (նստավայրը՝ Կիև)[1]:

Ուկրաինայում ադրբեջանցիների ինքնակազմակերպման առաջին նախանշաններն առաջ եկան 90-ականների սկզբներին, երբ ՈՒՀ արդարադատության նախարարությունում գրանցվեց «Նիզամի» հասարակական-մշակութային միությունը: Ըստ տեղի ադրբեջանական համայնքի ակտիվիստներից մեկի, այն ձևավորելու գաղափարը ծագեց 1990թ. հունվարի 20-ին Բաքվում ԽՍՀՄ զինված ուժերի գործողություններից հետո, երբ Ուկրաինայի ադրբեջանական համայնքում որոշակիորեն սրվեցին ազգայնական տրամադրությունները: «Նիզամի» կառույցը ռուսերեն հրատարակում էր «Էխո Ազերբայջանա» թերթը, որի տպագրությունը շարունակվում է առայսօր: 1999թ. մարտի 21-ին Ուկրաինայի 14 շրջանների պատվիրակների համատեղ ժողովին «Նիզամի» կազմակերպության հենքի վրա ձևավորվեց Ուկրաինայի ադրբեջանական կոնգրեսը: 2006-ից նախագահն է Ակիֆ Գյուլմամադովը, իսկ 1-ին փոխնախագահ Շաքիր Յահյաևը նաև Կիևի մահմեդական համայնք հասարակական կառույցի ղեկավարն է:

2007թ. ապրիլին կոնգրեսը փոխադրվել է նոր, առավել հարմարավետ գրասենյակ, որը գտնվում է Կիևում՝ Բելոռուսկայա 30 հասցեում: Կոնգրեսի գրասենյակում մշտական հիմունքներով գործում են մշակութային, ինչպես նաև իրավաբանական վարչությունները, վերջինը՝ ուկրաինաբնակ ադրբեջանցիների իրավապաշտպանությանը նպաստելու նպատակով[2]: Ուկրաինայում գոր-

[1] «Мы азербайджанцы – неньки Украины», www.2000.net.ua, 01.2008.

[2] «Конгресс Азербайджанцев Украины переехал в новый офис», www.rol.ru/news/misc/newssng/07/04/19_103.htm, 19.04.2007.

ծում են «Ազերբայջան» երգի-պարի համույթը, Օբոլոն քաղաքում ադրբեջանցի բանաստեղծ Սամեդ Վուրղունի անվան գրադարան, Դնեպրոպետրովսկում լույս է տեսնում «Սավալան» թերթը: 1999թ. դեկտեմբերին կոնգրեսը բարեգործական նպատակներով միակողմանի ծնողազուրկ 32 ուկրաինացի երեխաների հանձնեց 12կգ սննդի փաթեթներ:

Բացի այդ, 2006թ. դեկտեմբերից Ուկրաինայում ներկայացուցչություն ունի Աշխարհի ադրբեջանցիների կոնգրեսը: Ուկրաինական գրասենյակը ղեկավարում է Օքթայ Ռամազան օղլի Ռուստամովը[1]: Խարկովում գործում է Ուկրաինայի ադրբեջանցիների լիգան: Մասնավորապես, լիգայի և կոնգրեսի զուգահեռ գոյությունը Ուկրաինայի ադրբեջանական համայնքի որոշակի պառակտման ցուցիչն է: 2005-2006թթ. բուն Կոնգրեսի ներսում երկփեղկումը հասավ ծայրակետին. այն ժամանակվա նախագահ Օքթայ Էֆենդիևը և գործադիր կոմիտեի ղեկավար Ֆաիլ Աբիդովը մեղադրվում էին անգործության մեջ: Կառույցի ակտիվիստ Նադիր Զեյնալզադեի խոսքով՝ «2001-2005թթ. Էֆենդիևը ոչ մի անգամ չմեկնեց Ուկրաինայի շրջաններ՝ հայրենակիցների գործերով հետաքրքրվելու, պաշտոնական Բաքվից թաքցնում էր ադրբեջանական լիգայի գոյության փաստը»: Ծայր առած շարժումն ավարտվեց Էֆենդիևի հրաժարականով, որն, ի դեպ, մինչև այդ դիմել էր Ուկրաինայի անվտանգության մարմիններին՝ իր դեմ գործող ադրբեջանցի գործիչներին հետապնդելու պահանջով: Բաքվից հայրենակիցների գործերը հեռակառավարելու վկայություններից մեկը կարող է համարվել փաստը, որ Էֆենդիևի դեմ միաբանված գործիչները 2006թ. հունիսին Ուկրաինայի 16 (!) տարբեր շրջանների ներկայացուցիչներից կազմված պատվիրակություն գործուղեցին Բաքու, Նազիմ Իբրահիմովի հետ հանդիպման՝ բողոքելու, որ Օքթայ Էֆենդիևը հրաժարվում է հեռանալ, հանձնել կնիքն ու փաստաթղթերը: Ուկրաինաբնակ ադրբեջանցիները Բաքվում պահանջեցին, որ Պետկոմիտեն միջամտի, ինչը և տեղի ունեցավ[2]: Կոնգրեսն, ըստ

[1] «В Украине зарегистрировано Представительство Конгресса азербайджанцев мира», www.news.bakililar.az/news_v_ukraine_zareqistrirovan_4091.html, 26.12.2006.

[2] «Скандал в Конгрессе азербайджанцев Украины», «Эхо», www.echo-az.com. 03.11.2006.

օրենսդրության, ուկրաինական հասարակական կազմակերպություն է, և Էֆենդիևի ընդդիմադիրներն իրավասու էին հարցը լուծել տեղական մակարդակով, մինչդեռ նախընտրել էին մեկ ու կես տասնյակից ավելի պատվիրակ գործուղել Ադրբեջան:

Ուկրաինայի պարագայում ևս նկատելի է համայնքի «վերապրոֆիլավորման» և շուկայից ու առևտրից դեպի առավել ակտիվ հասարակական-քաղաքական կյանքի կողմնորոշվելու ձգտումը, որի փորձերն իրականացնում են տեղի համայնքային ղեկավարությունն ու Պետկոմիտեն: «Ուկրաինայի ադրբեջանցիների կոնգրեսի ծրագրում են այնպիսի նպատակներ, ինչպիսիք են ադրբեջանական համայնքի գործունեության ուժեղացումը, հասարակական-քաղաքական կյանքում ադրբեջանցիների մասնակցության ընդլայնումը»[1]: 2007թ. սեպտեմբերի 30-ին Ուկրաինայում տեղի ունեցած արտահերթ խորհրդարանական ընտրությունների արդյունքում Գերագույն ռադա անցավ 2 ադրբեջանցի պատգամավոր: Յուլիա Տիմոշենկոյի բլոկից Օլեգ Մեյդանի Բաբաևը Ռադա անցած 156 պատգամավորներից 109-րդն էր[2]: Բաբաևը զտարյուն ադրբեջանցի չէ, մայրը ռուս է: Վիկտոր Յուշչենկոյին հարող Մեր Ուկրաինա - ազգային ինքնապաշտպանություն կուսակցությունից խորհրդարան անցավ Էդվարդ Զեյնալովը: Ծնվել է 1963թ. հուլիսի 2-ին Կիրովոգրադ քաղաքում: Տնտեսագետ է, 1996-2004թթ. զբաղվել է գործարարությամբ, 2005-2007թթ. Կիրովոգրադի նահանգապետն էր (ամենաերիտասարդը Ուկրաինայում)[3]:

Խորհրդարանական ընտրություններին թեկնածություն առաջադրել էր ևս 3 ուկրաինաբնակ ադրբեջանցի՝ Բուրզու Ալիև (Մեր Ուկրաինա - ազգային ինքնապաշտպանություն), Վիլայաթ Գուլիև (Յուլիա Տիմոշենկոյի բլոկ) և Սանան Ալիև (Ագրարային կուսակցություն): Ուկրաինայի քաղաքային խորհուրդներում գոր-

[1] «Конгресс азербайджанцев Украины проведет внеочередную отчетно-выборную конференцию», www.rol.ru/news/misc/newssng/06/05/02_108.htm, 02.05.2006.

[2] Oleq Babayev: "Damalarimda Azərbaycanli qani axan şexs kimi Azərbaycan – Ukrayna münasibətlerinin inkişafi siyasetini dəstəkləyirim|, www.diaspora.az, 02.06.2008.

[3] «Эдуард Зейналов: « Не хочу просто махать шашкой, создавать новое куда интереснее», http://cn.com.ua/N347/politics/regions/regions.html

ծում է 11 ադրբեջանցի պատգամավոր:

«Տարեցտարի մեր համերկրացիների քաղաքական ակտիվությունն աճում է: 90-ականների սկզբներին վիճակը միանգամայն այլ էր, պատգամավորության թեկնածուների ցանկում չկար ոչ մի ադրբեջանցի: Մենք չէինք գիտակցում անհրաժեշտությունը, քանի որ խորամուխ էինք այլ հիմնախնդիրների մեջ՝ ԼՂ հակամարտություն, Ուկրաինա ժամանող ադրբեջանցի ազգականներ և այլն»,- նշում է կոնգրեսի ղեկավար Ակիֆ Գյուլմամադովը[1]:

Վերջին ընտրություններում Ուկրաինայի Գերագույն ռադա անցավ նաև էթնիկ թաթար Մուսթաֆա Ջեմիլյովը, որը բնութագրվում է որպես ընդգծված թուրքամետ-ադրբեջանամետ գործիչ: Նրա անվամբ են կոչվել փողոցներ Թուրքիայի Անկարա և Սունդուրլու քաղաքներում, Քոնյա քաղաքի Սելջուկյան համալսարանում՝ լսարաններից մեկը, իսկ Քըրքքալե քաղաքում՝ գրադարան:

Ի դեպ, նույն ընտրություններով խորհրդարան անցավ 2 հայ՝ Գարեգին Հարությունով և Նվեր Մխիթարյան[2]:

Ուկրաինայում ևս, ինչպես նաև ՌԴ-ում, մեծ թվով ադրբեջանցիներ են ներգրավված հակաօրինական գործունեության մեջ: 2009-ի հոկտեմբերի 29-ին Մոսկվայում ձերբակալվեց Ուկրաինայի քաղաքացի, ծագումով Ադրբեջանից Մեհման Ղասիմովը, որը հանդիսանում էր հանցախմբի ղեկավար և որոնվում Ուկրաինայի ոստիկանության կողմից Դոնեցկում մեկ այլ ադրբեջանցու սպանության և թմրաբիզնեսով զբաղվելու համար[3]:

2008թ. հունվարի 28-ին, ժամը 17:54-ին *APA* ադրբեջանական լրատվական գործակալության կայքում հայտնվեց տեղեկություն, թե Ուկրաինայի Լվով քաղաքի հայկական համայնքն առաջարկում է քաղաքը վերանվանել «Առյուծ»: Նախաձեռնությունն, ըստ կայքի, պատկանում էր քաղաքային խորհրդի պատգամավոր Վարդգես Արզումանյանին: «Այս քայլը»,- գտնում է պատգամավորը,- արժանին կհատուցի այն հայերի հիշատակին, որոնք հիմնադրել են քա-

[1] Акиф Гюльмамадов: «Проблемы азербайджанцев Украины в основном связаны с нашим традиционно несерьезным отношением к условиям легализации», www.day.az, 25.03.2008.

[2] www.rada.gov.ua

[3] «Москва – пойман глава украинской ОПГ», http://actualcomment.ru, 29.10.2009.

ղաքը, ինչպես նաև Լվովի այլ հանրահայտ հայ բնակիչներին, որոնք հսկայական ներդրում են ունեցել քաղաքի զարգացման գործում»,- նշված էր ադրբեջանական աղբյուրի տեղեկության (ավելի ստույգ՝ ապատեղեկության) մեջ[1]:

Փաստը, որ նման տեղեկությունն առաջինը տարածում է ադրբեջանական գործակալությունը, միանշանակ է դարձնում, որ անհրաժեշտ է քննողական և վերլուծական մոտեցում: Ակնհայտ է, որ այսպիսի նախաձեռնությունը կարող էր բացասական զգացումներ առաջացնել տեղացիների մեջ՝ հատկապես հաշվի առնելով, որ արևմտյան Ուկրաինայի բնակչությանը բնորոշ է ազգայնականությունը: Ճիշտ այս հաշվարկով ադրբեջանական կողմը կարող էր դիմել նման ապատեղեկատվության: Լուրն արտատպվեց ուկրաինական, ռուսական, ադրբեջանական ու նաև հայկական ԶԼՄ-ում: Ընդ որում, որոշ ուկրաինական աղբյուրներ («Ուկրաինսկայա պրավդա», *«24.ua») APA* գործակալությունը սխալմամբ անվանել էին «հայկական», ինչն անտեղյակ ընթերցողի մեջ ավելի կամրապնդեր տեղեկության հավաստիությունը[2]:

Լվովի խորհրդարանի հայազգի պատգամավոր Վարդգես Արզումանյանը հաջորդ օրը հերքեց այս ապատեղեկատվությունը: «Ոչ ես, ոչ հայկական համայնքի որևէ այլ անդամ երբևէ նման կարծիք չենք հայտնել»,- հայտարարեց Արզումանյանը:

Իրականում «Լվով» տեղանունը ոչ մի կապ չունի «առյուծ» բառի հետ: Լվովը հիմնվել է 1256թ. ոչ թե հայերի, այլ իշխան Դանիլո Գալիցկու կողմից, որը քաղաքը կոչել է որդու՝ Լև Գալիցկու պատվին[3]: Ադրբեջանական ապատեղեկությունը փաստացի նաև խեղաթյուրել է պատմությունը, չնայած սա ամենևին եզակի դեպք չէ, երբ ապշերոնյան «գեբելսները», սեփական շահերին համահունչ, վերաշարադրում են պատմական դեպքերը: Ի դեպ, *APA* գործակալությունը նույն տեղեկատվության մեջ նաև փոխանցում էր, թե Բուդյոնովսկ քաղաքի հայկական համայնքն իր հերթին, իբր,

[1] "Armenian community of Lvov city of Ukraine wants renaming city Aryuts", www.apa.az, 28.01.2008.

[2] «Львов хотят переименовать», www.24.ua, 29.01.2008.

[3] Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 4, էջ 670, Երևան, 1978:

ավելի վաղ հարց էր բարձրացրել քաղաքը «Սուրբ Խաչ» անվանափոխելու վերաբերյալ, ինչը ևս սուտ է:

Բուդյոնովսկի հատվածի շնորհիվ այս ապատեղեկատվությունն ամբողջապես վերածվում է տեղեկատվական պատերազմի տիպական օրինակի: Բուդյոնովսկն, իրոք, պատմականորեն կոչվել է Սուրբ Խաչ և 1799-ին հիմնվել է Պարսկաստանից ու Դերբենտից փոխադրված հայերի կողմից: Ապատեղեկատվական աշխատանքում ամենահամոզիչը համարվում են որոշակի ստույգ տեղեկության հետ միախառնված կեղծիքները: Արդյունքում՝ ինֆորմացիայի իրական հատվածը ընթերցողին ավելի է համոզում կեղծ տեղեկության իբր թե ճշմարտացի լինելու մեջ: «Նպատակային ապատեղեկատվության պարագայում կիրառում են ինչպես բացահայտ սուտը, այնպես էլ նուրբ մշակված կիսաճշմարիտ փաստերը, որոնք ընթերցողին սխալ դատողությունների են մղում»,- ապատեղեկատվության աշխատանքի վերաբերյալ նշում է թեմատիկ մասնագիտական գրականությունը[1]:

Վերլուծաբան Արտյոմ Երկանյանի դիտարկմամբ, Լվովում վերջին տարիներին նկատելի են հայատյացության դրսևորումներ: Երկու անգամ՝ 2004 և 2005թթ. ազգայնականները պղծել են Սբ. Աստվածածին հայկական եկեղեցին, որը 1363թ. կառուցվել էր հայ առևտրականների միջոցներով: Մեծ եղեռնի 90-րդ տարելիցի նախօրեին եկեղեցու պատերին գրվել էր. «Հայերը 2-րդ հրեաներն են, հեռացեք Ուկրաինայից» (չպետք է բացառել, որ սադրանքների հետևում նորից նույն ադրբեջանական հետքն է):

«Լվովում հայատյացությամբ աչքի ընկնող շովինիստները ոտքի տակ հող ունեն և հաճույքով կօգտվեին իրենց դրսևորելու առիթից: Բաքվում մշակված և իրականացված սադրանքի կազմակերպիչները ձգտում էին հենց նման առիթ ստեղծել»,- նշում է հայ վերլուծաբանը[2]: Ուշագրավ է ադրբեջանական կոնգրեսի Լվովի տարածաշրջանային գրասենյակի ղեկավար Մեջիդ Նուխիևի հայ-

[1] «Своя разведка», Минск, 1998, էջ 58:
[2] «Провал операции «Аръюц», Артем Ерканян, «Новое Время», 02.02.2008.

տարարությունը. «Լավ ճանաչելով տեղացիներին՝ կարող եմ ասել, որ եթե տեղեկատվությունը հաստատվեր, նրանք կհարձակվեին հայերի վրա»[1]:

Նշենք նաև, որ «24» թերթի կայքում *(www.24.ua)* սույն թեմայով հրապարակման տակ հայտնվել էին մի շարք ընթերցողների ագրեսիվ արձագանքները[2]:

Պետք է ենթադրել, որ Նուխիևը և ուկրաինաբնակ մյուս նուխիևները որոշ մանրամասնություններ գիտեն թե՛ «Առյուծ» օպերացիայի և թե՛ Լվովի հայկական հուշարձանները ժամանակ առ ժամանակ պղծելու տարօրինակ գործողությունների, հնարավոր է նաև *24.ua*-ում հայտնված հակահայ արձագանքների մասին…

[1] Նույն տեղում:

[2] «Львов хотят переименовать», www.24.ua, 29.01.2008.

Բելառուս

Բելառուսում, ըստ ադրբեջանական աղբյուրների, բնակվում է մոտ 50 հազար ադրբեջանցի: 2002թ. Մինսկում ձևավորվեց Բելառուսի ադրբեջանական համայնքների խորհրդաժողովը: Ղեկավարն է Նաթիգ Բաղիրովը: Վերջինս Բելառուսի Հանրապետության ձյուդոյի ազգային հավաքականի ավագ մարզիչն է, ձյուդոյի աշխարհի և Եվրոպայի բազմակի չեմպիոն: Կոնգրեսի փոխնախագահն է եղբայրը՝ Էթիբար Բաղիրովը: Դեռևս ԽՍՀՄ շրջանում՝ 1990թ. Բաղիրովը հիմնել էր «Գոբուստան» մշակութային կրթական համայնքային միությունը, որը ներկայում խորհրդաժողովի անդամ կառույց է: 2000թ. Բոբրույսկ քաղաքում սկսեց գործել Ադրբեջանի պատմամշակութային միությունը: Մեկ տարի անց Մոգիլյով քաղաքում հիմնվեց «Խազար» համայնքային միությունը, իսկ Գրոդնոյում՝ «Դոստլուգ» կազմակերպությունը: Ըստ առկա տվյալների՝ ադրբեջանական հասարակական միություն է գործում նաև Գոմել քաղաքում: Բոլոր միությունները խորհրդաժողովի անդամներ են[1]:

Բելառուսի ականավոր ադրբեջանցիների թվում են նկարիչ Քյամիլ Քամալը, Մինսկի ռադիոտեխնիկական համալսարանի պրոֆեսոր Ռաուֆ Սադիխովը, բժշկական գիտությունների թեկնածուներ Ռեյման Իսմայիլզադեն, Միրզաբեկ Ռուստամովը[2]: Մեուլի 1988թ. օլիմպիադայի ընթացքում ըմբիշ Քամանդար Մեջիդովը դարձավ օլիմպիական չեմպիոն: Ավելացել է ադրբեջանցիների թիվը դատական համակարգում և ոստիկանությունում: Բաղիրովը առաջիկա նպատակների թվում ևս առանձնացնում է խորհրդարանում էթնիկ ադրբեջանցի պատգամավորի առկայությունը: 2004-ից Մինսկում գործում է ադրբեջանական դպրոց: Դասագրքերի ապահովման հարցով զբաղվել են խորհրդաժողովի ղեկավարները և Պետկոմիտեն[3]:

Բելառուսի ադրբեջանցիները ևս միջոցառումներ են կազմակերպում Խոջալիի դեպքերի տարելիցին, Ադրբեջանի անկախության օրը, այլ ազգային տոների առիթներով:

[1] www.diaspora.az
[2] «В Белоруссии местничества в отношении Азербайджанцев нет», www.zerkalo.az, 03.11.2004.
[3] Նույն տեղում:

Վրաստան. հարևան ադրբեջանցիներ

Վրաստանի ադրբեջանական համայնքը որոշակի առանձնահատկություն ունի՝ կապված Վրաստանի՝ բուն Ադրբեջանի Հանրապետությանը սահմանակից լինելու և փաստացի թափանցիկ սահմանների առկայության հետ: Վրաստանի ադրբեջանցիների մեծ մասը բնակվում է Ադրբեջանին սահմանակից բնակավայրերում՝ Բոլնիսի, Գարդաբանիի և Մառնեուլի շրջաններ, որոնք մտնում են Քվեմո-Քարթլիի վարչատարածքային միավորի մեջ: Ադրբեջանցիները համեմատաբար կոմպակտ բնակվում են նաև Քվեմո-Քարթլիի կենտրոն Ռուսթավի քաղաքում, Կախեթի շրջանի Լագոդեխի հատվածում, Թբիլիսիի Մեյդան թաղամասում: Վրաստանի ադրբեջանցիները գերազանցապես գյուղաբնակ են: 1989-90թթ. վրացաբնակ ադրբեջանցիների շրջանում զարգանում էր ինքնավարություն ստանալու շարժումը: 1989-ի հունիսին, ավելի ուշ նաև 1990-ին ընթացել են ադրբեջանա-վրացական բախումներ՝ Մառնեուլի, Բոլնիսի և Դմանիսի շրջաններում այսպես կոչված «Բորչալիի ինքնավարության ձևավորման» համար (Բորչալին Քվեմո-Քարթլիի շրջանի ադրբեջանական տեղանունն է), որը բախվեց վրացիների դիմադրությանը[1]: Ադրբեջանցիները գտնում էին, որ Վրաստանի երկրորդ քաղաք Ռուսթավին պետք է դառնա ադրբեջանական ինքնավարության կենտրոնը, տեղական ինքնակառավարման մարմիններում նշանակվեն ադրբեջանցի գործիչներ, բացվի ադրբեջանական համալսարան և այլն: Վրացիների (հատկապես՝ Սվանեթիայի) հետ բախման արդյունքում Քվեմո-Քարթլիի տարածաշրջանից տարագրվեցին հարյուրավոր ադրբեջանցիներ[2]: «Սուրբ Իլյա Ճավճավաձե», «Շոթա Ռուսթավելի», «Մերաբ Կոստավա» կազմակերպությունները հայտարարում էին, որ «Վրաստանի ադրբեջանցիները տեղաբնիկներ չեն, եկվորներ են, որոնք Վրաստանի տարածք են փոխադրվել Շահ Աբասի կողմից և պետք է հեռանան»: Ադրբեջանցի ուսումնասիրողն այս մասին գրում է. «Վրաստանի Կոմկուսի Կենտկոմի այն ժամանակվա առաջին

[1] «Национальные меньшинства Восточной и Южной Грузии», А. Кухинадзе, www.memo.ru
[2] "Autonomy and conflict: ethnoterritoriality and separatism in the South Caucasus – Cases in Georgia", Svante Cornell, Uppsala, 2002, էջ 209:

քարտուղար Գ.Պատիաշվիլու լռելյայն համաձայնությամբ քանդվում էին ադրբեջանցիների տները՝ դրանք ապօրինի շինություններ հայտարարելով: Վրացերենի չիմացության համար նրանց զանգվածաբար հեռացնում էին աշխատանքից և Բորչալի էին փոխադրում Սվանեթիայում ձնահոսքից տուժած սվաններին, որոնց համար հատուկ ստեղծված ֆոնդերից գնում էին տներ, իսկ խիտ բնակեցված ադրբեջանական բնակավայրերի կողքին կառուցվում էին նոր բնակավայրեր»[1]: Վրաստանի նախագահ Զվիադ Գամսախուրդիան Քվարելիայի շրջանի Ախալսոփելի գյուղում ելույթի ժամանակ կոչ արեց «Վրաստանն ազատել թաթարներից» (Վրաստանում մինչև այժմ ադրբեջանցիներին հաճախ կոչում են թաթարներ): 1990-ին փակվեց «Զնամյա պոբեդի» ռուսալեզու թերթի ադրբեջանական բաժինը, ապա՝ Դմանիսում լույս տեսնող «Տրիալեթի» ադրբեջանական պարբերականը:

Ադրբեջանական աղբյուրների վկայությամբ, 1989-94թթ. ընթացքում Վրաստանի տարածքում սպանվել է 100-ի չափ ադրբեջանցի: Այստեղ պետք է նաև հաշվի առնել սեփական կորուստներն ուռճացնելու ադրբեջանական կողմի մշտական հակումը: Ադրբեջանցի ուսումնասիրող Հ.Իբրահիմլին Վրաստանում իրականացված հակաադրբեջանական մի շարք գործողությունների համար մեղադրում է Հայաստանի հատուկ ծառայություններին:

Որոշ քաղաքագետներ վրացաբնակ ադրբեջանցիներին համարում են Վրաստանի քաղաքականապես ամենապասիվ փոքրամասնությունը: Ադրբեջանական համայնքային միությունները սկսել են ձևավորվել 90-ականներին. «Դայաք» ընկերությունն ի հայտ եկավ 1990-ին, այնուհետև Մառնեուլում ձևավորվեց «Հեյրաթը», «Ումիդը»՝ Գարդաբանիում, «Բիրլիքը»՝ Թբիլիսիում: «Միտք» վերլուծական կենտրոնի նախագահ Էդուարդ Աբրահամյանի դիտարկմամբ, «2008թ. օգոստոսի վրաց-օս-ռուսական ռազմական բախումից հետո, սեպտեմբերից սկսվում է ադրբեջանական կառույցների ակտիվացումը[2]: Քվեմո-Քարթլիի տարածաշրջանում

[1] «Азербайджанцы Грузии», Ибрагимли Халаддин, Москва, «Европа», 2008, www.bookz.ru
[2] «Азербайджанцы Грузии: активная подготовка к долгожданному восстанию?», Эдуард Абрамян, www.mitq.org, 10.06.2009.

կենտրոնական կառույցն է «Հեյրաթը», որի ղեկավար Ալիբալա Ասկերովը նախկինում Վրաստանի խորհրդարանի անդամ էր: «Միտք» կառույցի վերլուծականը նշում է, որ «Հեյրաթը վերահսկվում է Վրաստանի հատուկ ծառայությունների կողմից, իսկ ղեկավար Ալիբալա Ասկերովը գործակցում է վրացական պետանվտանգության մարմինների հետ[1]:

Վրաստանում ևս ադրբեջանական համայնքային միությունները միավորվել են մեկ ընդհանուր հովանու ներքո: Վրաստանի ադրբեջանցիների ազգային համագումարի (ՎԱԱՀ) մեջ է մտնում 20 ադրբեջանական հասարակական կազմակերպություն: Կառույցի ղեկավարն է Դաշգին Գյուլմամեդովը, որը նաև «Ազերբայջան յոլու» թերթի խմբագիրն է: Թերթը լույս է տեսնում Բաքվում, անդրադառնում է Վրաստանի ադրբեջանական համայնքի շուրջ ծավալվող գործընթացներին: Բաքվում լույս է տեսնում և Վրաստանում տարածվում նաև «Գումմեթ» թերթը, որի հիմնադրմանը ևս մասնակցել է Դաշգին Գյուլմամեդովը: Նա նաև Բորչալիի թուրքերի իրավունքների պաշտպանության խորհրդի հիմնադիրն ու նախաձեռնողը և Վրաստանի մահմեդականների կուսակցության հիմնադիրն է[2]: 1992-94թթ. եղել է «Հեյրաթ» շարժման ակտիվիստը: Գյուլմամեդովը, ըստ առկա տեղեկությունների, առավել սերտ հարաբերություններ ունի Թուրքիայի, բայց ոչ Ադրբեջանի հետ: Հաճախ ադրբեջանցիների մասին խոսելիս կիրառում է «թյուրքեր» տարբերակը: ՎԱԱՀ գրասենյակներ և ներկայացուցիչներ են գործում նաև Բաքու, Էրզրում, Տրապիզոն, Կիև քաղաքներում: 2007-ին Տրապիզոնում տեղի ունեցավ ՎԱԱՀ 6-րդ համագումարը, որի ընթացքում Գյուլմամեդովը վերընտրվեց կառույցի ղեկավար: Ըստ որոշ տեղեկությունների, Գյուլմամեդովը նաև հանդես էր գալիս Միխեիլ Սահակաշվիլու ազգային քաղաքականության դեմ Վրաստանի ազգային փոքրամասնությունների, այդ թվում նաև հայկական և ադբեջանական համայնքների համագործակցության օգտին[3]: Բաքվում կազմակերպված ասուլիսի ժամանակ Գյուլմամե-

[1] Նույն տեղում:
[2] «Борчалинцы ждут приказа», 02.08.2009, www.mitq.org
[3] «Незаконный арест Дашгын Гюлмамедова – политический заказ правительства Грузии», www.mitq.org, 15.03.2009.

դովը նաև հայտարարել է. «Սամցխե-Ջավախեթիում հայերենին տարածաշրջանային լեզվի կարգավիճակ տրամադրելու հարցը միանգամայն նորմալ պահանջ է, որը չի հակասում ԵԽ սկզբունքներին», սակայն դեմ է արտահայտվել Ջավախքի ինքնավարությանը[1]: Գյուլմամեդովի կարծիքով՝ Վրաստանը պետք է վերակազմավորվի կոնֆեդերացիայի սկզբունքով:

2008թ. հունվարին Վրաստանում տեղի ունեցան նախագահական ընտրություններ: Ընտրարշավի ընթացքում առաջադրվել էր էթնիկ ադրբեջանցի, նախկին պատգամավոր Ֆազիլ Ալիևի թեկնածությունը: Վերջինս 1990-91թթ. Գարդաբանիի քաղաքապետն էր, շրջանային ադմինիստրացիայի խորհրդի ղեկավարը[2]: Սակայն 2007-ի դեկտեմբերին նա ինքնաբացարկ հայտարարեց՝ պատճառաբանելով, որ իր նկատմամբ իշխանությունները ճնշումներ են կիրառում, իսկ ավելի ուշ հիմնեց Վրաստանի ուղի կուսակցությունը, որը բաղկացած է գերազանցապես վրացաբնակ ադրբեջանցիներից[3]: Սա Բուլղարիայում կամ Մակեդոնիայում զուտ էթնիկ թուրքական կուսակցություն հիմնելով՝ համայնքի քվեների հաշվին քաղաքական իշխանության հասնելու սցենարի կրկնության փորձ կարող է համարվել:

Նախագահական ընտրարշավում թեկնածու Ֆազիլ Ալիևի մամուլի խոսնակը վերը նշված Դաշգին Գյուլմամեդովն էր: Վերջինս նաև մասնակցեց Վրաստանի ադրբեջանական կուսակցության հիմնադրմանը: Գյուլմամեդովը և Ֆ.Ալիևը միասին հիմնել են նաև Վրաստանի ադրբեջանցիների միջազգային խորհուրդ կազմակերպությունը: Սակայն ավելի ուշ Ալիևի և Գյուլմամեդովի ճանապարհները բաժանվեցին: Իսկ 2009-ի մարտի 10-ին Գյուլմամեդովին ժամանակավորապես ձերբակալեցին Բաքվում՝ մեղադրելով խաբեության մեջ:

[1] Дашгын Гюльмамедов: Требование армян о статусе языка вполне нормальное требование, www.bagin.ru, 03.03.2009.

[2] *Արաքս Փաշայան,* «Ընտրությունները Վրաստանում և ադրբեջանական գործոնը», 03.02.2008, www.noravank.am

[3] «В Грузии впервые зарегистрирована азербайджанская партия», www.regnum.ru 30.07.2008.

Միաժամանակ Վրաստանն իմ հայրենիքն է ադրբեջանական հասարակական կազմակերպության ղեկավար Ալի Բաբաևի նախաձեռնությամբ 2008թ. մարտին հիմնվել է Վրաստանի ադրբեջանցիների կոնգրեսը (ՎԱԿ), որը միավորում է երկրի մոտ 20 ադրբեջանական միություն[1]: Բաբաևը ժամանակ առ ժամանակ լրատվամիջոցների միջոցով դիմում է Բաքվի իշխանություններին Վրաստանի ադրբեջանցիներին նյութական օժանդակություն ցուցաբերելու կոչով, նաև դիմում Վրաստանում ներդրումներ կատարող ադրբեջանցի գործարարներին (վերջին տարիներին նկատելի է Վրաստանում ադրբեջանական ներդրումների ավելացում, ինչը հեռանկարում շոշափում է ՀՀ շահերը)՝ կոչ անելով հաշվի առնել իրենց ներդրումային ծրագրերում Վրաստանի ադրբեջանցիներին աշխատանքով ապահովելու հնարավորությունը: ՎԱԿ նախագահի կարծիքով՝ ադրբեջանական ընկերությունները կարող են օրինակ վերցնել Վրաստանի հայկական կամ իսրայելական ընկերություններից: «Նրանք գործի են վերցնում հայերին կամ հրեաներին, գումար են ծախսում նրանց որակավորման բարձրացման վրա, այնուհետև այդ կադրերն օգտագործում են իրենց աշխատանքի ընթացքում»,- հայտարարել է Բաբաևը[2]: Տպավորություն է ստեղծվում, թե ադրբեջանական կոնգրեսը Վրաստանի կառավարության և Բաքվի իշխանավորների հանդեպ ամենալոյալ կազմակերպությունն է: Հատկանշական է, որ կազմակերպության գործունեությունը սինքրոնացված է պաշտոնական Բաքվի շահերի հետ: Մասնավորապես, 2009-ի տարեվերջին ՎԱԿ-ը նամակով դիմեց ԱՄՆ նախագահ Բարաք Օբամային՝ կոչ անելով վետոյի միջոցով կասեցնել Լեռնային Ղարաբաղին տրամադրվող ամերիկյան ֆինանսական օժանդակությունը[3]:

Վրաստանի ադրբեջանաբնակ շրջանների դպրոցներում Պետկոմիտեի և Վրաստանի կառավարության գործակցությամբ

[1] «Учредительный съезд азербайджанцев Грузии пройдет 17 марта», www.regnum.ru, 15.03.2008.

[2] *Али Бабаев,* Азербайджанцы Грузии должны интегрироваться в грузинское общество, www.xronika.az 19.08.2009.

[3] «Азербайджанцы Грузии приняли обращение к президенту США Бараку Обаме», 23.12.2009, 1news.az

սկսվել է վրացերենի դասավանդման աշխատանք: Նազիմ Իբրահիմովը 2009-ի հոկտեմբերին հանդիպել է Քվեմո-Քարթլիի փոխնահանգապետ, ազգությամբ ադրբեջանցի Հյուսեին Յուսիֆովի հետ: Նախատեսվում է, որ Վրաստանի ադրբեջանական դպրոցներում անց են կացվելու ադրբեջաներեն լեզվի օլիմպիադաներ, իսկ Քվեմո-Քարթլիի նահանգապետ Դավիդ Կիրկիտաձեն ուղիղ կապեր կզարգացնի Ադրբեջանի հետ[1]:

Վրաստանի ադրբեջանցիների առաջնահերթ հիմնախնդիրն այն է, որ մասնավորապես Քվեմո-Քարթլիում տարածքային հողերը վարձակալության են տրվել Ռուսթավիում և այլ քաղաքներում բնակվող վրացիներին: Այսպիսով, ադրբեջանցիները բնակվում են իրենց չպատկանող հողային տարածքներում և ստիպված են վարձակալել հողերը: Ընդ որում, վարձակալ վրացիներն առաջնային իրավունք ունեն սեփականաշնորհել հողերը: Վրացաբնակ ադրբեջանցիները նաև դժգոհում են, որ ՆԳ աշխատակիցներն անձնագրերում ադրբեջանցիների անունները ստույգ չեն գրանցում: «Չինգիզի փոխարեն գրում են Թենգիզ, Զաքիրը գրանցում՝ Զազա, Էյլան՝ Էալի: Իմ ազգանունն է Գյուլմամեդով, բայց, պատկերացրեք, գրանցել են Գուլմամեդովի, զարմիկս՝ Գիուլմամեդովի»,- դժգոհում է ադրբեջանցի համայնքային գործիչը[2]:

2006թ. հունիսին Վրաստանի այն ժամանակվա խորհրդարանի պատգամավոր Քեմալ Մուրադխանովն արժանացավ Վրաստանի կառավարության Պատվո շքանշանին[3]: 2008թ. մայիսի խորհրդարանական ընտրություններից հետո Վրաստանի 150 տեղանոց խորհրդարանում ներկայացված է 3 ադրբեջանցի պատգամավոր՝ Ռամին Բայրամով, Իսֆախան Շամիլով և Ազեր Սուլեյմանով: «Բորչալինին սեսի» ադրբեջաներեն թերթի փոխանցմամբ, «Վրաստանում ապրում է 350 հազար ադրբեջանցի ընտրող, իսկ այսպիսի քանակի պայմաններում հնարավոր է ապահովել 20-22 պատգա-

[1] «Председатель Госкомитета по работе с Диаспорой встретился с замгубернатора Квемо-Картли», 27.10.2009, www.newsazerbaijan.ru

[2] Дашгын Гюльмамедов: Сотрудничество с армянскими организациями будет полезно для обоих народов, www.bagin.info, 24.02.2009.

[3] «Депутат-азербайджанец парламента Грузии удостоен Ордена Чести», www.trend.az, 24.06.2006.

մավորի ընտրություն»[1]:

Ինչպես նշվել է ներածական բաժնում, 2008թ. Վրաստանի ադրբեջանցիների վերաբերյալ լույս է տեսել «Վրաստանի ադրբեջանցիները» մենագրությունը, որը արտասահմանում բնակվող ադրբեջանական համայնքի վերաբերյալ առաջին հիմնավոր մենագրությունը կարող է համարվել:

Ռուսաստանյան «Ազեռռոս» համայնքային կառույցի ղեկավար անդամներից Վոլգոգրադում բնակվող, ծագումով Քվեմո-Քարթլիից Սաքիթ Ալահվերդիևը, ադրբեջանական մամուլին տված հարցազրույցում անդրադառնալով Պետկոմիտեի ուժերով Բաքվի իշխանությունների հսկողությունից դուրս գտնվող համայնքային միություններին «սևացնելու» և զուգահեռ կազմակերպություններ ձևավորելով՝ անկախ համայնքային միությունները լուսանցքում թողնելու իշխանավորների քաղաքականությանը, մասնավորապես Վրաստանի ադրբեջանական կառույցների մասով նշում է. «Վրաստանում երկար տարիներ գործում է «Հեյրաթ» միությունը, որը զբաղվում է այդ հանրապետությունում բնակվող ադրբեջանցիների իրավունքների պաշտպանությամբ: Այժմ այնտեղ ձգտում են ձևավորել զուգահեռ միություն (ակնհայտորեն խոսքն Ալի Բաբաևի ղեկավարած ՎԱԿ-ի մասին է, որը տվյալ շրջանում գտնվում էր հիմնադրման փուլում- Հ.Ն.): Վաղուց էր պետք հասկանալ, չի կարելի ձևավորել դիասպորայի միությունները իշխանություններին հավատարմության չափանիշից ելնելով: Դիասպորան չպետք է լինի իշխանամետ կամ ընդդիմադիր: Այն բոլորովին այլ խնդիրներ ունի: Պետկոմիտեն ձևավորվել է ադրբեջանցիների միասնականացման ու ոչ թե պառակտման և միմյանց հակադրելու համար»[2]:

[1] «Բորչալինին սեսի», 26 նոյեմբեր-2 դեկտեմբեր, 2005:
[2] «Работу с диаспорой нельзя строить исходя из местнических интересов», «Зеркало», 2005, http://www.allakhverdiev.ru/smi_017.php

Կենտրոնական Ասիա. Ղազախստան, Ղրղզստան, Ուզբեկստան. Կասպիցի մյուս ափին

Միջին Ասիայում էթնիկ ադրբեջանցիների ներկայության հիմնական պատճառը 1937-53թթ. ստալինյան ռեպրեսիաների հետևանքով տարագրումն էր Կենտրոնական Ասիայի երկրներ և Ալթայ: Խրուշչովյան ժամանակաշրջանում այստեղ եկան նաև ադրբեջանցիներ «ցելինան» զարգացնելու նպատակով, իսկ Ղարաբաղյան պատերազմի ընթացքում Միջին Ասիա փոխադրվեցին որոշ թվով ադրբեջանցի փախստականներ:

Կենտրոնական Ասիայի ադրբեջանցիների համայնքային ինքնակազմակերպումն ու ղեկավարումն ընթանում են մի շարք հարթություններում: Ղազախստանում գործում է Համաադրբեջանական կոնգրեսը: 2005թ. գարնանը տեղի ունեցավ Ղազախստանի ադրբեջանական համայնքների համատեղ նիստը, որի ընթացքում 14 համայնքային կառույցների կողմից ձևավորվեց հովանի կազմակերպությունը: Զուգահեռ Ղազախստանի, Ղրղզստանի և Ուզբեկստանի ադրբեջանական համայնքները մեկտեղված են «Թուրան» համայնքային կազմակերպության մեջ: «Թուրանի» ղեկավարն է Աբուլֆազ Համեդովը: Դրա հետ մեկտեղ աշխատանքներ են ընթանում Ասիայի ադրբեջանցիների խորհրդաժողովի ձևավորման ուղղությամբ: Այն ներառելու է վերը նշված 3 հանրապետությունների, ինչպես նաև Տաջիկստանի և Թուրքմենստանի ադրբեջանական համայնքային կառույցները: «Սփյուռքի» կառույցների՝ պետական աջակցությամբ և նախաձեռնությամբ ձևավորվելու հերթական վկայությունն էլ Պետկոմիտեի Կենտրոնական Ասիայի վարչության ղեկավար աշխատակից Ֆիզուլի Նաջաֆովի այն հայտարարությունն է, թե «Պետկոմիտեի աշխատակիցները զործուղվել են Ղազախստան, Ուզբեկստան, Տաջիկստան և Ղրղզստան նախապատրաստական-կազմակերպչական աշխատանքների իրականացման նպատակով»: Մեկ այլ տեղ Նաջաֆովը նշում է, որ նույն նպատակով սպասվում են Պետկոմիտեի աշխատակիցների գործուղումներ Թուրքմենստան[1]: Ըստ ամենայնի, Թուրքմենստանում պետության սպեցիֆիկան դանդաղեցնում է ադրբեջանական ներթափանցման

[1] «Азербайджанцы Казахстана готовятся провести свой первый съезд», «Эхо», www.echo-az.com, 20.02.2005

գործը: Այնուամենայնիվ, «Պետկոմիտեի առաջիկա ծրագրերում է Թուրքմենստանում համայնքային միության ձևավորումը»[1]:

Ղազախստանում ադրբեջանցիների թիվը համայնքային գործիչ Վիդադի Սալահովի խոսքով, մոտ 300 հազար է, ինչը չափազանցված է: Պաշտոնապես՝ 90 հազարի սահմաններում: Սալահովը ղեկավարում է Աստանայում գործող Ադրբեջանական մշակութային կենտրոնների դաշինքը: Նա ծնունդով Քելբաջարի շրջանից է, ըստ որոշ տեղեկությունների՝ մասնակցել է պատերազմական գործողություններին[2]: Սալահովն, իր խոսքով, փորձ է արել կազմակերպել Ղազախստանի խորհրդարանում Խոջալիի ցեղասպանության ճանաչումը: 2006-ին նամակով դիմել է Ղազախստանի օրենսդրին և մերժում ստացել: «Քանի որ Ղազախստանը ՀԱՊԿ անդամ է, Ցեղասպանության պաշտոնական ճանաչման հարցում ակնհայտ զգուշավոր է»,- նշում է Սալահովը[3]: Ղազախստանում լույս է տեսնում եռալեզու՝ ադրբեջաներեն, ղազախերեն և ռուսերեն «Թուրան Էքսպրես» պարբերականը:

Դեսպանատան հետ համատեղ կազմակերպվում են միջոցառումներ Խոջալիի դեպքերի, Արցախում կամ անվտանգության գոտու տարածքում կորուստների, Ադրբեջանի անկախության տարելիցի առիթներով: Ուշագրավ է, որ 1997թ. մայիսի 28-ին մուսավաթական Ադրբեջանի հիմնադրման տարեդարձի առիթով Աստանայում Ադրբեջանի դեսպան Լյաթիֆ Ղանդիլովը հայտարարել է, որ «չնայած Ադրբեջանի դեմոկրատական հանրապետությունը գոյատևել է միայն 23 ամիս, այսօրվա Ադրբեջանը մուսավաթականների իրավահաջորդն է»[4]:

Լեռնային Ղարաբաղը չի եղել Ադրբեջանի կազմում 1918-20թթ. ընթացքում, Ադրբեջանին է փոխանցվել 1921թ. հուլիսի 5-ի Կավբյուրոյի որոշմամբ: Հերթական անգամ հռչակելով, որ ներկայիս Ադրբեջանը մուսավաթականների հանրապետության իրավահաջորդն է, Ադրբեջանն ինքնակամ հռչակեց, որ հրաժարվում է Լեռնային Ղարաբաղից:

[1] «В текущем году будет принят ряд мер с целью активизации диаспорских организаций», www.azertag.com, 03.03.2008
[2] "Vidadi Salahov, Xəzərin o tayInda", "Ölkem", էջ 24-29:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:

Թուրքական և ադրբեջանական համայնքային կառույցների գործակցությունը և սերտաճումը

«Համաշխարհային արդի քաղաքական կյանքում սփյուռքի դերը գերագնահատելը դժվար է: Օրինակի համար հեռու գնալ պետք չէ. արտասահմանյան երկրների հակաադրբեջանական որոշումների և օրենսդիր նախաձեռնությունների մեծ մասը մենք շատ հաճախ շաղկապում ենք հայկական սփյուռքի գործունեության հետ»,- գրում է ադրբեջանական «Զերկալո» թերթը:

«Չնայած երկու ադրբեջանա-թուրքական դիասպորաներն էլ բավականաչափ ուժեղ են, այնուամենայնիվ, միջազգային ասպարեզում երկու երկրների համար սկզբունքային հարցերում միասնական հանդես գալը այս միությունը կդարձնի առավել արդյունավետ»,- նշված էր աշխարհի ադրբեջանցիների 2-րդ համագումարի՝ ողջ աշխարհի ադրբեջանա-թուրքական միություններին ուղղված ուղերձում[1]:

«Արտասահմանում բնակվում է 5 միլիոն թուրք: Օգտագործելով նրանց հնարավորությունները՝ մենք կարող ենք սկսել հակաքարոզչություն, թուլացնել և չեզոքացնել «ցեղասպանության» մասին թեզը՝ աշխարհին հասցնելով իրական պատկերը: Խոջալիի դեպքերի 15-ամյակի միջոցառումների օրինակով մենք տեսանք ադրբեջանա-թուրքական համայնքների մեկտեղման դրական արդյունքները»,- հայտարարում է իշխող «Ենի Ազերբայջան» կուսակցությունից պատգամավոր Մուբարիզ Կուրբանլին[2]:

«Հայերին պետք է պատասխանենք թուրք-ադրբեջանական միությունների սերտ գործակցությամբ»,- նույն թեմայով նշում է *ATAA*-ի նախկին ղեկավար Վուրալ Ջենգիզը:

Դեռևս ԽՍՀՄ օրոք 1990թ. Բաքու այցելած *ATAA* պաշտոնյաներից Էրջյումենթ Քըլըչը հանդիպեց Խորհրդային Ադրբեջանի ղեկավարներին: Սա կարող է համարվել թուրքական սփյուռքի և ադրբեջանական կողմի գործակցության առաջին քայլը: *ATAA*

[1] Назим Ибрагимов: «У родины нет пасынков, есть только сыновья», www.izvestia.ru,

[2] «Мубариз Курбанлы: Ни одна политическая организация не может состязаться с ПЕА», www.1news.az, 19.03.2007.

ներկայացուցիչները հետագայում ևս այցելում էին Բաքու, նույն Քըլըչը 2004թ. արդեն որպես *ATAA* նախագահ կրկին Բաքվում էր[1]:

Միացյալ Նահանգների պարագայում նշենք, որ 2004-ից սկսած՝ *ATAA* կազմակերպության ամենամյա ընդլայնված նիստին մեկ օր հատկացվում է Ադրբեջանին[2]: 2005-ից *ATAA*-ն կազմակերպում է ԱՄՆ-ում բնակվող երիտասարդ ադրբեջանցիների պրակտիկան ԱՄՆ Կոնգրեսում: ԱՄՆ հայկական միություններն այդ աշխատանքը սկսել էին դեռևս 1970-ականներից: Ադրբեջանական կառույցները, ըստ առկա տվյալների, 2007-ից փորձում են նույն գործը կազմակերպել ինքնուրույն:

Հատկանշական է, որ Միացյալ Նահանգների *ASA* ադրբեջանական համայնքային կառույցը ինչպես թուրքական *ATAA*, այնպես էլ *FTAA* բաղադրիչ կազմակերպությունն է: Թուրքական *ATAA*-ն էլ, իր հերթին, Պետկոմիտեի կայքում նշված է որպես ԱՄՆ-ում գործող ադրբեջանական կազմակերպություն, ինչը փոքր-ինչ անտրամաբանական է: *ASA* ղեկավար, ադրբեջանուհի Թոմրիս Ազերին նաև *ATAA* Նյու Յորքի տարածաշրջանի պատասխանատուն է, միաժամանակ՝ զուգահեռ գործող *FTAA* գործադիր խորհրդի անդամ, համակարգում է կառույցի արտաքին կապերը: *FTAA* ղեկավար կազմում է նաև Նյու Յորքում բնակվող ադրբեջանցի գործիչ, Նյու Յորքի ադրբեջանական միություն կազմակերպության ղեկավար Ալի Նասիբովը[3]:

«Սերտորեն համագործակցում ենք ԱՄՆ թուրքական համայնքի և Լոս Անջելեսի թուրքական հյուպատոսության հետ»,- հայտարարել է Լոս Անջելեսում Ադրբեջանի հյուպատոս Էլին Սուլեյմանովը[4]:

Երկու լոբբիների մերձեցման խոսուն վկայություն է փաստը, որ Կոնգրեսում գործող թուրքական հարցերով հանձնախմբի և

[1] «Ассамблея турецких ассоциаций Америки обсудит с Конгрессменами Карабахский вопрос», Л.Нури, «Зеркало», 10.06.2004, «Турки США подрывают мощь армянского лобби», «Эхо», 10.06.2004.

[2] "24th Congress of ATAA held discussions related to Azerbaijan», www.azertag.com, 03.02.2004.

[3] http://www.tadf.org/Yonetim.html

[4] Elin Suleymanov, Azerbaijani Diaspora Should be More Active in Political Life of US, 07.09..2007, www.apa.az.

ադրբեջանական հարցերով հանձնախմբի անդամների զգալի մասը նույնն է, ինչի մասին նշվել է:

2007թ. ԱՄՆ թուրք-ադրբեջանական միությունների գործընկերությունը հատկապես խորացավ ԱՄՆ Կոնգրեսի օրակարգում Հայոց ցեղասպանության օրինագծի առաջադրված լինելու փաստի հետ կապված: Թուրքիայի «ֆորպոստ» Ադրբեջանը կանգնեց ավագի կողքին և լոբբիստական աշխատանքներով, քարոզչությամբ ու դիվանագիտական խողովակներով փորձեց խոչընդոտել Հայոց եղեռնի օրինագծի հաստատմանը:

2007թ. հոկտեմբերի 10-ին Կոնգրեսի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում բանաձևի հաստատումից հետո Բաքվի արտգործնախարարությունը հանդես եկավ հայտարարությամբ՝ խոսելով «արխիվային փաստաթղթերն ուսումնասիրելու անհրաժեշտության մասին»[1]: ԱԳՆ տվյալ ժամանակաշրջանի խոսնակ, ներկայում ԱՄՆ ադրբեջանական դեսպանատան աշխատակից Խազար Իբրահիմն իր հերթին նշեց. «ԱՄՆ կառավարական, վարչական և օրենսդիր կառույցների հետ հարաբերությունների ռազմավարություն ենք մշակել, որում հաշվի են առնվել նաև եղբայրական Թուրքիայի հետաքրքրությունները»[2]:

Ինչպես հայտնի է, օրինագծի քննարկումների ընթացքում մեծ հաճախությամբ Վաշինգտոն այցելող թուրք խորհրդարանականների հորդորների և ներքին ճնշումների արդյունքում մի խումբ կոնգրեսականներ հետ վերցրին ստորագրությունները:

2007թ. փետրվարին, երբ աջակիցների թիվը 179 էր, 2 կոնգրեսական հանկարծակի հրաժարվեցին ստորագրություններից[3]: Այնուհետև հրաժարվեց ևս 4, իսկ հոկտեմբերի 10-ից հետո՝ ևս 11 կոնգրեսական: Հայտնի է, որ մասնավոր դեպքերում ԱՄՆ հայկական համայնքն իր հստակ վերաբերմունքն արտահայտեց «դասալիք» կոնգրեսականների նկատմամբ: Մասնավորապես, Կալիֆոռ-

[1] «МИД Азербайджана: Мы советуем Палате представиетелей США воздержаться...», www.day.az, 12.10.2007.

[2] «Азербайджан и Турция расчитывают на еврейское лобби в Конгрессе США, чтобы повлиять на вопрос Геноцида армян», www.newsru.com, 11.10.2007.

[3] “Türkiye’yi dinleyen senatörler imzalarını çekecek” Hakki Kurban, “Tercüman”, 28.02.2007.

նիայի 36-րդ ընտրատարածքից կոնգրեսական Ջեյն Հարմանի գրասենյակի առջև հայկական համայնքը 2 անգամ բողոքի միջոցառում է կազմակերպել: Միաժամանակ, Հարմանին են հանդիպել Կալիֆոռնիայի ադրբեջանական համայնքի ներկայացուցիչները և երախտագիտություն հայտնելով՝ նվիրել «Խոջալիի ցեղասպանության» և «գրավյալ տարածքներում ոչնչացված ադրբեջանական հուշարձանների» մասին պատմող «ուսումնասիրություններ»[1]:

«Եթե նախկինում մեր համայնքները չէին կազմակերպում նման աշխատանք, ապա 2007 թվականն ունի հսկայական ռազմավարական նշանակություն ԱՄՆ-ում և Արևմտյան Եվրոպայում թյուրքական լոբբինգի կազմակերպման առումով»,- նշում է ադրբեջանցի գործարար, *AAC* կառույցի ղեկավար Ջեյհուն Մոլլազադեն[2]:

Ինչպես նշվել է, գործող 111-րդ գումարման Կոնգրեսում 26 օրենսդիրներ ներկայացնում են ինչպես Թուրքիայի, այնպես էլ Ադրբեջանի հանձնախմբերը:

Թուրքիայի և Ադրբեջանի լոբբիստական աշխատանքի ակտիվացման, հետագա ռազմավարության մշակման նպատակով 2007թ. մարտին Բաքվում տեղի ունեցավ ադրբեջանական և թուրքական համայնքային կազմակերպությունների ֆորում: Այն փաստը, որ թուրք-ադրբեջանական նմանօրինակ համատեղ ֆորումն առաջին անգամ կազմակերպում է Ադրբեջանը և ոչ թե «ավագ եղբայրը», ևս վկայությունն է, որ Բաքուն առավել ագրեսիվ է տրամադրված «սփյուռքի» աշխատանքները կազմակերպելու և համակարգելու հարցում, քան Թուրքիան:

«Ադրբեջանական և թուրքական համայնքների այս ֆորումը կարևոր դերակատարում է ունենալու Ադրբեջանի դեմ հայկական ագրեսիայի և Թուրքիայի դեմ անհիմն պնդումների վերաբերյալ աշխարհին իսկությունը փոխանցելու գործում»,- հավաքին նշել էր Թոմրիս Ազերին:

Ֆորումի ընթացքում ընդունված որոշմամբ հիմնվեց թուրք-

[1] «Представители азербайджанксой диаспоры встретились с конгрессменом США», www.day.az, 12.11.2007.

[2] Elin Suleymanov, Azerbaijani Diaspora should be more active in political life of US, 07.09.2007, www.apa.az

ադրբեջանական համայնքային կազմակերպությունների կոորդինացիոն խորհուրդ, որի առաջին նիստը տեղի ունեցավ 2008թ. մարտի 27-ին Բեռլինում: Խորհրդի կազմում են 101 թուրք և ադրբեջանցի համայնքային գործիչներ: Քննարկվել է փոխգործակցության խորացման, տեղեկատվական աշխատանքը (պետք է հասկանալ նաև՝ հակահայ տեղեկատվական պատերազմը) ակտիվացնելու մարտավարությունը: Ընդունվել է նաև հայտարարություն «մարտի 31-ի ադրբեջանցիների ցեղասպանության օրվա» կապակցությամբ[1]:

Հիմնվել է նաև թուրք-ադրբեջանական միությունների ֆեդերացիա, որի ջանքերով առաջիկայում իրականացվելու է «Ճշմարտությունը Ղարաբաղի և հայկական հարցի մասին» սիմպոզիում[2]:

Թուրք-ադրբեջանական լոբբիստները շփվում են նաև ավանդական դարձած Թյուրքախոս պետությունների համագումարների ընթացքում, որոնցում ներկայացված են լինում Թուրքիայի, Ադրբեջանի, Ղազախստանի, Ուզբեկստանի, Ղրղզստանի, Թուրքմենստանի, Մոնղոլիայի և Տաջիկստանի պատվիրակությունները, ներկայացուցիչներ տարբեր պետությունների թուրք-ադրբեջանական համայնքներից: 2007թ. նոյեմբերի 17-19-ին թյուրքախոս պետությունների 11-րդ համագումարն առաջին անգամ ընթացավ Բաքվում: Խորհրդաժողովին Անկարայի և Բաքվի նախաձեռնությամբ ընդունվեց դիմում միջազգային խորհրդարաններին, որով կոչ էր արվում Հայոց ցեղասպանության հիմնախնդիրը թողնել պատմաբաններին[3]:

Նշված ենթավերնագրի շրջանակում նաև կարևոր է այն փաստը, որ ներկայիս Թուրքիայի արևելյան տարածքից սերած որոշ համայնքային գործիչներ իրենց համարում են էթնիկ ադրբեջանցիներ: Նիդեռլանդների թուրք-ադրբեջանական միության ղեկավար Յուջել Աշքընի մասին արդեն նշվել է: Իրեն էթնիկ ադրբե-

[1] «В Германии состоится заседание координационного совета Азербайджанских и турецких Диаспорских организаций», www.azertag.com

[2] «В текущем году будет принят ряд мер с целью активизации диаспорских организаций», www.azertag.com, 03.03.2008.

[3] «Сила тюркоязычных государств в единстве», «Зеркало», 20.11.2007.

ջանցի է համարում նաև Բելգիայի «Բելթուրք» կայքի գլխավոր խմբագիր Շերիֆե Օզդեմիրը[1]: Ադրբեջանը «ավագ եղբորը» հնարավորություն է տալիս Խոջալիի «ցեղասպանության» համատեղ քարոզչությամբ փորձել հակակշռել Մեծ եղեռնի հիմնախնդիրը: Խոջալիի ուռճացված և խեղաթյուրված փաստերի շուրջ փոխգործակցությունը իդեալական ձևով համահունչ է 2 կողմերի շահերին: Թուրքական «Թերջյուման» թերթն այս առիթով գրում է. «Հայերի ցեղասպանության մասին ստերին պատասխան տրվեց Խոջալուի ջարդի թեմայով»[2]: Խոջալիի դեպքերի օրերին արտերկրում, մասնավորապես ԵՄ պետություններում և ԱՄՆ-ում կազմակերպվող հակահայ հանրահավաքները կրում են համատեղ բնույթ[3]:

ATAA ներկայացուցիչ, կառույցի նախկին ղեկավար Էրջյումենթ Քըլըչը 2007թ. մարտին *TGRT* հեռուստաալիքի եթերում հայտարարեց. «Մեր օրերում Ադրբեջանն ավելի համակարգված աշխատանք է կատարում իր համայնքների կազմակերպման ուղղությամբ, քան Թուրքիան»: Ուշագրավ է նույն թեմայով «Թերջյուման» «Լոբբինգում ադրբեջանական հարձակում» հրապարակումը. անդրադառնալով ԱՄՆ-ում ադրբեջանական լոբբիստական աշխատանքների ծավալմանը՝ հեղինակը նշում է. «Հայկական պնդումներին դիմակայելու հարցում եղբայր Ադրբեջանն այնպիսի քայլեր է կատարում, որոնք կարող են ուսուցողական լինել ավագ եղբայր Թուրքիայի համար»[4]:

2008թ. փետրվարին Խոջալիի դեպքերի հիշատակման շրջանակում ծագումով իրանական ադրբեջանցի Ալի Սանային, որը բնակվում է Կալիֆոռնիայում, և թուրք Հաքան Յալչընը բարձրացան Օրիզաբա լեռը, որը Մեքսիկայի բարձրագույն գագաթն է[5]:

[1] "BelTürk Azerbaycan diaspora bakanı Nazim Ibrahimov'u ziyaret etti" http://belturk.be/go.php?go=33817b7&do=details&return=summary&pg=1

[2] «Tokat gibi cevap», «Tercüman», 25.02.2008.

[3] «Азербайджанские и турецкие организации проведут митинг, посвященный годовщине Геноцида в Ходжалы», www.day.az, 07.02.2008.

[4] "Lobicilikte Azeri atağı", "Tercüman", 05.03.2008.

[5] Ali Sanai, Azerbaijani alpinist living in Northern California conquered Orizaba, the highest peak of Mexico, www.apa.az, 24.02.2008.

Ադրբեջանա-թուրքական լոբբիստական կառույցների գործակցությունն այլ համայնքային միությունների և էթնիկ խմբերի հետ

Թե՛ Անկարայում և թե՛ Բաքվում, անշուշտ, գիտակցում են, որ հայկական սփյուռքը որոշակի ներուժ է ներկայացնում, որը դարերի և հատկապես վերջին տասնամյակների ընթացքում ձևավորել է որոշակի ինքնակազմակերպման մեխանիզմներ, ավանդույթներ, սփյուռքահայության մի հատվածին բնորոշ է առավել ընդգծված գաղափարախոսությունը՝ կապված Մեծ եղեռնի հիմնախնդրի, Արցախյան հաղթանակների հետ, միավորող դեր ունեն եկեղեցին, ավանդական կուսակցությունները, մասնավորապես ակտիվ են ՀՅԴ-ն, ԱՄՆ Հայկական համագումարը և այլն: Սփյուռքահայերն իրենց բնակության երկրներում, որպես կանոն, հասնում են ինտեգրման զգալի աստիճանի, ինչը բնորոշ չէ հատկապես թուրքական համայնքներին, որոնց մի մասը, մասնավորապես Գերմանիայում, ապրում է սեփական ներհամայնքային կյանքով, կամ, ինչպես նշում էր հետազոտող Սումլյոննին, «գետտոյի սկզբունքով»:

ՀՀ-ում առկա է մոտեցում, որ Սփյուռքի ներուժն օգտագործվում է փոքր չափով, նշվում են տարբեր տեսակետներ: Սակայն փոքր մասի օգտագործումն իսկ հնարավորություն է տվել որոշակի հաջողությունների հասնել. Մեծ եղեռնը ճանաչվել է 20-ից ավելի երկրների, ԱՄՆ նահանգների 90 տոկոսի կողմից, ԱՄՆ նախագահ Ռոնալդ Ռեյգանը կատարվածը բնորոշել է «Ցեղասպանություն», գործող նախագահ Բարաք Օբաման՝ «Մեծ եղեռն», Կանադայի վարչապետը հայտարարություն է հրապարակում յուրաքանչյուր ապրիլի 24-ին, Հայաստանը մնում է ԱՄՆ-ից խոշորագույն օգնություն ստացող երկրներից մեկը, Եվրախորհրդարանում բազմիցս ընդունվել են հայկական կողմի շահերն արտահայտող փաստաթղթեր, Սփյուռքից ներդրումներով ՀՀ-ում գործում են գործարաններ, խանութներ, սրճարաններ, լրատվամիջոցներ և այլն… Զուգահեռաբար ադրբեջանա-թուրքական կողմի համար պահպանվում է հայկական կողմի չօգտագործված ներուժը բացահայտելու և գործադրելու սպառնալի հեռանկարը:

Այսպիսով, հատկապես մի շարք երկրներում հայկական սփյուռքի աշխատանքներին հակակշռելը Բաքվի և Անկարայի համար դյուրին չի լինելու: Եվ վերջիններս աշխատանք են տանում «դաշնակից» դիասպորաներ գտնելու և հայկական կողմի հանդեպ ոչ միայնակ, այլ համատեղ ճակատով հանդես գալու ռազմավարական ծրագրերով:

Այստեղ Ադրբեջանը մասնավորապես առանցքային դերակատարում է հատկացնում հրեական լոբբիին և նպատակասլաց աշխատում է հրեական կառույցների հետ մերձենալու, եթե չասենք՝ սիրաշահելու կամ հաճոյանալու համար: Թուրքիայի պարագայում Էրդողանի կուսակցության իշխանության գալու հետ մեկտեղ նկատվող թուրք-իսրայելական հարաբերությունների սառեցումը և 2009-ին գրեթե «քրոնիկ» բնույթ ստացած ճգնաժամերը թուլացրին նաև թուրքական կողմի ավանդական կապը հրեական լոբբինգի հետ: Մասնավորապես 2009-ի դեկտեմբերին ԱՄՆ այցի ընթացքում վարչապետ Էրդողանը չհանդիպեց հրեական կառույցների ներկայացուցիչներին[1]: Սա առաջին դեպքն էր մոտ քսան տարվա կտրվածքով, երբ Թուրքիայի գործադիրի ղեկավարը հրաժարվում է հանդիպել հրեական կառույցների ներկայացուցիչներին: Թուրգութ Օզալից սկսած դա գործող ավանդույթ էր:

Պետկոմիտեի ղեկավար Նազիմ Իբրահիմովը հայտարարել է, որ հրեական կազմակերպությունների հետ համագործակցությունը համահունչ է Ադրբեջանի շահերին: ԱՄՆ-ում ադրբեջանամետ լոբբինգի խթանման թեմայով Վաշինգտոնում գործող Խորհրդային հրեաների ազգային խորհուրդ կառույցի ղեկավար Մարկ Լևինը «Ջըրուսալեմ փոստ» հանդեսին նշել է, թե «ԱՄՆ հայկական կառույցները շատ ուժեղ և կազմակերպված են, հանդես են գալիս միասնական ճակատով»: «Որոշ քաղաքական հարցերում մենք գործակցում ենք հայերի հետ, բայց երբ հերթը հասնում է Ադրբեջանին, մենք հակադիր կողմերում ենք»,- նշել է Լևինը: Նույն թեմայով «Ջըրուսալեմ փոստին» տված հարցազրույցում Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովը նշել է. «ԱՄՆ հրեաներն

[1] "Turkish Prime minister not to visit Jewish Community on US trip", www.asbarez.com, 04.12.2009.

օգնել են Ադրբեջանին Վաշինգտոնում լոբբինգ կազմակերպելու հարցում, և այդ օգնությունը շատ կարևոր է»: Թերթը գրում է, որ դա, մասնավորապես, դրսևորվեց Կոնգրեսում, Ադրբեջանին ուղղակի ամերիկյան օգնությունը սահմանափակող հայտնի 907-րդ կետի կասեցման դեպքում: Այս առումով կարևոր են նաև ադրբեջանական մամուլում շրջանառվող տեղեկություններն այն մասին, թե իբր 1918թ. Ադրբեջանի ներկայիս Ղուբայի շրջանում հայկական ջոկատների կողմից իբրև թե զանգվածաբար սպանվել են տեղի հրեաները: Ղուբայի շրջանում հայտնաբերվել են զանգվածային թաղատեղիներ: Ադրբեջանական իշխանությունները նախատեսում են այստեղ հիմնել «ցեղասպանության թանգարան»: Նշենք, որ առաջին դեպքը չէ, երբ հայկական կողմին ձգտում են մեղադրել հրեաներին զանգվածաբար ոչնչացնելու մեջ: Մեծ եղեռնի հարցում ժխտողական գիծ վարող պաշտոնական Անկարայի պատմաբանները նշում են «Օսմանյան շրջանում Թուրքիայի տարածքում հայերի կողմից 100 հազար հրեաների բնաջնջման մասին»: Միանշանակ է միտումը նման մարտավարությամբ իրենց կողմը ներքաշել միջազգային և, մասնավորապես, ԱՄՆ հրեական կառույցները՝ այսպիսով խոչընդոտելով Կոնգրեսում Եղեռնի օրինագծերի հնարավոր առաջընթացին: 100 հազար հրեաների «հնարովի» ցեղասպանության թեմային ժամանակին անդրադարձել է պատմաբան Վահագն Դադրյանը 1999թ. հրատարակած «Թուրքական մերժողականության հիմնական տարրերը» գրքում:

Քաղաքագետ Մուբարիզ Կուրբալին հայտարարում է, որ հրեական համայնքների հետ թուրք-ադրբեջանական լոբբիստական կառույցների գործընկերությանն օգնում է նաև այն հանգամանքը, որ Թուրքիայում և Ադրբեջանում հանդուրժողական վերաբերմունք ունեն հրեաների նկատմամբ: Հավելեմ, որ երբ Դավոսում Իսրայելի ղեկավարի հանդեպ Թուրքիայի վարչապետի սկանդալային վարմունքից հետո որպես լրագրող խոսել եմ ԱՄՆ հրեական միություններից մեկի ղեկավար անձի հետ, նա Թուրքիայի հրեաներին համեմատում էր «գերության մեջ հայտնված պատանդների հետ»: Նա խուսափողական ձևակերպումներով հայտարարեց նաև, որ հրեական լոբբիստներին Թուրքիայի հետ գործընկերության մղող պատ-

ճառներից մեկն էլ Թուրքիայի հրեաների անվտանգության և Թուրքիայում հակասեմական տրամադրությունների աճի խնդիրն է:

Իր հերթին, Մուբարիզ Կուրբանլին ընդունում է, որ «արտերկրում եռակողմ թուրք-ադրբեջանա-հրեական պլատֆորմի ձևավորումը բավարար չափով իրատեսական չէ»: «Հրեական լոբբին բավականաչափ ուժեղ և ինքնաբավ է և կարիք չունի ստորագրելու միացյալ պլատֆորմի որոշումների տակ»,- նշել է նա[1]:

«Մեր կառույցը միշտ կապեր է ունեցել ԱՄՆ հրեական կազմակերպությունների հետ: Երբ նշում էինք մեր կազմակերպության 50-ամյակը, մասնակցեցին ԱՄՆ որոշ հրեական կազմակերպությունների ղեկավարներ և ելույթներ ունեցան, իսկ երբ ԱՄՆ այցելեց Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին, հրեական միություններն իրենց հրավիրեցին նրա հետ նախաճաշի: Դա մեր կապերի համար ցուցիչ է»,- նշում է Թոմրիս Ազերին[2]:

Ադրբեջանի «Կոնստիտուցիա» հիմնադրամի տնօրեն Ալիահմեդ Նուրիևը հայտարարել է, որ նավթի դիմաց Ադրբեջանը Իսրայելից պետք է պահանջի օժանդակություն լոբբինգի հարցերում և հնարավորություն՝ աշխատելու նորագույն տեխնոլոգիաների հետ (այդ թվում նաև ռազմական), խորացնի գործընկերությունը անվտանգության ոլորտում:

Բաքուն ձգտում է ներգրավել նաև այլ թյուրքախոս ազգերի համայնքային միություններ, նաև սերտանալ թյուրքախոս հանրապետությունների հետ: 2007թ. Ադրբեջանում տեղի ունեցավ թյուրքախոս պետությունների 11-րդ համագումարը: 1997-ից ի վեր այդ պետությունների բոլոր համագումարներն անցկացվել էին Թուրքիայում:

Թյուրքախոսների հետ սերտանալու Բաքվի նորագույն նախաձեռնությունները ռուս վերլուծաբաններից մեկը դիտարկում է նաև որպես «պանթուրանիզմի նոր դրսևորում»[3]: Ակնհայտ է, որ Բաքուն նեոպանթուրքականության այս նորագույն դրսևորումներին ձգտում է հաղորդել հստակ հակահայ ուղղվածություն: Պետկոմիտեի փոխղեկավար Հաջիևը 2007թ. տարեվերջին հայտարա-

[1] «Ни одна политическая организация не сможет состязаться с ПЕА», www.1news.az, 19.03.2007.

[2] Томрис Азери: Главной проблемой в деятельности азербайджанской диаспоры является отсутствие финансов , www.day.az. 22.11.2007.

[3] «Пантюркизм: Турция-Азербайджан-Гагаузия», www.regnum.ru 03.03.2008.

րել էր. «Այսօր մեր հարգելի նախագահ Իլհամ Ալիևը... հասել է թյուրքիզմի գաղափարախոսությանը: Թուրքական և ադրբեջանական համայնքային կազմակերպությունների և թյուրքալեզու պետությունների 11-րդ համագումարի անցկացումն արդեն դարձել է ներդրում թյուրքիզմի գաղափարներին էվոլյուցիոն անցման համար: Այսօր Ադրբեջանի առջև կանգնած է միայն մեկ հիմնախնդիր՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, և նախևառաջ բոլոր թյուրքական պետությունները, միավորելով ջանքերը, պետք է աշխարհին հասցնեն Ադրբեջանի դիրքորոշումը: Եվ եթե ապագայում մենք ստիպված լինենք դիմել հարցի ռազմական լուծմանը, ապա Ադրբեջանի կողքին նախևառաջ կկանգնի բազմամիլիոն թյուրքական աշխարհը»[1]:

Ուշագրավ է, որ եթե մինչև այժմ Թուրքիայից դուրս գտնվող թյուրքախոս պետությունների հետ աշխատելու և թյուրքախոս հանրությունների հանդեպ «ավագ եղբոր» նկրտումներ դրսևորում էր միայն Թուրքիան, այժմ նման հավակնություններ ունի նաև Ադրբեջանը: Օրինակ, Ադրբեջանի իշխանությունները քննարկում են Բաքվի պետական համալսարանում Գագաուզիայի ուսանողներին քվոտաներ տրամադրելու հարցը[2]:

Եվրոպայի ադրբեջանական կառույցներում փորձում են նաև ներգրավել Իրանի թուրքմեններին: Մասնավորապես, հայտնի է, որ այս ուղղությամբ առաջադրանքներ են իջեցված Բենիլյուքսի ադրբեջանական կոնգրեսին[3]:

2009թ. տարեվերջին ռուսաստանյան մամուլին տված հարցազրույցում Պետկոմիտեի ղեկավար Նազիմ Իբրահիմովը հայտարարել է, որ հարաբերություններ են զարգացվում ուկրաինական, սերբական, իռլանդական կազմակերպությունների հետ[4]:

[1] Валех Гаджиев: «Если события продолжат развиваться в таком русле еще несколько лет, то вся проделанная армянской диаспорой за столетия работа будет сведена на нет», www.day.az 31.12.2007.

[2] «Пантюркизм: Турция-Азербайджан-Гагаузия», www.regnum.ru 03.03.2008.

[3] «В конце января в Болгарии состоится второй съезд Конгресса Азербайджанцев Европы», www.trendaz.com, 24.11.06.

[4] «Председатель Государственного комитета по работе с диаспорой Назим Ибрагимов: Наш контингент включает всех выходцев из Азербайджана», www.izvestia.ru, 23.12.2009.

ԱԴՐԲԵՋԱՆԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԼՈԲԲԻՆԳ. ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

2009թ. տարեվերջի հարցազրույցում Պետկոմիտեի ղեկավար Իբրահիմովը խոստովանեց, որ երբ կառույցը ձևավորվում էր, նույնիսկ «դիասպորա» բառը շատերի համար օտար էր հնչում[1]:

Իր հերթին ռուսաստանցի վերլուծաբան Սերգեյ Մարկեդոնովը նույն թեմայով գրում է. «1990-ականների սկզբներին աշխատանքները սկսվել են ոչ թե զրոյից, այլ բացասական մեկնակետից: Ոչ մի ազդեցիկ մարմին, որ կապահովեր ադրբեջանական դիասպորայի հետ կապը, պարզապես գոյություն չուներ»[2]: Զրոյական կետից շարժվելով՝ ադրբեջանական կողմն, անկասկած, զգալի աշխատանք է կատարել անցնող ժամանակաընթացքում: Միաժամանակ 2009թ. դեկտեմբերի 21-ի որոշման համաձայն, Թուրքիայում ձևավորվում է Արտասահմանի թուրքերի կոմիտե, որը գործելու է Կրոնի հարցերով պետնախարարության ենթակայության ներքո[3]: Ըստ առկա տեղեկությունների, կառույցն ունենալու է 50-ի չափ աշխատակից, գործելու են Արտասահմանաբնակ քաղաքացիների հարցերով վարչություն, Ցեղակից և ազգակից համայնքների վարչություն, Ռազմավարական զարգացման և աջակցության վարչություն, անգլիախոս երկրների թյուրքախոսների ենթավարչություն և այլն: Տարբեր պետություններում նախատեսվում են նաև կոմիտեի համապատասխան ներկայացուցիչների հաստիքներ[4]:

[1] «Председатель Государственного комитета по работе с диаспорой Назим Ибрагимов: Наш контингент включает всех выходцев из Азербайджана», www.izvestia.ru, 23.12.2009.

[2] «Начало пути: зарождается азербайджанская диаспора», Сергей Маркедонов, http://arabeski.globalrus.ru/print_this/163770/

[3] «Турецкий ответ армянскому лобби», www.news.am/ru/news/11797.html, 08.01.2010.

[4] Թուրքական սփյուռքի կազմակերպման նոր ծրագիր, Հայկ Գաբրիելյան, http://www.noravank.com/arm/articles/list.php?ELEMENT_ID=4195

Ըստ թուրք հետազոտողի հաշվարկների, եվրոպական աշխարհամասում ներգաղթի վերաբերյալ օրենքների աստիճանական խստացումը, աշխատուժի պահանջի կարգավորումը հատկապես ԵՄ-ին միացած արևելաեվրոպական և բալթյան պետությունների հաշվին, կարող են նվազեցնել Թուրքիայից դեպի ԵՄ պետություններ թուրք քաղաքացիների ներհոսքը: Այնուհանդերձ, ԵՄ-ում թուրքերի թիվը շարունակելու է աճել բնական արտադրության հաշվին, տարեկան 150-180 հազարի սահմաններում: «Ըստ այս արդյունքների, Եվրոպայի թուրքերի թիվը, եթե արտակարգ փոփոխություններ տեղի չունենան, 2023թ. կհասնի 10 միլիոնի»,- նշված է հետազոտության մեջ[1]:

«Լոբբինգի առաջնահերթ լծակը ընտրողների քվեներն են, և այս առումով Գերմանիայի, Բուլղարիայի, Բելգիայի, Ավստրիայի և Հոլանդիայի թուրքերի ազդեցությունն աճում է ընտրությունից ընտրություն: Հուսով ենք, առաջիկայում Ֆրանսիայի 350 հազար թուրքերը հաջողության կհասնեն իրենց ինքնակազմակերպման գործում: Ֆրանսիան ներառյալ, գրեթե յուրաքանչյուր ԵՄ երկրում թուրքական միությունները, ինտերնետային խմբերը և միջոցառումներն աճ են գրանցում: ...Առայժմ հրեական, իտալական, հունական, արաբական և հայկական լոբբիներն ազդեցիկ են: Եվրամիությունում մեզ առավել լավ ճանաչելու նպատակով ավելի շատ պետք է զբաղվենք լոբբիստական աշխատանքով»,- գրում է Թուրքիայի արդյունաբերողների և գործարարների միության ԵՄ երկրների ներկայացուցիչ Բահադուր Քելաղասին[2]:

Իր հերթին, Բրյուսելի տարածքային կառավարության անդամ Էմիր Քըրը հարցազրույցներից մեկում կարծիք է հայտնել, որ եթե նախընթաց տասնամյակների ընթացքում Թուրքիայից Եվրոպա էին փոխադրվում գրագիտության ցածր մակարդակով անձինք, ապա նորագույն շրջանում Եվրոպայում անգրագետ ներգաղթյալի համար դժվար կլինի ինտեգրվել, և առաջարկել է, որ «հետայսու այստեղ ժամանել ցանկացողներին պարտադիր ան-

[1] "Euro-Türkler", Faruk Sen, Istanbul 2007, էջ 171:

[2] "Lobicilik nedir, ne değildir?", Bahadir Kelağası, www.abhaber.com, 28.10.2006.

հրաժեշտ է նախնական կրթություն ստանալ»: «Թուրքիայում պետք է նախնական կրթություն, մասնագիտական ուղղվածություն ստանալ: Մենք որպես ներգաղթյալներ պետք է կարողանանք ազդեցիկ լինել մշակույթի, արվեստի, սպորտի, գործարարության և կյանքի այլ ասպարեզներում»[1],- նշել է նա:

Միաժամանակ ԱՄՆ քաղաքացիություն ունեցող թուրքերի թիվն ավելացնելու նպատակով Թուրք-ամերիկյան կազմակերպությունների համադաշնության ղեկավար Քայա Բոզթեփեի նախաձեռնությամբ 2009-ից կառույցի իրավաբան Ջահիթ Աքբուլութը անվճար դասընթացներ է կազմակերպում ԱՄՆ-ում բնակվող թուրքերի համար, որոնց ընթացքում նշում է, որ «սեփական իրավունքներին հետամուտ, ձայնը լսելի դարձնող և փոխօգնությամբ զարգացող հասարակություն ունենալու համար նախ պետք է դառնաք տվյալ պետության քաղաքացի և քվեարկության գնաք»:

Բոզթեփեն, թուրքական մամուլին տված հարցազրույցում ամերիկաթուրքերին կոչ է արել «օրինակ վերցնել հրեական, հունական և հայկական լոբբիներից, իսկ քաղաքացիություն ստանալու դեպքում անցնել հաջող պաշտոնների կամ աշխատել Կոնգրեսում»[2]:

Ադրբեջանի պարագայում Պետկոմիտեի ղեկավար Նազիմ Իբրահիմովը, ներկայացնելով նախագծերը, դեռևս 2006թ. նշել էր արտասահմանում բնակվող ադրբեջանցի լրագրողների և գիտնականների հետ կապեր զարգացնելու նախագծի մասին: «Այս պահին Ադրբեջանի Գիտությունների ազգային ակադեմիայի և դեսպանատների ու մյուս ներկայացուցչությունների նախաձեռնությամբ պատրաստվում է արտասահմանում բնակվող ադրբեջանցի գիտնականների և լրագրողների ցանկը»,- նշել է նա[3]: Ինչպես հայտնի է, ԽՍՀՄ կազմալուծումից հետո Բաքվից հեռացան հրեական և ռուսական համայնքների մեծ թվով ներկայացուցիչներ, հանրապետությունն ամբողջովին պարպվեց հայերից, մինչդեռ

[1] "Bakan Emir Kır: Siyaset aslında bir uzlaşma sanatıdır", http://www.gundem.be/go.php?go=30c0d87&do=details

[2] "ABD'de yaşayan Türklere Amerikan vatandaşı olun kampanyası" 20.08.2009, www.turkishforum.com.tr

[3] www.azertag.com, 06.07.2006.

վերջիններս կազմում էին Ադրբեջանի գիտական մտքի առանցքը, ամենակրթված զանգվածը: Այսպիսով, «աշխարհասփյուռ» ադրբեջանցիների գիտական մտքի «մոբիլիզացումը» կարող է նպատակ հետապնդել լրացնել առկա բացը, խթանել Ադրբեջանում գիտական մտքի զարգացումը: Նշենք, որ մինչև վերջերս ադրբեջանցի գիտնականների և լրագրողների հավաքներ, այնուամենայնիվ, տեղի չեն ունեցել: Կարելի է ենթադրել, որ արտերկրում էթնիկ ադրբեջանցի գիտնականների և լրագրողների թիվը չնչին է, ինչը գործնականում հնարավորություն չի տալիս զբաղվել նման ռազմավարական ծրագրով: Սակայն Բաքուն փորձում է որևէ կերպ շտկել այս բացթողումը: Պետկոմիտեի պաշտոնյա Շաքիր Սալիմովը 2007թ. դեկտեմբերին նշեց Ռուսաստանում ադրբեջանցի լրագրողներ «աճեցնելու» ծրագրի մասին. «Մեր դիասպորան այս պահին աշխատում է ռուսաստանյան ԶԼՄ-ի համար երիտասարդ լրագրողների պատրաստման և առաջընթացի ուղղությամբ, որպեսզի նրանք կարողանան հանդես գալ ոչ միայն որպես թղթակիցներ, այլև հեռուստահաղորդավարներ»:

Սալիմովի խոսքով՝ «ադրբեջանցիները շատ չեն զիջում հայերին ՌԴ ԶԼՄ-ում քարոզչության գործում»: Սա, ի դեպ, նույն պաշտոնյան է, որը մոտ 2 ամիս անց՝ 2008թ. փետրվարին ինքնագոհ հայտարարեց, թե «ՌԴ ադրբեջանական սփյուռքը տասնապատիկ ավելի զորեղ է, քան հայկականը»: Հավանական չէ, որ ընդամենը 2 ամսում ադրբեջանական կողմը նման թռիչքաձև սլացք ունենար, մանավանդ որ Սալիմովն ինքը մեկ այլ տեղ խոստովանում է, որ «Ադրբեջանից կպահանջվի 2 տարի ՌԴ լրատվամիջոցներում առկա ճեղքվածքը լրացնելու համար»[1]:

2010թ. դրությամբ հայտնի է մեկ, սակայն շատ լուրջ հաջողություն. Ազեր Մուսալիևը ստանձնել է «Կոմերսանտ» թերթի գլխավոր խմբագրի պաշտոնը[2]: Չթերագնահատելով այս փաստը՝ նշենք, որ ռուսաստանյան լրատվամիջոցներում հայկական մի

[1] «Госкомитет по работе с азербайджанцами, проживающими за рубежом: «В России проживает около 2 миллионов азербайджанцев», www.day.az, 28.12.2007.

[2] «В газете «Коммерсант» сменился главный редактор», www.newsru.com, 13.01.2009.

քանի անունների հաջողություններն ադրբեջանական կողմին շատ լուրջ անհանգստություն են պատճառում. ՌԴ «Ռեգնում» գործակալության փոխխմբագիր Վիգեն Հակոբյանի և Հարավկովկասյան խմբագրության ղեկավար Արմենիկա Կիվիրյանի նշանակումները վկայակոչելով՝ *day.az* կայքը գործակալությունն անվանել է «հայամետ»: «Ռեգնումի» այդ ժամանակվա գլխավոր խմբագիր Կազենինն այս առումով պարզաբանել է, որ գործակալությունում աշխատում են ոչ թե բացառապես ռուսներ և հայեր, այլ նաև ուկրաինացիներ, մոլդավացիներ, հրեաներ և այլք[1]:

Նկատելի է, որ Բաքուն ակտիվ աշխատելու է նաև արտասահմանի ադրբեջանական ուսանողական և երիտասարդական կառույցներն ամրապնդելու ուղղությամբ: Եվրամիությունում այս աշխատանքներում ակտիվ կարող է լինել Եվրոպայի ադրբեջանցի ուսանողների ֆորումը, որի ղեկավար Էմին Միլին նշում է. «Մենք շահագրգռված ենք, որ ադրբեջանցի ուսանողներն այլ պետություններում ևս ստեղծեն լոբբիստական խմբեր: Եվրոպայում սկսվել է առաջադեմ ադրբեջանցի երիտասարդների խմբերի ձևավորում, և մենք ձգտում ենք, որ նրանց աշխատանքները համակարգված լինեն, ցանկանում ենք առաջարկել մեր կազմակերպության ձևաչափը»: Հավանական է, որ ԵԽ-ում գրանցված միությունը հանդիսանա միջնորդ եվրոպական ատյաններում նոր ադրբեջանական կառույցների գրանցման համար:

Կառույցի աշխատանքային ծրագրերում է նաև Եվրոպայում ադրբեջանական լրատվական գործակալության հիմնադրման նախագիծը: Այն, ըստ առկա տեղեկությունների, կաշխատի Ադրբեջանի համար կարևորություն ներկայացնող լրատվության հարցերով, տեղեկատվության մշակմամբ, կիրականացնի վերլուծական աշխատանք: «Մեզ հնարավորություն է տրված ներկա գտնվել ԵԽ նիստերին, լսել ելույթները և օպերատիվ կերպով փոխանցել Ադրբեջան»,- մանրամասնում է գլխավոր քարտուղարը[2]:

[1] Константин Казенин: «Новостей из Азербайджана могло быть гораздо больше, если бы азербайджанские властные структуры были более последовательны в сотрудничестве с нашим агентством», www.day.az, 13.11.2007

[2] «Генсек Форума Азербайджанских Студентов в Европе»: Нам следует создать в Европе свое информагентство, www.day.az, 24.02. 2008.

Երիտասարդության հետ աշխատանքը Պետկոմիտեի ղեկավարն անվանում է «իրենց գործունեության ամենապատասխանատու և նուրբ ուղղություններից մեկը»: Արտասահմանի ադրբեջանցի երեխաների համար Բաքվում նախատեսվում է կազմակերպել ամառային հանգիստ: «Վստահ եմ, դա այլ երկրների քաղաքացի նոր սերնդի ադրբեջանցիների համար մեծ արդյունք կտա թե՛ ճանաչողական տեսանկյունից, թե՛ հայրենասիրական զգացումների առումով»,- նշել է կոմիտեի նախագահը[1]: 2010թ. Բաքվում սպասվում է համաադրբեջանական երիտասարդական Կոնգրես, 2012-ին՝ Աշխարհի ադրբեջանցիների հերթական համաժողովը: Հեռանկարային ծրագրերում է նաև ԱՄՆ-ում ադրբեջանցիների քայլերթեր կազմակերպելու ծրագիրը, ինչպես որ յուրաքանչյուր մայիսի 19-ին Նյու Յորքում իրականացնում է թուրքական կողմը[2]:

Ադրբեջանական կողմը փորձելու է նաև տարբեր պետությունների խորհրդարաններում «հավաքագրել» օրենսդիրների, որոնք քաղաքական կամ քարոզչական աշխատանք կկատարեն ի նպաստ Ադրբեջանի: «Մենք ձգտում ենք ճշտել եվրոպական պետությունների խորհրդարանականներին, որոնք աշխատում են Ադրբեջանի ուղղությամբ և նրանց ապահովել մեր երկրի մասին օբյեկտիվ տեղեկություններով»,- նշում է Եվրոպայի ադրբեջանական ֆորումի ներկայացուցիչը:

Ըստ ամենայնի, ադրբեջանցիների հեռահար նպատակներից է Խոջալիի դեպքերը որպես ցեղասպանություն որակող օրինագծի հաստատումն արտասահմանյան օրենսդիր մարմիններում ապահովելը: Նկատելի է, որ Ադրբեջանում նյարդայնանում են այս ուղղությամբ առկա խոչընդոտների պատճառով: «Ցեղասպանության ճանաչումը բարդ գործ է, նույնիսկ բարեկամ պետությունները չեն համարձակվում»,- խոստովանել է Իբրահիմովը՝ այս պարագայում ակնհայտ նկատի ունենալով Թուրքիային[3]: Ղազախստանաբնակ ադրբեջանցի գործչի հայտարարությունից հետևում էր, որ արդեն

[1] Назим Ибрагимов: «У родины нет пасынков, есть только сыновья», www.izvestia.ru
[2] «Америка должна увидеть марш азербайджанцев», 1news.az, 25.05.2007.
[3] Назим Ибрагимов: «Наши диаспорские организации уже приступили к этапу практической работы», www.apa.az, 18.12.2009.

իսկ անհաջող փորձ է արել առաջ մղել «Խոջալիի օրինագիծն» Աստանայում: Պետք է ենթադրել, որ Բաքուն կփորձի կազմակերպել Խոջալիի «ցեղասպանության» ճանաչումն առնվազն տեղական մակարդակով, որևէ քաղաքային կամ տարածքային խորհրդարանում: Ադրբեջանն աստիճանաբար փորձում է աշխատանք ծավալել ԱՄՆ-ից Արցախին նյութական օժանդակությունը կասեցնելու գործում, վերջին մեկ տարում նկատելի է տեղեկատվական և լոբբիստական տեղաշարժ այս ուղղությամբ:

Հարկ է նաև նշել, որ աճում է արտասահմանում ադրբեջանական ռեստորանների, սրճարանների, ակումբների թիվը: Առայժմ դժվար է միանշանակ ասել, թե որքանով են աշխատանքներում ներգրավված պետությունը և մասնավորապես Պետկոմիտեն, սակայն այս միտումը ևս կարելի է դիտարկել արտասահմանում ադրբեջանական գործոնի ակտիվացման ընդհանուր շրջանագծում: Ռուսաստանում և ԱՊՀ պետություններում ՌԴ քաղաքացի կամ «գաստարբայտեր» ադրբեջանցիների կողմից նման հաստատությունների հիմնադրումը վաղեմի իրողություն է, սակայն միջազգային «մրցասպարեզ» ադրբեջանցիները նոր են փորձում դուրս գալ: Ադրբեջանական ռեստորանները դառնում են նաև այդ երկրի ադրբեջանական համայնքի հավաքատեղիներ, կազմակերպվում են համայնքային միջոցառումներ: Մասնավորապես 2007թ. դեկտեմբերի 27-ին Նյու Յորքի «Բաքու Պալաս» ռեստորանում տեղի ունեցավ երեկո՝ նվիրված դեկտեմբերի 31-ին Ադրբեջանցիների համաշխարհային միաբանության օրվան: Ադրբեջանական ռեստորան է գործում Բրյուսելում՝ Գրանդ Պլաց կենտրոնական հրապարակից ոչ հեռու: Մուտքին նկարված է Ադրբեջանի դրոշը: Ինչպես նշվեց, «Բաքվի գիշեր» ռեստորանը բացվել է Ստրասբուրգում, Կիևում գործում է «Բաքվի լույսեր» ռեստորանը, իսկ ՌԴ-ում ադրբեջանական ռեստորանների թիվը հաշվելը դժվար կլինի:

Եվս մեկ ադրբեջանական ռեստորան գործում է Բուդապեշտում: Ի դեպ, այն, ինչպես նաև դեսպանատունը, Հունգարիայի մայրաքաղաքում հիմնվեցին ադրբեջանցի սպայի կողմից ՀՀ ԶՈՒ

լեյտենանտ Գուրգեն Մարգարյանի սպանությունից հետո, մարդասպանի դատավարության ընթացքում: Պետք է համաձայնել, որ ուշագրավ զուգադիպություններ են:

Որպես հեռանկարային ուղղություն նշենք նաև արտասահմանում Հեյդար Ալիևի բազմաթիվ հուշարձաններ կանգնեցնելու նախաձեռնությունը: Պատկերավոր ասած՝ այնպիսի տպավորություն է, թե ադրբեջանական «սփյուռքը» բաղկացած է միլիոնավոր համերկրացիներից և Հեյդար Ալիևի հուշարձաններից: Դրանք, ըստ էության, միտված են նաև տեղի ադրբեջանցիների շրջանում «անձի պաշտամունքի» ձևավորմանը, «ալիևյան կլանի» գովազդին: Ինչպես հայտնի է, ԱՊՀ պետություններում ընթանում է որոշակի արշավ Ալիևի արձանների ներհոսքի դեմ: Մոսկվայում, «Բաքու» ռեստորանի մոտակայքում, Վուրդունի փողոցի հարևանությամբ արդեն դրվել էր Ալիևի արձանի հիմնաքարը, քաղաքապետ Լուժկովը ստորագրել էր համապատասխան հրամանը, Սերգեյ Շչերբակովը և Նաթիկ Ալիևը քանդակել էին Հեյդար Ալիևին, բայց արձանի տեղադրման հարցը տարիներով ձգձգվում էր: «Մենք դեմ ենք Ալիևխանի հուշարձանին»,- ասվում էր Անօրինական ներգաղթի դեմ շարժում կազմակերպության և Լիբերալ-դեմոկրատների կողմից 2005թ. դեկտեմբերին կազմակերպված հանրահավաքին[1]: Բողոքի միջոցառումները շարունակվել են նաև հաջորդ տարիներին, և, ի վերջո, 2008թ. արձանը հանգրվանեց Ուլյանովսկ քաղաքում:

Տալլինի և Բիշքեկի իշխանությունները մերժեցին Ալիևի արձանի տեղադրման նախագիծը: Ուկրաինայում այն մայրաքաղաք Կիևի փոխարեն տեղակայվեց մեկ այլ քաղաքում:

«Ալիևի արձանների տեղադրումը հատուկ ծրագիր է, որը Բաքվի իշխանություններն իրականացնում են Ալիևի անձի պաշտամունքն ամրացնելու համար: Դա հնադարյան բնույթի սովորույթ է: Նրանք մտադրվել են ողջ ԱՊՀ-ով մեկ կանգնեցնել Ալիևի արձանները»,- հայտարարել է ռուս քաղաքագետ Ալեքսանդր Բելովը[2]: «Այն երկրները, ուր տեղադրվում են Ալիևի արձանները, հա-

[1] Мы против памятника хану Алиеву!, www.stringer.ru, 18.12.2005.

[2] Азербайджанская община против москвичей: кто победит, www.stringer.ru, 22.06.2006.

մարվում են Ադրբեջանի բարեկամներ: Մոսկվացիները խանդավառությամբ չվերաբերվեցին Ալիևի արձանի տեղադրման գաղափարին և մերժեցին այն: Բայց Ռուսաստանը մեծ երկիր է, որոշեցին կանգ առնել Ուլյանովսկի վրա: Մեկ ուրիշ առաջնորդի մասին հուշերն այստեղ լավ են պահպանվել»,- նշում է «Ազատություն» ռադիոկայանի ադրբեջանական ծառայության ղեկավար Քենան Ալիևը[1]: Հատկանշական է, որ «Ազատություն» ռադիոկայանի կայքում այս թեմայով հրապարակման ներքո 6 ընթերցող մեկնաբանություն է թողել արտասահմանում Ալիևի արձանների կտրուկ աճի թեմայով, բոլորն առանց բացառության՝ բացասական:

Միացյալ Նահանգներում, ըստ ադրբեջանական աղբյուրների, հնարավոր է ամերիկա-ադրբեջանական համատեղ ռազմավարական ինստիտուտի հիմնում: Թե ինչով է զբաղվելու համատեղ ռազմավարական ինստիտուտը, Պետկոմիտեի ղեկավարը չի մանրամասնել՝ նշելով կառույցի անվանումը՝ *AzPak*[2]: Նշենք, որ կառույցի հիմնադրման վերաբերյալ Բաքվի մամուլը հաղորդել է 2006-ից, սակայն հաջորդող 2 տարիների ընթացքում խորհրդավոր *AzPak*-ը չի կայացել:

Սակայն, արդեն ս.թ. ապրիլին ԱՄՆ-ում բացվեց «Ադրբեջանագիտության վաշինգտոնյան կենտրոն»[3] կազմակերպությունը: Կենտրոնը հիմնել են ադրբեջանցի և օտարերկրացի երիտասարդ գիտնականները՝ որպես քաղաքականության գնահատման և անկախ մտածողության մշակման, ինչպես նաև Ադրբեջանի, Կովկասի և, ընդհանրապես, Կասպյան տարածաշրջանի հետ կապված հարցերի ուսումնասիրմանն ու քննարկմանն իրենց ավանդը բերելու հարթակ:

Ապրիլի 27-ին նորաստեղծ կենտրոնը Էլիոթի միջազգային հարաբերությունների դպրոցում կազմակերպել էր միջոցառում՝ «Կասպյան էներգետիկայի աշխարհաքաղաքականությունը. հեռանկարներ և մարտահրավերներ» խորագրով: Միջոցառման նախա-

[1] «Два Алиевых в Ульяновске: бронзовый и газовый», 24.11.2009, www.svobodanews.ru

[2] «В конце января в Болгарии состоится второй съезд Конгресса Азербайджанцев Европы», www.trendaz.com, 24.11.06.

[3] http://www.news.az/articles/14391

գահն էր Ջորջ Վաշինգտոնի համալսարանի Եվրոպական, ռուսաստանյան և եվրասիական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն Հենրի Խեյլը: Մասնակցում էր նաև Ռազմավարական և միջազգային հետազոտությունների կենտրոնի ավագ գիտաշխատող Էդվարդ Չոուն:

Քննարկումներից առաջ Էֆգան Նիֆթիևը (Վաշինգտոնի ադրբեջանագիտության կենտրոն) ընդհանուր գծերով ներկայացրեց կազմակերպության առաքելությունը: Քննարկումը նվիրված էր Կասպյան տարածաշրջանի նաֆթի և գազի արդյունահանման արդի խնդիրներին, Ադրբեջանի դերին՝ որպես էներգիա արտադրող և տարանցող երկրի: Հիշելով 90-ականներին տարածաշրջան կատարած իր ուղևորության մասին՝ Էդվարդ Չոուն նշեց, որ Ադրբեջանը կարողացավ կարճ ժամանակահատվածում էներգետիկայի ոլորտում օտարերկրյա ընկերությունների հետ պայմանագրեր կնքել և դրանք վերածել լուրջ նախագծերի: Կառավարությունը կարողացավ հավասարակշռել մասնավոր ընկերությունների և ազգային շահերը, ինչը հնարավորություն տվեց մշտական ներդրումներ ապահովել Ադրբեջանում: «Չի կարելի թերագնահատել այն, ինչը ձեռք է բերվել վերջին 17-18 տարվա ընթացքում»,- հայտարարեց Չոուն՝ նշելով, որ դժվար է պատկերացնել կայուն զարգացում առանց տարածաշրջանում սառեցված հակամարտությունների լուծման:

Անդրադառնալով հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը՝ Էդվարդ Չոուն նշեց, որ առանց Ղարաբաղյան հակամարտության կարգավորման մոտ ապագայում հայ-թուրքական սահմանի բացման որևէ հեռանկար չկա:

Անդրադառնալով Վաշինգտոնում վերջերս տեղի ունեցած միջուկային անվտանգության հարցերով գագաթաժողովին՝ Էդվարդ Չոուն Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևին չհրավիրելու փաստը գնահատեց որպես «ԱՄՆ-ի համար բաց թողնված հնարավորություն»: Նա ասաց, որ լավ կլիներ, եթե Օբամայի վարչակազմի բարձրաստիճան պաշտոնյաներն ավելի հաճախ այցելեն Ադրբեջան:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ինչպիսի՞ն պետք է լինի հայկական կողմի արձագանքը:
Այս հարցի շուրջ գրքում մի շարք դիտարկումներ եղել են: Ըստ ամենայնի, նախ պետք է մեզ համար հստակ ամրագրենք, որ Բաքուն և Անկարան բավական հիմնավոր մոտեցում են որդեգրել հայկական Սփյուռքի հետ մրցակցելու առումով: Սա լինելու է երկարատև և համառ գործընթաց և Հայաստանին պարտադրում է, հաշվի նստելով իրողությունների հետ, մշակել համապատասխան ռազմավարություն: Մասնավորապես, նպատակահարմար է թվում արտերկրում գործող ՀՀ դեսպանատների, տեղի համայնքների և այլ խողովակների միջոցով իրականացնել արտասահմանում գործող թուրք-ադրբեջանական միությունների ակտիվ մոնիթորինգ, հետևել վերջիններիս կողմից հրատարակվող ԶԼՄ-ին, ռադիոկամ հեռուստաթերթերին, մշակել համապատասխան տեղեկատվությունը: Նաև աշխատանք տանել հայկական կողմի բարեկամ համայնքների հետ (ասորական, հունական, հույն-կիպրական, ռուսական, քրդական) հարաբերությունների մերձեցման և միացյալ հանդես գալու ուղղությամբ, ինչպես նաև աշխատել այլ համայնքային կառույցների հետ: Պետք է նկատել, որ այս ուղղությամբ որոշ աշխատանքներ տարվում են, Հայ դատի կառույցը և ԱՄՆ Հայկական համագումարը գործընկերային հարաբերություններ ունեն հրեական, հունական, իռլանդական մի շարք միությունների հետ: Նպատակահարմար է թվում նաև հարցի հանդեպ պետական մոտեցումը: Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի կոալիցիան սատարել է Հայոց ցեղասպանության թիվ 252 բանաձևին, որը ներկայացնում է ԱՄՆ 22 միլիոն քաղաքացիների և երկրի երկու տասնյակի չափ համայնքային միություններ:

Ինչպես թուրքական, այնպես էլ ադրբեջանական կողմի գործունեությունն անխուսափելիորեն կրում և շարունակելու է կրել

ապատեղեկատվության և մերժողականության տարրեր: Թե՛ Մեծ եղեռնի հարցում, թե՛ Խոջալիի դեպքերի կամ Ղարաբաղյան հակամարտության համատեքստում դա պարզապես անխուսափելի է: Մեկ օրինակ. Նիդեռլանդների *www.azeriunited.com* կայքէջում հրապարակված են մեջբերումներ հայ հրապարակախոս և գրող Զորի Բալայանի «Մեր հոգու վերածնունդը» գրքից, որում նկարագրվում են «հայկական կողմի բռնություններն ադրբեջանցիների հանդեպ»: Իրականում Զորի Բալայանը նման գիրք չի հրատարակել, և այս գրքի վերաբերյալ ամբողջ տեղեկատվական հոսքն ադրբեջանական կողմի սուտն է, որը տարածվում է ոչ միայն Ադրբեջանում, այլև Եվրոպայում լոբբիստական կառույցների միջոցով:

Նպատակահարմար է թվում այս կարգի մանրամասների բացահայտումը եվրոպական, ամերիկյան կամ այլ հասարակությունների առջև: Միաժամանակ, առկա է հնարավորություն աշխատելու մասնավորապես Եվրոպայի այն քաղաքական ուժերի հետ, որոնք տրամադրված են Եվրոպայում «թուրքական էքսպանսիայի» դեմ: Պետք է հստակեցնել, որ իրականում Եվրոպայի ադրբեջանական կառույցներն էլ «կոսմետիկ» տարբերություններ ունեն թուրքական միություններից, հիմքը նույնն է՝ «մեկ ազգ, երկու պետություն»: Թուրքական և ադրբեջանական համայնքային կառույցները տարեցտարի պարզապես սերտաճում են, և այս «համաթուրքական ալյանսը» հեռանկարում կարող է «եվրոպական դիմադրության շարժման» մեջ ներքաշել նաև ադրբեջանական «սփյուռքը»: Որոշակի նշանակություն ունի նաև կրոնական գործոնը: Էմիր Քըրի խոսքով՝ «թուրքերն իսլամի հետ կապված իմիջի խնդիր ունեն, քանի որ արևմտյան մամուլում հաճախ է իսլամի թեմայով բացասական տեղեկատվություն սփռվում»: Պետկոմիտեի ղեկավար Նազիմ Իբրահիմովը ևս հարցազրույցներից մեկում նշել է, որ իսլամի գործոնը որոշակիորեն սահմանափակում է Ադրբեջանի լոբբիստական կարողությունները Եվրոպայում:

Այս ֆոնին Հայաստանի առաջին քրիստոնյա պետությունը լինելու հանգամանքը խոսուն փաստ է:

Այսքանով հանդերձ, հարևան երկրների մեքենայություններ-

րին ամենաազդեցիկ հակահարվածը կլինի Հայրենիքի և Սփյուռքի կապերի սերտացումը: Հայկական Սփյուռքի ներուժն առայսօր ամբողջապես բացահայտված չէ, բայց տարբեր գնահատումներով հանդերձ, ակնհայտ է, որ դրա իրական հնարավորությունների մեկ մասն է աշխատում հանուն Հայաստանի և Հայության:

Հայաստան-Սփյուռք միասնությունը մեր երկրի շարունակական զորեղացման, Արցախի և Հայաստանի սահմանների անվտանգության, Սփյուռքի հայապահպանության, Հայ դատի արդարացի լուծման, մեր ինքնության և մեր ներուժի ամբողջականացման ամենաարդյունավետ ուղիներից է և ամբողջովին հիմնավորված բարոյական և պատմական բոլոր չափանիշներով…

ՀԱՎԵԼՎԱԾ

ԱՄՆ Կոնգրեսի Թուրքական հարցերով հանձնախումբը (2010թ. փետրվարի դրությամբ)

1. Համանախագահ Էդ Ուիթֆիլդ, հանրապետական, Քենթակի*
2. Համանախագահ Սթիվըն Քոհեն, դեմոկրատ, Թենիսի*
3. Համանախագահ Քեյ Գրենջեր, հանրապետական, Տեխաս
4. Ռոբերթ Ադերհոլթ, հանրապետական, Ալաբամա
5. Ռոդնի Ալեքսանդր, հանրապետական, Լուիզիանա*
6. Սթենսեր Բեչաս, հանրապետական, Ալաբամա
7. Բրայըն Բեըրդ, դեմոկրատ, Վաշինգտոն
8. Ռոսկո Բարթլեթ, հանրապետական, Մերիլենդ*
9. Գրեշըմ Բերեթ, հանրապետական, Հարավային Կարոլինա*
10. Ջո Բարթոն, հանրապետական, Տեխաս*
11. Հովարդ Բերման, դեմոկրատ, Կալիֆոռնիա
12. Մերիոն Մերի, դեմոկրատ, Արքանզաս
13. Չարլզ Բուսթենի, հանրապետական, Լուիզիանա
14. Ջոն Բուզմըն, հանրապետական, Արիզոնա*
15. Դեն Բարթըն, հանրապետական, Ինդիանա*
16. Գ.Կ. Բաթըֆիլդ, դեմոկրատ, Հյուսիսային Կարոլինա
17. Ռաս Քարնըհան, դեմոկրատ, Միսուրի
18. Քրիսթոֆեր Քառնի, դեմոկրատ, Ֆիլադելֆիա
19. Անդրե Կարսոն, դեմոկրատ, Ինդիանա
20. Բիլ Քասիդի, հանրապետական, Լուիզիանա
21. Բեն Չանդլեր, դեմոկրատ, Քենթակի
22. Հովարդ Քոբլ, հանրապետական, Հյուսիսային Կարոլինա*
23. Մայք Քոֆմըն, հանրապետական, Կոլորադո
24. Թոմ Քոլ, հանրապետական, Օկլահամա / 4-րդ
25. Գերի Քոնոլի, դեմոկրատ, Վիրջինիա
26. Հենրի Քուելլըր, դեմոկրատ, Տեխաս
27. Ջոն Քուլբերսոն, հանրապետական, Տեխաս
28. Դենի Դևիս, դեմոկրատ, Իլինոյս
29. Ջոֆ Դևիս, հանրապետական, Քենթակի
30. Լինքոլն Դևիս, դեմոկրատ, Թենիսի

* Աստղանիշով նշված կոնգրեսականները նաև Ադրբեջանի հարցերով հանձնախմբի անդամ են։

31. Ուիլյամ Դելահուն, դեմոկրատ, Մասաչուսեթս
32. Նորմ Դիքս, դեմոկրատ, Վաշինգտոն
33. Լոյդ Դոգիթ, դեմոկրատ, Տեխաս
34. Քեյս Էլիսոն, դեմոկրատ, Մինեապոլիս
35. Բրեդ Էլսվորթ, դեմոկրատ, Ինդիանա
36. Բոբ Էթրիջ, դեմոկրատ, Հյուսիսային Կարոլինա
37. Էնի Ֆելեոմեյվեգա, դեմոկրատ, Ամերիկյան Սամոա*
38. Վիրջինիա Ֆոքս, հանրապետական, Հյուսիսային Կարոլինա*
39. Տրենտ Ֆրանքս, հանրապետական, Արիզոնա
40. Ջեն Գրին, դեմոկրատ, Տեխաս*
41. Էլսի Հասթինգս, դեմոկրատ, Ֆլորիդա*
42. Ջեբ Հենսըրլինգ, հանրապետական, Տեխաս
43. Ուոլի Հերգեր, հանրապետական, Կալիֆոռնիա
44. Բառոն Հիլ, դեմոկրատ, Ինդիանա
45. Ջիմ Հայմս, դեմոկրատ, Քոնեկթիկուտ
46. Ռաշ Հոլթ, դեմոկրատ, Նյու Ջերսի
47. Շելա Ջեքսոն Լի, դեմոկրատ, Տեխաս
48. Ջես Ջեքսոն կրտսեր, դեմոկրատ, Իլինոյս
49. Էդի Բերնիս Ջոնսոն, դեմոկրատ, Տեխաս*
50. Թիմ Ջոնսոն, հանրապետական, Իլինոյս
51. Հենրի Ջոնսոն, հանրապետական, Ջորջիա
52. Ուոլթեր Ջոնս կրտսեր, հանրապետական, Հյուսիսային Կարոլինա,
53. Քարոլին Քիլփատրիկ, դեմոկրատ, Միչիգան
54. Լարի Քիսել, դեմոկրատ, Հյուսիսային Կարոլինա
55. Ռոբերտ Է. Լատա, հանրապետական, Օհայո
56. Ջոն Լյուիս, դեմոկրատ, Ջորջիա
57. Բեթի ՄըքՔոլմ, դեմոկրատ, Մինեսոթա
58. Մայքլ ՄըքՄահոն, դեմոկրատ, Նյու Յորք
59. Գրեգըրի Վ. Միքս, դեմոկրատ, Նյու Յորք
60. Չառլի Մելընքոն, դեմոկրատ, Լուիզիանա
61. Բրեդ Միլեր, դեմոկրատ, Հյուսիսային Կարոլինա
62. Դենիս Մուր, դեմոկրատ, Կանզաս
63. Ջիմ Մորան, դեմոկրատ, Վիրջինիա*
64. Քրիսթոֆըր Մըրֆի, դեմոկրատ, Քոնեկթիկուտ
65. Գլեն Նայ, դեմոկրատ, Վիրջինիա
66. Փիթ Օլսըն, հանրապետական, Տեխաս
67. Սոլոմոն Օրթիս, դեմոկրատ, Տեխաս*

68. Բիլ Պասկրել, դեմոկրատ, Նյու Ջերսի
69. Մայք Փենս, հանրապետական, Ինդիանա
70. Ջո Փիթս, հանրապետական, Փենսիլվանիա*
71. Պեդրո Պեռլյուսի, դեմոկրատ, Փրովիդենս
72. Թոդ Պլաթս, հանրապետական, Փենսիլվանիա*
73. Էրլ Փոմերոյ, դեմոկրատ, Հյուսիսային Դակոտա
74. Ջերըլդ Փոլիս, դեմոկրատ, Կոլորադո
75. Դևիդ Փրայս, դեմոկրատ, Հյուսիսային Կարոլինա
76. Ադամ Փաթնըմ, հանրապետական, Ֆլորիդա
77. Նիք Ռահալ, դեմոկրատ, Արևմտյան Վիրջինիա*
78. Դենի Ռոհբերգ, հանրապետական, Մինեսոթա*
79. Սիլվեսթր Ռեյես, դեմոկրատ, Տեխաս*
80. Այլինա Ռոզ-Լեհթինեն, հանրապետական, Ֆլորիդա
81. Մայք Ռոս, դեմոկրատ, Արկանզաս
82. Դաթչ Ռափերսբերգեր, դեմոկրատ, Մերիլենդ
83. Սթիվ Սքելիս, հանրապետական, Լուիզիանա
84. Ջին Շմիթ, հանրապետական, Օհայո*
85. Դեյվիդ Սքոթ, դեմոկրատ, Ջորջիա
86. Փիթ Սեշընս, հանրապետական, Տեխաս*
87. Ջոն Շադեգ, հանրապետական, Արիզոնա
88. Հիթ Շուլեր, հանրապետական, Հյուսիսային Կարոլինա
89. Բիլ Շուսթեր, հանրապետական, Փենսիլվանիա*
90. Մայք Սիմսընն, հանրապետական, Այդահո
91. Այք Սքելթընն, դեմոկրատ, Միսուրի
92. Ադամ Սմիթ, դեմոկրատ, Վաշինգտոն
93. Վիկ Սնայդեր, դեմոկրատ, Արկանզաս
94. Քլիֆ Սթերնս, հանրապետական, Ֆլորիդա
95. Ջոն Թաներ, դեմոկրատ, Թենիսի
96. Ջին Թեյլըր, հանրապետական, Միսիսիպի
97. Բենի Թոմսընն, դեմոկրատ, Միսիսիպի
98. Գլեն Թոմսոն, հանրապետական, Փենսիլվանիա
99. Էդոլֆուս Թաունս, դեմոկրատ, Նյու Յորք*
100. Զաք Վամպ, հանրապետական, Թենիսի
101. Հենրի Ուաքսմընն, դեմոկրատ, Կալիֆոռնիա
102. Ջո Ուիլսոն, հանրապետական, Հարավային Կարոլինա*
103. Ռոբ Ուիթմընն, հանրապետական, Վիրջինիա

ԱՄՆ Կոնգրեսի «Ադրբեջանի բարեկամների խումբը» (2010թ. փետրվարի դրությամբ)

1. Թոդ Աքին, հանրապետական, Մոնտանա
2. Ռոդնի Ալեքսանդր, հանրապետական, Լուիզիանա*
3. Գրեշըմ Բերեթ, հանրապետական, Հարավային Կարոլինա*
4. Ռոսկո Բարթլեթ, հանրապետական, Մերիլենդ*
5. Ջո Բարթոն, հանրապետական, Տեխաս*
6. Ջոն Բուզմըն, հանրապետական, Արիզոնա*
7. Դեն Բորեն, դեմոկրատ, Օկլահոմա
8. Կոռնի Բրաուն, դեմոկրատ, Ֆլորիդա
9. Հենրի Բրաուն, հանրապետական, Հարավային Կարոլինա
10. Դեն Բարթըն, հանրապետական, Ինդիանա*
11. Շելի Մուռ Կապիտո, հանրապետական, Արևմտյան Վիրջինիա
12. Հովարդ Քոբլ, հանրապետական, Հյուսիսային Կարոլինա*
13. Սթիվըն Քոհեն, դեմոկրատ, Թենիսի*
14. Մայքլ Կոնովեյ, հանրապետական, Տեխաս
15. Էնի Ֆելեոմեյվեգա, դեմոկրատ, Ամերիկյան Սամոա*
16. Վիրջինիա Ֆոքս, հանրապետական, Հյուսիսային Կարոլինա*
17. Ջեն Գրին, դեմոկրատ, Տեխաս*
18. Էլսի Հասթինգս, դեմոկրատ, Ֆլորիդա*
19. Դերըլ Այզա, հանրապետական, Կալիֆոռնիա
20. Էդի Բերնիս Ջոնսոն, դեմոկրատ, Տեխաս*
21. Փիթըր Քինգ, հանրապետական, Նյու Յորք
22. Ֆրենք Լոբիոնդո, հանրապետական, Նյու Ջերսի
23. Սոլոմոն Օրթիս, հանրապետական, Տեխաս*
24. Ջո Փիթս, հանրապետական, Փենսիլվանիա*
25. Թոդ Փլաթս, հանրապետական, Փենսիլվանիա*
26. Նիք Ռահալ, դեմոկրատ, Արևմտյան Վիրջինիա*
27. Սիլվեսթր Ռեյես, դեմոկրատ, Տեխաս*
28. Թիմ Ռայըն, դեմոկրատ, Օհայո
29. Էլիսոն Շվարց, դեմոկրատ, Փենսիլվանիա
30. Փիփ Սեշընս, հանրապետական, Տեխաս*
31. Բիլ Շուսթեր, հանրապետական, Փենսիլվանիա*
32. Էդոլֆուս Թաունս, դեմոկրատ, Նյու Յորք*

* Աստղանիշով նշված կոնգրեսականները նաև Թուրքիայի հարցերով հանձնախմբի անդամ են։

33. Նայդա Վելասկես, դեմոկրատ, Նյու Յորք
34. Դայան Ուաթսըն, դեմոկրատ, Կալիֆոռնիա
35. Էդ Ուիթֆիլդ, հանրապետական, Քենթակի*
36. Ջո Ուիլսըն, հանրապետական, Հարավային Կարոլինա*
37. Ռոբերտ Ուիթման, հանրապետական, Վիրջինիա
38. Ջին Շմիթ, հանրապետական, Օհայո*
39. Սյու Մայրիգ, հանրապետական, Վիրջինիա
40. Ջիմ Մորան, դեմոկրատ, Վիրջինիա*
41. Դենի Ռոհբերգ, հանրապետական, Մինեսոթա*

Ֆրանսիայի Տեղական ինքնակառավարման մարմիններում պաշտոնավարող էթնիկ թուրքեր

Փարիզ - Ագնես Էվրեն, Փարիզի 15-րդ շրջանի փոխթաղապետ, UMP

Գաղժ լե Գոնես *(Garge Les Gonesse)* - Թյուրեմ Շահինդալ, ձախակողմյան

Գուսենվիլ *(Goussainville)* - Սևգի Քարաման, քաղաքային խորհրդի անդամ, Սոցիալիստական կուսակցություն, Գենջեբայ Չաքար – քաղաքային խորհրդի անդամ *(UMP),* Սևինչ Մերթ, քաղաքային խորհրդի անդամ, Շուայրփ Չընգը *(UMP)*

Վենիսիո *(Venissieux)* - Համզա Մոր (ձախակողմյան)

Կլիշի սու բուա *(Clichy-sous-bois)* Ջումհուր Գյունեշլիք, Սոցիալիստական կուսակցություն

Նուազի լը Սեկ *(Noisy-le-Sec)* - Ֆաթմա Էդա Աքսել Աշըք, Սոցիալիստական կուսակցություն

Բորդոյի Քենոն տարածաշրջան *(Bordeaux/Cenon)* - Մուսթաֆա Յըլդրզ, Սոցիալիստական կուսակցություն, Հյուրիզեթ Գյունդեր, Սոցիալիստական կուսակցություն

Բորդոյի Լորմոնտ տարածաշրջան *(Bordeaux/ Lormont)* - Իզեթ Քոչ, Սոցիալիստական կուսակցություն

Ստրասբուրգի քաղաքային խորհուրդ - Շաբան Քիփեր, Սոցիալիստական կուսակցություն, Մինե Գյունբայ, Սոցիալիստական կուսակցություն, Դերյա Թոփալ

Ստրասբուրգի Օբեռնեի շրջան *(Strasbourg /Obernai)* - Քադիր Գյուզել *(UMP),* Հանիֆե Քըվրաք *(UMP),* Լեյլա Թան *(UMP)*

Ստրասբուրգի Մոլսայմի տարածաշրջան *(Molsheim)* - Մուրաթ Գյուլդալ *(UMP)*

Ստրասբուրգի Բարի տարածաշրջան *(Barr)* - Նիմեթ Բոզքուրթ

Սավեռն *(Savern)* - Ջումա Ալի Չելիք *(UMP)*

Վուապի/Մեձ *(Woipy/Metz)* – Հաթիջե Քարագյոզ *(UMP),* Ֆերիթ Բուրհան *(UMP)*

Գղան Շամոն *(Grand Charmond)* - Էրգին Չանկայա, Սոցիալիստական կուսակցություն

Վենդղյով սյուղ Բաղս *(Vendreuve-sur-Barse)* - Լեյլա Քըյաք, անկուսակցական

Սեն Դիզիե *(Saint –Dizier)* – Յալչըն Շիմշեք *(UMP)*

Լյունվիլ *(Luneville)* – Քաթյա Շահին *(UMP)*

Բուղգուն Ժալե *(Bourgoin-Jallieu)* - Մերյեմ Յըլմազ, Սոցիալիստական կուսակցություն

Լա Վեղպիլիե *(La Verpilliere)* - Յուսուֆ Յաման (անկախ), Գյունայ Յըլմազ, անկախ

Թղելազե Անգեղ տարածաշրջան *(Trelaze/Angers)* - Դյոնդյու Դյուզգյուն, Սոցիալիստական կուսակցություն

Լա Շապել սեն Լու, Փարիզի մերձակայք *(La Chapelle Saint -Luc/ Paris)* - Ուլքյու Յանըք, Սոցիալիստական կուսակցություն

Շալետ Սյուղ Լուեն *(Chalette-sur-Loing/Loiret)* - Հարուն Յըլմազ, Սոցիալիստական կուսակցություն, Ֆերհաթ Դողաներ, Սոցիալիստական կուսակցություն, Հանիֆե Բայրամ, Սոցիալիստական կուսակցություն, Աբդուլահ Օրեն, Սոցիալիստական կուսակցություն)

Լիմոժ *(Limoges)* - Գյուլշեն Յըլդըրըմ, Սոցիալիստական կուսակցություն

Կլիշի սու բուա, Փարիզի մերձակայք *(Clichy-sous-bois/Paris)* - Հայիրե Աբուքան *(UMP)*

Վիլլեֆղանշ-սուղ-սոն, Լիոնի տարածաշրջան *(Villefranche-sur-Saone/Lyon)* - Թուրգայ Էրյըլդըզ *(UMP)*

Կլեղմոն-Ֆեղան *(Clermont–Ferrand)* - Հավա Ըշըք, Սոցիալիստական կուսակցություն

Տուլ *(Toul)* - Օլիվիե Էրդեմ, Սոցիալիստական կուսակցություն, Դիլեք Իրդելի, Սոցիալիստական կուսակցություն, Սանգյուլ Դավութօղլու, անկախ ձախակողմյան

Մուլհոզ *(Mulhouse)* - Մնլյուդե Գյուդուզ *(UMP)*

Տղելազ *(Trelaze)* - Իզեթ Ալբայրաք, Սոցիալիստական կուսակցություն, Դյոնդյու Դյուզգյուն, Սոցիալիստական կուսակցություն:

Բելգիայի թուրքական համայնքային միությունները Բրյուսելի և Վալոնյան տարածաշրջան

1. Բելգիայի թուրքական ֆեդերացիա, ք. Բրյուսել
2. Բելգիայի թուրքական սպորտային դաշինք, ք. Հութիալեն
3. Բրյուսելի «Ուլու Ջամի» փոխօգնության և մշակութային միություն
4. Թուրքիայի աշխատավորների սոցիալական աջակցության և մշակութային միություն, ք. Անդերլեհթ
5. Շաղլուի քաղաքի թուրքական աշխատավորական և մշակութային միություն
6. Կույե *(Couillet)* քաղաքի թուրքական աշխատավորական փոխօգնության և մշակութային միություն
7. Ֆաղսիեն *(Farciennes)* քաղաքի թուրք աշխատավորների մզկիթի կառուցման և մշակութային միություն
8. Մոնս քաղաքի և շրջակայքի թուրք աշխատավորների փոխօգնության և մշակութային միություն, ք. Հենսի *(Hensies)*
9. Լա Լյուվիեղ *(La Louviere)* քաղաքի թուրք աշխատավորների մշակութային և փոխօգնության միություն
10. Բելգիա-թյուրք սոցիալական և մշակութային փոխօգնության միություն, ք. Մաղշիեն-օ-Պոն *(Marchienne-au-Pont)*
11. Էյուպ սուլթան մզկիթի մշակութային և սոցիալական ծառայության միություն, ք. Մանաժ *(Manage)*
12. Թուրք-իսլամական մշակութային համայնք, ք. Նամուր *(Namur)*
13. Բելգիայի թուրք-իսլամական կրոնական միություն, Մոլնբեկ թաղամասի բաժանմունք, ք. Բրյուսել
14. Բրյուսելի թուրքական աշխատավորական սոցիալական փոխօգնության և մշակութային միություն
15. Մաղշ են Ֆամեն քաղաքի և շրջակայքի թուրքական աշխատավորական փոխօգնության միություն
16. Շեղաթ քաղաքի թուրքական աշխատավորների և ընտանիքների աջակցության և Սինան ճարտարապետ մզկիթի կենսապահովման միություն
17. Թուրքական մշակութային միություն, ք. Բրյուսել
18. Թուրքական մշակութային միություն, ք. Շատելինո
19. Թուրքական մշակութային միություն, ք. Վերվիե
20. Էմիրդաղցիների օժանդակության միություն, *"EYAD"*, ք. Բրյուսել, գործում է Թուրքական տանը

21. «Սիմա» ինտեգրացիայի կենտրոն, ք. Բրյուսել
22. «Սիմա» ինտեգրացիայի կենտրոն, ք. Շաղլըղուա *(Charleroi)*
23. «Սիմա» ինտեգրացիայի կենտրոն, ք. Վեղվիե *(Verviers)*
24. Բելգիայի «Աթաթուրքի մտածելակերպի միություն» *BADD,* ք.Բրյուսել
25. Մայրաքաղաք Բրյուսելի Աթաթուրքի մտածողության միություն, ք. Բրյուսել
26. Բելգիայի թուրք գործարարների միություն, ք. Բրյուսել
27. *ADAK A.S.B.L* միություն, ք. Բրյուսել
28. «Էրենլեր» միություն, ք. Բրյուսել
29. Բելգիայի թուրք կանանց միություն, ք. Բրյուսել
30. Լիեժի թուրքական մշակութային խորհուրդ, ք. Լիեժ
31. Դիեսթի թուրքական մշակութային փոխօգնության միություն *(Diest)*
32. Հերստալ քաղաքի թուրքական մշակութային կենտրոն *(Herstal)*
33. Ղեթին քաղաքի թուրք-իսլամական մշակութային միություն, Մնլանա մզկիթ *(Retinne)*
34. Սեն Նիկոլա Մոնթենյե քաղաքի թուրք աշխատավորների մզկիթի կառուցման և կենսագործունեության ապահովման միություն *(Saint Nicolas Montegnee)*
35. Թուրքական մշակույթի և Օրհան Գազի մզկիթի միություն, ք. Վեղվիե *(Verviers)*
36. Բելգիայի թուրք-իսլամական կրոնական հիմնադրամի Վիրթոն քաղաքի մասնաճյուղ *(Virton)*
37. Կուեսմե քաղաքի թուրքական մշակույթի և մզկիթների միություն *(Cuesmes)*
38. Սերեն քաղաքի թուրք աշխատավորների օժանդակության և բարեկամության միություն *(Seraing)*
39. Բեյնե-Հոսե քաղաքի թուրքական աշխատավորական և իսլամական մշակույթի միություն *(Beyne-Heusay)*
40. Մալմեդի քաղաքի թուրքական մշակութային միություն *(Malmedy)*
41. Բասթոնյը քաղաքի թուրքական աշխատավորական փոխօգնության միություն *(Bastogne)*
42. Բերտրիքս քաղաքի և շրջակայքի թուրքական աշխատավորական և սոցիալական փոխօգնության ու իսլամական մշակույթի կենտրոն *(Bertrix)*
43. Բլենյի քաղաքի թուրքական իսլամական և մշակութային միություն *(Blegny)*
44. Կուարենյոն քաղաքի թուրքական մշակույթի մզկիթ-միություն *(Quaregnon)*

45. Շատելինո քաղաքի մզկիթի կառուցման մշակութային և սպորտային միություն *(Chatelineau)*
46. Լա Լուվյե քաղաքի թուրքական աշխատավորական փոխօգնության միություն *(La Louviere)*
47. Մոնսի Աթաթուրքի մտածողության միություն, ք. Կուարենյոն *(Quaregnon)*
48. Լիեժ քաղաքի թուրքական իսլամական կրոնական միություն, կենտրոնական մզկիթ
49. Եվրոպայի թուրք գիտնականների միության *(EATA)* Բելգիայի բաժանմունք, ք. Բրյուսել
50. Բելգիայի թուրքական մշակութային և արվեստի միություն, ք. Բրյուսել
51. Թուրք կնոջ վերածննդի միություն, ք. Շատելինո *(Chatelineau)*
52. Ֆլերոն քաղաքի թուրքական երիտասարդական մշակութային միություն, ք. Ղեթին *(Retinne)*
53. Բելգիայի համալսարանականների միություն, ք. Բրյուսել
54. Բելգիայի իսլամական մշակութային կենտրոնների կենտրոնական միություն, կենտրոնական համիդիե Քյուլեսի, ք. Բրյուսել
55. Բելգիայի իսլամական մշակութային կենտրոնների միության Սկաերբեկ թաղամասի «Ենի Ջամի» մասնաճյուղ, ք. Բրյուսել
56. Բելգիայի իսլամական մշակութային կենտրոնների միության Սան Խոսե թաղամասի «Սելիմիե» մզկիթի մասնաճյուղ, ք. Բրյուսել
57. Բելգիայի իսլամական մշակութային կենտրոնների միության Վեղվիե քաղաքի մասնաճյուղ
58. Բելգիայի իսլամական մշակութային միության Շաղլուի մասնաճյուղ, ք. Մոնսո սյուղ Սամբրե *(Monceau-Sur-Sambre)*
59. Բելգիայի իսմալական դաշինք (ԲԻԴ), ք. Բրյուսել
60. ԲԻԴ կետրոնական մասնաճյուղ, ք. Բրյուսել
61. ԲԻԴ Անդերլեհթ քաղաքի մասնաճյուղ
62. ԲԻԴ Սան Խոսե թեն Նոոդե *(Saint Josse-Ten-Noode)* թաղամասի մասնաճյուղ, ք. Բրյուսել
63. ԲԻԴ Շաղլուի քաղաքի մասնաճյուղ
64. ԲԻԴ Մաղշիենի *(Marchienne)* տարածաշրջանային մասնաճյուղ, ք.Մոնսո *(Monceau)*
65. ԲԻԴ Ֆաղսիեն քաղաքի մասնաճյուղ *(Farcienne)*
66. ԲԻԴ Լա Լուվիեղ քաղաքի մասնաճյուղ *(La louviere)*
67. ԲԻԴ Հենսի քաղաքի մասնաճյուղ *(Hensiens)*
68. ԲԻԴ Դիեստ քաղաքի մասնաճյուղ *(Diest)*

69. ԲԻԴ Վեղվիե քաղաքի մասնաճյուղ *(Verviers)*
70. ԲԻԴ Շեղաթ քաղաքի մասնաճյուղ *(Cheratte)*
71. ԲԻԴ դաշինքի Լիեժի մասնաճյուղ
72. ԲԻԴ Բրյուսելի մասնաճյուղ
73. Բայաթըլար փոխօգնության միություն, ք. Բրյուսել
74. Բելգիայում Էմիրդաղցիների միություն, ք. Բրյուսել
75. Մասնավոր սեկտորի թուրքական միություն, ք. Բրյուսել
76. *Anciens de Galatasaray au BENELUX*, Սկաերբեկ թաղամաս, ք. Բրյուսել

Ֆլամանդական տարածաշրջան

77. Բելգիայի թուրքական սպորտային ֆեդերացիա, ք. Հութիալեն
78. Աալստ քաղաքի թուրքական իսլամական մշակութային միություն
79. *ACADEMIE VZW,* ք. Անտվերպեն
80. Անվերսի տարածաշրջանի «Աթաթուրքի մտածողության միություն» *ADD*, ք, Անտվերպեն
81. Անվերսի տարածաշրջանի ժողովրդական տուն, ք. Անտվերպեն
82. Թուրքական կազմակերպությունների միություն, ք. Անտվերպեն
83. Անվերսի տարածաշրջանի թուրքական մշակութային միություն, ք.Անտվերպեն
84. Անվերսի տարածաշրջանի թուրքական մշակութային օջախ, ք. Անտվերպեն
85. Անվերս Յուիդ դպրոց-ընտանիք միություն, ք. Անտվերպեն
86. Անվերս-Նորդ թուրքական իսլամական մշակույթի փոխօգնության և միաբանության միություն, ք. Անտվերպեն
87. Անվերս-Յուիդ թուրքական աշխատավորական, սոցիալական փոխօգնության և իսլամական մշակութային միություն, ք. Անտվերպեն
88. Եվրոպայի թուրք գիտաշխատողների միություն *(EATA),* Անվերսի մասնաճյուղ, ք. Անտվերպեն
89. «Այ-յըլդըզ» կրթամշակութային միություն, ք. Անտվերպեն
90. Բելգիայի «Աթաթուրքի մտածելակերպի միություն», Գենք քաղաքի մասնաճյուղ
91. Բելգիայի թուրքական կազմակերպությունների միություն, ք. Բերինգեն
92. Բելգիայի թուրք-իսլամական մշակութային միությունների ֆեդերացիա, ք. Անտվերպեն
93. Բելգիայի թուրքական աշխատավորական իսլամական մշակութային միությունների ֆեդերացիա, ք. Անտվերպեն

94. Բերհեմի երիտասարդական մշակութային տուն, ք. Անտվերպեն
95. Բերհեմի թուրքական աշխատավորական փոխօգնության և մշակույթի միություն, ք. Անտվերպեն
96. Բերինգեն քաղաքի թուրքական մշակութային միություն
97. Բերինգեն քաղաքի և շրջակայքի թուրքական իսլամական մշակութային և փոխօգնության միություն
98. Բերինգեն քաղաքի իսլամական փոխօգնության միություն
99. Բերինգեն-թյուրքգյուջյու, ք. Բերինգեն
100. *DE ACHT-STEUNPUNT ZUID*, ք. Անտվերպեն
101. «Դողուշ» (թարմանաբար՝ «Ծնունդ») կանանց միություն, ք. Կոերսել
102. «Էբրար» ուսանողական հանրակացարան, ք. Հասելթ
103. Էիսդենի տարածաշրջանի թուրքական աշխատավորության փոխօգնության և բարեկամության միություն, ք. Մաասմեխելեն *(Maasmechelen)*
104. Էիսդենի տարածաշրջանի թուրքական մշակութային միություն, ք. Մաասմեխելեն
105. Էիսդենի գիտության և բարոյականության համայնք, ք. Մաասմեխելեն
106. «Թյուրքսփոր» սպորտային միություն, ք. Անտվերպեն
107. «Ֆյուրու» միություն, ք. Գենտ
108. «Ապագայի կանայք» միություն, ք. Գենք
109. Գենք քաղաքի «Դպրոց-ընտանիք» միություն
110. Գենք քաղաքի «Դպրոց-ընտանիք» միության կանանց մասնաճյուղ
111. Գենթ քաղաքի «Աթաթուրքի մտածելակերպի միություն»
112. Գենթ քաղաքի թուրքական մշակութային միություն
113. Գենթ քաղաքի թուրքական օջախ
114. Գենթ-Լեդեբերգ «Յավուզ Սուլթան Սելիմ մզկիթ» միություն
115. «Գենչլիք» (թարգմանաբար՝ «Երիտասարդություն») միություն, ք. Բերինգեն
116. «Գենչլիք» միություն, ք. Հոուտհալեն *(Houthalen)*
117. Համե քաղաքի իսլամական մշակութային միություն
118. Հասելթ քաղաքի «Այասոֆյա» թուրքական իսլամական և մշակութային համայնք
119. «Գենչլիք» միություն, ք. Հասելթ
120. Հեուսդեն-Զոլդեր քաղաքի թուրքական մշակութային միություն *(Heusden-Zolder)*
121. Հեուսդեն-Զոլդեր քաղաքի թուրքական աշխատավորական փոխօգնության և իսլամական մշակույթի միություն

122. «Հիզմեթ» (թարգմանաբար՝ «Ծառայություն») միություն, ք. Անտվերպեն
123. Հոբոկեն-Կիել տարածաշրջանի *(Hoboken-Kiel)* և շրջակայքի թուրքական իսլամական և փոխօգնության միություն, ք. Անտվերպեն
124. Հութիալեն քաղաքի մզկիթի մշակութային և փոխօգնության միություն
125. «Հուզուր» (թարգմանաբար՝ «Հանգիստ») մշակութային և սպորտային միություն), ք. Անտվերպեն
126. Իսլամական մշակույթի միություն, ք. Անտվերպեն
127. Իսլամական փոխօգնության կենտրոնների միություն, ք. Հեուսդեն-Զոլդեր
128. Իսլամական փոխօգնության միություն, ք. Լոմել
129. «Կնոջ *EVRENİ»* միություն, ք. Անտվերպեն
130. «Կանայք» միություն, ք. Գենք
131. Կոլդերբոսի շրջանի *(Kolderbos)* մզկիթի միություն, ք. Գենք
132. «Միլի Գյորուշ» (թարգմանաբար՝ «Ազգային տեսակետ») միություն, ք. Լեոպոլդսբուրգ
133. Լեոպոլդսբուրգ քաղաքի թուրքական իսլամական մշակութային միություն
134. Լոքերեն քաղաքի իսլամական մշակութային միություն
135. Լոմել քաղաքի «Դպրոց-ընտանիք» միություն
136. Լոմել քաղաքի և շրջակայքի մշակույթի և մզկիթի միություն
137. Լիեր քաղաքի թուրք աշխատավորների փոխօգնության բարոյական և մշակութային միություն
138. Լիմբուրգի տարածաշրջանի Աթաթուրքի մտածողության միություն, ք. Մաասմեխելեն
139. Մաասմեխելեն քաղաքի դպրոց-ընտանիք միություն
140. Մաասմեխելեն քաղաքի թուրքական մշակութային կենտրոն
141. Մոլ քաղաքի և շրջակայքի թուրք աշխատավորների փոխօգնության բարոյական և մշակութային միություն
142. «Նազար» միություն, ք. Գենք
143. *NIGDA VZW*, ք. Բերինգեն
144. «Դպրոց-ընտանիք» միություն, ք. Բերինգեն
145. «Սեդեֆ» միություն, ք. Լեոպոլդսբուրգ
146. Սին-Գիլիս-Վաաս քաղաքի և շրջակայքի թուրքական մշակութային միություն *(Sint-Gillis-Waas)*
147. Սին-Նիկլաաս քաղաքի թուրքական մշակութային միություն *(Sint-Niklaas)*

148. Սլեդերլո մզկիթի կառուցման և կենսագործունեության թուրքական իսլամական միություն, ք. Գենք
149. *"SOLIDARITEITSFONDS"* (թարգմանաբար՝ «Փոխօգնություն» հիմնադրամ), ք. Բերինգեն
150. Սոցիալական ոլորտի աշխատակիցների միություն, ք. Բերինգեն
151. Սենտ Ամանդս քաղաքի և շրջակայքի թուրք աշխատավորների փոխօգնության միություն
152. Սենտ Ամանդս քաղաքի և շրջակայքի թուրք աշխատավորների փոխօգնության միություն
153. Տեմսե քաղաքի և շրջակայքի թուրքական իսլամական մշակութային միություն
154. Տեսենդեռլո քաղաքի և շրջակայքի թուրքական մշակութային և փոխօգնության միություն
155. *"TGT"* միություն, ք. Բերինգեն
156. «Թուրք Ռեյնջերներ» միություն, ք. Գենք
157. «Թուրքական իսլամական միությունների դաշինք», ք. Բերինգեն
158. *"TIKEV"* Թուրքական իսլամական մշակույթի և կրթության միություն» տուն-Բելգիա, ք. Բերինգեն
159. «Թատերական խումբ» միություն, ք. Բերինգեն
160. «Համալսարանում ուսանող թուրքերի միություն», ք. Բերինգեն
161. *"TUGOK"* Թուրք երիտասարդական և ուսանողական սերունդ միություն, ք. Գենք
162. Թուրքական տուն, ք. Անտվերպեն
163. Ժամանցի թուրքական միություն, ք. Գենք
164. Թուրք երիտասարդական միություն, ք. Բերինգեն
165. Թուրքական մշակութային և երիտասարդական միություն, ք. Անտվերպեն
166. Թուրքական մշակութային միություն, ք. Բերինգեն
167. Թուրքական երաժշտական և բանահյուսության միություն, ք. Բերինգեն
168. Թուրք և բելգիացի ուսանողների շփումների միություն, ք. Անտվերպեն
169. Թուրքական իսլամական մշակութային միություն, ք. Լեոպոլդսբուրգ
170. Թուրքական իսլամական մշակութային կենտրոն, ք. Լեոպոլդսբուրգ
171. Թուրքական իսլամական փոխօգնության միություն, ք. Վիրլիյք
172. *VZW GUİDO GEZELLE*, ք. Հասելթ
173. Գենք քաղաքի «Մնլանա» միություն
174. Վաթերշեյի շրջանի թուրքական մշակութային միություն, ք. Գենք
175. Վիլեբրոք քաղաքի թուրքական մշակութային և միասնության մզկիթ միություն

176. Վիլեբրոք քաղաքի աշխատավորական մշակութային փոխօգնության միություն, ք. Վիլեբրոք
177. Վինտերսլագի շրջանի թուրք-իսլամական մշակութային միություն, ք. Գենք
178. «Յանքը» (թարգմանաբար՝ «Արձագանք») միություն, ք. Հեուսդեն-Զոլդեր
179. «Յոնջա» միություն, ք. Բերինգեն
180. Զելե քաղաքի թուրք աշխատավորների սոցիալական փոխօգնության միություն
181. Ժամանակակից միությունների ֆեդերացիա, ք. Գենտ:

Եվրոպական պետությունների թուրք խորհրդարանականները

1. Ալև Քորուն, Ավստրիա, խորհրդարանի ստորին պալատի պատգամավոր
2. Էֆգանի Դյոնմեզ, Ավստրիա, խորհրդարանի վերին պալատի պատգամավոր
3. Ահմեթ Դեմիր Դողան, Բուլղարիա, ԻԱՇ
4. Արիֆ Սամի Ագուշ, Բուլղարիա, ԻԱՇ
5. Ահմեդ Ուսեին, Բուլղարիա, ԻԱՇ
6. Ալիոսման Իմամով, Բուլղարիա, ԻԱՇ
7. Ֆիքրեթ Շաբանով, Բուլղարիա, ԻԱՇ
8. Յուքսել Ալի Հաթիբ, Բուլղարիա, ԻԱՇ
9. Հասան Ահմեդ Ադեմով, Բուլղարիա, ԻԱՇ
10. Չեթին Քազաք, Բուլղարիա, ԻԱՇ
11. Նեջմի Ալի, Բուլղարիա, ԻԱՇ
12. Միթհաթ Մեթին, Բուլղարիա, ԻԱՇ
13. Յուսեին Աբդուլահ Ջեմիլ, Բուլղարիա, ԻԱՇ
14. Նիգյար Սահիլմ Ջաֆեր, Բուլղարիա, ԻԱՇ
15. Յունալ Թասիմ, Բուլղարիա, ԻԱՇ
16. Ֆաթմա Մուսա Իլյազ, Բուլղարիա, ԻԱՇ
17. Մեթին Սուլեյմանով, Բուլղարիա, ԻԱՇ
18. Նեսրին Մուսթաֆա Ուզուն, Բուլղարիա, ԻԱՇ
19. Էրդինչ Հաջին, Բուլղարիա, ԻԱՇ
20. Իլքեր Ահմեդով Մուսթաֆով, Բուլղարիա, ԻԱՇ
21. Լյութֆի Մեսթան, Բուլղարիա, ԻԱՇ
22. Իեմալ Պալև, Բուլղարիա, ԻԱՇ

23. Ռեմզի Դուրմուշ Օսման, Բուլղարիա, ԻԱՇ
24. Դաուդ Օսման, Բուլղարիա, ԻԱՇ
25. Ռեյիան Աբդուլահ Աբլեքիմ, Բուլղարիա, ԻԱՇ
26. Էրդողան Ահմեդով, Բուլղարիա, ԻԱՇ
27. Կասիմ Դալ, Բուլղարիա, ԻԱՇ
28. Յունալ Սաիդ Լյութֆի, Բուլղարիա, ԻԱՇ
29. Լամադան Բայրամ Աթալայ, Բուլղարիա, ԻԱՇ
30. Հաքի Քեսքին, Գերմանիա, Սոցիալ-դեմոկրատական կուսակցություն *(PDS)*
31. Լալե Աքգյուն, Գերմանիա *(SPD)*
32. Հյուսեին Այդընն, Գերմանիա *(PDS)*
33. Էքին Դելիգյոզ, Գերմանիա *(SPD)*
34. Սևիմ Դաղդելեն, Գերմանիա *(PDS)*
35. Ջոշքուն Չյորուզ, Նիդեռլանդներ, Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցություն
36. Ֆաթմա Քյոշեր Քայա, Նիդեռլանդներ, *D 66* (Դեմոկրատներ 1966) կուսակցություն
37. Յըլմազ Քերիմո, Շվեդիա, Սոցիալ-դեմոկրատական կուսակցություն
38. Մեհմեթ Քափլան, Շվեդիա, Կանաչների կուսակցություն
39. Իբրահիմ Բայլան, Շվեդիա, Սոցիալ-դեմոկրատական կուսակցություն
40. Մերյեմ Ալմաջը, Բելգիա, *GROEN*
41. Ջեմալ Չավդարլը, Բելգիա, Սոցիալիստական կուսակցություն
42. Ֆաթմա Փեհլիվան, Բելգիա, Սենատի անդամ, Գենթ քաղաքի փոխքաղաքապետ, Սոցիալիստական կուսակցություն
43. Հյուսեին Արաչ, Դանիա, Սոցիալ-դեմոկրատական կուսակցություն
44. Ալեդին Ամեթ, Ռումինիա, *UDTTMR*
45. Իբրաամ Յուսեին, Ռումինիա, *UDTTMR*

Եվրախորհրդարանի թուրք պատգամավորները

1. Ջեմ Օզդեմիր, Գերմանիա, Կանաչների կուսակցություն
2. Էմինե Բոզքուրտ, Հոլանդիա, Աշխատավորական կուսակցություն
3. Մեթին Քազաք, Բուլղարիա, ԻԱՇ
4. Ֆիլիզ Հյուսմանովա, Բուլղարիա, ԻԱՇ

Եվրոպական պետությունների ադրբեջանական համայնքային միությունները

Մեծ Բրիտանիա

Եվրոպայի ադրբեջանական համայնք, Լոնդոն, հիմնադրվել է 2008թ.
Ադրբեջանցիների երիտասարդական ակումբ, հիմնադրվել է 2006թ.

Ֆրանսիա

Ստրասբուրգի ադրբեջանական տուն, ղեկավար, 2005թ.
Ադրբեջան-Ֆրանսիա երիտասարդական միություն, 2003թ.
Ֆրանս-ադրբեջանական մշակութային ասոցիացիա, ղեկավար, 2007թ.
Ֆրանսիայի ադրբեջանցիների համայնքային կենտրոն, 2006թ.

Իսպանիա

«Էլմիրա» միություն, ք. Վալենսիա, 2008թ.
«Ազերի» միություն, Ալիկանտե, 2002թ.

Շվեյցարիա

Շվեյցարիայի ադրբեջանցիների մշակութային դպրոց, Վինիգեն, 2006թ.
Շվեյցարիա-Ադրբեջան բարեկամության միություն, ք. Ցյուրիխ, 2002թ.

Դանիա

«Վաթան» միություն, Հիլեռոդ, 2007թ.
Դանիայի ադրբեջանցի և թուրք կանանց միություն, 2009թ.
Դանիա-Ադրբեջան միություն, Կոպենհագեն, 2006թ.

Իտալիա

«Ադրբեջան» մշակութային կապերի միություն, 2006թ.
«Դոստլուգ» միություն, 2004թ.

Բուլղարիա

Բուլղարիա-Ադրբեջան բարեկամության միություն, ք. Բլագոն-գրադ, 2003թ.

Ռումինիա

«Ադրբեջան» մշակութային երիտասարդական ասոցիացիա, ք. Բուխարեստ, 2001թ.

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

AAC – Azerbaijani-American Council, ԱՄՆ-ադրբեջանական խորհուրդ
AFOT – American Friends of Turkey, Թուրքիայի ամերիկացի բարեկամներ
ANAP – Anavatan partisi, «Մայր Հայրենիք» կուսակցություն
ASA – Azerbaijan Society of America, ԱՄՆ ադրբեջանական համայնք
ATAA – Assembly of Turkish-American Assosiations, Թուրք-ամերիկյան միությունների համագումար
ATAS – American-Turkish Association of Scientists, Թուրք-ամերիկյան գիտաշխատողների միություն
ATC – American Turkish Council, Ամերիկա-թուրքական խորհուրդ
ATFA – American Turkish Friendship Association, Թուրք-ամերիկյան բարեկամության միություն
ATS – American Turkish Society, ԱՄՆ թուրքական համայնք
BADD – Belçika Atatürkçü Düşünce Derneği (թուրքերեն), Բելգիայի Աթաթուրքի մտածողության կազմակերպություն
CDA – Christen Democratisch Appel (հոլանդերեն), Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցություն
CMI – Caucasus Media Institute, Լրատվամիջոցների կովկասյան ինստիտուտ
CUNY – City University of New York, Նյու Յորքի քաղաքային համալսարան
Die Linke – Ձախակողմյան դեմոկրատներ (գերմաներեն բառացի՝ ձախ)
DS կամ ***ДС*** – Държавна Сигурност (բուլղարերեն, բառացի՝ պետական անվտանգություն), Սոցիալիստական Բուլղարիայի անվտանգության ծառայություն
DYP – Doğru Yol Partisi (թուրքերեն), «Ճշմարիտ ուղի» կուսակցություն
FBI – Federal Bureau of Investigations, Հետաքննությունների դաշնային բյուրո
FNSS – FMC-Nurol Savunma Sistemleri, Թուրքիայում գործող ռազմարդյունաբերական ձեռնարկություն

FTAA – Federation of Turkish American Associations, Թուրք-ամերիկյան կազմակերպությունների համադաշնություն
GL – GroenLinks (հոլանդերեն), Ձախ կանաչներ
ITS – Institute for Turkish Studies, Թուրքական հետազոտությունների ինստիտուտ
JITEM – Jandarma Istihbarat ve Terörle Mücadele (թուրքերեն), Ժանդարմերիայի հետախուզություն և ահաբեկչության դեմ պայքար
MATÜSITEB – Makedonya Türk Sivil Toplum Teşkilatları Birliği (թուրքերեն), Մակեդոնիայի Թուրքական հասարակական կազմակերպությունների միություն
MHP – Milliyetçi Hareket Partisi (թուրքերեն), Ազգայնական շարժում կուսակցություն
MR – Mouvement Reformateur (ֆրանսերեն), Բարեփոխումների շարժում կուսակցություն
PKK – Partia Karkarem Kurdistan (քրդերեն), Քրդական աշխատավորական կուսակցություն
PS – Parti Socialiste (ֆրանսերեն), Սոցիալիստական կուսակցություն
PvDA – Partij van De Arbeid (հոլանդերեն), Աշխատանքի կուսակցություն
SPD – Sozialdemokratische Partei Deutschlands (գերմաներեն), Սոցիալ-դեմոկրատական կուսակցություն
TAIF – Turkish American Islamic Federation, Թուրք-ամերիկյան իսլամական դաշինք
TALDF – Turkish American Legal Defense Fund, Թուրք-ամերիկյան իրավական պաշտպանության հիմնադրամ
TC-USA-PAC – Թուրքական կոալիցիա-ԱՄՆ-Քաղաքական գործողությունների կոմիտե
TDP (ԹԴԿ) – Türk Demokrat Partisi, Թուրքական դեմոկրատական կուսակցություն
TIKA – Türkiye Işbirliği ve Kalkınma Ajansı (թուրքերեն), Թուրքական գործակցության և զարգացման գործակալություն
TÖSDG – Türk Özel Sektor Dostluk Grubu, Թուրքական մասնավոր սեկտորի բարեկամության խումբ
TRTV – ԱՄՆ-ում թուրքական առաջին հեռուստաալիքը
UMP – Union pour un Mouvement Populaire (ֆրանսերեն), Ժողովրդավարական շարժման միություն

USACC – United States – Azerbaijan Chamber of Commerce, ԱՄՆ-Ադրբեջան առևտրային պալատ
USAN – US Azeris Network, ԱՄՆ ադրբեջանցիների ցանց
VVD – Volkspartij voor Vrijheid en Democratie (հոլանդերեն), Ազատության և ժողովրդավարության ժողովրդական կուսակցություն

ԱԱԿ – Աշխարհի ադրբեջանցիների կոնգրես
ԱզԻս – Ադրբեջան-Իսրայել միջազգային ասոցիացիա
ԲԱԿ – Բենիլյուքսի ադրբեջանցիների կոնգրես
ԲԱՀ – Բուլղարիայի ազգային հեռուստատեսություն
ԲԻԴ – Բելգիայի իսլամական դաշինք
ԵԱԿ – Եվրոպայի ադրբեջանական կոնգրես
ԻԱՇ – Իրավունքների և ազատությունների շարժում
ԻԱԱՇ – Իրավունքների և ազատությունների ազգային շարժում
ՀԱԿ – Համառուսաստանյան ադրբեջանական կոնգրես
ՎԱԱՀ – Վրաստանի ադրբեջանցիների ազգային համագումար
ՎԱԿ – Վրաստանի ադրբեջանցիների կոնգրես

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՏՔ …….. 4

ԹՈՒՐՔԱԿԱՆ «ՍՓՅՈՒՌՔԻ» ՆԿԱՐԱԳԻՐԸ
ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ……..……. 9

ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ. ԹՈՒՐՔԵՐՆ ԱՅՍՏԵՂ ԵԿԱՆ ՀԱՅԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ .. 17

Անվանի թուրքերն ԱՄՆ-ում 31

*Միացյալ Նահանգներում Թուրքիայի
կողմից վարձվող լոբբիստական միությունները* ……..… 34

*Հետաքննությունների դաշնային բյուրոյի (FBI)
թրքուհի աշխատակցի ցուցմունքները* 42

Կանադա. ամենամեծ քաղաքում՝ թուրք քաղաքապե՞տ …….. 46

ԵՎՐՈՊԱ. ԹՈՒՐՔԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ …….. 48

Բելգիա. մերժողականությունը քրեականացնելու առաջին փորձը 48

*Նիդեռլանդներ. «Նրանք հարյուրավոր
թելերով կապված են Անկարայի հետ»* 60

Գերմանիա. 3 միլիոն թուրքերի երկիրը 70

Ֆրանսիա. իսկ եթե Էրդողանը մերժի ցեղասպանությունը …… 82

Բուլղարաթուրքեր. ամենահաջողակ «սփյուռքը» 93

Մակեդոնիա 104

Ռումինիա 109

Ավստրիա. ինչո՞ւ ավստրիացիները թուրքերեն չգիտեն 110

Մեծ Բրիտանիա. Լոնդոնի քաղաքապետն ազգությամբ թո՞ւրք է 113

Եվրախորհրդարանի թուրք ներկայացուցիչները 116

Արտասահմանի ազատական հայացքներով թուրք գործիչները 118

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱԿԱՀԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 124

Ադրբեջանական սփյուռքի կայացման գործընթացը 124

Համաեվրոպական և համաշխարհային ադրբեջանական կառույցները ….. 134

ԱՄՆ. «Տեսեք, թե ինչ ակտիվ են հայերը, նույնը պետք է անենք մենք» 138

Նիդեռլանդներ և Բելգիա. առաջին հուշարձանը և առաջին թերթը 153

*Գերմանիա և Լեհաստան. դիասպորայի
ձևավորման առաջին նախանշանները* 161

Ֆրանսիա. ո՞վ գողացավ Հայաստանի դրոշը 167

Շվեդիա. Հրանտ Դինքի սպանության հետքերով 172

Մեծ Բրիտանիա. ադրբեջանցիները նավթային և բանկային սեկտորներում 176

Իսրայել. ամենակարևոր համայնքը 179

Այլ պետություններ. Կանադայից մինչև Եվրոպա ու Նոր Զելանդիա 185

Ադրբեջանական համայնքներն ԱՊՀ-ում 188

Ռուսաստան 188

Ուկրաինա 200

Բելառուս 207

Վրաստան. հարևան ադրբեջանցիներ 208

Կենտրոնական Ասիա. Ղազախստան, Ղրղզստան, Ուզբեկստան. Կասպիցի մյուս ափին 215

Թուրքական և ադրբեջանական համայնքային կառույցների գործակցությունը և սերտաճումը 217

Ադրբեջանա-թուրքական լոբբիստական կառույցների գործակցությունն այլ համայնքային միությունների և էթնիկ խմբերի հետ 223

ԱԴՐԲԵՋԱՆԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԼՈԲԲԻՆԳ. ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ 228

ԱՄՓՈՓՈՒՄ 238

ՀԱՎԵԼՎԱԾ 241

ԱՄՆ Կոնգրեսի Թուրքական հարցերով հանձնախումբը 241

ԱՄՆ Կոնգրեսի «Ադրբեջանի բարեկամների խումբը» 244

Ֆրանսիայի Տեղական ինքնակառավարման մարմիններում պաշտոնավարող էթնիկ թուրքեր 245

Բելգիայի թուրքական համայնքային միությունները 247

Եվրոպական պետությունների թուրք խորհրդարանականները 254

Եվրախորհրդարանի թուրք պատգամավորները 255

Եվրոպական պետությունների ադրբեջանական համայնքային միությունները 256

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 257

Հայկարամ Նահապետյան

ԹՈՒՐՔ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԱԿԱՀԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Գլխավոր խմբագիր՝
Գագիկ Հարությունյան

Տեխնիկական խմբագիրներ՝
Խոնարհիկ Քարաուղլանյան
Լուսինե Բաղրամյան

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ, 0026 Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ office@noravank.am
Հեռախոս/ֆաքս՝ + (374 10) 44 04 73

Թուղթը՝ օֆսեթ, ծավալը՝ 16.75 տպ.մամուլ։
Տպաքանակը՝ 500։ Տառատեսակը՝ Sylfaen։
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում։